



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>







Arakelean, 1

Ki anis A1

№ IX

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԵՍՐՈՊԵԱ

ՄԻ ԱՄԻՍ

ԱՐԵՒԵԼՔԻ

Ուղեւորական ակնարկ

գրեց

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

2915.6

Ar 1

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Մաղաթեան

1904

UNIVERSITY OF MICHIGAN

- рад

EREN

617

ВУН-К

Дозволено Цензурою. Тифлисъ, 4-го Октября 1904 г.

GRAD
EREV
GITY
01 10. 1917

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

I

ՏԵՄՆ ՕՐ Կ. ՊՕԼՍՈՒՄ

II

ՏԵՄՆ ՕՐ ՊԻՐԱՄԻԴՆԵՐԻ ԱԶԽԱՐՀՈՒՄ

III

ՏԵՄՆ ՕՐ ԵՐՈՒՍԵՂԷՄՈՒՄ

1893 թուի

Հանապարհորդական սպաւորութիւններ.



10042

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊՈԱՅԵԱՆԻ
Կարգաթիւ

[The page contains extremely faint and illegible text, likely bleed-through from the reverse side of the document. The text is scattered across the page and cannot be transcribed accurately.]

ՏԵՍՆ ՕՐ Կ. ՊՕԼՍՈՒՄ

Վաղուց ցանկանում էի տեսնել Պօլիսը: Ինձ հետաքրքրում էր ոչ այնքան հռչակաւոր Բօսֆօրը իր գեղանկար և հրաշալի տեսարաններով, ոչ էլ Մարմարայի ծովը, պատմական Ոսկեղջիւրը, որքան Թիւրքիայի հայ ժողովրդի մտաւորական և ինտելիգէնտ համարվող կետրօնը: Դեռ մանկութիւնիցս ականջներս սովորել են լսելու սահմանադրութիւն, ազգային ժողով, քաղաքական, ուսումնական, տնտեսական, դատաստանական ատեաններ, մի խօսքով ազգային մի փոքր կառավարութիւն՝ մինիստրական պօրտֆէլյներով: Եւ ահա փափագս իրականացաւ...

Այս տարվայ յուլիսի 1-ին, ժամը 4-ին, կէսօրից յետոյ, անգլիական «Ayrshier» («Այրշայր») շոգենաւը, որով գնում էի ես Բաթումի նաւահանգստից, պարզեց իր անգլիական դրօշակը և մտաւ Սև ծովի անհուն տարածութեան մէջ:

Երեք օր ինձանից առաջ, 1893 թ. յունիսի 29, «Ալէքսանդր II» շոգենաւով մեկնել էին Էջմիածնի հրաւիրակները: «Այրշայրը» մի սրէնթաց շո-

գենաւ է. նրա նպատակակէտը Ալէքսանդրիան է. Կ. Պօլիս պիտի մնայ մի օր, գնում է ուղղակի, առանց այս և այն նաւահանգիստներում կանգ առնելու:

Հիանալի է Սև ծովը խաղաղ ժամանակ. արեգակի ծագումը պէտք է դիտել առաւօտեան ժամը 4-ին. տիրում է կատարեալ խաղաղութիւն. զեփիւռը փչում է մեղմիկ, արշալոյսը վառ. հրեղէն գունդը կամաց-կամաց բարձրանում է: Հրաշալի է բնութիւնը, անհուն տարածութիւն ծովի, վերևը պարզ երկինք, չորս կողմը ջուր, կապուտակ, վճիտ, հայելու մակարդակի նման: Ահա և արեգակը ամբողջովին դուրս եկաւ ծովի միջլից. ամբողջ մակերևոյթը փայլատակեց...

Երեկոյ է. արեգակը մայր է մտնում. նա ստացել է սկաւառակի ձև. շուրջը ունի մի օդ, որ աւելի լուսաւոր է, քան սկաւառակը: Հետզհետէ կլոր սկաւառակը հրեղէն գնդի է փոխվում, որքան զէպի ծոֆն է իջնում. մի և նոյն ժամանակ ծովի մակերևոյթից բարձրանում են կարմրաւուն, կապուտակ եթերական գունդեր, բարձրանում են օդի մէջ անհետանում իբրև տեսիլք: Ամբողջ 4 օր այսպիսի հիանալի տեսարան վայելելուց յետոյ՝ կիրակի, յուլիսի 4-ին, կէսօրից յետոյ, մտանք Բօսֆօրի նեղուցը:

Հետզհետէ մեր առաջ հրաշալի տեսարան է բացվում: Մենք նաւում ենք Եւրօպայի ե Ասիայի մէջտեղով. նեղուցի մի կողմը Րումէլիայի եզերքն են, միւս կողմը — Անատօլիայինը: Երկու կողմի ամբողջ տարածութեան վրա կառուցված են հոյա-

կապ պալատներ, ամարանոցներ և վիլլաներ, որոնք ծածկված են ճոխ բուսականութեամբ: Զանազան դեսպանատների, հարուստների, փաշաների գեղածիզաղ վիլլաները զարգարում են Բօսֆօրի ափերը:

Շագենաւեր, առագաստաւոր, զրահակիր նաւեր, նաւակներ, մակոյկներ սփռված են Բօսֆօրի երեսին: Բայց ահա մի մեծ, հոյակաւ պալատ, որի առաջ չէ տեսնվում ոչ մի նաւ, ոչ մի մակոյկ. նրա տեսքը, դիրքը այնքան գեղեցիկ է, որ իմ սրտից բղխում է մի բացականչութիւն. «Որքան երջանիկ է սրա տէրը»:

— Աշխարհիս ամենաթշուառ մարդն է դրա տէրը, պատասխանում է ինձ մեր նաւապետը. այդտեղ բանտարկված է դժբաղտ սուլթան Մուրադը. հարիւրաւոր սենեակների մէջ նա իրաւունք ունի միայն մի սենեակում մնալ և վայ այն նաւին կամ մակոյկին, որը կը համարձակվի նոյն իսկ երկու վերստի վրա մօտենալ այդ պալատին:

Այս հրաշալի բնութեան մէջ բանտ... կարելի է խելագարվել, և ինչպէս ասում են, սուլթան Մուրադ խելագարված է:

Մօտենում ենք մի աւելի հոյակապ պալատի, որն իբրև դշխոյ թագաւորում է ամբողջ Բօսֆօրի վրա. դա օսմանեան փաղիշահների, մեծագոր սուլթանների պալատն է — Դօլմա - Բախչէն է. բայց միթէ սուլթան Համիդը ևս բանտարկված է. ոչ մի նաւ, ոչ մի մակոյկ պալատի առաջ. կատարեալ անշարժութիւն և մեռելութիւն: Այդ պալատում 1877 թւին կատարվեց մի սարսափելի

եղեռնապորժութիւն. սուլթան Արզու-Ազիզը ըս-
պանվեց:—Տեսէք, ասեց նաւապետը, այժմ այդ-
տեղ է ապրում սուլթան Արզու-Համիզը, և մա-
տով ցոյց տուեց լեւան բարձրութեան վրա բար-
ձրաբերձ պարիսպներով, թնդանօթներով զրա-
հաւորված մի բերդանման պալատ. դա Ելզիզի
պալատն է:

—Նրա հարիւրաւոր սենեակների մէջ ապ-
րում է սուլթանը, շարունակեց նաւապետը, ամեն
ժամ փոխելով մի սենեակ. միայն երկու երեք
մտերիմ և հաւատարիմ պալատականներ զիտեն,
թէ ո՞ր սենեակումն է լինում որ ժամին: Այնտե-
ղից նա զիտում է ամեն մի նաւ, որը մտնում է
Բօսֆօրի նեղուցը և դուրս է գալիս, իսկ մտնող
և դուրս եկող անձինքների մասին նրան միշտ
տեղեկացնում են. մի ժամից յետոյ նա արդէն
կիմանայ մեր նաւի գալը. ահա, տեսէք:

Եւ, յիրաւի, այդ միջոցին մօտեցաւ օսմա-
նեան դբօշակակիր մի նաւակ և մի թիւրք աստի-
ճանաւոր սկսեց հետեւալ հարցուփորձը. — «Ո՞ր
նաւն է. — «Այրշայր». — Ո՞ւր է գնում. — Ալէքսան-
դրիա. — Քանի ճանապարհորդ կայ. — Մի հատ. —
Ո՞վ է. տուեցին իմ անունս, աւելացնելով՝ ուսա-
հպատակ: Որտեղից է գալիս. — Թիֆլիսից. — Ո՞ւր
է գնում. — Երուսաղէմ. — Ի՞նչ նպատակով. — Ուխտ.
— Կարող էք շարունակել.

Վերջապէս «Այրշայր» շոգենաւը գցում է խա-
րիսխը Ձէնկէլ-քէօյ, Անատօլիայի ափում: Երբ ես
պատրաստում էի իրեղէններս, նաւապետը նկա-
տելով մի քանի հայերէն գրքեր, որ Թիֆլիսից

հետս վերցրել էի, խորհուրդ է տալիս ինձ թողնել նաևում, «եթէ ոչ մաքսատան հետ մեծ դժուարութիւնների կը հանդիպէք», ասում է նա: Ահա և մաքսատան պաշտօնեաները պատրաստ կանգնած են ասում: Գրքերը թողնում եմ նաևում, սնդուկս և իրեղէններս մշակն իջեցնում է ասիւր, մի հուժկու, լայնաթիկունք հայ մշակ: «Էֆէնդըմ, ասում է նա, եթէ չէք կամենայ, որ ձեր սնդուկը տնտղեն, բաշխիչ մը տուէք աս շանը», և մի արծաթ մէջլիդ (1 ր. 70 կ.) խոժոռ տաճիկ պաշտօնեայից մի շողմարար, ամենաքաղաքավարի մարդ է գարձնում: «Էֆէնդին անշուշտ եկել է զուարճանալու Բօսֆօրի ասիերում, ասում է նա. ահ, անսման քաղաք է Իսլամբօլը, ցանկանում եմ ձեզ երջանկութիւն»: Այդպէս ազատելով մեր իրերը մաքսաւորի խուզարկութիւնից և փողմանելով, որ գրքերը թողի նաևում նաևապետի առաջարկութեամբ, վարձելով մի զայրդ, Անատօլիայի ասիից անցանք Բումէլիայի ասիւր, այսինքն Կ. Պօլսի ասիական մասից եւրօպականը: Նաևապետս ասաց, որ օտարականների համար ամենայարմարը՝ Պերա թաղը գնալն է, որովհետև այդ թաղը եւրօպական թաղ է և բոլոր հիւրանոցները այդտեղ են: Նա ինձ տուաւ մի հիւրանոցի, Hôtel de Byzance-ի հասցէն և հեռացաւ:

Միայնակ կանգնած էի Բօսֆօրի ասիին և ըսքանչացել էի գեղանկար տեսարանից. այս տեսակ հիանալի բնութեան բարիքը վայելող մի քաղաք պէտք է ինքն ևս հիանալի լինի: Կարո՞ղ էի ենթադրել, որ 10 օրից յետոյ իմ ամենամեծ ու-

բախութիւնս պիտի լինէր Կ. Պօլիս թողնելը...

Վարձում եմ մի կառք և ասում եմ, որ տանի ինձ Պէրա, կամ Բէյ-օղլու: Կառապանը պահանջում է մի մէճիզ. կէս ժամից յետոյ կառքը մըտնում է մի նեղ փողոց, Պէրայի մեծ փողոցը: Այդ՝ եւրօպական ամենաարիստօկրատիական փողոցն է. այդտեղ են բոլոր եւրոպական դեսպանատները, հիւպատոսարանները, նշանաւոր մագաղինները, հիւրանոցները և անթիւ, անհամար brasserie-ները, այսինքն այնպիսի պանդոկներ, ուր մտնում են սուրճ, զարեջուր խմելու, պաղպաղակ և քաղցրեղէն ուտելու, ճաշելու և ընթրելու: Առաւօտից մինչև երեկոյ brasserie-ները լի են բազմութեամբ. գրանք նոյնն են, ինչ որ սրճարանները, միայն մատչելի, իրանց զներով և շքեղութեամբ, հարուստ դասակարգին: Պէրայի փողոցները նեղ են, փոշոտ, կեղտոտ, տները բազմայարկանի, խիտ, միմեանց վրա կուտակված, մեծ մասամբ փայտէ: Օդը հեղձուցիչ է, սարսափելի շոք է. շները, Կ. Պօլիսի այգ աւանդական շները, այստեղ այնքան էլ շատ չեն. կարծես այնտեղ եւրօպացիներից մի քիչ քաշվում են, թէև նրանց թիւը ինձ այդտեղ սարսափելի շատ երևաց,

Հիւրանոցի տէրը յոյն է. իմ հարցմունքին, արդեօք սրտեղ են իջևանել էջմիածնից եկած եւ պիսկոպոսները, նա զարմացական պատասխան է տալիս. «Չը գիտեմ, այդ մասին լրագիրներում ոչինչ չը կայ գրված. բայց եթէ կամենաք՝ ծառան կառաջնորդէ ձեզ Պէրայի հայոց մայր եկեղեցին, այնտեղ կարող էք լուր ստանալ»:

Մի հայ մշակ ընկնում է առաջս. գնում ենք Պերայի մեծ փողոցով. ժամը 6-ն է երեկոյեան. դեռ սարսափելի շք է, փոշին ամպի նման բարձրանում է: Կիրակի օր լինելով՝ փողոցում ճեմում են այր և կին. լսվում է միայն յոյն և ֆրանսիական լեզու. մագազինների վիտրիններում դրված են միայն ֆրանսիական լրագիրներ «Levant Herald», «Stamboul» և ֆրանսիական բոմաններ: Որքան աչք եմ ածում, ոչ մի հայերէն կամ տաճկերէն լրագիր: Ահա մի brasserie, նրա առաջ, փողոցի վրա, զոյգ զոյգ մարդիկ, աթոռների վրա նստած՝ նարդի են խաղում, ոմանք միայն ժիլետով, վերարկուները՝ հանած: Այդտեղ աչքի եմ անցնում օրվայ լրագիրները, որոնում եմ քրօնիկ բաժինը, ոչ մի տեղ մի հատ խօսք չեմ գրանում. էջմիածնի եպիսկոպոսների մասին: Լրագիրները ամբողջովին զբաղված են Եգիպտոսի խեղիվի այցելութեամբ, սուլթանի կողմից նրան ցոյց տուած փառաւոր ընդունելութեամբ և գովարանում են այն վեհանձնութիւնը, որով սուլթան Համիդը զիջանում է իր սպասաւորներին (ակնարկ խեղիվին) մինչև անդամ այդպիսի փառաւոր ընդունելութիւն ցոյց տալու: Քրօնիկի կամ ներքին տեսութեան բաժնում կարդում եմ թէ՛ «Շնորհիւ վեհափառ սուլթանի, գաւառներում ամեն տեղ տիրում է կատարեալ անդորրութիւն և բարօրութիւն և բնակիչները զբաղված են աղօթք անելով նորին կայսերական վեհափառութեան թանկագին կենաց համար»: Փողոցում այդ միջոցին տեղի է ունենում մի իրարանցում: Նայում

եմ և ի՞նչ եմ տեսնում: Մի քանի զապտիաներ, իրանց առաջը ձգած մօտ 10 հայ մշակներ, բոլորի ձեռքերը ևս շղթայած, հայհոյելով առաջ են քշում: Նարդի խաղող զբաղված հասարակութիւնը, եւրօպական հասարակութիւնը, անտարբեր նայում է իբրև մի սովորական բանի վրա և միայն ասում է. Ce sont les portefaix armeniens (սրանք հայ մշակներ, են): Նայում եմ ինձ առաջնորդող մշակին, խեղճը գունատ է և գողում է:

Մի քանի օրից յետոյ իմացվեց, որ այդ խեղճերի միակ յանցանքն այն է եղել, որ ստացել են իրանց երկրից նամակներ, որոնց մէջ գանգատվում են եղել թէ իրանց վիճակը անտանելի է դարձել: Պատմում են, որ համարեա ամեն օր տեղի են ունենում Նազըմ-բէկի հրամանով այդպիսի ձերբակալութիւններ:

Վերջապէս մշակը մտնում է մի մեծ դռնով. փողոցից բոլորովին անկարելի է իմանալ թէ այդտեղ եկեղեցի կայ, մանաւանդ երբ փողոցի դուռը փակված է: Մտնում եմ եկեղեցի և սկզբից կարծում եմ թէ սխալվել եմ: Եկեղեցին հայ եկեղեցու նման է. սեղանը, խորանը, վարագոյրը. հայ քահանաներ երգում են շարական, բայց ժողովուրդը եկեղեցու մէջ նստած է նստարանների վրա, որոնք կարգով շարված են երկու կողմից, մէջտեղ թողնելով միայն միջանցք: Բանից դուրս եկաւ, որ Կ. Պօլսի բոլոր եկեղեցիները ահա 10—15 տարի է նստարանների սովորութիւնը մտցրել են:

Յիշեցի այդ միջոցին մեր աւանդապահներին. հապա այդպիսի նորաձևութիւն ի՞նչու չէ արժա-

նացել նրանց ուշադրութեան: Ձէ՞ որ հայ եկեղեցում մի նշանախեցի փոփոխութիւնն անգամ կարող է կործանման տանել այդ եկեղեցին: Եւ ահա Կ. Պօլիսը, այնտեղ ուր բազմած է հայոց պատրիարքը, թոյլ է տալիս հայ եկեղեցիներէ մէջ մտցնել բողոքականներից և կաթօլիկներից վերցրած մի նորաձևութիւն: Արդեօք այդ նորաձևութիւնը վտանգի է ենթարկել հայ եկեղեցու գոյութիւնը—ահա մի հարց, որով զբաղվելու լիակատար իրաւունքը թողնում ենք մեր աւանդապահներին:...

Երբ առաջին տպաւորութիւնն անցաւ և իմացայ, որ սա Պերայի հոչակաւոր Ս. Երբորդութեան եկեղեցին է, յիշեցի, որ այդ եկեղեցու մի քահանայն իմ վաղածանօթն է, բայց ահա և նա ինքը, Ծանօթս ամենևին չէր փոխված, նոյնն էր, ինչպէս 1885 թւին Կովկասում տեսել էի: Ես յայտնեցի, որ գնում եմ Երուսաղէմ և խնդրեցի տեղեկութիւն տալ ինձ, թէ ուր են իջևանել էջմիածնի հրաւիրակները և ի՞նչ ընդունելութիւն արեց նրանց Կ. Պօլիսը:

«Այստեղ խօսել անկարելի է, դնանք իմ սենեակ»: Իմացայ, որ անխուսափելի լրտեսները այստեղ ևս պակաս չեն:

Ծանօթս պատմեց ինձ, որ էջմիածնի հրաւիրակները հասել են միայն երեկ, շաբաթ օր, և թէև սկզբում Քաղաքական ժողովը վճռել էր նրանց համար առանձին հիւրանոց վարձել և լաւ ընդունելութիւն ցոյց տալ, բայց յետոյ այդ վրձիւնը փոխվել է, և Աշըգեան պատրիարքը երկու

վարդապետ է ուղարկել նաև բարի գալուստ ասելու համար և յայտնելու, որ հրաւիրակ-եպիսկոպոսները պիտի գան իջևանեն իր տանը—Մաքրիգիւղ, իսկ հրաւիրակ վարդապետները պիտի գընան բնակվեն Երուսաղէմատան մէջ: Հրաւիրակները գալու մասին արգելվել է լրագիրներին որ և է բան գրել, միայն այսօր հրաման է գրվել, որ վաղը յայտնեն, թէ էջմիածնից այս ինչ եպիսկոպոսները և այս ինչ վարդապետները ուխտի գընալով Երուսաղէմ, մի քանի օր հիւր պիտի մնան պատրիարքի մօտ: Առհասարակ մեր դրութիւնն անտանելի է այժմ, ասաց խօսակիցս. ամեն բան անկերպարան վիճակի մէջ է: Կաթողիկոսի մասին խօսելը արգելված է: Այսօր պատարագին, Արիստակէս սրբազան Սեդրակեան, աւագ հրաւիրակը, եկաւ եկեղեցի և քարոզ խօսեց. մի սովորական կրօնական քարոզ. բայց այս ըօպէիս, չէ անցել 5 ժամ, յանդիմանութիւն ստացվեց և հարցնում, թէ ո՞րի հրամանով և թոյլատուութեամբ Սեդրակեան եպիսկոպոսը քարոզ է խօսել...

Ես մեկնեցի եկեղեցուց ծանր տպաւորութեան տակ. նորից սկսեցի պտտել փողոցները, մտնել brasserie-ները: Ժամը 10-ին փողոցներում այլ ևս ոչ ոք չկար. բնակիչների տեղը բռնել էին շները: Այդ օրվանից իմ տպաւորութիւնը այն եղաւ, որ Կ. Պօլսում տիրում է մի տեսակ սարսափ. ոչ մի վստահութիւն. ամեն տեղ խօսում են կամաց, շուկով. ոչ ոք վստահ չէ, թէ դիմացի խօսողը լրտես չէ:

Յուլիսի 5-ին, առաւօտեան, դուրս գալով

հիւրանոցից, ես վճռեցի անցնել բուն Ստամբուլի մասը, այնտեղ, ուր գտնվում են նախկին Բիւզանդանդիայի բոլոր հնութիւնները և նրա պանծալի գեղեցկութիւնը—Ս. Աօֆիան, առաջ հրաշալի քրիստոնէական եկեղեցի, այժմ հռչակաւոր մզկիթ, այնտեղ ուր գտնվում են Բարձր Դուռը, հռչակաւոր մզկիթները, Թանգարանը, Մուհամմէդ մարգարէի նուիրական խիլդան (վերարկուն) և հայերիս համար ոչ նուազ հռչակաւոր Գում-Գափուի Պատրիարքարանը ու Մայր-եկեղեցին։ Հարցնում եմ անցորդներից ճանապարհը, պէտք է անցնել Պէրայից Ղալաթա, և իջնել դէպի Ղալաթայի կամուրջը։

Ճիշդն ասած, սկզբում շատ դժուար է նորեկին սթափել տպաւորութիւնների այն անազին շարքից, որ մարդ ստանում է Կ. Պօլիս մտնելով։ Պօլիսը ներկայացնում է Արևելքը՝ վառ և հոյակապ գոյներով նկարված։ Դուք նկատում էք, որ այստեղ մի ուրիշ աշխարհ է։ Առաջին քայլից, երբ նաւից իջնում էք ափը, առաջին խօսքը ձեր ականջին հնչում է ֆէսաւոր տաճկի «բաշխիշը»։ Եւ այստեղ «բաշխիշը» թագաւորութիւնն է։ Տալիս էք բաշխիշը այն յոյսով, որ շուտով գնաք տեսնէք այն հիանալի գեղանկար պատկերը, որ նաւի վրայից երևում էր ձեր աչքին. բայց բաւական է, որ մի քանի քայլ անէք, մի երկու երեք փողոց անցնէք, նոյն իսկ եւրոպական—ջրեղ համարված մասում, Պէրայում, և մեծապանծ ու հոյակապ պանօրաման, որ նաւից բացվել էր ձեր առաջ, անհետանայ։ Պէրայից դէպի Ղալաթա

անցնելու համար՝ երկաթուղի կայ կառուցված տօնների մէջ: Այլաթան Պօլսի մի կարևոր մասն է, Բօսֆօրի հաւասար: Բաւական է ոտք կոխէք այդ փողոցը, որ իսկոյն զգաք թէ Արևելքումն էք:

Այլաթա կոմ Galata, Ջենովայի հանրապետութեան նախկին բնակավայրն է և վաճառականական կենտրոնը Արևելքի հետ. դեռ կանգուն է այն բարձրաբերձ աշտարակը, որ ջենովացիները կառուցել են իրանց տիրապետութեան ժամանակ: Բօսֆօրին նայող գծի վրա եղած շինութիւնները զանազան շոգենաւային գրասենեակներ են և գործակալութիւններ. յետոյ գալիս են տաճկական ձևի անձուկ երկ կամ եռյարկանի տները. ապա Այլաթայի փողոցը նեղ, կեղտոտ: Երկու կողմը շարված են խանութներ՝ մսավաճառների, կանաչեղէն, պտղեղէն ծախողների, զանազան խաներ (քարվանսարաններ), մագազիններ, լումայափոխների կրպակներ: Խիտ բազմութեան մէջ, որ բազկացած է յոյնից, տաճկից, հայից, ֆէսերով, չամաներով, դժուար է քայլ անել. մի կողմից մարդկանց բազմալեզու աղաղակները, բազմաթիւ ծանրաբեռնված էշերի զուցը, դերվիշների միահնչիւն գոռոցը, շների հաչոցը, միւս կողմից տրամպաի զանգակների ղօղանջիւնը—այնպիսի մի բարելոնեան խառնակութիւն են առաջ բերում, որ մարդու ականջները խլանում են: Այդպիսի մի կեղտոտ, նեղ փողոցում է գտնվում և Այլաթայի հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին, շրջապատված մսի, բանջարեղէնի կեղտոտ խանութներով, որի շինութեան մէջ գետեղված են և Թիւրքիայի 3

միլիոն հայերի ազգային երեսփոխանական ժողովը և Կենտրոնական մայր վարժարանը:

Ահա այդ Ղալաթայի հոչակաւոր փողոցով պէտք է անցնել Ստամբուլի մասը դնալու համար: Բայց այդ դեռ ոչինչ. այն կամուրջը, որով պիտի անցնէք, աւելի հոչակաւոր է: Ղալաթայի կամուրջը, փայտից շինված, ձգված է Ոսկեղջիւրի վրա և միացնում է Պէրան ու Ղալաթան բուն Պօլսի կամ Ստամբուլ կոչված մասի հետ: Հասնում եմ կամրջին. նրա գլխին տեսնում եմ կանգնած երեք չորս տաճիկ, հագերնին մի երկար սպիտակ շապիկ, և ուրիշ ոչինչ. ոտաբորիկ, գլխաբաց, ձեռները պարզած դէպի անցորդները. ամենքը 10 փարա փող են տալիս: Կարծում եմ, որ դրանք մուրացկաններ են և իմ մտքում զարմանում եմ, որ Կ. Պօլսի ըստ ընակիչները այդքան աղքատասէր են: Եւ ես տալիս եմ 10 փարա: Անցնում եմ երկար կամուրջը և երբ հասնում եմ միւս ծայրին, դարձեալ նոր չորս մուրացկաններ, որոնք միւս կողմից եկող անցորդներից նոյնպէս փող են առնում, իւրաքանչիւր անցողից 10 փարա (5 կ.), և այդ մուրացկան համարածներս տուրք հաւաքողներն են: Ասում են, որ տարեկան այդ կամուրջի տուրքից գալիս է 300,000 ոսկի օսմանեան (8 միլիոն բուրլի) և այդ գումարը յատկացրած է ի վաղուց անտի սուլթանների հարէմի պահպանութեան: Որպէս զի տուրք հաւաքողները չը գողանան, չը թաղցնեն փողը՝ իրանց հագուստների մէջ, նրանց հագցնում են միայն մի երկար կտաւէ շապիկ և ուրիշ ոչինչ. իւրաքանչիւր 2

Ժամը մի անգամ նրանք փոխվում են: Կամրջի երկու ծայրին ևս մի մի կայարան կայ, որտեղ նստած են մի քանի պաշտօնեաներ և ստանում են հաւաքողների փողերը, մի քանի անգամ տընտղելով նրանց շապիկը: Այդ պաշտօնեաների վրա հաստատված են ուրիշ վերահսկողներ, բայց և այնպէս, ինչպէս ասում են, համարեա կէսը գողացվում է: Իւրաքանչիւր անձ, օրը քանի անգամ անցնի կամրջից, պէտք է ամեն մի անցնելիս 10-ական փարա վճարէ: Եւ այդ կատարվում է խիստ արագ. ամեն անցորդ պատրաստ ունի ձեռքին փողը, տալիս է և անցնում: Աստուած վկայ, շատ լաւ եկամուտների աղբիւր են մտածել սուլթանները իրանց հարէմի համար. միայն ստանալով այդքան ահագին գումար (կառքով անցնողներն ամեն մի անգամ 5 դրուշ կամ 30 կօպէկ պիտի վճարեն) պէտք է մի քիչ անցնողների մասին ևս մտածել: Էլ դրանից աւել վատ կամուրջ չեմ տեսել. փայտերը փտած, մաշված, խոռոչներով, այնպէս որ կառքով զնալիս տեղիցդ վեր վեր ես թռչկոտում և քիչ է մնում մի տեղդ շարգվի: Առաւօտեան ժամը 7-ից մինչև երեկոյեան 10-ը կամուրջը բաց է. սարսափելի մեծ է անցնողների թիւը: Կամուրջի միջին մասը շարժական է: Ժամը 10-ին այդ միջին մասը հանվում է մեքենաներով և նրա միջով Մարմարայում և Բօսֆօրում հանգստացող նաւերը անցնում են Ոսկեղջիւրը, որտեղ շարված են օսմանեան տէրութեան զրահաւոր նաւերը և պատերազմական նաւատորմը: Կամուրջի միւս կողմի,

Սասանոյի փողոցները և շուկաները նոյնպէս նեղ, կեղտոտ, հոտած և խիստ բազմութեամբ լցված են:

Կամրջից անցնելիս յանկարծ դէմ առ դէմ պատահում եմ կաթողիկոսական պատգամաւորներից մինին. դեռ ես չէի կարողացել ողջունել, որ նա արագ մօտենալով ինձ ճներողութիւն, շատ կը ցանկայի տեսակցել ձեզ հետ, բայց երկիւղ կը կրէմ, լրտեսները կարող են տեսնել և մատնել զիս: Խօսքերը ասելով, շտապով հեռացաւ... Ես ապշած մնացել էի. նոյն իսկ մի ականաւոր հայ Պօլսում այժմ վախնում է տեսնվել օտարերկրացի իր մի ծանօթի, բարեկամի հետ: Ի՞նչ անի խեղճը. երկու ժամից յետոյ կը մատնվի Նազըմբէյի բանտին...

Այստեղ պէտք է յիշեմ, որ Ղալաթայի կամրջից է սկսվում շոգենաւերով և մակոյկներով երթևեկութիւնը ու հաղորդակցութիւնը Անատոլիայի կամ Պօլսի ասիական մասի և Ոսկեղջիւրի երկու ասիերի հետ: Ուստի զանազան շոգենաւերի նաւահանգիստները և կայարաններն այդ կամրջի երկու կողմն են հաստատված:

Վերջապէս կամրջից անցնելով գնում եմ Սիրքէջի, որտեղ գտնվում է երկաթուղու կայարանը: Այդ երկաթուղու գիծը անցնում է Սիրքէջից Նդի-գուլէ, Գում-գափու, Սամարիա, Ետիմահլէ, Մաքրիզիւղ և Ս. Ստեֆանօ թաղերը ու արուարձանները: Դրանք ամենախիտ թաղերն են, բնակված հայերով, յոյներով և տաճիկներով:

Այդ երկաթուղով պէտք է գնալ Եւրօպա: Երկաթուղին գտնվում է աւստրիացիների ձեռ-

քում, որոնք իրանց մաքրութեամբ և կարգերով
առճիկներէից շատ էլ չեն առաջացել...

Գում-գաժուռի կայարանը հասնելով, իջնում
եմ և նրա առաջ գտնվող սքնատան նստած բազ-
մաթիւ հայերի մինից հարցնում եմ Պատրիար-
քարանը և Մայր-եկեղեցին տանող ճանապարհը:
Նա ցոյց է տալիս... «Ձօ. ասում է մինը իր ըն-
կերներին, գուցէ դա էլ հրաւիրակների հետ ե-
կած է. նայէ գլուխդ խաղ մը չը գայ»... Դար-
ձեալ նոյն վախը Նազըմ-բէյի ճիրաններն ընկնե-
լու: Հասնում եմ մի նեղ, շատ նեղ, կեղտոտ փո-
ղոցի բերանը. տարակուսում եմ. միթէ այս փո-
ղոցում կարող է լինել հայոց Պատրիարքարանը
և Մայր-եկեղեցին: Մի քանի քայլ անելուց յետոյ
այդ փողոցով, որով երկու հոգի հազիւ կարող են
անցնել, հասնում եմ եկեղեցու առաջ: Դա Մայր-
եկեղեցին է, այնտեղ, ուր թողված են Յարու-
թիւն ամիրա Պէզճեանը և Ներսէս պատրիարք
Վարժապետեանը: Եկեղեցին մեծ է, ընդարձակ,
բազկացած երեք մասից և նստարաններով: Պա-
տարազը նոր էր սկսվել, երգեցողութիւնը ներ-
դաշնակ և կանօնաւոր: Փողոցի դրան կից մի
փոքր սենեակում լուսարարը ծախում է մոմ. ա-
մեն մանող առնում է մի հատ, մանում վառում
պատկերի առաջ, մի ծուներ դնում և դուրս գա-
լիս... Ըստ մեծի մասին մշակներ են: Չը նայելով,
որ այդ օրը մեռելոց է, ոչ ոք կը կայ բարձր հո-
գևորականութիւնից. երևում է, որ ոչ ոք սիրտ չի
անի նոյն իսկ մեռելոց օրը Ներսէսի գերեզմանի
վրա հողեհանդիստ կատարել... Մտեհնում եմ այդ

գերեզմանին և համբուրում: Հազիւ դուրս եմ գալիս գաւիթը, մի եւրօպական հագուստով, շքեղ հագնված, Ֆէսը գլխին հայ երիտասարդ մօտենում է:

— Գուք պարոն... էք (տալիս է անունս):

— Այո, թնչ էք կանենում:

— Վեհ, էֆէնդի, ձեր անունը յայտնի է մեզ, կը գնաք մեր պաշտելի Հայրիկի քով. գիտէք, այժմ հայկական խնդիր անոր շուրջ կը դառնայ. սուլթան կը վախնայ Պօլսէն թողնել անցնելու: Առաջին անգամ էք այստեղ. անշուշտ գիտէք, յուլիսի 15-ի դէպքն այստեղ եղաւ. Աշրգեան լաւ մը ծեծվեցա...:

Գաւթում կանգնածները խէթ խէթ նայում են պարոնի վրա... Ես հատկացայ. սա ևս Նազրմբէյի գործակալներէցն է, ուստի աճապարեցի դուրս դալ առանց պատասխանելու... Հարցնում եմ՝ ձքտեղ է Պատրիարքարանը:

«Ահա ձեր առաջ, ասում է մէկը, ցոյց տալով մի խարխուլ, փայտաշէն և հին տուն, եկեղեցու հանդէպ: Մի մեծ փայտեայ դուռ, վրան գածված կիսալուսնաձև մի երկաթէ մեծ կիսապայտ, առանց որ և է արձանագրութեան: Այդ Պատրիարքարանի գլխաւոր դուռն է: Մտնում եմ այդ դռնով. երկու դավազ կամ բարապան, գաւթում նստած, վայելում են նարգիլէ և սուրճ: Նրանցից մինը խոժոռ նայում է, իսկ միւսը շողմարար դէմքով մօտենում է և իմանալով, որ կամեեում եմ այցելել Պատրիարքարանը, առաջնորդում է ինձ:

Թիւրքիայի 3 միլիօն հայ ժողովրդի կենսա-
բնական վարչութեան հաստատութիւնը, հայոց
Պատրիարքարանը բաղկացած է մի մեծ սրահից,
կահաւորված եւրօպական կարասիքով և մի քանի
սենեակներից, որոնք իբրև թէ կազմում են դի-
ւանատուն, Իսկապէս դիւանատուն, այն մտքով,
որ մենք հասկանում ենք, չը կայ. ոչ կանօնաւոր
գործավարութիւն, ոչ կանօնաւոր գործեր պահել,
ոչ արխիւ, այլ մի երկու-երեք գրագիր, մի եր-
կունը մինչև անգամ գեանին ծալապատիկ նըս-
տած, ծնկների վրա գրում են: Գործերի մի մա-
սը, բացատրեց ինձ մի պաշտօնեայ, Ղալաթայի
խորհրդարանումն է, մի մասն այստեղ: Ընթացիկ
գործերը վարում է պատրիարքական փոխանորդ
հայը. պատրիարքը վաղուց է չէ իջնում Պատ-
րիարքարան: Պաշտօնապէս նա հրաժարված է,
բայց իրօք միջամտում է բոլոր գործերին: Նրա
անունը կայ, ինքն չը կայ. կատարեալ բօսս է
տիրում Պատրիարքարանում:

Իջնելով գաւիթ, ես նորից գրաւեցի խոժոռ
գաւազի ուշագրութիւնը:

Յետոյ ինչպէս իմացայ, այդ զավագը ամենա-
զօրեղ մարդն է, մինչև այն աստիճան, որ նրան
ոչ ոք չը համարձակվեց վնդել, երբ նա ազգային
հիւանդանոցից խարէութեամբ հանելով մի գաւա-
ռացի երիտասարդ աղջկան, տանում ծախում է
անառականոցներից մինում, որովհետև... նա
Նազըմ-բէյի գործակալն է...

Ծանր և ճնշող տպաւորութեան տակ դուրս
գալով Պատրիարքարանից, ես փողոցում հանդի-

պեցի Գէորգ վարդապէտ Երիցեանին, Բօլզարիայի հայերի հոգևոր պատգամաւոր՝ կաթողիկոսական մեստրութեան, որը հրաւիրեց ինձ մտնել պատրիարքարանին կից մի շինութիւն — Երուսաղէմատունը, ուր մտնւմ է Երուսաղէմի պատրիարքի փոխանորդ Սիմէօն արքեպիսկոպոս Սէֆէրեանը, որ Կ. Պօլսի և Կիլիկիայի բոլոր ազգային գործերի մէջ այնքան մեծ դեր է խաղացել: Ուրախութեամբ մտայ այդ վանատունը, մտնաւորդ որ էջմիածնի վարդապետները այդտեղ էին իջևանել:

* * *

Յուլիսի 8-նէ. ահա մի քանի օր է, որ Երուսաղէմատան հիւրն եմ. Պօլսի մէջ միակ հայ վանական հաստատութիւնը կարելի է համարել: Երուսաղէմի միաբանները միակն են, որոնք փոքր ի շատէ վանական կեանք են վարում Պօլսում, մինչդեռ բազմաթիւ եպիսկոպոսներ և վարդապետներ՝ բոլորովին աշխարհային, շատերը փափկատուն կեանք են վարում և մեծ մասը ապրում են ընտանիքների մէջ, սկսած Խորէն պատրիարք Աշրգեանից: Վերջինս գոնէ տեսականապէս քարոզում է վանական համեստ կեանքի օգտակարութիւնը, հրատարակելով «Կենցաղ հոգևորականաց» անունով հոգեշահ գիրքը...

Այս մի քանի օրվայ ընթացքում Պօլսի ամբողջ մամուլը, թիւրք, ֆրանսիական և հայկական, զբաղված է հայկական խնդրով, այսինքն նուիրում է ամբողջ համարներ և տպում է եր-

կար ե ձիգ յօդուածներ, նկարագրելով կամ Էն-
կիւրիայի և Մարզուանի քաղաքական յանցան-
քով ամբաստանված հայերի դատը, որ այժմ
քննվում է Գաղատիայի դատարանի առաջ, կամ
պաշտօնական հերքումներով ասպնուցանելով
Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի մնանկու-
թիւնը, կամ ցոյց տալով, որ հայ ժողովուրդը
երջանիկ և խաղաղ կեանք է վարում ամբողջ
օսմանեան կայսրութեան մէջ, միակ մի զբաղմունք
ունենալով—եթէ միայն այդ ևս զբաղմունք կարելի
է համարել—այն է օրհնել Վեհափառ զԹառատ
սուլթանի կեանքը: Ամբողջ Պօլսի խօսակցութեան
առարկան, թէև խլրտաբար և աներևոյթբար,
հայոց խնդիրն է, Գաղատիայի դատարանի հրա-
պարակային քննութիւնն է և դատավարութիւնը,
«Մարահ» և «Թարիք» հիսապաշտօնական թիւրք
լրագիրների յօդուածներն են «Հերքումն սու-
թեանց» խորագրով, յօդուածներ, որ արտատը-
պում են և բոլոր հայ լրագիրները՝ «Արևելք»,
«Հայրենիք», «Փունջ», կառավարութեան հրամա-
նով: Մի խօսքով, ամբողջ Պօլսի օդը ելէքրտա-
կանացած է հայոց խնդրով:

Ընդհանուր զարմանք է տիրապետում, որ
Էնկիւրիայի և Մարզուանի յեղափոխականների
դատը և Գաղատիայի դատարանի արձանագրու-
թիւնները տպագրելով, թիւրք կառավարութիւնը
գործադրում է «Հայ յեղափոխական», Հայկական
խնդիր», «Հայաստան» խօսքերը: Եւ այդ պրօցէսի
հետ միտսին, ամեն օր տպագրվում էին և բազ-
մաթիւ հանրագրութիւններ, իբրև զրված կայ-

սրութեան զանազան անկիւնների հայ ժողովուրդո-
ւնքի կողմից: Այդ հանրագրութիւնները ազերաւ-
դրեր են յանուն վեհափառ սուլթանի, որոնց մէջ
հայ ժողովուրդը յայտնում է թէ. «շնորհիւ նորին
վեհափառութեան, երջանիկ ու անդորր կեանք կը
վարէ հայ ազգը, վայելելով կատարեալ ազատու-
թիւն, կեանքի, գոյքի ու պատուի երաշխաւորու-
թիւն. թէ իրան նողկանք կազդեն այն մի քանի
ապերախտ հայերը, որոնք կը ջանան սուտակա-
սպաս լուրերով ու անլուր զրպարտութիւններով
սխալեցնել Եւրոպայի հանրային կարծիքը ե ինքն,
այդ երիցս երջանիկ հաւատարիմ հայ ժողովուր-
դը որ և է կերպով համերաշխ և համամիտ չէ
այդ բանսարկու, դատարկապորտ և թեթեամիտ
հայերի հետ»:

Այդ բոլորի հետ միասին մեծ զարմանք էր
պատճառում և այն, որ Աշրգեան Խորէն պատ-
րիարքը, թէև հրաժարական տուած, բայց մի այն-
պիսի պատուի էր արժանացել սուլթանի կողմից,
որին շատ բնորդ, նոյն իսկ մեծ-եպարքոսները
զժուարութեամբ են արժանանում: Օսմանեան
400 ոսկու հետ միասին սուլթանը շնորհել էր
պատրիարքին ի մ թ ի ա զ ի ոսկի շքանշանը:
Աշրգեան ինքը զգալով, որ կայսերական այդ սե-
սակ մեծ շնորհին արժանանում էր ոչ հայ ազ-
գին մատուցած ծառայութեան համար, հարկաւոր
համարեց, կասկածները փարատելու համար, խօ-
սել եկեղեցու մէջ հետեւեալ քարոզը. «Ժողովուրդ
հայոց. վեհափառ սուլթանն իմ կուրծքիս կախե-
լով այս նշանը, ձեր կուրծքը կախած եղաւ. այս

մեծ նշանը ամբողջ հայոցս հաւատարմութեան համար սուլթանի դէպի մեզ ունեցած սիրոյ գրաւականն է: Աղօթեցէք եկեղեցոյն մէջ կայսեր արեւատութեան համար:

Շատ լաւ հաւատարմութեան գրաւական է երբ մի քանի օր յետոյ, Տ հոգի կախաղան պիտի բարձրանային անհաւարմութեան յանցանքով դատապարտված և հարիւրաւոր անձինք ես Ֆէզանի կիզիչ անապատները պիտի արսորվէին...

Բայց դառնանք մեր պատմութեան:

Տարակոյս չը կայ, որ բոլորին զարմանք ազդող այդ կերպարանափոխութիւնը և արտասովոր անցքերն ունէին իրանց պատճառը: Բայց ի՞նչպէս իմանալ:

Երուսղէմատան մէջ ոչինչ իմանալ չէի կարող. նախ՝ գիտէի, որ վանահայր Սիմէօն արքեպիսկոպոս Սէֆէրեան, որի ազգային ասպարիզի վրա ունեցած բազմալից գործունէութեան հետեւիւու առիթներ եմ ունեցած, սրտով, հոգով, համոզմունքով թիւրքօֆիլ է, այսինքն պատկանում է հայերի այն շրջանին, որը հայկական հարցի լուծումը Եւրօպայի և Բերլինի դաշնագրի միջոցով համարում է ցնորք և բուն ազգասիրութիւնը գտնում է նրանում, որ հայերն աշխատեն հաւատարիմ հպատակ մնալ սուլթանին և իրանց հաւատարմութեամբ ձեռք բերեն հարկաւոր վերանորոգութիւնները և առանձնաշնորհուհիները: Երկրորդ՝ հայ վանատան մէջ վտանգաւոր է նոյն իսկ այդ տեսակ խնդիրների մասին խօսել. ուստի ես վճռեցի բաւականանալ միայն Երուսղէ-

մատան հիւրասիրութեամբ և հետազօտութիւններս ուրիշ տեղ կատարել: Դիմել Աշըգեան պատրիարքին. բայց նա մինչև անգամ թիւրքօֆիլ չէ, այսինքն հակառակ է հայոց խնդրին ոչ միայն համոզմունքով, այլ թիւրքամոլ է, թիւրք կտուավարութեան և Նազըմ-բէյի հլու պաշտօնակատար: Ես դարձեալ փորձեցի դիմել Աշըգեան պատրիարքին, և գնացի Մաքրի-գիւղ ու ներկայացայ: Իմ ունեցած խօսակցութիւնս ես կը հաղորդեմ ընթերցողներին մի ուրիշ անգամ. Աշըգեանից միայն այն իմացայ, որ ամեծ է վեհափառ սուլթանի գութը դէպի հայոց ազգը և եթէ խել մը խելաներ չըլլային, հայազգը վաղուց ստացած կը լինէր իր ցանկացածը:

Բայց ում դիմել: Այդ միջոցին, էջմիածնի հրաւիրակութեան Պօլսում գտնված ժամանակ, հայերը փախչում էին մեզանից. ամենքը դիտէին, որ Նազըմ-բէյի գործակալները քայլ առ քայլ հետևում են իմանալու, ուր գնացին, ում հետ տեսնվեցին... Վճռեցի մի շրջան կատարել Պերայի հիւրանոցներում և brasserie-ներում: Պէրան, իբրև առանձնաշնորհեալ եւրօպական թաղ, աւելի ազատութիւն է վայելում: Այստեղ, brasserie-ների մէջ հանդիպեցի մի երկու եւրօպացիների, որոնց Պարսկաստանից ծանօթ էի և միայն այսքան կարողացայ իմանալ, որ սուլթանը վճռել է վերջ տալ հայոց խնդրին և որպէս զի երկրի իսկական գրութիւնն իմանայ, որովհետև իրանից ծածկում են, մի յանձնաժողով է ընտրել և անդամներին Ղուրանի վրա հանդիսաւոր երդում տալ տուել:

որ գնան նետաղօտին հայերի վիճակը և միայն ճշմարտութիւնը յայտնեն նրան: Ծանօթներս ինձ յայտնեցին. որ մեր բարեկամ, առաջ Գարսիաստանում գործող մի քաջ զիպլումատ, վաղուց նոյն պաշտօնով տեղափոխված է Պօլիս և բնակվում է Պէրայում: Նա կարող է իմ ցանկացած բացատրութիւնները տալ:

Առանց ժամանակ կորցնելու, գնացի զիպլումատ բարեկամիս տունը, ցոյց տրված հասցէով: Իմ բախտից նա տանն էր:

Եւ վերջապէս հանելուկը լուծվեց, կատարվող կերպարանափոխութեան պատճառն իմացվեց...

«Նախ քան ձեզ բացատրեմ թէ ինչ միտք և նպատակ ունեն, ասաց բարեկամս, լրագրական այդ յօդուածները, Բաղատիայի պրօցէսի հրատարակութիւնը, ես ձեզ կը խնդրեմ կարգալ այն գրքոյկը, որ այժմ մեծ դեր է խաղում: Եւ նա տուեց ինձ Ֆրանսերէն լեզուով մի փոքր բրօշիւր, տպված 1880 թուին Կ. Պօլսում, մի հայ գործիչի ձեռքով, հետեւեալ վերնագրով. «*Quelques indications sur les reformes á introduire dans l'administration de l'Arménie*» (Մի քանի ցուցմունքներ Հայաստանի վարչութեան մէջ մտցնվելի վերանորոգութիւնների մասին): «Այժմ կարելի է ասել, շարունակեց բարեկամս, որ դա մի ծրագիր է, որը նզիպտոսի նախկին արտաքին գործերի մինիստր Նուբար փաշան պատրաստել էր Հայաստանի ինքնավարութեան մասին՝ Բերլինի կօնգրէսին ներկայացնելու համար, բայց ձեր հանգուցեալ պատրիարք Ներսէս Վարժապետեանը

խիտ շարժուող էր դառել: Ահա այժմ Եւրոպական մեծ պետութիւնները կամենում են այդ ծրագիրը առաջ մղել ու հայկական հարցը դրանով լուծել:

Եւ ես սկսեցի կարդալ այդ ծրագիրը:

Նուրար փաշայի ծրագիրը, հիմն բռնելով այն իրողութիւնը, որ հայերը չեն ձգտում քաղաքական անկախութիւն ձեռք բերել, այլ ցանկանում են ունենալ քաղաքացիական ազատութիւն, գոյքի, կեանքի, իրանց կանանց և աղջիկների պատուի երաշխաւորութիւն, այն է այնպիսի իրաւունքներ, որ խոստացել են սուլթանները դեռ Գիւլիանէի Խաթի-Շէրիֆով 1840 թուից ի վեր, և որոնք վերահաստատել են Ռուսիան և Եւրոպական մեծ պետութիւնները սուլթանի համաձայնութեամբ Ս. Ստեֆանոյի և Բերլինի դաշնագիրներով, առաջարկում է այն միջոցները, որոնցով կարելի է իրագործել այդ ամեն վերանորոգութիւնները: Այդ միջոցներն են. 1) Հայաստանին տալ մի ընդհանուր կառավարիչ, որը պէտք է քրիստոնեայ լինի և ընտրվի 7 տարով, Եւրոպայի համաձայնութեամբ, ինչպէս ընտրվում է Լիբանանի ընդհանուր կառավարիչը. 2) Պէտք է զսպել քիւրդերին և հրոսակ չէրքեզների խմբերը և թոյլ չը տալ նրանց այլ ևս հարստահարել խաղաղ ժողովուրդը, յանձնելով իրան ժողովրդին իր պաշտպանութեան հոգսը, այն է կազմելով տեղական հայերից և մուսուլմաններից ժանդարմէրի և սափկանութիւն, որոնց գլխաւորներին կընտրէ ինքն ընդհանուր կառավարիչը. 3) Արզարողատութեան կամ գետտավորութեան գործը պէտք է

բոլորովին յեղափոխել, վերացնելով այժմեան գործող մէջլիսները և կազմակերպելով դատարանները բոլորովին անկախ վարչական իշխանութիւնից, տեղական պահանջներին և պայմաններին և եւրօպական օրէնսգիտութեան ընդհանուր ոգուն համաձայն. 4) Հարկահանութեան եղանակը պէտք է հիմնովին բարեփոխել, բաշխելով հարկերը հաւասարապէս ըստ գոյքի և կարողութեան ու երկրի տարածութեան. 5) Թէ ընդհանուր կառավարիչը և թէ գաւառների կառավարիչները պէտք է ունենան իրանց մօտ, իբրև խորհրդատու մարմիններ, նահանգական և գաւառական ժողովներ կամ խորհրդարաններ, որոնց անդամներին կընտրի ժողովուրդը. այդ ժողովների պիտաւոր գործը հարկերի և տուրքերի արգար և բարեխղճութեամբ ժողովելը կը լինի:

Երբ վերջացրի ծրագրի ընթերցումը, բարեկամս ոկսեց բացատրել գործը:

Այժմ թիւրօաց կառավարութիւնը միջից կէս է լինում, դիմելով անհեթեթ, անբնական և անարդար միջոցների՝ խեղդելու հայ ժողովրդի օրինաւոր պահանջները և նրա արդար բողոքները: Մինչև այժմ, երբ եւրօպական մեծ պետութիւնները և հասարակական կարծիքը բարեկամական խորհուրդներ էին տալիս սուլթանի կառակարութեան՝ վերջ դնելու հայերի անտանելի վիճակին, կառավարութիւնը աշխատում էր ապացուցանել, որ հայերը ենթակայ չեն որ և է հարստահարութեան և իբրև ապացոյց բերում էր ժողովրդի հանրագրութիւնները, որոնք ձեռք են

բերվում կուսակալների տէրբօրական միջոցներով: Այդ հանրագրութիւններին, աւելի ոյժ տալու համար, Բ. Իրան հրամաններին հլու հպատակ Աշըգեան պատրիարքը իր կօնդակներով նոյն միտքն էր արժարծում: Իեռ մի քանի ամիս առաջ, երբ Կ. Պօլսի անգլիական դեսպան սըր Քլարֆօրդ դիմեց Թորէն պատրիարքին իմանալու համար, թէ մինչև որ աստիճան ճիշդ են Հայաստանի մէջ եղած հարստահարութիւնների նկարագրութիւնները և բազմաթիւ եկեղեցականների ձերբակալութեան պատճառը ու տանջանքներին մատնվելու լուրը, Աշըգեան սիրտ ունեցաւ պատասխանելու. «հայ ժողովուրդը մեր բարեգութ սուլթանէն շատ և շատ գոհ է և սիրով հանգիստ կը վայելէ վեհափառի հովանու տակ. հայոց հարստահարութիւնների մասին գրուածները կարգ մը սրիկանելու սուտ լուրեր են, որով մեր սուլթանի հանգիստն ալ կը վրդովվեն յանդգնաբար, իսկ բանտարկված մէկ երկու կղերականներն արդէն յանցաւոր էին և իրենց արժանի պատիժը պէտք է կրեն մեր գթառատ սուլթանէն»:

Եւ այդ խօսքերը արտասանվում էին այն ժամանակ, երբ Բաղէշի բանտերի մէջ տառապում էր Մուշի առաջորդ Ներսէս Խարախանեան, երբ Տէրէվանքի վանահայր Դանիէլ վարդապետը շղթայակապ բերվում էր Կ. Պօլս, երբ Մուշի, Վանի և Կարինի նահանգում Համիդէի քիւրդ հեծելազունը, որը կազմված է իբրև թէ պաշտպանելու բնակիչներին, քսամնելի ոճիրներ էր գործում, տարածելով ան ու սարսափ հասարակութեան մէջ:

Յև ճշմարիտ, իրերի մի այդպիսի դրութիւնը հերքելու համար արժէր ստանալ Իմթիազի ոսկէ շքանշանը...

Բայց առաջ բերենք Նուբար-փաշայի ծըրազրի բնագիրը:

«Նւբարայի պատութիւնները, որոնք ցանկանում են հաստատել Արեւելքում իրերի մի այնպիսի կարգ, որ յարատեւութեան պայմաններ ներկայացնէր Բալկանեան դաւառների մէջ, իրանց հայեացքը զցել են Փոքր-Ասիայի այն մասի վրա, որ հայ ցեղի որբանն է: Բարձր Գուռը ինքն զգացել է կարևորութիւն՝ չը թողնելու այդ ճարտարագործ, աշխատասէր և խմացական ազգութիւնը իր այժմեան թշուառ վիճակի մէջ, հետև Նւբարայից և նրա ներկայացուցիչներից: Անօգուտ է այստեղ խօսել այն հայերի վիճակի մասին, որոնք երբէք չեն թողել իրանց հայրենիքը, անօգուտ է մանաւանդ բարդատել այդ վիճակը նրանց այն հազարաւոր հայրենակիցների վիճակի հետ, որոնք ապրում են Անդրըկովկասում: Բարձր Գուռը հէնց նրանով, որ Ս. Սանֆանոյի նախնական դաշնագրի մէջ պայմանաւորվել է հայերի կառավարչութեան գործում բարենորոգութիւններ մտցնելու, հէնց նրանով, որ նա պարտաւորութիւն է յանձն առել պաշտպանելու այդ ժողովուրդը քիւրդերի դէմ, արդէն ինքն վաւերացրել և խոստովանել է այն հանգամանքը, թէ հայերը հեծում են յոռի կառավարութեան ներքոյ և նրանք բոլորովին թողված են քրդական վայրենի հրոսակների կամքին,

«Հայերը երբէք նպատակ չունեն քաղաքական գոյութիւն, քաղաքական անկախութիւն ձեռք բերել. նրանք խնդրում են քաղաքացիական ազատութիւններ, իրանց գոյքը, իրանց կանանց և աղջկերանց պատիւը և վերջապէս իրանց կեանքի իրաւունքը երաշխաւորող հաստատութիւններ:

«Ընթէ այդ քաղաքացիական ազատութիւնները, որոնք զեն Գիւլիանէի Պաթար-Շէրիֆի միջոցով հռչակված և յաջորդ Ֆիրմաներով վերահաստատված են, իրականապէս գործադրված լինէին, այդ աշխատասէր հայ ցեղը վաղուց

ի վեր փոխած կը լինէր իր երկրի կերպարանքը: (Ռուս-հայկական Նրեան նահանգի ազգաբնակութիւնը կրկնապատկել է 90 տարվայ ընթացքում):

«Հայ ազգը խորապէս գնահատում է նորին վեհափառութեան սուլթանի և նրա փառապանծ նախարարների վեհանձն դիտաւորութիւնները: Եթէ այդ դիտաւորութիւնները ապարդիւն են մնալի իրանց համար, եթէ հրամայված վերանորոգութիւնները մեռած տառ են մնացել, պատճառն այն է, որ այդ վերանորոգութիւնների գործադրութիւնը յանձնվել է պաշտօնեաների մի այնպիսի դասակարգի, որ չէ կարողացել ըմբռնել նրանց նպատակը, որ չէ գրացել նրանց կարեւորութիւնը, կամ հակառակ է նրանց կրօնական համոզմունքներին և կամ անձնական շահերին:

«Ինչ և լինի սակայն այն վերանորոգութիւնների ընաւորութիւնը, որ մեծ պետութիւնները պարտաւոր են կարծում իրանց շնորհել այդ իմացական ցեղին, որ բնական միջնորդ է Արեւելքի և Արեւմուտքի մէջ, առաջին՝ չը մոռանալու պայման, առանց որի ամեն վերանորոգութիւն գուր կանցնի, անձնաւորութիւնների և այդ վերանորոգութիւնների իրագործելու կոչված պաշտօնեաների ընտրութիւնն է: Արդ, որովհետև պաշտօնեաները ընտրվում են մի մասնաւոր և առանձնաշնորհեալ դասակարգից, ուստի նոր հասարակութիւնների աջողութեան էական պայմանը կայանում է նրանում, որ ընդհանուր կառավարիչը, gouverneur-général, նշանակվի պաշտօնեաների մի ուրիշ կարգից, այսինքն քրիստոնեաներից և որովհետև խնդիրը Հայաստանի մասին է ընդհանուր կառավարիչը հայ լինի:

«Ինչ և լինի այդ բարձրաստիճան պաշտօնեայի ազգայնութիւնը կամ բարոյականութիւնը, անմտութիւն կը լինի կարծել, որ նա կարող է լրջաբար անձնատուր լինել եռանդուն գործունէութեան, եթէ նա ամեն րօպէ անակնկալ արձակվելու երկիւղի սակ լինի:—Վեհափառ սուլթանը իր գահակալութեան ճառի մէջ մասնացոյց է արել, իբրև կայսրութեան շարիքների սկզբնապատճառներից մինը, այն հեշտութեան վրա, որով պաշտօնեաները նշանակվում և

արձակվում են: Նորին կայսերական մեծութիւնը, իր հը-
պատակները օգտի համար, կարող էր շնորհել իր հայկա-
կան նահանգներին մի ընդհանուր կառավարիչ, որի պաշ-
տօնավարութիւնը եօթ տարվայ շրջանով ապահոված
լինէր:

«Ընդհանուր կառավարչի ընտրութիւնը ամեն վերա-
նորոգութեան, ամեն բարւոքման տաաջին պայմանը լինե-
լով, մեծ պետութիւնները, Ս. Ստեֆանօի նախնական պայ-
մանագրի զօրութեամբ (յօդ. 16) և հետևաբար, առանց
հարուածելու սուլթանի գերիշխանական հեղինակութիւնը,
կարող են նպաստել այդ ընտրութեան իրանք յօժարու-
թեամբ, ինչպէս այդ գործադրվում է Լիբանանի կառավար-
չի նշանակման ժամանակ և այդպիսով կարող են այդ
նշանակումն բոլոր ցանկալի երաշխաւորութիւններով շըջ-
ջապատել:

«Այդ պայմանների մէջ ընտրված ընդհանուր կառա-
վարիչը, ունենալով վեհափառ սուլթանից յանձնարարութիւն
հսկելու բարենորոգումների գործադրութեան վրա, պէտք
է լիազօր իշխանութիւն տրվի նրան՝ այդ գործը գլուխ
բերելու իր անձնական պատասխանատուութեամբ:

«Բայց որոնք են այս վերանորոգութիւնները և բար-
ւոքումները: Հայ ազգը կարծում է, որ հեշտ է ցոյց տալ
նրանց, եթէ չարիքների աղբիւրները մի առ մի որոշվեն:

«Առաջինը, անշուշտ, քիւրդերի աւարառութիւնները
և հարստահարութիւններն են: Պէտք է զսպել նրանց հրո-
տակները: Մինչև այժմ այդ չեն արել, թէև զօրքի հրամա-
նատարների համար դրանից աւելի հեշտ բան չը կար-
ուստի նրանք կամ միջոց չեն ունեցել, կամ կամք: Ազգա-
բնակութեան ապահովութիւնը որ և է վտանգի տակ չը
գնելու համար, միթէ տւելի լաւ չէր լինի հէնց իրանց
յանձնել ինքնապաշտպանութեան հոգսը: Քրիստոնեայ թէ
մահմետական, միթէ նրանց առաջին կարիքը ապահովու-
վութիւնը չէ:

«Ընդհանուր կառավարչին ուրեմն պէտք է իշխանու-
թիւն տալ կազմակերպել ժանգարմէրիայի մի խումբ, որի
պաշտօնը պէտք է լինի ոստիկանութիւնը և երկրի պաշտ-

պանութիւնը՝ հասարակական խաղաղութիւն վրդովեցնող-
ներէի դէմ: Այդ խումբը կը կազմվի խառն՝ մուսուլմաննե-
րից և քրիստոնեաներից, որոնց կարելի է զինուորազօրել
առաջուց որոշված մի սիստէմի համեմատ: Այդ խմբերի հա-
մար պետեր նշանակելը վերապահված կը լինի ընդհանուր
կառավարչին, որովհետև նա է պատասխանատու սուլթանի
առաջ՝ նահանգի խաղաղութեան և բարեկարգութեան հա-
մար: Մահմետական և քրիստոնեայ տարրերի ի մի ժողո-
վելը՝ մի կազմակերպած մարմնի մէջ, որի նպատակն է
եքզրի ընդհանուր պաշտպանութիւնը և ապահովութիւնը,
կարող է մօտեցնել միմեանց այդ երկու տարրերը:

Համերաշխութիւնը մանաւանդ հեշտ է Հայաստանում
որովհետև գիւղական ազգաբնակչութիւնը, միևնոյն ծագումն
ունենալով միասին կրած թշուառութիւններէ պատճառով,
ունի նոյն կարիքները, հետեաբար մի և նոյն ձգտումները:

Բացի դրանից կայսերական զնդերի հրամանատար-
ները, ընդհանուրի ապահովութեան վերաբերեալ ամեն
միջոցներ ձեռք առնելիս, պէտք է հնազանդվեն ընդհանուր
կառավարչի հրահանգներին և պէտք է օգնեն ժանդարմերի
զնդին իր պաշտօնավարութեան մէջ:

Նիւթական ապահովութիւնը այդպիսով երաշխաւո-
րելով, կարելի կը լինի պաշտօնեաների և կառավարվողների
յարաբերութիւնները կարգադրել, այսինքն արդարադա-
տութիւնը կազմակերպել: Եւ, յիրաւի, առանց դատաստանա-
կան մի կազմակերպութեան, չէ կարող ապահովութիւն
լինել յարաբերութիւնների, չէ կարող ապահովութիւն լինել
պաշտօնեաների, կամայական սովորութիւնների և դործո-
ղութիւնների, հետեաբար չէ կարող երաշխաւորութիւն
լինել վերանորոգումների և բարւոքումների յարատեւութեան
և լրջութեան համար: Այժմեան արդարադատութիւնը կա-
տարվում է կառավարչական մէջլիսների ձեռքով, որոնց
անդամները տասանորդ ժողովողներ են կամ այնպիսիները,
որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով խառնված են
կառավարչական գործերում, բացի դրանից տարրական հաս-
կացողութիւն չունեն գործավարութեան և օրէնսգիտութեան
մասին: Այս կերպ այդ օրէնսգիտութիւնը դառնում է դրանց

ձեռքում օրինականութեան դիմակի տակ ծածկված մի միջոց, որ գործադրվում է մի այնպիսի ժողովրդի մէջ, որը աւելի էլ պահպան հասկացողութիւն ունի օրէնսդիտութեան մասին:

Բաւական դժուար է առաջուց կարծիք տալ դատաստանական այն կազմակերպութեան էութեան մասին, որ պէտք է որոշել՝ ազգաբնակչութեան քաղաքացիական և առևտրական յարաբերութիւնները կանոնաւորելու համար: Այդ կազմակերպութիւնը պէտք է որքան կարելի է շատ ապահոված լինի, որովհետեւ դա է կանոնաւորողը և հաւասարակշռողը ամբողջ վարչութեան: Սակայն մի բան կարելի է առաջուց պնդել, այդ այն է, որ հիմնվելի դատարանները, այժմեան մէջլիաների նման, ամենեկին չը պէտք է միջամտեն վարչութեան գործերում: Ընդհանուր կառավարիչը պարտաւոր է հարցը ուսումնասիրել և ուսումնասիրել տալ հեղինակաւոր անձերից բաղկացած մի յանձնատեղովի և այդ ուսումնասիրութիւնների արդիւնքը ենթարկել այն իշխանութեան տրամադրութեան, որին յանձնարարված կը լինի օրէնքի վերածել նրանց: Այդպիսով ապահով կարելի է լինել, որ դատաստանական կազմակերպութիւնը, հնաբաւորութեան չափ, կը համապատասխանի երկրի մասւոր և հասարակական դրութեանը: Քանի որ արդարադատութիւնը պէտք է վարչութեան սանձը և կօնտրօլը լինի, ուսումնասիրութիւնների յանձնատեղովք պարտաւոր է որոշել դատաստանական իշխանութեան իրաւասութեան սահմանները և մանաւանդ թէ որ աստիճան վարչութեան պաշտօնեաները իրանց պաշտօնավարութեան մէջ կատարած զեղծումների համար պէտք է պատասխանատու լինեն դատարաններին:

Ընդհանուր կառավարիչը պիտք է լիազօրութիւն ունենայ օտար տարրերի օգնութեանն ևս գիմել այնպիսի մի կարևոր գործում, որպիսին է դատաստանական կազմակերպութիւնը: Նա կորոշի թէ ինչ չափով պէտք է նա այդ սին: Հայերը կարծում են, որ եթէ այդ օտար տարրը, որ ներկայացուցիչ է թէ անհատականութեան և թէ գիտութեան, մտնի ինչ չափով էլ լինի, բարձր դատարանի կազմակերպութեան մէջ, և այդպիսով մասն կազմի այն ար-

գարադատութեան, որի առաջ վարչական անձինք պատաս-
խանատու կը լինեն իրանց զեղծութիւնքի համար, դրանից
երկրի հասարակական գրութիւնը ոչ միայն չի փաստի,
այլ կը յառաջագիժի այդ կօնարօլի ներքոյ: Բացի դրանից
նրանք կարծում են, որ բէֆօրմների լուրջ իրագործումն
այսպիսի ընդարձակ ծաւալ ունեցող արդարագատութեան
մէջ կը դանի իր իսկական հիմքը և իր ճշմարիտ յենակէտը:

Ազգաբնակչութիւնների ապահովութիւնը այսպիսով
երաշխաւորելով, շնորհիւ ժանդարմերի և արդարագա-
տութեան կազմակերպութեան, ուշադրութիւնը դարձվում
է մի շարիքի վրա, որ պէտք է նկատած լինեն ամենքը,
որոնք ծանօթ են Արեւելքին.— դա հողային հարկերի կար-
գաւորումն է, տասանորդ և տասանորդ ժողովելու ձևն է:
Անհրաժեշտ է տասանորդի վերացնելը և դրան հարկի
փոխարկելը, ի նկատի ունենալով հողի տարածութիւնը և
յատկութիւնը: 25 տարվայ միջոցում Բօմբէյ նահանգի եր-
կրագործական հարստութիւնը աւելի քան կրկնապատկվել
է, շնորհիւ այն բանի, որ տասանորդը փոխարկեցին և
դարձրին land tax: Հայաստանը, ճիշտ է, կալուածների զը-
նահատութիւն չունի, բայց կարելի է գնահատութեան
պակասը լրացնել նոյնպէս, որպէս արեցին Հնդկաստանում
կամ ուրիշ երկրներում, ուր այգպիսի փոփոխութիւն տեղի
է ունեցել:

Այս երեք բէֆօրմները, եթէ որ դրանք լուրջ կերպով
ձեռք առնվին և կատարվին, բաւական են կերպարանափո-
խելու և զարգացնելու երկիրը: Բայց որպէս զի կարելի
չինի դրանց իրագործել և ի կատար ածել, ընդհանուր կա-
ռավարիչը պէտք է կարողանայ նիւթական բաւարար մի-
ջոցներ ունենալ:

Հայերը, որպէս տասցինք, ամենևին դիտաւորութիւն
չունեն քաղաքական անկախութիւն ձեռք բերելու, ոչ էլ
կայսրութիւնից բաժանվելու. նրանց նպատակը ուրիշ է:
Նրանք ամենևին մտադրութիւն չունեն իրանց կամքի հա-
մեմատ և միմիայն իրանց սեփական կարիքների համար
գործ դնել իրանց երկրի եկամուտները:

Նրանք խնդրում են միայն, որ իրաւունք ունենան

հարկերը իրանք կարգադրեն իրանց մէջ (և այդ՝ կայսերական զանաւարանի ընդհանուր հարկերը վճարելուց յետոյ) և այդպիսով ստեղծեն մասնաւոր եկամուտի աղբիւր նահանգի յատուկ պաշտօնեաների համար, այն է ժանդարմերի, դատարանների, դպրոցների, բոլոր դաւանութիւնների կրօնական հիմնարկութիւնների, հասարակական աշխատանքների և այլ հիմնարկութիւնների համար:

Մի կողմից հայերը կարծում են, որ իրանց մէջ հարկերը բաժանելու այդ իրաւունքը իրանց մասնաւոր և տեղական կարիքների համար, կօգնի մտցնելի բարւոքումների և բէֆօրմների իբազործվելուն, որովհետև այդ կապահովացնի վարչութեան այն զանազան հիմնարկութիւնների գոյութիւնը, որոնք կոչված են գործադրելու այդ բէֆօրմները և հոգ տանելու նրանց իբազործման մասին:

Այդ հիմնարկութիւնները այսպիսով ազատ կը լինեն զանազան իշխանութիւնների քմահաճութիւնից, այն իշխանութիւնների, որոնք կարող են չունենալ նոյն չափով ցանկութիւն և շահ տեղական կարիքների մասին հոգալու և բէֆօրմներ իբազործելու համար:

Միև կողմից որովհետև կայսերական կառավարութեան շահը միևնոյն է, ինչ որ նսրին մեծութեան սուլթանի հպատակների հաւաքական շահերը, ուստի կայսերական կառավարութիւնը համապատասխան կը գտնի մի իմաստուն վարչութեան սկզբունքներին՝ միայն նախապէս հանել երկրից այն եկամուտները, որոնք անհրաժեշտ են կայսրութեան ընդհանուր կառավարչական հիմնարկութիւնների համար, և թողնել տեղական վարչութեան բաւարար եկամուտներ մասնաւոր և տեղական կարիքները հոգալու համար:

Թի ինչպէս պէտք է նահանգը հաւաքի եկամուտները իր սեփական վարչութեան ծախսերի համար, կարելի է հետևեալ կերպով կարգադրել:

Ընդհանուր կառավարիչը, և նրա հրամանի համաձայն զանազան գաւառների կառավարիչները իրաւունք կունենան հրաւիրելու իւրաքանիւր գաւառի գլխաւոր տեղում պատուաւոր անձինքներից բաղկացած մի ժողով: Այդ զանազան ժողովների կազմակերպութեան եղանակը չը

պէտք է այժմից որոշել: Սկզբում ընդհանուր կառավարիչը և գաւառների կառավարիչները իրանք կը կատարեն անգամների ընտրութիւնը, թէ պատուաւոր անձինքների շքանշանից և թէ այնպիսի անձանց, որոնք ուրիշներից աւելի վստահութիւն են վայելում: Ընդհանուր ժողովը, որ հրավիրված կը լինի նահանգի գլխաւոր կենտրոնում, բաղկացած կը լինի այն պատգամաւորներից, որոնց կընտրեն իրանք գաւառների ժողովները: Այս ժողովները, կամ աւելի լաւ է սակ՝ այս ընդհանուր ժողովը միայն մէկ պարտաւորութիւն պէտք է ունենայ,—այն է այս գանազան հիմնարկութիւնների ծախսերի համար որոշած հարկերը բաժանել ժողովրդի վրա: Այս ժողովները կամ խորհուրդները ոչ մի կերպով չը պէտք է միջամտեն ոչ արդարադատութեան կազմակերպութեան և ոչ իսկական վարչութեան մէջ:

Ապագայում փորձը և երկրի հասարակական գրութեան զարգացումը ցոյց կը տան այս խորհուրդների անգամների ընտրութեան համար մի նոր ձև, ինչպէս և այն թէ մինչև ի՞նչ աստիճան կարելի է ընդարձակել այդ ժողովների իրաւասութիւնը: Բայց թւում է, թէ սկզբում խոհեմութիւն և իմաստութիւն կը լինէր որոշել նրանց իրաւասութեան սահմանները և այդ այն նպատակով, որպէս զի շփոթութիւն չընկնի, շփոթութիւն որ անպատճառ տեղի կունենայ մի այնպիսի ազգաբնակչութեան մէջ, որ միանգամայն հեռու է մնացել իր իսկական գործերը վարելուց:

Հայկական նահանգի կազմակերպութիւնը այնպէս, ինչպէս մենք ծրագրեցինք ընդհանուր գծերով, կարող է ապահովել նահանգի բոլոր ընակիչների բարեկեցութիւնը, լինեն դրանք մահմետականներ թէ քրիստոնեաներ, որոնք հաւասարապէս հպատակ են նորին մեծութեան սուլթանի, և որոնք բոլորն էլ հաւասարապէս ցանկանում են լաւ կառավարված լինել: Այդ կազմակերպութեան նպատակն է բոլորի բարօրութիւնը և Հետևաբար մահմետական և քրիստոնեայ լազաւանակութեան փոխադարձ թուական յարաբերութիւնը համեմատաբար երկրորդական նշանակութիւն ստանում. ոչինչ չը պէտք է փոխվի քաղաքական գրութեան

մէջ: Միայն վարչութեան մէջ պէտք է նոր պաշտօնեաներ լինեն, որոնք հաստատված լինելով իրանց պաշտօններում որոշեալ հիմնարկութիւնների և մանաւանդ արդարադաթեան հաստատութիւնների կողմից, պարտաւոր կը լինեն գործադրել և ոչ թէ թողնել նրանց մեռած տառ; որպէս մնացել են մինչև այժմ խոստացրած բոլոր բէֆօրմները:

Ահա եւ մի այլ կարեւոր դօկումենտ.

Հ Ա Ի Ա Ք Ա Կ Ա Ն Ն Օ Տ Ա

Որ եւրոպական վեց պետութիւնները ուզղել են
Բարձր Դրան, 1880 թւին.

Կ. Պօլիս 7 սեպտեմբերի 1880

Պարոն մինխտր.

Ներքոյ ստորագրողները ստացան յուլիս ամսի 5-ից դրած նօսան, որով Բարձր Դուռը պատասխանել է նրանց յունիսի 11-ի գրութեան, որ վերաբերում է այն բարենորոգութիւններին և վարչական բէֆօրմներին, որ օսմանեան կառավարութիւնը պարտաւորվել է մտցնել հայաբնակ գաւառներում Բէրլինի դաշնագրի 61-րդ յօդուածով: Այդ դօկումէնտի ուղադիր քննութիւնը նրանց հաճօքեց, որ օսմանեան կառավարութեան կողմից ձեռնարկած առաջարկութիւնները չեն համապատասխանում այդ յօդուածի ոչ ոգուն, ոչ ըովանդակութեան: Այն պետութիւնները, որոնց ներկայացուցիչներն են ներքոյ ստորագրողները, անտես չեն առնում, որ օսմանեան կառավարութիւնը ուղարկել է երկու յանձնաժողովներ հայաբնակ գաւառները. բայց նրանք պատճառ ունեն կարծելու, որ այդ միսիանները չը յանգեցին որեէ արդիւնքի և Դուռը, հազառակ այն պարտաւորութիւնների, որոնք բղխում են 61-րդ յօդուածից, հրաժարվել է տեղեկացնել նրանց այդ մասին:

Ձեռք մի բան չէ ապացուցանում, թէ որ երկէ բարեփոխութիւն է մտքոված արդարադատութեան վարչութեան

մէջ, Ընդհակառակը, հիւպատոսական բազմաթիւ զեկուցումները հաստատում են, որ այժմեան վիճակը, քաղաքացիական քրէական դատարանների անկախութեան տեսակէտից, աւելի քիչ գոհացուցիչ է, եթէ չստենք աւելի վատթար է, քան առաջ.

«Ընչ վերաբերում է ժանգարմէրիային և ոստիկանութեան, յուլիսի 5-ի նօտան հաստատում է, թէ Բ. Դուռը հրաւիրել է բազմաթիւ մասնագէտ օֆիցէրներ՝ ներկայացնելու այդ երկու պաշտօնէութեան վերանորոգութեան պրօէկտները: Մեծ պետութիւնները տեղեկութիւն չունեն այդ պրօէկտների մասին և օսմանեան կառավարութիւնը չէ կարողանում մինչև անգամ ապացուցանել, որ այդ պրօէկտները ներկայացվել են իրան:

«Ներքոյ ստորագրողները չեն կարող ուրեմն ընդունել թէ ձեր դերագանացութեան պատասխանը ամենափոքր գոհացումն է առլիս նրանց յունիսի 11-ի նօտաի մէջ ձեռկերպած զանգատներին: Այդ պատճառով նրանք ևս առաւել իրաւունք են համարած ճիշդ կերպով զնահատել օսմանեան կառավարութեան ձեռնարկած փորձերը, որ նոյն իսկ Բ. Դուռը, ինչպէս կարելի է դատել այդ պատասխանից, ճիշդ հաշիւ չէ առլիս իրան իրերի վիճակի և այն պարտաւորութիւնների մասին, որ նրա վրա դրել է Բէրլինի գաղնագիւր:

«Նոյն իսկ այն ոճը, որով Բարձր Դուռը խօսում է հայաբնակ գաւառներում գործված ոճրագործութիւնների մասին, ապացուցտնում է, որ նա, Դուռը, չէ կամենում խոստովանել անիշխանութեան այն աստիճանը, որ տիրում է այդ գաւառների մէջ և երկրի վիճակի ծանրութիւնը, որի շարունակութիւնը առաջ կը բերի, ըստ ամենայն հաւանականութեան, քրիստոնեայ ազգաբնակչութեան ջնջումն ընդարձակ նահանգների մէջ:

«Յուլիսի 5-ի նօտան չէ ձեռկերպում ուր և է լուրջ առաջարկութիւն, որ նպատակ ունենայ վերջ գնել չէրբէզների և քիւրդերի հարստահարութիւններին: Եւ սակայն երկու կայ, որ այդ հարստահարութիւնները անկարելի է զսպել ընդհանուր օրէնքների գործադրութեամբ: Միայն

բացառիկ խիստ միջոցները կարող են վերջ գնել այն բըռ-
նաբարուժիւններին, որոնք Յ1-րդ յօդուածի մէջ յիշատակ-
ված բազմաթիւ նահանգներում մի մշտական վտանգ են
հայերի գոյքի, պատուի և կեանքի համար:

«Բէրլինի դաշնագրի Յ1-րդ յօդուածով, Բ. Գուռը
պարտաւորվել է «իրագործել անյապաղ այն բարենորոգու-
թիւնները և բէֆօրմները, որ տեղական պէտքերը պահան-
ջում են հայաբնակ գաւառներում»: Ներքոյ ստորագրողները
ցաւում են յայտնելով, որ յուլիսի 5-ի նօտայի մէջ յիշված
ընդհանուր բէֆօրմները բնաւ ի նկատի չեն առնում «տե-
ղական պէտքերը», որի վրա մատնացոյց է լինում յիշեալ
յօդուածը: Մեծ պետութիւնները, անտարակոյս, մեծ հա-
ճութեամբ կընդունեն լայն բէֆօրմների մտցնելը օսմա-
նեան կայսրութեան բոլոր մասերի մէջ, բայց նրանք կա-
մենում են որ ամենից առաջ Բէրլինի դաշնագիրը ամբող-
ջութեամբ կատարվի և չեն կարող թոյլ տալ, որ Բ. Գուռը՝
առաջարկելով մի կազմակերպութիւն, որի մէջ չէ մտնում
այդ դաշնագրով յատկապէս որոշ գաւառների համար սահ-
սահմանված բէֆօրմներից ոչ մինը, ազատ համարվի այն
պարտաւորութիւններից, որ յանձն է առել կատարել: Այդ
գաւառների յատուկ բնաւորութիւնը, որն է քրիստոնեայ
տարրի գերակշռութիւնը մեծատարած շրջաններում առաջ
է բերում այն, որ ամեն մի բէֆօրմ, որ յարմարեցրած չի
լինի այդ բնաւորութեան, չէ կարող որ և է դոհացուցիչ
արդիւնք տալ:

«Ներքոյ ստորագրողները նոյնպէս հաստատում են,
որ հաւասարապէս անհրաժեշտ է ի նկատի ունենալ այդ
միկնոյն գաւառների մի ուրիշ առանձնայատուկութիւնը: Բ.
Գուռը երևի կամենում է միատեսակ կանօն սահմանել և
գործադրել հայերի և քիւրդերի համար: Հարկաւոր է ա-
մենից առաջ բաժանել նրանց վարչականապէս, որչափ որ
գործնականապէս այդ կարելի է, ի նկատի ունենալով, որ
բացարձակապէս անհնարին է կառավարել միկնոյն կարգե-
րով հաստատաբնակ ժողովուրդները և կիսաթափառական
ցեղերը: Համայնքների և ընդհանրապէս վարչական խմբերի
բաժանումը հետևաբար պէտք է այն ձևով լինի, որ կարո-

դանայ մի տեղ ամփոփել համացեղ տարբերը. նա պէտք է ձգտի խմբել միասին հայերին, կամ, եթէ պէտք է, հայերին և քիւրճերին, դուրս հանելով քիւրճերին: Ապագայում վիճակագրական տեղեկութիւնների մէջ չը պէտք է ամենեւին հաշուել Թափառական քիւրճ տարրը, որ ապրում է սարերում և իջնում է քրիստոնեաներով բնակեցրած դաշտերը աւերմունք գործելու համար, և բնակիչների մեծամասնութիւնը իւրաքանչիւր համայնքում նրանց վիճակագրութեան հիման վրա չը պէտք է որոշվի:

Վարելի էր ենթադրել, որ Բարձր Դուռը յուլիսի 5-ի նօտայում առաջարկած համայնական կազմակերպութեան մէջ տեսնում է միջոց ստեղծելու այնպիսի վարչական խմբեր, որոնց մէջ բնակիչների մեծամասնութիւնը պատկանելիս լինէր միևնոյն կրօնին: Սակայն ոչ մի բան ցոյց չէ տալիս այդ դօկումէնտի մէջ, որ Բ. Դուռը պարտաւորվում է գործադրել այդ սկզբունքը:

Ներքոյ ստորագրողները հաճութեամբ հաստատում են, որ ծրագրված կազմակերպութեան մէջ, համայնքի պետը պէտք է պատկանի գերակշռող կրօնական հասարակութեան, բայց այդ տեսակ մի կարգադրութեան բացակայութիւնը ուրիշ, աւելի բարձր պաշտօնէութիւնների մէջ շատ ակնյայտի կերպով ապացուցանում է, որ առաջարկված բէֆօրմները բաւարար կերպով ի նկատի չեն առնում «տեղական պահանջները» 61-րդ յօդուածի ցոյց տուած գաւառների մէջ:

«Օսմանեան կառավարութիւնը յայտնում է, որ ընտանցքի է հասարակական պաշտօնների մէջ պարկեշտ և ընդունակ անձինք, առանց դաւանութեան խտրութեան և թէ այսուհետև այդ իրողութիւնը տւելի լայն ծաւալ կըստանայ»: Այդ յայտարարութիւնը չափազանց անորոշ է և ներքոյ ստորագրողները կարծում են, թէ խիստ կարևոր է պնդել այդ կէտի վրա, մանաւանդ որ հայերը հաստատում են, թէ այն գաւառներում որտեղ նրանք գտնվում են մեծ թւով, զրեթէ հայեր չը կան հասարակական պաշտօնների մէջ: Նրանց պահանջը այդ կէտի վերաբերմամբ այնքան օրինաւոր է երևում, որ կարող է մինչև անգամ պատահել, որ

Բարձր Դուռը այդ գաւառների համար քրիստոնեայ կառավարիչներ նշանակէ, բայց դարձեալ զրանից դեռ չի հետեի, թէ հայերը կարող են աւելի արդարադատութիւն և օրինաւորութիւն գտնել վարչութեան մէջ:

«Ուրեմն հարկաւոր են աւելի լայն բնաւորութիւն կրող միջոցներ, քան այն, ինչ որ ցոյց է տալիս Օսմանեան կառավարութեան նօտան, որպէսզի Բ. Դուռը կատարած լինի Բէրլինում կնքած իր պարտաւորութիւնները:

«Առաջարկված ընթացքների անբաւարարութիւնը այնպէս է ընդհանրապէս, որ անօգուտ է երեւում վիճաբանել Բ. Դրան ծրագրի պակասութիւններ մասին: Այնուամենայնիւ, հետեալ թերութիւնները իսկոյն աչքի են ընկնում:

«Ամենից առաջ յայտնելով, որ համայնքների կառավարիչները պէտք է լինեն կառավարութեան պաշտօնեաները, ընտրված կենտրոնական իշխանութեան կողմից, համայնական խորհրդի անդամների միջից, փոխանակ ընտրվելու համայնական խորհրդի կողմից, Բ. Դուռը զրանով ցոյց է տալիս որ նա կենտրոնացման սկզբունքը հասցնում է վարչական, հիւրարխիայի ամենավերջին աստիճանին:

«Բ. Դուռը մոռացել է բացի զրանից ասելու կառավարիչների և համայնական խորհրդի անդամների մասին. թէ արդեօք նրանք կը նշանակվին ցմահ, թէ որոշ ժամանակով: Շա չէ խօսում նոյնպէս, թէ ո՞ւմ է պատկանում իրաւունքը նրանց յետ կոչելու կամ պաշտօնանկ անելու՝ անընդունակութեան դէպքում: Այդ իրաւունքը պատկանելու է նահանգապետութեան խորհրդին, որ նշանակում է նրանց, թէ մի ուրիշ իշխանութեան:

«Օսմանեան նօտան, միւս կողմից, զանազանութիւն չէ դնում համայնական և զաւտական ժանդարմերիայի մէջ, թէ նրանց կազմակերպութեան և թէ այլ տեսակէտից: Համայնական ժանդարմերիան զանազանվում է միւսից միայն նրանով, որ զրված է համայնքի պետի հրամանի տակ: Այդ ժանդարմերիան չէ հաւաքվում համայնքից, զերակշռող դաւանութեան բնակիչներից և ոչ մի բան չէ երաշխաւորում, թէ նա կարող է լինել յատկապէս այն, ինչ որ

պէտք է լինի, այսինքն մի տեղական պաշտպանողական ոյժ:

Երաւաւորական ժանդարմէրիայի կազմակերպութիւնը նոյնպէս չէ համապատասխանում Յ1-րդ յօդուածի մէջ ցոյց առած նահանգների տեղական պէտքերին, իսկ այն յօդուածը, որի մէջ ասված է, թէ այդ ժանդարմէրայի զինւորները ինչպէս և օֆիցերները պէտք է հաւաքվեն «կայսրութեան հպատակների բոլոր դասակարգերից», միանգամայն անորոշ բնաւորութիւն է կրում: Յանկալի էր, որ դաւաւորական ժանդարմէրիայի օֆիցերները և զինւորները հաւաքվէին համայնական ժանդարմէրիայից, այսինքն այն զիւղական պահապաններից, որոնք կընտրվեն նոյն իսկ իրանց՝ համայնքների ձեռքով: Այդ զիւղական պահապանները, որոնց յանձնված կը լինի զիւղերի պաշտպանութիւնը քիւրդերի ապաստակութիւնների դէմ, կը հայթայթեն դաւաւորական ժանդարմէրիային մի կօնտինգէնտ՝ համեմատ իւրաքանչիւր համայնքի ազգաբնակութեան: Ընտրողական սկզբունքը, փոխարինելով նահանգների կամայական կառավարութեանը, մի լուրջ երաշխաւորութիւն կը դասնայ այն մասին, թէ հասարակական ապահովութեան համար կարգված ոյժերը լաւ կերպով կը կազմակերպվեն:

Մի դատաստանական ատեանի հաստատութեան համար արած առաջադեմութիւնների արժէքը ամենից առաջ կախված է այն պայմաններից, որոնց մէջ կը կազմակերպուի այդ ատեանը և յուլիսի 5-ի նօտան այդ մասին լուրթիւն է պահպանում: Հարկաւոր է ի նկատի ունենալ հայ տարրի գերակշռութիւնը մի քանի նահանգներում և այդ տարրին մասնակցել տալ արդարագատութեան վարչութեան գործին՝ միւս տարրերի հետ համեմատակտն հաւասարութեամբ:

Բնացի զրանից այստեղ առաջ է գալիս խնդիրների մի ամբողջ շարք, որոնց լուծումը որևէ կերպով շօշափված չէ օսմանեան նօտայի մէջ: Արդե՞ք դատաւորները անփոփոխ կը լինեն, թէ կը նշանակվեն որոշ ժամանակով: Ո՞ր օրէնքի հիման վրա նրանք պէտք է դասեն: Միթէ Եարիտթի հիման վրա: Կամ գնկցէ մի այլ կանօնադրու-

Թեան հիման վրա: Դատաստանական տեսանկյունները ինչպէս են կարողանալու յարգել տալ իրանց վճիռները կիսա-անկախ և բոլորովին վայրենի քիւրդ ցեղերին: Այս վերջին հարցը մանաւանդ ապացուցանում է, թէ որքան անհրաժեշտ է արտաքսել քիւրդերին այն ըէֆօրմների ամբողջութիւնից, որոնք սահմանված են Հայաստանի ազգաբնակչութեան համար և տալ նրանց մի-բոլորովին առանձին վարչութիւն, նրանց պատերազմական և նախնական վարք ու բարքին համաձայն: Այդ խնդրի առիթով երկու տարրերի, հաստատաբնակ և թափառական տարրերի վերաբերմամբ, ներքոյ ստորագրողները այն համոզմունքն են արտայայտում, թէ պէտք է մի անգամ ընդմիջա ջնջվին այն բոլոր հարկերը և ծառայական պարտաւորութիւններ, որ քիւրդերը դրել են հայերի վրա.

Նոյնպէս կարծում են, թէ յօգուտ հայերի կատարված բոլոր ըէֆօրմներից առաջացող օգուտները պէտք է արդարութեամբ բաշխվին և այն բազմաթիւ նեստորականներին, որոնք լցնում են Քիւրդիստանի կենտրոնական և հարաւային մասը (Ջուլամէրկի կազան):

«Ափսոսալի է նոյնպէս, որ աւելի որոշ կերպով չէ բացատրված այն յօդուածը, որը վերաբերում է այն գումարների ժողովելուն, որոնք պէտք է յատկացնվին տեղական պահանջներին, այն է դպրոցների պահպանութեան և հասարակական աշխատութիւնների իրագործման: Սակայն կարելի է ընդունել, թէ նա բովանդակում է իր մէջ մի որոշ արժէք ունեցող ֆինանսական սկզբունքի գաղափար և այդ սկզբունքը, մեծ պետութիւնների կարծիքով, կտրող է հետևեալ կերպով ձևակերպվել:

«Հարկերը կը բաժանվին երկու կարգի. առաջին կարգի հարկերը, որոնք կը բաղկանան մաքսի և աղահարկի արդիւնքներից, կը գործադրվին կայսրութեան պէտքերի վրա: Երկրորդ կարգի հարկերը, որոնք կը բաղկանան վիլայեթի ընդհանուր եկամուտներից, կը գործադրվին նահանգի վարչութեան պէտքերի վրա: Աւելացածի մի մասը կը պահվի տեղական պէտքերի համար, իսկ մնացորդը կուղարկվի Կ. Պօլիս: Եթէ այս մեկնութիւնը ճիշդ է, յուլիսի

Ծ-ի նօտայի առաջարկութիւնը շատ կամ քիչ կը համապատասխանէր 19-րդ յօդուածին այն ծրագրի, որ Բ. Գուսեր կազմել է եւրոպական Թիւրքիայի նահանգների վարչական վերակազմութեան մասին և ներկայացրել է Արեւելեան Բուսթիւնի եւրոպական յանձնատնօրդի քննութեան: Նա կազմում է հաստատապէս մի բէֆօրմ կարելոյն չափ նրուելրված այն սկզբունքին, թէ պէտք է ամենից առաջ հոգալ նահանգի ծախսերը. բայց կարեոր է, որ այդ սկզբունքը շրջապատվի այնպիսի երաշխաւորութիւններով որոնք համանման են վարչական բէֆօրմների յանձնատնօրդի ընդունած երաշխաւորութիւններին:

Ներքոյ ստորագրողները պէտք է նկատել տան, բացի դրանից, թէ չէ կարելի յատկացնել այս կամ այն պէտքի գործադրութեան համար այն եկամուտները, որոնք արդէն գրված են:

Ապակենտրօնացման սկզբունքը, որ այնքան կարեւոր է այն նահանգների համար, որտեղ ընկուած է կենտրօնական իշխանութեան դաւանութիւնից տարբեր գաւանութիւն ունեցող ազգաբնակչութիւնը, շօշափված է ձեր գերագանցութեան նօտայի մէջ նուազ գոհացուցիչ կերպով: Անկարելի է իրական բէֆօրմների վրա յոյս դնել, մինչև որ ընդհանուր նահանգապետների դրութիւնը կատարելապէս չը փոփոխվի: Նօտան մի ազօտ ակնարկութիւն է տնում, թէ նրանց իշխանութիւնը կընդլայնվի և նրանց պաշտօնները կերաշխատորվեն, բայց այդ տեսակ ընդհանուր ընաւորութիւն կրող խստումները չեն կարող խնդիրը լուծել: Մինչև որ մի ընդհանուր—նահանգապետի իշխանութեան չափը և պատասխանատւութեան սահմանները պարզ և ճշգրիտ կերպով չեն որոշվի, մի բան՝ որ անպատեան պէտք է նրա պարտաւորութիւնների կատարման համար, մինչև որ օրինաւոր երաշխաւորութիւններ չը շնորվեն այդ բարձրաստիճան պաշտօնեային իր պաշտօնի տեւողութեան վերաբերմամբ, անկարելի կը լինի առաջարկված բէֆօրմների իրականացումը մասին մի կարծիք կազմել: Եւ իբօք, շատ պարզ է, որ ընդհանուր—նահանգապետները պէտք է որոշ ապահովութիւն ունենան իրանց

պաշտօնի տեղում քան մասին և ազատվեն այն միջամտութիւնից, որ գործվում է մշտապէս, պշտման ըէժիմի ժամանակ, նրանց վարչական ղեկավարութեան նոյն իսկ մասնաբաժանութիւնների մէջ, մի բան, որ անդամալուծել է մինչև այժմ նրանց գործունէութիւնը:

Անօդուտ է աւելացնել, որ եթէ վալիների այդ աւելի մեծ անկախութիւնը ցանկալի է ամեն տեղի համար, նա բացարձակապէս անհրաժեշտ է հայաբնակ նահանգների համար: Մեծ պետութիւնները, մի խօսքով համոզված լինելով օսմանեան կառավարութեան առաջարկութիւնների անբաւարարութեան մասին, մտածում են որ կարիք կայ լրջա բար վերաբերվել տեղական պէտքերին այդ միևնոյն նահանգներում, աւելի լայն ծաւալ տալ հաւասարութեան և ապակենտրոնացման երկու մեծ սկզբունքներին, աւելի ազդեցիկ միջոցներ ձեռք առնել ոստիկանութեան կազմակերպութեան և քրեական ու չէքէզներից հարոտահարված ազգաբնակչութեան համար, և վերջապէս որոշել ընդհանուր—նահանգապետների իշխանութեան տեղութիւնը և սահմանը: Միայն այդ կերպով կարելի է լիակատար բաւարարութիւն տալ այն իրաւունքներին և լոյսերին, որոնք ստեղծել են Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով:

Ճշգրիտ է, Բ. Դուռը հետամուտ է նուազեցնել այդ յօդուածի արժէքը, յենվելով հայ ազգաբնակչութեան և ընդհանրապէս քրիստոնեայ ժողովրդի թուանշանի վրա, համեմատելով այն ընդհանուր ազգամասնակութեան թւի հետ: Սակայն նօտայի մէջ առաջ բերած համեմատութիւնը այնքան զանազանվում է ուրիշ ազբիւրից ստացված տեղեկութիւնները, որ մեծ պետութիւնները չեն կարող համեմատութիւնը իբրև ճշգրիտ ընդունել:

Վրա հետ կցված հայ ազգաբնակչութեան ցուցակը, որ կազմել է հայոց պատրիարքարանը, ցոյց է տալիս այն անաղին տարբերութիւնը, որ կայ այդ ցուցակների մէջ: Յուլիսի 5-ի նօտան ցոյց է տալիս միայն մահմետականների համեմատութիւնը քրիստոնեաների հետ: Մեծ պետութիւնները կը ցանկային տեղեկութիւն ունենալ այն փաստերի մասի, որոնց վրա հիմնված է հաշիւը և նրանք ան-

հրաժեշտ են համարում ամենակարճ միջոցում կազմել տալ մի անաչառ յանձնատնօրդի ձեռքով, որի կազմակերպութիւնը առաջուց կորոշվի, ՅԼ-րդ յօդուածով ցոյց տուած նահանգներում բնակվող մահմեականներին և քրիստոնեաների մօտաւոր վիճակազրութիւնը:

«Չէտք է առաջուց պայմանաւորվել, որ Բ. Դուռը անկասկած ընդունի, այդ՝ անաչառութեան անհրաժեշտ պայմաններին մէջ կատարված վիճակազրութեան հետեանքը և յիշեալ նահանգների կազմակերպութեան ժամանակ ի նկատի ունենայ այդ:

«Սակայն շատ հաւանական է, որ գործելով այդ հիման վրա, տեղական բոլոր պահանջներին զոհացում տալու անհրաժեշտութիւնը առաջ կը բերի զանազան վիլայէթների այժմեան աշխարհազրական սահմանների փոփոխութիւնը:

«Բայց Բ. Դուռը չը պէտք է իրաւունք համարի իրան յետաձգել ծրագրված ցուցակազրութեան պատճառով այն միջոցների իրագործումը, որոնք անհրաժեշտ բնաւորութիւն են կրում:

«Քիստ կարևոր է իրագործել, առանց ժամանակ կորցնելու, այն ըէֆօրմները, որոնք պէտք է երաշխաւորեն հայերի կեանքը և գոյքը. անմիջապէս պէտք է միջոցներ ձեռք առնել քիւրդերի ապաստակութիւնների դէմ, անյապաղ գործազրել նոր Ֆինանսական կօմբինացիան, ժամանակաւորապէս զնել ժանդարմէրիան աւելի զոհացուցիչ վիճակի մէջ, և մանաւանդ ընդհատուր—նահանգապետներին տալ մի աւելի կայուն իշխանութիւն և աւելի լայն պատասխանատուութիւն:

«Ներքոյ ստորագրողները, իբրև եզրակացութիւն, մի անգամ ևս հրաւիրում են Բ. Դրան ուշազրութիւնը այն կարևոր իրողութեան վրա, որ հայաբնակ նահանգներում մտցնվելի ըէֆօրմները, համաձայն այն պարտաւորութիւնների, որ նա կնքել է մի միջազգային ակտով, պէտք է համապատասխանեն տեղական պահանջներին և լասալվե մեծ պետութիւնների հսկողութեան տակ:

Ներքոյ ստորագրողներս պատիւ ունենք և այլն....:

Ստորագրված է՝

Հ ա ց Ֆ է Լ Դ (ղեսպան Գերմանիայի)

Ն օ վ ի Կ օ վ (ղեսպան Ռուսաստանի)

Գ. Գ օ շ է ն (ղեսպան Անգլիայի)

Կ օ ր տ ի (ղեսպան Իտալիայի)

Տ ի ս ս օ (ղեսպան Ֆրանսիայի)

Ք ա լ ի չ է (ղեսպան Աւստրիայի)

*
* *

Երուսաղէմատունը, որտեղ ես հիւրընկալ-ված էի, կից է հայոց պատրիարքարանին: Ես կարծու՛մ էի, որ առիթ կունենամ այդտեղ տեսնելու Թիւրքիայի հայ ժողովրդի պատրիարքին, Խորէն արքեպիսկոպոս Աշըգեանին, բայց յոյսերս ապաք-դիւն անցան: Վաղուց, շատ վաղուց պատրիարքը այլ ևս չի իջնում պատրիարքարան. նա իբրև թէ առանձնաց ած, պաշտօնից հրաժարված, բնակում է Մարմարեայ ծովի գեղազուարճ և գեղանկար ա-փի ամարանոցների մինի, Մաքրի-գիւղի մէջ և երբէք տնից դուրս չէ գալիս:

Պատրիարքարանի զործերը վարում է փոխա-նորդ Ճէվահիրճեան Գարրիէլ վարդապետը: Ու-րիշ ճար չը կար, պէտք էր գնալ Մաքրի-գիւղ, իսկ Գում-Գափուից այդտեղ գնում են երկաթու-ղով մօտ կէս ժամ ճանապարհ:

Աշըգեանին տեսնելու համար ինձ պէտք էք Մաքրի-գիւղ գնալ և այն պատճառով, որ հրա-ւիրակ սրբազանները այդտեղ էին իջևանած:

Եւ ահա ես աւստրիական երկաթուղով անց-նում եմ Սամաթիայի, Եդի-Գուլէի առաջով և

հասնում եմ Մաքրի-գիւղ: Կայարանում հարցնում եմ հայոց պատրիարքի տունը. ինձ ցոյց են տալիս գծի երկարութեան վրա մի երկյարկանի տուն, մի փոքր վիլլա, առաջը մի փոքր պարտէզ. այդ տան միջին բնակարանի մէջ, յայտնում են ինձ, ապրում է պատրիարքը:

Դիմում եմ դէպի այդ տունը. ոչ մի նշան, ոչ մի ցուցմունք, ուր այդտեղ բնակում է մի պատրիարք: Տան առաջ խաղում են յոյն մանուկներ, երևում են տիկիներ, օրիորդներ: Ես վաշտանած կանգ եմ առնում. սրն է պատրիարքի բնակարանը, երևի սխալված եմ: Հարցնում եմ տաճկերէն լեզուով մանուկներից. «Էրմէնի փաթրիք», ասում են նրանք և մատով ցոյց են տալիս նոյն տունը: Սփում եմ զանգակը, բանում է դուռը մի ծառայ: «Այսա՞նդ է սրբազան պատրիարքի բնակարանը»:—Այո:—«Հրաւիրակ սրբազան ները տանն են:—Ոչ, զնացել են նաւակով զբօսնել Բօսֆօրի վրա:

—Իսկ պատրիարք սրբազանը:

—Տանն է, բայց եթէ կուզէք տեսնել, յայտնեցէք ձեր անունը:

Ես յայտնում եմ: Մի երկու բոպէից յետոյ ծառան վերադառնալով, ներս է հրաւիրում: Ես դիտում եմ, որ նա խիստ զղուշութեամբ զննում է ինձ և նկատելով իմ զարմանքս:

—Էֆէնդըմ, ասում է, այժմ զղուշանալու ենք. անշուշա գիտէք, որ մի քանի ժամանակ առաջ մի խոռվարար կամեցաւ սպանել սրբազան Խատրիարքը, բայց ոստիկանները կանխեցին և

ձերբակալեցին, ուստի այժմ անձանօթ մարգ ներս
չենք առնուլ:

Հասկացայ, որ Մաքրի գիւղի բնակարանը
գտնվում է ոստիկանութեան հսկողութեան տակ:

Մտնում եմ դահլիճը, այդտեղից մի առանձ-
նասենեակ. դահլիճում խաղում են երեխաներ,
երևում են կանայք: Բանից դուրս է գալիս, որ
հայոց պատրիարքը պարում է իր ազգակոննի, մի
մասնաւոր ընտանիքի մէջ. այդտեղ հիւրընկալել
է և էջմիածնի հրաւիրակներին:

Առանձնասենեակում կախված են պատից
Սուլթանի և Մակար կաթողիկոսի պատկերները:

Մի երկու բոպէից յետոյ մտնում է սենեակը
մի յաղթանդամ, փառանեղ ձօրուքով, մօտ 50
տարեկան, կարմիր խառայ վերարկու հագած, հո-
ղաթափներով մի հոգևորական, առանց վեղարի:
Դա էր հայոց պատրիարք Խորէն արքեպիսկոպոս
Աշըգեանը:

Նրա դէմքը արտայտիչ է, մազերը սպիտա-
կախառն, աչքերը մեծ, բայց սուր թափանցու-
թեան հետ միասին անախորժ ազդեցութիւն են
գործում մարդու վրա: Եթէ չը լինէր զլխին թաւ-
շեայ փոքր զլխարկը, ես կը կարծէի, որ իմ առաջ
տեսնում եմ մի թուրք փաշա, հաստ քահրըբարի
զլանակը ձեռքին ծխելիս, այնքան նա իր յա-
բազով, ձևերով նմանում էր տաճիկ փաշաներին:

— Արդեօք պատիւ ունիմ տեսնելու սրբա-
զան պատրիարքին, հարցրի ես վարանումով:

— Այո, հրամեցէք, նստէք. հրաւիրակ սըր-
բազան եղբայրները խաւրեցի քիչ մը զբօսնուլ

Քօսֆօրի վրա. քիչ մը խօսակցենք մինչև անոնց վերադարձը:

Եւ նկատելով իմ զարմանքը, երբ սենեակի մէջ մտաւ մի աղջիկ, պատրիարքը կցեց.

— Այս քրոջս զաւակներն են, ինձ հետ միտօին կը բնակին:

— Դուք ալ կը գնաք Երուսաղէմ ուխտի:

— Կը գնամ Վեհափառ Կաթուղիկոսը տեսնելու:

— Շատ լաւ. ուխտ անելը քրիստոնէական պարտաւորութիւն է. բայց ինչ կայ ձեր կողմերը. դարձեալ բոլորը նախապաշարված են իմ մասին. գիտեմ, գիտեմ, որ դուք ալ նախապաշարված էք, քանի որ կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ ինձ դէմ գործեցիք նոյնպէս:

— Ձեմ կարող թագցնել, սրբազան հայր, որ ձեր սրբազնութեան դէմ ընդհանուր դժգոհութիւն կայ թէ Ռուսաստանում և թէ նոյն իսկ այստեղ:

— Հա, ուրեմն այդ անպիտանները ձեզ արգէն տեսան և դայթակղեցրին ձեզ, բայց հոգ չէ, ամենևին չեմ վշտանար, գիտեմ, որ բոլորդ կը մեղանչէք իմ մասին, ես զինքս կը յանձնեմ պատմութեան անաչառ դաստատանին. այդ պատմութիւնը պիտի սրբէ և արդարացնէ զիս, պիտի ազացուցանէ, որ ես գործել եմ յօգուտ ազգի և եկեղեցու:

— Բայց, սրբազան հայր, ինչով բացատրել ձեր բռնած ընթացքը կաթուղիկոսական և ձեր քողովրդի հարցերում:

— Ոչ մի պատրիարք ինձ չափ չաշխատեց

այդ երկու հարցերի մասին. բայց ապերախտութիւնը մեր ազգի մէջ սահման չունի: Զիս ամբաստանեցին, իմ մասին սուտ լուրեր տարածեցին, թէ կը ջանամ կաթողիկոսական ընտրութիւնը բեկանել տալ. բայց զիս ճանաչողները գիտեն, թէ ես արեղայութեան օրիցս աշխատել եմ, որ Թիւրքիոյ հայք մասնակցեն կաթողիկոսական ընտրութեան այժմեան ձևով, որպէս զի ընտրութիւնը համազգային լինի և անա պատրիարքութեան օրով իրազործել տուի իմ այդ մեծ փափազը, վերականգնեցուցի հայոց եկեղեցու վաղուց խախտված սկզբունքը: Ճիշդ է, Տաճկաստանի բոլոր թեմերը չը կրցան մասնակցել, բայց աղոր պատճառը այն դառն ժամանակն է, որի մէջ կապրենք այժմ, շնորհիւ անխոհեմ Չէհիլնեբու: Յամենայն դէպս, միայն իմ պատրիարքութեան օրով տեղի ունեցաւ համազգային ընտրութիւն, բայց ո՞վ գնահատեց զիս. զիս մեղադրել՝ թէ կը ջանայի ընտրութիւնը բեկանել տալ, այդ միևնոյն է թէ մարդ մը աշխատէր իր զաւակը մեռցնել, մինչ գազաններն անգամ այդ չեն ընկրարդ, ընտրութեան այդ ձևը իմ ծնած զաւակն է:

— Ոչ մի պատրիարք, յարեց Աշրգևան սրբազան, իմ պատրիարքութեան ծանր և դժուարին վիճակն չէ ունեցած. ամենափափուկ պարագաներու մէջ կապրիմ, մանաւանդ երբ հայ ազգի և առաւել խելացնոր Չէհիլների անհասկացողութեան չափ չը կայ. քաղաքականութիւնէ բան մը չեն հասկընար, այնպէս որ ես դրված եմ երկու սրի մէջ, մի կողմէն պէտք է սուլթանի գայրոյթը իջեցնել տամ:

որովհետև հայերը իրենց անխոհեմութեամբ գրողներ են նորին վեհափառութեան բարկութիւնը իրենց դէմ, միւս կողմէն պիտի խրատեմ անխոհեմներին: Խոհեմութիւնը մանաւանդ հոգևորականաց յատկութիւնն պիտի ըլլայ:

Ապա երբ խօսք բացվեց Խրիմեան Հայրիկի մասին, պատրիարքն ասաց.

— Խրիմեան Հայրիկ ես շատ կը սիրեմ, ինքն ալ զիս շատ կը սիրէ. երբ գնաք, հարցուցէք: Պէտք է նրան վարչական կարող անձերով շրջապատել: Այդ մասին երկար զրուցած եմ և հրաւիրակ սրբազաններուն: Ձեզի բան մը պատմեմ Հայրիկի մասին. անգամ մը Մուշոյ մէջ գիւղացիք ձմեռ ատեն գայլ մը կը բռնեն և կը բերեն Հայրիկի քով, որ անոր դատաստանը ընէ իրենց ոչխարները պիշատած ըլլալուն համար. գայլը կապկպած, աղերսական նայուածք մը ցոյց կը տայ և Հայրիկ կը հրամայէ բանալ կապանքը և արձակել:

Այս միջոցին սենեակը մտան երկու հոգևորականներ, մինը խիստ ծեր, միւսը հասակն առած. — Սափրիչեան Տիմոթէոս եպիսկոպոս և Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետ» — ներկայացրեց պատրիարքը: Շատ փաղաքշական ձևերով այդ երկու հոգևորականներն ողջունեցին պատրիարքին և դառնալով ինձ. «էֆէնդին նսր եկած է, բարև եկեր է»:

— Այո, այն կը պատմէի էֆէնդուն, շարունակեց պատրիարքը, թէ որպիսի սարսափելի վիճակի մէջ կը գտնուիմ: Պաշտօնէս քանի անգամ

հրաժարեցայ, բայց ինչ ընեմ, որ սուլթան կը մերժէ ընդունել և կը հրամայէ շարունակել պաշտօնս:

— Այո, խօսեց Սափրիչեան սրբազան, մեծ և զարմանալի է մեր պատրիարք հօր համբերութիւնը. շատ փափուկ ժամանակների մէջ ենք. ասանկ օրեր մեր գլխուն դեռ չեն եկած. ասանկ բաներ դեռ չենք տեսած. ի՞նչ է ըլլալու վերջերսիս՝ այդ էդէքսիդ և սնխոհեմ ջէհիլներու երեսէն, չը գիտենք. Աստուած խղճայ մեր ազգի վրա:

— Բայց, սրբազան հայր, դիմեցի ևս պատրիարքին. թողնենք աղգի անհասկացողութիւնը մի կողմ. ի՞նչ է պատճառը, որ այնքան բազմաթիւ հոգևորականներ, նոյն իսկ առաջնորդներ մաշվում են բանտերի մէջ և դուք ճար չէք անում:

— Եւ ոչ մատս պիտի շարժեմ. նախ, աղոնց թիւը հազիւ 3—4-ի կը հասնէ. երկրորդ, բանտարկվածներն ևս արժանի են այդ պատժոյն. օրինակ Ներսէս վ. Պարախանեան. ինչի իր պաշտօնը չի կատարեր, այլոց գարծին կը խառնուի:

— Սրբազան, հարցրեց Ամրոսիոս վարդապետը, այստեղէն պատգամաւոր մը չը պիտի գնայ Երուսաղէմ վեհափառ Հայրիկն ողջունելու:

— Տեսնենք, բան մը կընենք:

Եւ արած բանը այն եղաւ, որ ոչ ոքի չը թոյլատրվեց գնալ Երուսաղէմ, իսկ հրաւիրակների մասին այսքան միայն գրվեց լրագրներում, թէ Երուսաղէմ ուխտ կը գնան:

Ես մեկնեցի Մաքրի գիւղից ծանր տպաւորութեան տակ:

* * *

Յուլիսի 9-ն էր, ուրբաթ օր: Դազի-սուլթան Արզու-Համիդ խանը ամեն ուրբաթ օր, ճիշդ կէսօրին, հրապարակական կերպով կատարում է սալամլիքի կրօնական հանդէսը:

Բայց նա իր նախորդները նման չէ անցնում Դօլմա-Բազչի պալատից ամբողջ Պօլսի միջով և չէ գնում իր նամազը կատարելու փառապանծ Այա-Սօֆիայի մէջ: Կ. Պօլսի ժողովուրդը այլևս հանդիսատես չէ այն արևելեան շքեղ տեսարանին, որ ներկայացնում էին նախկին սուլթանները ամեն ուրբաթ օր, արաբական նժոյգի վրա նստած՝ Սուամբուլի փողոցներով անցնելով: Պատասպարվելով Բէշիկթաշի բարձրաւանդակի վրա կառուցած իլդըզի պալատում, սուլթան Արզու Համիդ շինել է տուել պալատին կից մի փոքր, բայց շքեղ և գեղարուեստական մզկիթ, որ կոչվում է Համիդէի և որի մինարէն Պօլսում գտնվող բոլոր աշտարակներից բարձր է երևում. այդ մզկիթի մէջ ահա, ամեն ուրբաթ օր, գալիս է սղօթելու մեծագոր սուլթանը:

Աշըգեան սրբազանը որոշել էր արժանացնել հրաւիրակ եպիսկոպոսներին և վարդապետներին Սալամլիքի հանդիսին ահանատես լինելու. կանխօրէն ծանուցված էր այդ մասին պալատին: Ինձ ևս թոյլատրվեց ընկերանալ հրաւիրակութեան: Գեսպաններին և առհասարակ օտարազգի հիւրերին ու երոպացիներին հնարաւորութիւն է արքվում սալամլիքին հանդիսատես լինելու. պատ-

ուաւոր հիւրերի համար յատկացված են մի քանի սենեակներ պալատից դէպի մզկիթը տանող ճանապարհի վրա, որոնց առջևից անցնում է սուլթանը այդ մզկիթը գնալիս:

Եւ անա Աշոտ ծայրագոյն վարդապետ Յակովբեանի ու պատրիարքարանի գործակատար Աբրահամ էֆէնդու առաջնորդութեամբ, ուրբաթ օր, յուլիսի 9-ին, առաւօտեան ժամը 10¹/₂-ին, Երուսաղէմատնից գնացինք դէպի պալատը: Մի առանձին սենեակ, որի պատուհանը ուղղակի նայում է Համիդէի մզկիթին, պատրաստված էր սրբազանների համար: Վերին աստիճանի քաղավարութեամբ ընդունվեցին հրաւիրակ սրբազան, ները: Ժամը 11-ից սկսած զօրքը երաժշտութիւնը հնչեցնելով, սկսվեց շարժվել պալատից դէպի մզկիթը տանող ճանապարհի երկու կողմով: Շքեղ և հիանալի արարական նժայգներով լծված կառքեր բերում էին հետզհետէ թիւք փաշաներին, նախարարներին, պալատականներին. անա և եգիպտական նաւային զօրքը, որ եկել է խէդիվի հետ: Տաճկական պաշտօնեաների համադգեստները խիստ ճրխ և շքեղ են. ուրքան շքանշաններ զարդարում են նրանց կուրծքերը: Սրբաշաւ վազում է մի կառք, շրջապատված ժանդարմներով. դա սուլթանի գահի ժառանգն է, Աբդու-Ազիզի որդին: Ժամը 11¹/₂-ին ժամանում է շէյխուլ իսլամը. մօլաներ, դէրվիշներ շրջապատում են նրան. մուէզզիներ, մի արաբ, արդէն բարձրացել է մինարէի վրա. ասում են որ նա ամենալաւ երգիչն է: Ահա և Ղազի Օսման փաշան, Պէլէֆայի

հերոսը .ահա և զազի-Մուխտար փաշան, Կարսի պատերազմի ժամանակ յայտնի զօրապետը և այժմ Եգիպտոսում սուլթանի նուիրակը. բոլորը գիմում են պալատ: Մեր սենեակին կից միւս սենեակում ժողովվել են մի քանի ղեսպաններ, բարձրաստիճան եւրօպացի պաշտօնեաներ իրանց կանանց հետ: Այդ միջոցին մեր սենեակը բերում մտցնում են և երկու ուսու կին և նրանց բերող թիւրք պաշտօնեան ասում է. սրանք ևս «մօսկօֆ» են (տաճիկները ուսաներին «մօսկօֆ» են կոչում):

Քանի մօտենում է կէսօրը, զօրքի, ձիաւորների, ուսուկանների, պաշտօնեաների թիւը շատանում է. զօրքերը խումբ խումբ, զանազան տեսակ տարազներով, զանազան տեսակ ւրաժշտութիւններով հնչեցնում են իրանց փողերը: «Սկըսվում է, սկսվում է», լսվում է ամեն կողմից. պալատից դուրս են գալիս 8 հատ մանուկներ և պատանիներ, արարական նժոյգների վրա նստած, 8 տարեկանից մինչև 16 տարեկան. նրանց արտաքոյ կարգի գեղեցկութիւնը, դէմքերի նուրբ, քնքոյշ գծագրութիւնը, վայելչակազմ հասակը խաւոյն աչքի են ընկնում. Սուլթանի որդիներն են. պարզ երեսւմ է, որ մայրերը չէրքեզուհիներ են: Բոլոր 8 արքայազունները ձիերի վրա, ամեն միւնը ունենալով իր մօտ մի ախոռապետ, կանգնում են ճանապարհի վրա, զինուորական համազգեստներով. նրանք զինուորական ծառայութեան մէջ են: Ժամը 11³/₄-ին դուրս է գալիս մի շքեղ սուկեզօժ կառք. նրա առջևից վազում են երկու ներքինիեր. դա Վալիդէ Սուլթանն է, մայր-թագու-

հին, սուլթանի մայրը. նրա կառքին հետևում է մի այլ կառք, որի մէջ նստած է երեսը կիսաբաց, կէս եւրոպական, կէս տաճկական տարազով սուլթանի աղջիկը. ապա մի քանի կառքեր, որոնց մէջ նստած են հարեմի զարդերը. բոլոր կառքերը շրջապատված են ներքինիներով: Կառքերը կանգ են առնում մզկիթի առաջ, լայնարձակ հրապարակի վրա. ձիաններին արձակում են և բոլոր կանայք մնում են կառքերի մէջ. նրանք պէտք է աղօթքը լսեն և աղօթեն կառքերի մէջ փակուած. սովորութիւն չէ որ նրանք մտնեն մզկիթը այդ ժամանակ:

Այդ միջոցին Աշոտ վարդապետը և Աբրահամ էֆէնդին մեծ իրարանցումի մէջ են. զանազան խրատներ են տալիս եգիպտոպոսներին և վարդապետներին, թէ ինչպէս պէտք է վարվեն սրանք, երբ սուլթանը արժանացնէ նրանց մեծ շնորհին նրանց կողմը նայելու. պէտք է մինչև գետին խոնարհութիւն մատուցանէք, ասում են նրանք: Սեղրակեան սրբազանը քմածիծաղ է տալիս. Սարգիս եգիպտոպետը հարցնում է զվեղարներս վեր առնենք թէ ոչ:

— Աման, սրբազան հայր, գոչում է Աբրահամ էֆէնդին. այդ չընես, մեծ անպատուութիւն է:

— Ախպեր, ասում է Սարգիս սրբազան, ինչ դժուար բան է ֆառաւորների երեսը տեսնելը. մաքրի ջանը դող է ընկնում:

Յանկարծ լսվում է մուէզզինի զիլ, հնչում ձայնը մինարէի բարձունքից. նրան արձագանք են տալիս հարիւրաւոր ձայների լայնատարած ց.

Գօրօք հարիւրաւոր մզկիթներէ տշտարակներից: «Ալլահ Աքբէր» ձայնի հետ միասին տիրում է խորին լուռութիւն. այդ իսկ բողբոջին պալատի դռնից զուրս է գալիս յամբ յամբ շարժելով սուլթանի կառքը. նրան լծուած են 2 սևաթոյր նժոյգներ. կառքի առջևից գնում են զանազան պալատականներ՝ գայիսոնները ձեռքին. կառքի մէջ նստած է սուլթան Արզուլ Համիդ խանը, իսկ իր առջև Օսման փաշան: Սուլթանը հագնուած է պարզ, գլուխին Փէս դրած. նա միջահասակ է, մօրուքը կարճ և ալեխառն: Կառքը կամաց-կամաց իջնում է զառիվայրից. կառնապանը ալբանական ոսկեհիւս հագուած ունի հագած. երբ մօտեցաւ եպիսկոպոսներէ կանգնած սենեակին՝ սուլթանը աչքերը բարձրացրեց և նայեց դէպի պատուհանը, գլխի թեթև շարժումով բարև տալով: Եպիսկոպոսները, վարդապետները խոր պլուխ տուին, Յակոբեան Աշոտ վարդապետ և Աբրահամ էֆէնդին մինչև գետին խոնարհուեցին:

«Աւելի խորին, աւելի խորին գլուխ տուէք», յարգարում էր էֆէնդին էջմիածինեցիներին, բայց սուլթանն արդէն անցել է. ժողովրդին նա բարեւում է ձեռքը ֆէսին կպցնելով:

Եզկիթի առաջ իջնում է կառքից և առանձին սանզուխներով մտնում արքայական աղօթար սեղին. ժողովուրդը խոնվում է մեծ դռնից մըզկիթը: Ահալում է փառաբանական երգեցողութիւնը. երգում են արաբական ամենալաւ երգիչները. նրանց երգը լպկի է դառնում: Աղօթքը ապիւ աւում է կէս. ժամ. նայն կարգով և հանա

դէսով կատարվում է վերադարձը դէպի պալատ։ Առաջ գնում են վալիդէ սուլթանի և հարէմի կառքերը. սուլթանը այս անգամ ուրիշ կառքով է վերադառնում. ձիւնի նման երհսւ սպիտակ ձիեր լծած. կտորը քշում է ինքը սուլթանը, որ միայնակ է և ոչ ոք չունի այս անգամ իր հետ։ Պատուհանին մօտեցած ժամանակ Աբրահամ էֆէնդին խրատներ, յորդորներ է կարգում թէ ինչպէս ողջունեն, գլուխ տան, բայց յորդորները բանի չեն ծառայում, որովհետև սուլթանը քշում է կառքը արագութեամբ և անցնում առանց նայելու։ Մի քիչ յետոյ, սրբազանների սենեակը մտնում է մի գեղեցկադէմ պալատական, հաճի էմին-բէյը, սուլթանի երկրորդ սենեկապետը և դիմելով Աշոտ վարդապետին՝ խնդրում է յայտնել էջմիածնի եպիսկոպոսներին, թէ նորին վեհափառութիւն սուլթան Աբդուլ-Համիդ խանը իր բարեներն է ուղարկում Իւջքիլիսայի եպիսկոպոսներին և հարցնում է նրանց առողջութեան մասին։ Աշոտ վարդապետը, փոխանակ էմին-բէյի խօսքերը թարգմանելու սրբազաններին, և նրանցից ստանալու պատասխան, ինքն ուղղակի պատասխանում է. «էֆէնդըմ, եպիսկոպոսները մինչև իրանց վերջին շունչը երախտապարտ պիտի մնան մեր փառիշահի մեծ պատուի համար, որ նրանց արժանացրեց։ Եպիսկոպոսները միշտ այն են խօսում թէ մեր փառիշահի պէս թագաւոր դեռ երկրագնդի վրա չը կայ» և այլ այսպիսի խօսքեր։

Ժամը 1-ին կառքերով հեռացանք պալատից և մի քառորդ ժամ հանգստանալով Բէշիկթաշի

հայոց եկեղեցու սենեակում, ուր առջ ապրում էր Թորէն արքեպիսկոպոս Նար-բէյը, գնացինք Արթին-փաշա Տատեանի, արտաքին գործերի մինիստրի խորհրդականի տունը այցելութեան:

Արտին փաշա Տատեանը յայտնի է իբրև քաջ դիպլոմատ և տաճկական կառավարութեան, մանաւանդ արտաքին քաղաքականութեան գործերում մեծ դեր է խաղացել ժամանակով. այժմ ևս մասամբ խաղում է այդ դերը: Ընդհանուր կարծիք և համոզմունք է որ արտաքին քաղաքականութիւնը նա է վարում և ոչ մինիստրները, որոնք միայն անուանական են լինում: Վերջին ժամանակներս սուլթանը իր շնորհները նուազեցրած լինելով նրա վերաբերմամբ, մի տեսակ աչքից ընկած է համարվում, թէև իր պաշտօնը վարում է դարձեալ:

Արգեօք Արթին փաշան օգտաւէտ է եղել հայերի համար, թէ հանդիսացել է լոկ իբրև տաճիկ պաշտօնեայ, դժուար է մի դրական խօսք ասել, այնքան միմեանց հակասական են նրա մասին լսածներս: Նա ծերունի է. շրջապատուած իր թոռներով, ընդունեց մեզ: Հարկ համարեց Սեդրակեան սրբազանին յայտնել, որ ինքն, իր ամբողջ ընտանիքով, էջմիածնի սուրբ աթոռի ամենաշահարազատ զաւակն է և պիտի մնայ յաւիտեան. խնդրեց հաղորդել Հայրիկին իր որդիական բարեկները, պսելով որ նա մեր սիրեցեալ Հայրիկն է. բայց երբ Սեդրակեան սրբազան խիստ զգուշութեամբ խօսք բացեց հայոց գործերի մասին. «աման, հայր սրբազան, կաղաչեմ, ադ տեսակ խըն-

դիրներուրաի չը խօսենք» աճապարեց կարճ կտրել:

Եթէ դատելու լինենք Բէշիկթաշի եկեղեցուն նքա արած բազմաթիւ ընծաներից, այն թանգտգին պատկերներից, որի առաջ նա միշտ գալիս աղօթում է, պէտք է ընդունենք, որ Արթին փաշան շատ բարեպաշտ և կրօնասէր հայ է:

Ճշմարտութիւնն այս է, որ Արթին փաշան իր քաջ դիպլոմատ լինելու լիուլի ապացոյցները տուեց մեզ, քանի որ, չը նայելով մի ամբողջ ժամուայ տեսակցութեան, դուրս գալով չը կարողացանք լուծել մեզ զբաղիցնող հարցը. «Ինչ տեսակ մարդ է Արթին փաշան»:

* * *

Կ. Պօլիս այցելող ճանապարհորդի զլիաւոր գործը լինում է տեսնել սալամլիքի հանդէսը: Այդ հետաքրքրութիւնը լիացնելուց յետոյ, հետամուտ է լինում իմանալ, թէ ի՞նչ նշանաւոր բան կայ տեսնելու: Մեզ ասացին, որ Կ. Պօլսի նշանաւոր և տեսնելու արժանի տեղերը բացի Այաս-Սոֆիայից, հետեւեալներն են. բիւզանդական հրնութիւնների մուղէձնը, ենիչէրիների մուղէձնը, Ս. Իրինայի տաճարը, այժմ տաճկական զինանոց սէքալը, որը բիւզանդական նախկին կայսերական պալատի և ատեանի տեղն է բռնել, սուլթան Ահմէդի մզկիթը, սուլթան-Վալիդէի մզկիթը, Աթմէյզանը, կամ բիւզանդական հիպոդրոմը. «1001 սիւն» կոչուած ջրամբարը:

Մեր առաջնորդն էր Աշոտ վարդապետը և

Նազըմ-բէյի կողմից ուղարկված մի ոստիկան, որի պարտաւորութիւնն էր ամեն տեղ դռները եւ պիսկոպոսաների առաջ բաց անել տալ: Այդ դռները ամեն ճանապարհորդի, մանաւանդ եւրօպացու առաջ բացվում են բախշիշի զօրութեամբ, ուստի Նազըմ-բէյի ոստիկանի օգնութիւնը բոլորովին անօգուտ համարելով և զգալով, որ նրա դիմակի տակ թագնված է ոչ թէ մի ոստիկան, այլ և մի լրտես, որին նոյնպէս պէտք էր առատ բախշիշով վարձատրել, ցանկութիւն կար նրան ճանապարհ դնել:—«Աման, Նազըմ-բէյը պատիւ ըրեր է սրբազաններին. անիկայ ճամբելը կընշանակէ Նազըմ-բէյն անպատուել», տրամաբանեց Աշոտ վարդապետը:

Ճար չը կար. պէտք էր արժանանալ Նազըմ-բէյի ցոյց տուած պատուին: Եւ Երուսաղէմաանից կառքերը տարան մեզ դէպի Սէրալի կողմը: Պօլսի այն մասը, որտեղ գետեղված են Բարձր Դուռը, սուլթանի ապարանքը, Այա-Սօֆիան, կազմում է հին Բիւզանդիոնը, որի պարիսպները դեռ կանգուն են և ձգվում են Մարմարա ծովի ափով: Դեռ շատ հեռուից ամենքի ուշադրութիւնը գրաւում է Ս. Սօֆիան իր աշտարակներով:

Երբ կառքը կանգ առաւ, մեր առաջ երևացին միայն դեղնած և ճաքճքված պատեր. ազաւնիների մի մեծ երամ թռչկոտում էր այստեղ և այնտեղ և բարեպաշտ մուսուլմանների ու գեղանի թրքուհիների ձեռքից ընդունում էր իր կուտը: Նրանց կերակրելը վարձք է համարվում, ուստի և ամեն մզկիթի բակը լի է նրանցով: Նշա-

Նաևոր Ս. Սօֆիայի այդ արտաքին աննշան տես-
քը հրաթափեցրեց մեզ. մենք դեռ չը գիտէինք,
թէ այդ արտաքին տգեղ ծածկոցի տակ ինչպիսի
հրաշալիք է բովանդակվում:

Բայց առաջ այդ հրաշալիքի պատմութիւնն
անենք:

Ս. Սօֆիան բիւզանդական ճարտարապե-
տութեան գլուխ գործոցն է: Յուստիանիոս կայսրը
այդ հսկայական հրաշալիքը շինեց 5 տարում,
սկսելով 532 թ. և աւարտելով 537 թ.: Նրա կա-
ռուցանողը Անտէմի և միլէտացի Իսիդոր հան-
ճարաւոր ճարտարապետներն էին, իսկ ըստ հայ-
կական աւանդութեան, ճարտարապետը հայ էր,
Տրդատ անունով: Յունական աւանդութիւնների
համեմատ, Յուստիանոս բերել տուեց Փոքր-Ասի-
ոյից, Եփեսոսի Դիանա չաստուածուհու հին տա-
ճարից, այն, որ Հերոստրատը այրեց իր անունը
անմահացնելու համար, ութ հատ թանկագին կա-
նաչազոյն սիւներ, ութ հատ էլ պօրփիրեան
սիւներ Հոմի Արեգակի տաճարից, որ կառուցել
էր Արեւիկանոս կայսրը. բերել տուեց նոյնպէս
Յունաստանից և Եգիպտոսից շատ թանկագին
իրեր, այնպէս որ հին աշխարհի հարստութիւն-
ների մեծ մասը կենտրոնացած էր Ս. Սօֆիայի
տաճարում: Արծաթ, ոսկի, զանազան գոհարեղէն,
բիւզանդական գեղարուեստային մօզայիկ, բազ-
մերանգ մարմարիօն.—այս ամենը Ս. Սօֆիայի
առանց այն էլ ունեցած վեհութեան ու մեծու-
թեան մի նոր փայլ էին աւելացնում: Սեղանի վրա
մի ամպհովանի կար շինված, ամբողջութեամբ

տակուց և ազամանդից:

Բայց այս տաճարը հրաշակերտ շինողը այդ տակին և ազամանդը չէին, այլ նրա սքանչելի վեհութիւնը և հակայական մեծութիւնը: Երևակայեցէք մի մեծ տարածութիւն, որի վրա կախված են զարհուրելի բարձրութեամբ պատեր. մի լայն, կլոր գմբէթ միացնում է այդ պատերը: Գմբէթի շուրջը պատուհաններով լի է. կապուտակ ջինջ երկինքը և նրանցով լոյսի մի ամբողջ հեղեղ. թափվում է տաճարի ներսը: Բայց գմբէթն այնքան բարձր է, որ կարծես իր գլխով պիպչում է երկնակամարին. ներքևում կանգնած, դուք ձեզ իբրև մի ճանճ էք զգում, իսկ երբ ոչորածն սանդուխտներով բարձրանում էք վերև, ներքևում գտնված մարդիկ գաճաճներ են թվում:

Պահպանելով իր վեհութիւնը այժմեան պարզութեան մէջ, 1356 տարեկան Ս. Սօֆիայի տաճարը բաւական զառամել է. 440 տարի սրանից առաջ նա կողոպտվեց և զրկվեց իր հարստութիւնից, և քրիստոնէական աշխարհի պարծանք լինելուց դադարեց, փոխվելով մահմետական մրգկիթի: Անմոռանալի կը մնայ այդ օրը պատմութեան մէջ...

Այդ պատահեց 1453 թւի մայիսի 29-ին:

Սուլթան Մահմուդ II-ը տիրել էր Բիւզանդիոնին. քրիստոնեաները, իբրև վերջին ապաստարան, ապաստանեցին Ս. Սօֆիայի մէջ և ջերմ աղօթք էին անում: Աստուած չը լսեց այդ աղօթքը. փողերը և զէնքերի շառաչիւնը զուժեցին, որ թշնամին, քրիստոնէութեան անխնայ թշնամին,

մօտենում է. տաճարի դռները կացփնների հարուածի տակ ընկան և վայրագ օսմանների վայրենի հրոտակները ներս խուժեցին՝ կոտորելով, շարգելով և սրի անցկացնելով ամենքին: Տաճարի ճօխաթիւնը, փարթամութիւնը շլացրել էր նրանց. սկսվեց մի զգուելի սրբապզծութիւն. արիւնը, մարդկային արիւնը, լճի նման լերդացած կանգնել էր տաճարի մէջ: Դիակները կուտակվել էին և գոռոզ յազթական սուլթան Մահմուդ՝ ձիի վրա նստած, կոխտուելով այդ դիակները՝ մտաւ տաճարը:

Բայց մտաւ թէ չէ, շանթահարի պէս կանգ առաւ, շլանալով տաճարի գեղեցկութիւնից. իջաւ ձիուց, երկրպագեց և իսկոյն սկսվեց ազօթք. կայսերական աթոռի վրա բազմեց ինքն սուլթանը, իսկ պատրիարքի գահի վրա նստեց մուֆտին և այդ օրից պատարագի ու աւետարանի փոխարէն, Ս. Սօֆիայի կամարները թնդում են Ղուրանի և զէա իլլահ իլ Ալլահն-ի ձայներով:

Նախագաւթում, չալմայաւոր թիւրք պահապանը առաջարկեց մեզ հագնել լայն հողաթափներ մեր կօշիկների վրայից. ամեն ոչ-մահմետական պարտաւոր է այդ հողաթափները հագնել որպէսզի նրա անմաքուր ոտքերը չը պղծեն մահմետական տաճարի սրբութիւնը. տարակոյս չը կայ, որ մահմետականները ազատ են այդ առանձնաշնորհութիւնից... Եւ այդ շնորհի համար պէտք է պահապանին վարձատրել առատ, գէթ 10 դրուշ բախշիչով:

Հագնելով հողաթափները՝ մի շէյխի առաջնորդութեամբ մտնում էք տաճարը: Դուք ապշած

հիացած էք մնում ձեր աչքերին երեցած տեսարանի հոյակապութեան առաջ: Որքան որ տաճիկները ամբողջ դարերի ընթացքում աշխատել են ջնջել քրիստոնէական տաճարի հետքը, որպէս զի ոչ մի բան չը յիշեցնէ Բիւզանդիայի ժամանակի Սօֆիան, որքան որ նուրբ գեղարուեստական մօզայիկի վրայից նրանք թանձր գոյն են քսել, աւերել են պատկերները, կողոպտել են բոլոր հարստութիւնից, այնպէս որ այժմ մերկ պատերն են կանգնած և մի քանի մեծ ջահեր են կախ ընկած, բայց ինչ որ մնացել է, այն էլ բաւական է մի գաղափար տալու Ս. Սօֆիայի գեղեցկութեան մասին: Շատ պարզ երևում է աւագ սեղանի տեղը. երևում են և սեղանի վրայի եղած Փրկչի և կամարի հրեշտակապետների պատկերները, որովհետև տաճկական կողիտ ներկարարի վրձինը չէ կարողացել խանգարել. տեղ տեղ թողված են պատերի վրա քանդակված խաչերը: Գմբէթի վրա գտնված քրիստոնէական պատկերները, երևի 12 առաքեալների պատկերները, անհետացնելու նպատակով, տաճիկները կախ են տուել նրանց վրա անազին կլօրակ վահաններ սև ֆօնով, որոնց վրա ոսկէ տառերով գրված են Մահմէդի, Օմարի, Աբուբէքրի, Օսմանի, Ալու և Հասան-Հուսէյնի անունները: Մի հրաշքով բոլորովին անվթար մնացել է Հոգոյն Սրբոյ և Աւետարանի նկարը տաճարի գլխաւոր մուտքի գլխին: Ծանր և ճնշող տպաւորութիւն է գործում տաճարն իր ամայութեամբ. կարծէք դարևոր քնի մէջ է ընկզմվել նա մահմետականների միակերպ

աղօթքների օրօրի տակ: Յուլիս ամիսն էր, ամենատաք ժամանակը և սակայն այդ կամարների տակ մրսելու չափ զով էր: Զանազան անկիւններում գորգերը փռած պառկած են տաճիկ շէյխերը և իմամները. մի քանիսը կարգում են զուլան, ուրիշները տխուր երգում են իբրև բուեր: Պատմում են, որ առաջ պահապանները քանդում են եղել և պոկում պատերից մօզայիկի կտորներ և ծախում եւրօպացիներին՝ շինալով առատ բախշիշից, բայց այժմ սուլթանի հրամանով խստիւ արգելված է. մօզայիկի ամեն մի փոքր կտորը եւրօպացիները, մանաւանդ յոյները, ոսկու քաշով առնում են եղել:

Դրսից տաճարը բոլորովին խանգարված է կողմնակի շինութիւններով, որոնք տաճկաց ժամանակի գործ են, մանաւանդ չորս մինարէները:

Այդտեղից գնացինք բիւզանդական հնութիւնների միւզէօնը, որ կառուցված է ներկայ սուլթանի օրով և որտեղ Փոքր-Ասիայի զանազան կողմերից ժողովել են Յունաստանի հնութիւնները: Նրա սկզբնապատճառը եղել է արխէօլօզ Համիդ-բէյ, եւրօպական կրթութիւն ստացած մի տաճիկ ուսումնական: 12 տարւ է, ինչ բացվել է այդ միւզէօնը և նա արդէն անուն է հանել Եւրօպայում, որովհետև այդտեղ կան շատ թանկագին արձաններ, յունական աշխարհի քանդակագործութեան գեղեցիկ օրինակներ: Այդտեղ կան յունական Արամազդի, Ապօլօնի, Մարսի Անահիտի, Հերքուլէսի, Մէդուզաների, ինչպէս և հռոմէական կայսրների՝ Ներօնի, Կալիգուլայի:

Տրայանոսի, Տիտոսի արձանները: Միւզէօնի երկրորդ բաժինը պարունակում է իր մէջ զանազան դամբարաններ կամ sarcophage (սարկոֆաժ)-ներ որոնց մէջ նշանաւոր է մի վերին աստիճանի գեղեցիկ մարմարեայ դամբարան, որի վրա քանդակագործված են Դարեհի և Աղէքսանդրի պատերազմի զանազան տեսարանները. դա համարվում է Մեծն-Ալէքսանդրի դամբարանը և եթէ միայն հաստատվի գիտնականների այդ կարծիքը, նա մի անգին հնութիւն կը լինի: Դամբարանը իր ամրող թեամբ պահված է առանց որ և է աւերման ենթարկվելու հարիւրաւոր դարերի ընթացքում. նոյն բաժնում դասուորված են և փրենիկեան, Ներքովդի նշանագրերը, բևեռագրեր և պարսից կիւրոս, Դարեհ, Կամբիզ թագաւորների իսկական հրովարտակները փոքր հողէ տախտակների ձևով: Աշխատասէր Համդի-բէյ կարողացել է մի այդպիսի կարճ ժամանակում այդքան հարստութիւն հաւաքել Փոքր-Ասիայի զանազան կողմերում պեղումներ կատարել տալով: Այդ միւզէօնը մեծ ապագայ է խոստանում:

Այդ միւզէօնից յետ խօսել ենիչերինների միւզէօնի մասին չարժէ. նա իսկուպէս և միւզէօն չէ, այլ մի երկու երկար և նեղ կեղտոտ սենեակներ, որտեղ ի ցոյց են դրված ենիչերինների զանազան պաշտօնեանների մոմից շինած պատկերները իրանց հագուստով և տարազով ու պատժի գործիքներով:

Միւզէօնից քիչ հեռու գտնվում է բիւզանդական ս. Իրանայի հին տաճարը, որ այժմ փոխ-

ված է զինանոցի. այդ այն տաճարն է, որտեղ կայացաւ երկրորդ տիեզերական (Կ. Պօլսի) ժողովը: Այժմ այդտեղ պահպանվում են հին զէնքեր և օսմանեան կայսրութեան բերդերի բանալիները:

Ասում են, որ այդտեղ են պահվում և ս. Սօֆիայի զանգակը և այն շղթան, որով ընդհանրական կայսրութեան և ճենօվացիների օրով կապում էին Բօսֆօրի նեղուցը:

Ս. Իրանայի տաճարի մօտ գտնվում է Սէրալը, որ սուլթանների հին պալատն է և որտեղ այժմ զետեղված է Բարձր դուռը իր զանազան դիւաններով: Սէրալը շատ մեծ տարածութիւն է բնում. նրա շրջակայքը մօտ 6 վերսա է և այդ է նախկին Բիւզանդիայի բուն տեղը: Այդտեղ է գտնվում և Մեծն Թէոդոսի սիւնը, որ նա կանգնեց ի յիշատակ Գօթերի նուաճման:

Այա-Սօֆիայից յետոյ հռչակաւոր է Սուլթան Ահմեդի մզկիթը, որը թէև շինված է Այա-Սօֆիայի հետ մրցելու համար, բայց ի հարկէ, իր նպատակին չէ հասնում: Նախշված է շատ ճոխ և փարթամ: Նա աւելի հռչակաւոր է և նրան այցելում են ճանապարհորդները նրա առաջ գրտնված հրապարակի պատճառով. այդ ընդարձակ հրապարակը հին հիպոդրոմն է, որտեղ տեղի էին ունենում յունական խաղերը և ըմբշամարտութիւնները: Երբ յիշում էք, որ այդտեղ կռվում էին Յուստինոսի ժամանակ «կանաչները և կապուտները», երբ յիշում էք, որ վանդալների նուաճող յաղթական Վէլիգարը այստեղ փառաբան-

վում էր ժողովրդից, կրք յիշում էք, որ այդ հրա-
պարակը պատմական նշանաւոր անցքերի հան-
դիսատես է եղել, ախրութիւնը պատում է ձեզ:
Եւ ինչ է մնացել այդ բոլորից. միայն Մեծն Կոս-
տանդիանոսի հին ազիւսէ սիւնը, այն ևս իր մե-
տազեայ տախտակներից զրկված: Մի ուշադրու-
թեան արժանի հնութիւն է մնացել սակայն. հին
Յունաստանի Դելփեան տաճարում, այն որ պատ-
գամներ էր յայտնում, մի սիւն կար, որ բաղկա-
ցած էր երեք միմեանց փաթաթված պղնձէ օձե-
րից. այդ օձերի վրա դրված էր Դելփեան յայտ-
նի եռոտանին: Այդ եռոտանին Մեծն-Կոստանդի-
անոս բերեց Կ. Պօլիս և դրեց հիպօգրօմում.
այժմ այդ սիւնը կայ, թէև սուլթան Մահմուդ
զլխատել է օձերին:

Դրանով վերջացնենք մեր պտոյտը: Գէտք
է ասել սակայն, որ չը նայելով Նազըմ-բէյի ա-
րած պատուին, նրա տուած առաջնորդ—ոստի-
կանին, ամեն տեղ պէտք էր դարձեալ բախշիչ-
ներ տալ դոնապաններին: Տուն վերադառնալիս,
Աշոտ վարդապետը յայանեց, որ քաղաքավարու-
թիւնը պահանջում է ոստիկանին ևս բախշիչ տալ
զէթ ամենաքիչը 2 օսմանեան ոսկի (20 բ.): Կա-
րելի՞ էր ոստիկանին 2 ոսկի տալուց յետոյ, պատ-
րիարքարանի ղավազին ևս չը տալ. քաղաքավա-
րութիւնը պահանջում էր մի ոսկի էլ նրան տալ...:

* * *

Մօտենում էր Կ. Պօլսից մեկնելու ժամանակը, և մենք շտապով այցելեցինք մի հրկուօրվայ ընթացքում Կ. Պօլսի ազգային հաստատութիւնները:

Երկու հարիւր հազար հայ ժողովուրդ ունեցող Կ. Պօլիսը շատ խղճուկ է հայկական հասարակական և կրթական հաստատութիւնների կողմից: Իբրև ազգային պաշտօնական հաստատութիւններ Կ. Պօլիսն ունի լուսաւորչական և կաթօլիկ հայերի պատրիարքարաններ, ազգային երեսփոխանական ժողով, Ներսէսեան կամ Կենտրօնական վարժարան, ս. Փրկչի հիւանդանոց, Գում-Գափուի Լուսաւորիչ կամ մայր երկսեռ վարժարանը, ազգային մատենադարան, Բէշիկթաշի Մաքրուհեան վարժարան, Պասգիւզի Ներսիսեան վարժարան և մի քանի թաղական դպրոցներ: Կան և մասնաւոր հայ վարժարաններ, որոնց մէջ նշանաւորներն են երկուսը—Մէզբուրեան և Պէրպէրեան դպրոցները: Եթէ յիշենք և այժմ գոյութիւն ունեցող միակ լուրջ հաստատութիւնը՝ Միացեալ ընկերութիւնը և Գալֆայեան մասնաւոր որբանոցը, գրանով սպառված կը լինի Կ. Պօլսի ազգային կրթական—բարեգործական հիմնարկութիւնների թիւը: Զը մոռանանք և Վիէնայի Մխիթարեան միարանութեան վանքը Բէնկալթի թաղում. Սակայն Կ. Պօլիսը հարուստ է կրօնական—ազգային հաստատութիւններով—եկեղեցիներով:

Այդ եկեղեցիներից ամեն մինը նշանաւոր է և ուրիշ կողմերով: Մայր եկեղեցում թաղված են Պէզճեան ամիրան և Ներսէս Վարժապետեանը: Ղալաթիայի Լուսաւորիչ եկեղեցին յայտնի է նրանով, որ Ազգային Երեսփոխանական ժողովը կամ Ազգային խորհրդարանը, Կենտրոնական վարժարանը, Միացեալ ընկեւութիւնը և Ազգային Մատենադարանը նրա շրջափակումն են գտնվում: Սկուտարի ս. Կարապետի եկեղեցին յայտնի է իբնումն ունեցած ճեմարանով: Մի քանի եկեղեցիներ շատ թանգազին հին զարդեր և ձեռագիրներ են պարունակում:

Ամեն մի եկեղեցի ունի իր քարոզիչ—առաջնորդը, թաղական խորհուրդը և թաղական դպրոցը: Այդ քարոզիչները սովորաբար եպիսկոպոսներ և վարդապետներ են լինում:

Բայց մեր նկարագրութիւնը կարգով անենք: Գում-Գափուի պատրիարքարանի հետ արդէն ծանօթ են մեր ընթերցողները: Ծանօթանանք այժմ Ղալաթիայի ս. Լուսաւորչի հետ, որի հովանու տակ պատսպարված են Ազգային ժողովը, Ազգային մատենադարանը, Կենտրոնական վարժարանը և Միացեալ ընկերութիւնները:

Քարոզիչ Վահան վարդապետին այցելութիւն տալով՝ նրա առաջնորդութեամբ շրջեցինք ամեն տեղ: Երբէք չեմ մոռանայ այդ այցելութիւնը. ես ցանկութիւն յայտնեցի ամենից առաջ այցելել խորհրդարանը կամ այն մեծ դահլիճը, որտեղ իր նիստերն է անում Ազգային Երեսփոխանական ժողովը: Հայր սուրբի բնակարանը գրտ-

նվում էր ներքին յարկում. բարձրացանք միջին յարկը և երբ նա հրամայեց ծառային բանալ խորհրդարանի դուռը, ծառան ամբողջ կէս ժամ որոնում էր բանալին. վերջապէս նա գտաւ այդ շարքաստիկ բանալին՝ մի փոքր սենեակում ընկած. դուռը բացվեց և ամենից առաջ իմ ուշադրութիւնը գրաւեց այն թանձր փողին, որ պատել էր աթոռները, սեղանները և պատուհանները: Խեղճ Ազգային խորհրդարան. այնքան երկար ժամանակ փակ էր մնացել, որ ոչ ոք չէր մտածում ոչ բանալին գտնելու և ոչ փողուց մաքրելու: Նոյն փոշոտ վիճակի մէջ գտնվում էր և Ազգային մատենադարանը: Ազգային մատենադարան ասածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկու դարաններ, որոնց մէջ շարված են ձեռագիրներ և մի քանի հարիւր տպած գրքեր: Մեզ բացատրեցին, որ մատենադարանը ունեցել է շատ թանկագին ձեռագիրներ և մատենաներ, բայց մեծ մասը եմթարկվել է յափշտակութեան. ճիշդ մեր Ներսէսեան դպրոցի մատենադարանի օրն էր ընկել: Ինքն Ազգային Ժողովի սրահը մի շատ խեղճ տեսարան է ներկայացնում: Նա մի հասարակ դահլիճ է՝ բաւական մեծ, բայց ցածր. վերևի մասում մի տախտակամած բարձրութեան վրա հաստատված է նախագահ—պատրիարքի աթոռը և դիւանը. նրա հանդէպ շարված են աթոռներ երեսփոխանների համար: Շինութեան վերին յարկը յատկացրած է կենտրոնական վարժարանին: Բարձրանալով այդ վերին յարկը՝ մենք տեսանք մի դուռ, որի վրա գրած էր «ամֆիթատրոն»: Դա տան տանիքն էր,

որի չօրս կողմը բաց էր, միայն գլուխը ծածկված, յատակը ասֆալտով պատած և այդ տանիքը Վամֆրիթատրոնի ձևով շինված՝ ծառայում է աշակերտների համար և իբրև զբօսարան և իբրև մարմնամարզութեան դահլիճ: Դրա պատճառն այն է, որ վարժարանը չունի ոչ պարտէզ, ոչ բակ: Էլ չեմ խօսում այն մասին, որ Լուսաւորիչ եկեղեցին իր ամբողջ այդ շինութիւնով գտնվում է Առլաթիայի կեղտոտ թաղի ամենակեղտոտ փողոցներից մինում, շրջապատված մտազործների, բանջարավաճառների և պտղավաճառների խանութներով: Թէ Ազգային Ժողովի և Թէ Կենտրոնական վարժարանի շինութիւնը մի նախատինք է Կ. Պօլսի հայութեան համար... Եթէ ազգային ամենազլխաւոր հիմնարկութիւնները այդպիսի անշուք և դժուժ վիճակ են ներկայացնում, կարող էք արդէն դադար կազմել մնացած հայ դըպրոցների շինութեան մասին:

Ես հաստատվեցի այն համոզմունքի մէջ, որ գոյացել է մեզանում, Կովկասում, Պօլսի հայ դըպրոցների մասին: Կենտրոնական վարժարանը համարվում է Պօլսում իբրև բարձր, այսինքն մի տեսակ ուսումնարան, որ մեր թեմական դպրոցների և Փէորգեան ճեմարանի մէջտեղն է բռնում: Եւ սակայն տեսնելով նրա քիմիական և ֆիզիքական կարիքները, գասացուցակները, առարկաների շարքը, համարձակապէս կարող եմ ասել, որ նա մեր թեմական դպրոցներին հողիւ հաւասարվի. իսկ Գում-Գափուէ մայր-վարժարանը որ, տարեկան ծախսում է 1,000 ոսկի (10,000 բուլքի),

ունի 24 ուսուցիչներ և 400 աշակերտներ երկու սեռից, 6 դասարան և 2 նախակրթարան, որտեղ աւանդվում են նաև քիմիա և ֆիզիկա, հազիւ կարողանայ հասնել մեր նախկին չորս դասարանական դպրոցներին: Ուսուցչական դասը դեռ չէ կարողացել ձեռք բերել յարգանք և համարում, այլ նրա վրա նայում են իբրև նախկին, ամիրայական ժամանակի պատուելիների դասակարգի վրա: Ուսուցիչը հազիւ ստանում է տարեկան 400—500 թուրքի վարձատրութիւն: Այդ ազգային թաղական դպրոցները և նոյն իսկ Կենտրոնական վարժարանը մտնում են ուսանելու չքաւոր և միջակ դասակարգի որդիք. հարուստները իրանց զաւակներին տալիս են մի որ և է եւրոպական, կամ բողոքական Բօքէրտեան ուսումնարանները և կամ ուղարկում են Եւրօպա: Կայ և մի հայ դպրոց, որտեղ կրթվում է իդական սեռի հարուստ դասակարգը. այդ Մէզբուրեան օրիորդական դպրոցն է: Մի բան միայն աչքի է ընկնում Պօլսի հայոց դպրոցներում, գէթ իմ այցելած տեղերում. ասեղնագործութիւնը, գծագրութիւնը և նկարչութիւնը բաւական զարգացած են: Իսկ Մէզբուրեան դպրոցը, որի մրցանակաբաշխութեան հանդիսին ներկայ գտնվեցի յուլիոյ 6-ին, և որտեղ առաջին անգամ ծանօթացայ իգմիրլեան, Մուրատեան և Ալէաթճեան սրբազանների հետ, կատարելապէս ֆրանսիական արիստոկրատիկական պանսիօնի է նման. այդ հանդիսին ներկայ էր Պօլսի հասարակութեան high-life և այդտեղ ես կարող էի լիուրի գաղափար կազմել

Պօլսի քնքոյշ սեռի արդուզարդի, պճնասիրութեան ու մօղայի մասին: Ձիւնի պէս ճերմակ շարեր հագած, ծաղիկներով պճնուած աշակերտուհիները ցոյց տուին հանդիսականներին իրանց հմտութիւնը և ճարտարութիւնը դաշնամուր ածելու, զոդտրիկ երգեր երգելու, Փրանսիական ու տանաւորների և կիսա-կասկածելի առակներ արտասանելու մէջ:

Իսկ մամուլը... Ճշմարիտ, քիչ էր քնացել մոռանայի այդ մամուլի գոյութիւնը, այնքան նա ողորմելի, թշուառ վիճակի մէջ է գտնվում, կամ ստեղծել է ինքն իր համար այդ վիճակը: Միակ փոքր ի շատէ օրինաւոր թերթը «Հայրենիքն» է, որ մի և նոյն ժամանակ և ամենից շատ տարածվածն ու ժողովրդականն է իր էթանութեան պատճառով: Մի գաղափար տալու համար Պօլսի հայ մամուլի բարոյական մնանկութեան մասին, ես կը պատմեմ մի դէպք:

Մի օր, երբ Արիստակէս սրբազանը եկել էր Երուսաղէմատուն, այցելութեան է գալիս Բիւզանդ Քէչեան, «խմբադրապետ Արևիկը լրագրի», ինչպէս մակազրված էր այցելուսմսի վրա: Յայտնի է, թէ «Արևիկը» լրագիրը Մակար կաթողիկոսի մահից յետոյ՝ էլ զրպարտութիւն, բամբասանք, հայհոյանք չը քնաց, որ չը թափեց Սեդրակեան սրբազանի հասցէին, տպագրելով շինծու, հնարովի թղթակցութիւններ ու սուտակասպաս յօդուածներ: Այդ լրագրի խմբադրապետը, գալով այցելութեան Սեդրակեան սրբազանին, հարկ համարեց ասել. «Սրբազան հայր, պարտաւորութիւն

անձիս համարեցի ձեր սրբազնութեան մատուցանել յարգանքս. կաղաչեմ ի նկատ առնուլ, որ «Արևելքի» խմբագրութիւն եթէ տպեց ձեր սրբազնութեան դէմ յօգուածներ, ոչ անոր համար, որ նա կը համակրէր այդ յօգուածներուն, այլ մեր խմբագրութիւն իր համար սկզբունք դրած է տպել ամեն անասկ յօգուած և թեր և դէմ...» և այլ այսպիսի փաղաքշական խօսքեր:

«Հայրենիք» «Արևելք» լրագրներից բացի, կան «Փունջ», «Ծաղիկ» և այլն: Այս վերջին երկուքը իրանց մեծ եղբօր «Արևելքից» ոչնչով չեն տարբերվում իրանց ոգով և ուղղութեամբ:

Սա կը նկարագրեմ իմ այցելութիւնը հայ խմբագրութիւններից մինին: Մտնում եմ մի կեդտոտ տուն. կեդտոտ, նեղ աստիճաններով բարձրանում եմ. խփում եմ մի դուռ և մտնում մի սենեակ, որի մէջ դրած կայ մի հին սեղան և մի աթոռ՝ խմբագիրը նստած. յայտնում եմ անունս և խմբագիրը վեր կենալով՝ տալիս է ինձ իր աթոռը, բայց իր համար աթոռ չէ գտնում ամբողջ խմբագրատան մէջ և նստում է պատուհանի վրա: Ապա դիմելով ինձ՝ հարցնում է. «էֆէնդի, ձեզ ոչ ոք չը տեսաւ այստեղ գալիս»:—Ոչ ոք: Եւ ամեն մի քօպէ նա բանում է գուռը և նայում նախասենեակը:—Բայց չ՞ որ ձեր տանն էք, ի՞նչ էք այդքան վրդովում, հարցնում եմ ես:—Ոչ էֆէնդի, ոչ ոքին հաւատալ չի կարելի. ամեն կողմից շրջապատված ենք լրտեսներով, ոչ ոքից ապահով չենք: Վերջապէս գրաքննիչը կարող է գալ ամեն քօպէ:

Բանից դուրս եկաւ, որ Պօլտուս ոչ թէ լրագիրն են տանում. ցէնզորի մօտ, ինչպէս մեզ մօտ, այդ ցէնզորն ինքն է գալիս խմբագրատունն և այդտեղ կարգում ու հսկում տպարանի վրայ Այդ անիթով ինձ հետաքրքիր պատմութիւններ արին: Առաջ, երբ Պօլտուս մամուլի դէմ այնքան խրատութիւններ չէին գործադրում, ինչպէս այժմ, խմբագիրները լաւ օյիներ էին հանում խեղճ ցէնզորները գլխին: Գալիս է գրաքննիչը, սովորաբար հայ-կաթօլիկ, կամ մի որ և է կիսա-հայադէտ «էֆէնդի»: Նրա առաջ դնում են կօնեակի կամ բօժի շիշը. շոգու ազդեցութեան տակ ստորագրում է թերթը և գնում. միւս օրը առաւօտեան կարդալով լրագիրը և տեսնելով, թէ որ և է անթոյլաւորելի բան է տպւած, որոնում է խմբագրին և որտեղ գտնում է, կամրջի վրա, թէ փողոցում, սկսում է հայհոյել. «ժօ, էդէբսըզ, ադ ինչ թաղ բերիք գլխուս»:

Բայց անցել են այդ երջանիկ օրերը. այժմ գրաքննիչները իրանք էլ դողում են, որովհետեւ իրանց վրա լրտեսներ կան հաստատւած:

Այս մամուլի վիճակը Պօլտուսը մնչված, նա մի և նոյն ժամանակ և բարոյազէտ մտանկ է. բացի մի երկուսից, մնացածները կաշառվող, սակեն ըստէ փոփոխվող և շահի համար գործող օրգաններ են....:

Ինձ մնում է միայն մի քանի խօսք ասել և Պալտի հայհոգեցրականութեան մասին: A tout seigneur, tout honneur: Եւ առիթ ունեցայ. տես-

ներու նշանաւոր եպիսկոպոսներին, վարդապետներին ու բահանաներին. Ալըզեան պատրիարքին, Բարթուղէմէոս, Իզմիրլեան, Ալէաթճեան, Մուրադեան եպիսկոպոսներին, Մկրեան և Գէորգ Արծրունի քահանաներին, վերջինս նորերս վախճանվեց 107 տարեկան հասակում:

Առհասարակ Պօլսի հայ հոգևորականութիւնը շատ էլ լաւ համբաւ չէ վայելում: Պատրիարքացու եպիսկոպոսները, ինչպէս, օրինակ, Բարթուղիմէոս եպիսկոպոսը, միջից կէս են լինում կառավարութեան շնորհները զբաւելու: Սովորաբար միմեանց զէմ ինտրինզներ և զաւեր լարող Պօլսի եկեղեցականները մի բանի մէջ միաբան և համերաշխ են, շատ քիչ բացառութեամբ. ամենքը ատում և հայհոյում են Ալըզեան պատրիարքին. ոմանք այդ տնում են բաց, համարձակ, ոմանք ետեկց, par contumace: Ատելութիւնը հասնում է մինչև այն աստիճանի, որ շատ հոգևորականներ, որոնք սրտով ցանկանում էին հրաւիրակներին տեսնել, չէին կատարում իրանց այդ ցանկութիւնը, որպէս զի միայն Ալըզեանի երեսը չը տեսնեն, որովհետև հրաւիրակ սրբազաններին Ալըզեան իր մօտ էր տարել: Բայց հրաւիրակները իրանք կանխեցին այցելութիւն տալու Իզմիրլեան, Ալէաթճեան և Մուրադեան եպիսկոպոսներին, որոնք անապարեցին փոխադարձ այցելութիւն տալ սրբազաններին Երուսաղէմատան անջ: Այդ առիթով Մուրադեան սրբազան մինչև անգամ նազըմ-բէյի կողմից հարցաքննութեան ենթարկվեց, թէ ինչէն համար Երուսաղէմատուն է գնացել և այցելել

Մեղրական սրբազանին:

Կայ և մի ուրիշ բան, որի մէջ Պօլսի կու-
տակրօն եկեղեցականները դարձեալ միաբան և հա-
մերաշխ են. ոչ ոք չէ ուզում Բօսֆօրի գեղանկար-
ափերը թողնել և գաւառները գնալ որ և է պաշ-
տօնով, թէկուզ առաջնորդական: Փափկակենցադ
հոգևորականները մինչև անգամ զանազան առակ-
ների առարկայ են դարձել:

Պէտք է ասեմ սակայն, որ երեք եկեղեցա-
կաններ մեզ վրա լաւ տպաւորութիւն գործեցին:
Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսը՝ մօտ 50 տա-
րեկան, արտայայտիչ դէմքով, ալէխառն, լուսկեաց
մարդ է. նա իր ծանրաբարոյութեամբ, լրջու-
թեամբ և զգոյշ խօսակցութեամբ Արիստակէս ե-
պիսկոպոս Մեղրականին է յիշեցնում: Ալէաթ-
ճեան եպիսկոպոսը մօտ 45 տարեկան, դեռ մա-
զերը չը ճերմակած, բարձրահասակ, ծիծաղկոտ,
աւելի ժողովրդասէր լինելու համբաւ է վայելում:
Մուրադեան սրբազան նոյնպէս բարձրահասակ,
առողջ և ամուր կազմուածքով, ալէխառն և բաց,
համարձակ դէմք ունի. նա խօսում է պէրճօրէն
և իսկոյն համոզվում էք ձևերից, շարժուածքից,
թէ նա ոուսաստանցի հայ է:

Յուլիսի 13-ին ճանապարհ ընկանք Կ. Պօլ-
սից: Կ. Պօլսը մեզ վրա լաւ տպաւորութիւն չը
թողեց:

Բ.

Պ Ի Բ Ա Մ Ի Դ Ն Ե Ր Ի
Ա Շ Խ Ա Ր Հ Ո Ւ Մ

Վերջապէս 1893 թիւ յունիսի 13-ին թօթափեցինք մեր ոտքերի փոշին և հեռացանք Պօլսից առևտական «Քիխաչիզ» շոգենաւով: Թէև այդ օրը մեկնում էր և եգիպտական «Սգիվէի» շոգենաւերից մինը, բայց մեզ խորհուրդ չը տուին նրանով զնալ, որովհետև այդ շոգենաւերը բաւական հեղատոտ և անյարմար են: Մի կէս ժամից յետոյ մենք արդէն մտել էինք Մարմարա ծովը և սահում էինք արագութեամբ նրա խաղաղ, վճիռ և ֆիրուզային մակերևոյթի վրա:

Ահա մենք անցնում ենք Սան-Ստեփանոս արուարձանի առջևից, որ հռչակաւոր է դարձել պատմութեան մէջ 1877-78-ին թիւքքիայի հետ կնքած դաշնագրով, իսկ հայերի համար այդ դաշնագրի 16-րդ յօդուածով: Սան-Ստեփանոսի մօտ այժմ կառուցանվում է ներկայ Թագաւոր կայսրի նրախանով մի մահարձան, որտեղ ւղէաք է ամփոփվին ոռւս-թրքական պատերազմի ժամանակ ընկած ոռւս զինւորների բոլոր նշխարները: Յարգելով զօների յիշատակը՝ չէինք կարող չը յիշել և անմոռաց ներաէս Վարժապետեանին, որ այդ-

տեղ, Սան-Ստեփանօյում, մաշում էր յաղթողների շէմքը՝ իր ազգին փրկութիւն ձեռք բերելու համար:

Բայց հեռու տխուր մտածմունքներ. կեանքը ետում է Մարմարա ծովի վրա. ահազին շարժում կայ. անհամար առազաստաւոր նաւեր, շոգենաւեր, մակոյկներ—անգլիական, ռուսական, յունական, տաճկական, ֆրանսիական, իրենց ազգային դրօշակներով, ամեն բոպէ առաջը են դուրս գալիս: Եթէ յիշենք և այն, որ Մարմարա ծովի երկու ափերը և նրա կղզիները վերին աստիճանի գեղազրական են, համարձակ կարող ենք ասել, որ Մարմարա ծովը շլացուցիչ տպաւորութիւն է թողնում ճանապարհորդի վրա և ծովային մրակերպ տխուր ճանապարհորդութեան ու ձանձրոյթի հոտն անգամ չունի:

Երկրորդ օրը, յուլիսի 14-ին, առաւօտեան ժամը 6-ին, շոգենաւը մտաւ Դարդանէլի նեղուցը, որը իր վեհութիւնով, գեղեցկութիւնով գերազանցում է Բօսֆօրը. միայն այստեղ բնութիւնը աւելի խոժոռ, վայրենի, կուսական է: Նեղուցի բերանում շինված է Դարդանէլ քաղաքը, որ տաճկական մի ամրացրած և զինաւորված բերդ է և նոյնպէս բաժանված է երկու մասի՝ եւրօպական և ասիական:

Դարդանէլի նեղուցից այն կողմը սկսվում են արդէն յունական կղզիները, յիշողութեան մէջ վերանորոգվում են պատմական յիշատակները, անցքերը և էպօխաները. ահա հին Տրօայի ափերը, — անմիջապէս աչքիդ առաջ պատկերա-

նուժ են ուխտադրուժ գեղանի Հեղինէն, Պարխը
և Աբրահամ, Հեփտազը, խորամանկ Ոգիակար, Քի
խօսքով ամբողջ տրօյաղափաղատերազմը: Հնուու հօ-
բիզօնուժ նկատվուժ են սարեր, որոնց մի քանի-
սի գագաթները ձիւնապատ են, վեհապանձ և
փառաւոր տեքքով. դրանք Օլիմպեան լեռներն
են, որոնց բարձրութիւնից Արամազդը և յունա-
կան աստուածները արձակուժ էին իրանց շանթերը:
Այդ մշտադալար կղզիները, այդ լեռները, գեղա-
նկար տեղերը տեանկուց յետոյ միայն մարդ կա-
րող է հասկանալ հին յունական ազգի դիւցարա-
նութիւնը, կեանքի կենցաղը և աշխարհահայեցողու-
թիւնը: Ամբողջ երկու օր մենք նաւուժ էինք կըղ-
զիների, արշիպելագոսների միջով, որոնց ամեն
մինը ունի իր փառաւոր պատմական անցեալը և
ամեն մինը ահագին էջեր է գրաւուժ հելլենական
ազգի քաղաքական և քաղաքակրթական պատմու-
թեան մէջ: Ճիշտ է, նրանք այսօր ներկայացնուժ
են միայն թշուառ տաճկական քաղաքների և գիւ-
ղերի կերպարանք, նրանք նմանուժ են բոլորովին
մարած, հանգած կրակի, բայց գէթ հպարտ են որ
մի ժամանակ ջերմացրել, լուսաւորել են շատ աշ-
խարհներ և կատարել են պատմութեան մէջ իրենց
փառաւոր դերերը, Ո՞վ գիտէ, գուցէ հեռու չէ
այն օրը, երբ նրանք կրկին կը հանդիսանան ա-
զպտութեան ծովի մէջ փայլող փարոսներ...

Յունիսի 15-ին, առաւօտեան ժամը 6-ին,
մենք մտանք յունական Պիրէ նաւահանգիստը:
Մենք արդէն յունական թագաւորութեան մէջն
էինք և Աթէնքից երկաթուղով 20 վայրկեան ճա-

նապարհ հեռու: Այդ օրը ամբողջովին մենք նուաբեցինք հռչակաւոր Աթէնքի, նրա Ակրօպօլի և միւս հնութիւնների այցելութեան: Բայց ես նրւ պատակ չունեմ առ այժմ հաղորդելու ընթերցողներին այդ այցելութեան տպաւորութիւնները, այնքան նրանք ձոխ, բազմազան, հիանալի եմ, ուստի և կարօտ ահագին նկարագրութեան:

Ես կամենում եմ ծանօթացնել իմ ընթերցողներին մի աւելի հին, աւելի փասաւոր աշխարհի հետ, որ իր պատմութիւնով, իր ինքնուրոյն կուլտուրայով ահագին դեր է խաղացել համամարդկային պատմութեան մէջ և ամբողջ հազարամեակ տարիներ շարժելու է եկող մարդկութեան զարմանքը: Այդ երկիրը—Եգիպտոսն է, փարաւոնների և պիրամիդների աշխարհը, ուր մենք հասանք յուլիսի 17-ին, նաւելով Միջերկրական ծովի վրա:

Բայց չեմ կարող զանց առնել մի միջադէպ, որ պատահեց մեզ Աթէնքում և որը ցոյց է տալիս, թէ մինչև որ աստիճան մարդիկ ընդունակ են նոյն իսկ ամենասուրբ գործը մրտտել և կեդտօտել: Հազիւ շոգենաւը մտաւ Պիրէի նաւահանգիստը, որ իսկոյն յայտնվեց նաւի վրա մի հայ երիտասարդ և ներկայանալով եպիսկոպոսներին Գալֆայեան ազգանունով, յայտնեց, որ ինքը իբրև հայ երիտասարդ և այն ևս բռնաւոր թուրքերից հալածված, նրանց ձեռքից փախած է և ազատն Յունաստանում պատուպարված. հայ երիտասարդը, սրբազան պարտաւորութիւն է համարում իր ծննայութիւնները մատուցանել հայ եկեղեցականներ:

ըին, մանաւանդ հրաւիրականներին և թոյլ չը տօլլ
որ Պրէնում; նաժանաւանդ Աթէնքում վրասացող
Թուրքիայի հայ լրտեսների ձանկը ընկնեն: Այդ
խօսքերի հետ միասին երիտասարդը տալիս է
մեզ Եւրոպայում հրատարակվող հայ թերթերը,
աւելացնելով. «այստեղ ազատ երկիր է, ազատ
կարելի է կարդալ, այստեղ չը կայ տաճկի բռն-
տութիւն»: Թէև զգոյշ Արիստակէս եպիսկոպոս
Սեդրակեան կասկածոտ և խոժոռ նաշուածք ձգեց
երիտասարդի վրայ, բայց մենք նրա խօսքերը
չհալած իւզի» տեղ ընդունելով, բոլորովին հա-
ւատացինք և ահա Գալֆայեանի առաջնորդու-
թեամբ գնացինք Աթէնք, այցելեցինք բաղաբը,
Ակրօպօլը: Նախանաչ անելու համար նա մեզ ա-
ռաջնորդեց մի հիւրանոց: Ամեն անգամ, երբ
պէտք էր լինում մի ծախք անել, նա թոյլ չէր
տալիս, անելով թէ «խաբերայ յոյները ձեզ կը
մաշկեն, թողէք ես վճարեմ», յետոյ կը հաշուէք»
Երեկոյեան դէմ, երբ վերադարձանք շոգեմար,
երիտասարդը ներկայացրեց 128 Ֆրանկի հաշիւ և
երբ Աթէնքում բնակվող հայերը, որոնց թւում
կարապետ էֆ. Աղաբէգեան, թազաւորական տան
առամտարոջօր, եկան մեզ տեսնելու, ի՞նչ ենք ի-
մասնում. մեր բոլոր արած ծախքը հազիւ 50 Ֆը-
րանկ է և մեր պ. Գալֆանտը ոչ այլ ինչ էր,
եթէ ոչ տաճկաց տէրութեան մի լրտես...

Բայց մանենք Միջերկրական ծովի անհուն
տարածութեան վրա նաւելու: Թաղաղ է նա. ճաւր
արագ սահում է. աչքդ միայն շուր է տեսնում
և միտքդ պաշարվում տխուր մտածմունքներով,

Թէ անա կարող է լինել այեկոծութիւն և դու կը
Թաղվես Միջերկրական ծովի անգնդային ջրերի
տակ, ինչպէս Թաղվել են հազարաւորներ:

Երկար նաւելուց յետոյ, հեռաւորութեան
մէջ հետզհետէ սկսեցին երևալ Աֆրիկայի ցածրիկ
ափերը և հոչակաւոր Ալքսանդրեան փարոսը, որի
լոյսը հարիւրաւոր վերստից հեռու նաւերը առաջ-
նորդում է գիշերային մթութեան մէջ:

Շատ զգուշութեամբ և զժուարութեամբ մըտ-
նում են նաւերը Ալէքսանդրիայի նաւահանգիստը,
բազմաթիւ ժայռերի պատճառով, ուստի յատուկ
նաւորդներ կամ լօցմաններ կան, որոնք գալիս
են շոգենաւերին ընդ առաջ մակոյկներով և այդ
ժայռերի միջից աշողութեամբ անց են կացնում
նրանց: Մովափը գրանիտեայ է. նաւահանգիստը
լի է ամեն ազգի և երկրի նաւերով, շոգենաւերով,
մակոյկներով և մեծ կենդանութիւն, շարժում, ի-
րարանցում է տիրում. այդտեղ դուք տեսնում էք
ամեն տեսակ հազուատ, լսում էք բազմաւտեսակ
լեզուներ, մի խայտաբղէտ և խայտաճամուկ տե-
սարան: Հազիւ նաւը կանգ է առնում, որ սև չալ-
մաւոր արաբները, Ֆելլահները սպիտակ հագուա-
տով, կամ աւելի ճիշտն ասած, ամբողջ հազուատի
տեղ միայն մի երկար սպիտակ շապիկ հագին,
ոտաբոբիկ, շրջապատում են ձեզ ամեն կողմից և
արաբերէն, տաճկերէն, Ֆրանսերէն, անգլիերէն,
յունարէն, իտալերէն, ռուսերէն, աղաւաղած, կո-
տորտած խօսքերով առաջարկում են ձեզ իբրանց
ծառայութիւնը: Ընդհանուր սովորական լեզուն
արաբերէն է:

Նաւահանգստից քաղաք գնալու համար պէտք է անցնել մի քանի կեղտոտ փողոցներով և մաքսատան միջոցով: Տեսնելով ֆէնաւոր պաշտօնեաներ, մենք կարծեցինք, որ Պօլսի պաշտօնեաների պէս այստեղ ևս պէտք է «բախշիշի» համար քրտակի բերանը բանալ, բայց որքան մեծ եղաւ մեր բոլորիս զարմանքը, երբ պաշտօնեաները, կատարեալ եւրօպական քաղաքավարութեամբ, թեթև կերպով աչքից անցնելով մեր իրերը, արձակեցին մեզ մի երկու րոպէից յետոյ: Պատճառն իմանալու համար, բաւական է ասել, որ մաքսատան հսկողութիւնը անգլիացիների ձեռքումն էր:

Անցնելով մաքսատանից հետզհետէ աճում էր մեր զարմանքը, հետզհետէ բացվում էին մեր առաջ լայն, մաքուր, գեղեցիկ փողոցներ, հոյակապ, եւրօպական ճարտարապետութեամբ շինված բազմաթիւ պարկանի տներ, շքեղ մագազիններ, փառաւոր մզկիթներ, եկեղեցիներ, հիւրանոցներ, վանքեր, Brasserie-ներ. շքեղութիւն, ճոխութիւն, շոայլութիւն ամեն կողմ. գեղեցիկ հրապարակներ, իսկ ամենազլխաւոր հրապարակի վրայ, բօրսայի հանգէպ, Մուհամէդ-Ալիի, Եգիպտոսի անկախութեան համար պատերազմողի, խըղիվական իշխանութեան հիմնադրի արձանը, որ ներկայացնում է յաղթական Մուհամէդ-Ալիին, չալմայով զինաւորված և երիվարի վրայ նստած: Սակայն փողոցները դատարկ են. ցերեկը ամենքը պատուարված են տներում անտանելի շոքի երեսից. յիշեցէք, որ Աֆրիկայում ենք, այն ևս ամառը:

Եւ ճշմարիտ, անտանելի շոգ է անտամ՝ քրքրտինքը առուի սէն թափվում է մեր վրայից, եւ ըստպարտեալ, մանաւանդ անգլիացի զինուորները շոգից պատսպարվում են իրենց բաժրուկային լայն գլխարկներով և ասուէ շապիկներով: Յերեկը շարժում, կեանք չը կայ փողոցներում: Ետեւան Ժամը Թ-ից մինչև երեկոյեան 7-ը բոլոր բնակիչները, եթէ միայն ամարանոց չեն զնայած, փակվում են տներում, գոցում դռները և պատուհանները, հագնում միայն մի բարակ քանթանի շապիկ և դուրս են գալիս փողոց երեկոյեան և կեանքը, շարժումը փողոցներում, մազազիններում, հասարակական տեղերում լինում է գիշերը: Այդ Ժամանակ դուք ձեզ երևակայում էք, ոչ թէ Աֆրիկայում, այլ Փարիզի կամ Լոնդոնի փողոցներում...

Մեր կառքերը ընթանում էին շքեղ, բայց դատարկ փողոցներով, մինչև հասանք հայոց եկեղեցու առջնորդարանը, որ նոյնպէս մի փառաւոր շինութիւն է քաղաքի կենտրոնում և 100,000 բուքլուց աւելի արժէ, ունենալով ահապին պարտէզ, հարիւրաւոր արմաւենիներով. առաջնորդարանումն էլ իջևանեցինք:

II

Աշխարհիս մէջ գտցէ ոչ մի քաղաք չը կայ Ալեքսանդրիայի նման, որ իր նիւնարկութիւնից մինչև այսօր այնքան երկար դարեր ոչ միայն կանգուն մնար, այլ և կօմօպօլիտիական քաղաքի դեր կատարէր:

Ալեքսանդրիա, կամ ինչպէս անուանում է

այժմ տեղացիք արար ժողովուրդը, Սկանդարիէն,
սանցել է իր սնունդը Ածն Ալէքսանդր Ասկե-
քանացայ, որը կործանելով պարսկական կայս-
րութիւնը և ազատելով Աքիպոսը նրա լծի տա-
կից ու հաստատելով իր մակեդոնական համաշ-
խարհային պետութիւնը, հիմնեց նեղոս գետի
բերանում այդ քաղաքը, Փարոս կղզու հանգէտ
նրա մակից յետոյ Ալէքսանդրիան գարձաւ նրա
յաջորդաբ Քոլոսէտեան հարստութեան մայրա-
քաղաքը և աշխարհի ամենալաճառաշահ ու ծաղ-
կեալ քաղաքը ճորհիւ իր դիրքի և յոյն ու հիւսի
դադիտեաններէ, որոնցից բաղկանում էր բնա-
կիչներէ մեծ մասը, նա ոչ միայն վաճառաշահ,
այլ և համաշխարհային քաղաք դարձաւ, լուսա-
ւորութեան կենտրոն և մինչդեռ նրան ժամանա-
կակից քաղաքներէ—Բաբելոնի, Պերսէպոլիսի,
Տբարոսի և Սիզոնի հետքն անգամ չէ մնում, նա
դեռ կանգուն է այսօր՝ հազարաւոր տարիներէից
յետոյ, և այսօր ևս աշխարհիւ ծաղկեալ քաղաք-
ներէից մինն է:

Հէնց իր հիմնադրութեան օրից Ալէքսանդրի-
ան գարձաւ Յունաստանի երկրաստեան մայրա-
քաղաքը: Դիոթարի ժամանակ նա ունէր 300 հա-
զար ազատ մարդկանցից բաղկացած բնակիչներ,
իսկ ստրուկներէ և եկեորներէ եւտ միասին բնա-
կիչներէ թիւը հասնում էր մաս մի միլիօնի:

Լազիտեան Պարթեանները Ալէքսանդրիայից
չինեցին յունական կառուարայի կենտրոն: Վաճա-
ռականութիւնը, գեղարուեստները, պիտութիւնը
և արհեստները վերին աստիճանի ծաղկեալ գրաւ-

Քեան հասան: Քաղաքը դարձաւ մի և նոյն ժամանակ և բոլոր նաւազնաց ազգերի կենարօնատեղին: Աշխարհիս ամեն կողմից, մանաւանդ Հնդկաստանից, թափվում էր Ալէքսանդրիա այնպիսի հարստութիւն, որ առասպելներէ կարգը կարող է անցնել: Պտղոմէոս II Թագաւորը, Յիլադէլֆ կոչվածը, նա որ հիմնեց Ալէքսանդրիայի հռչակաւոր գրատունը, տարեկան 12 միլիօն ըուրլի եկամուտ էր ստանում և իր մահից յետոյ 900 միլիօն կարողութիւն թողեց: Նաւազնացութեան զարգացման համար Պտղոմէոս Յիլադէլֆը կանգնել տուեց Ալէքսանդրիայի լուսատու աշտարակը, որ շինված լինելով Փարոս կղզու վրա, ստացաւ և նրա անունը: Այդ կղզին գտնվում էր Ալէքսանդրիայի նուաճանգատի հանդէպ և այն ժամանակ միացրած էր քաղաքի հետ մի երկար նաւաւղիով, որ կոչվում էր Սէպտաստադիօն (7 ստադիօն, իսկ ստադիօնը 84 սաժէն է): Փարոսը շինված էր ամբողջապէս սպիտակ մարմարիօնից մի ժայռի վրա, որի բարձրութիւնը ծովի մակերևոյթից 300 ֆուտ էր, իսկ իր աշտարակի բարձրութիւնը նոյնպէս 300 ֆուտ լինելով, ամբողջ բարձրութիւնը 600 ֆուտ էր: Նրա գլխին միշտ վառվում էր մեծ բոց, որ լուսաւորում էր 10 ծովային մղան հեռաւորութեամբ նաեւ բք և ուղղում էր նրանց դէպի նաւաճանգիստը: Փարոսի շինողը Սոսարատ ճարտարապետն էր, որ իր անունը միայն անմահացնելու համար դիմեց հեռու ևեւ խորամանկութեան: Նա քանդակեց իր անունը փարոսի մարմարիօնի վրա և ծեփեց ճար-

մարիօնը, և ծեփի վրա զծագրեց Պողոսէոսի ա-
նունը. ժամանակը աւերելով ծեփը, ջնջեց Թա-
գաւորի անունը և այգադիտով մնաց նարտարապե-
տի անունը քանդակված փարոսի վրա, որը, ինչ-
պէս յայտնի է, աշխարհիս 7 հրաշքներից մինն
էր համարվում:

Նաւագնացութեան հետ միասին խիստ զար-
գացած էր և նաւաշինութեան արուեստը: Սիրա-
կուզի Թագաւոր Հիէրօնը շինել տուեց մի նաւ,
որի համար ոչ մի նաւահանգիստ չը գտնվեց,
այնքան մեծ էր նա, բացի Ալէքսանդրիայից, ուս-
տի Հիէրօնը իր շքեղ նաւը ընծայեց Պողոսէոս
Թագաւորին, բեռնաւորելով նրան 126,000 չափ
ցորենով, 10,000 կաւէ ամաններով, որոնք լցված
էին զանազան ուտելիզէններով: Այդ նաւը երեք
յարկանի էր. նրա մէջ կային 60 սենեակներ,
խոհանոց, պարտէզ, մարզաբան, գրատուն, շուա-
ցարան, ձկների աւազան, բազմաթիւ խուցեր,
հացի փուռներ, ջրաղացներ և 10 գոմ. կար Աֆ-
րօզիտին նուիրված և մի մեհան: Նաւը զարդար-
ված էր շքեղ կերպով. բազմաթիւ արձաններ
կանգնած էին տախտակամածի վրա, իսկ սրահ-
ների յատակամածը ներկայացնում էր մզաշիկից
շինած Տրօյա քաղաքի պաշարումը: Բացի դրա-
նից, նաւը զրահաւորված էր զանազան նետքն-
կէց մեքենաներով և պատերազմական գործիք-
ներով:

Պատմում են Պողոսէոս IV-ի շինել պուած մի
սուրիշ նաւի մասին, որն ունէր 400 նաւաստիներ,
3000 զինւորներ և 400 թխաւորողներ:

Պտղովէնսը իր կառուցած տաճարներով, պալատներով և այլ շինութիւններով վերածեց Ալէքսանդրիան ոչ միայն աշխարհի հռչակաւոր, այլ և ամենագեղեցիկ քաղաքներից մինի: Գլխաւոր շինութիւններն էին Ալէքսանդր Մեծի շէքեմը, Փարոսը, Հիպոդրոմը և Սէրապէիւմի տաճարը, ի պատիւ Սէրապիս աստուածի:

Սակայն նրա հրաշակերտների ամենանշաւորը Մուզէօնն է. նրա մէջ ներկայացրած էին բոլոր յայտնի գիտութիւնները, մաքր բոլոր վարժութիւնները.— փիլիսոփայութիւն, մաթէմատիկա, ֆիզիկա, բժշկականութիւն, լեզուագիտութիւն, գրականութեան բոլոր ճիւղերն իրանց ներկայացուցիչներն ափէին: Մուզէօնի գրաստանը, որ զետեղված էր արքայական պալատին կից շինութեան մէջ Բրուխիումի թաղում և պարունակում էր իր մէջ ամբողջ հումէական, յունական, հնդկական գրականութիւններ, մինչև 400,000 հատոր գիրք ունէր և երբ չը տեղաւորվեց, 300,000 մի ուրիշ ժողովածու զետեղվեց Սէրապիումի տաճարում:

Մուզէօնը ընդարձակ սրահներ ունէր, որտեղ կարելի էր ուսումնասիրել հին աշխարհի ամենահռչակաւոր ձեռագիրների ժողովածոները. անթիւ պաշտօնեաներ արտագրում, գրչում, ուղեգրում էին և պատրաստում պապիրուսները: Որտեղ մի լաւ գիրք կար, Պտղովէնսը խնդրում, ջերում էր արագգրելու համար, յետոյ տէրերին գարձում էր գեղեցիկ պատճենները, իսկ ըստ ձեռագիրները պահում: Աթէնքը իր երեք տրա-

գիքների աշխատութիւնները տուեց և փոխարէնը ստացաւ մի մի շքեղ պատճէն-օրինակ և 15 տաղանդ դրամ:

Այդ հանգամանքի շնորհիւ Պտղոմէոս քաշ տուեց, բերեց Յունաստանի և Արեւելքի բոլոր գիտնականներին և Ալէքսանդրիան շուտով դարձաւ ոչ միայն տիեզերական քաղաքակրթութեան կենտրոն, այլ և գիտնականների սրբավայր:

Այդտեղից առաջացել է Ալէքսանդրեան դըպրոց և Ալէքսանդրեան դար կոչվածը պատմութեան մէջ, որ յայտնի է իր ունեցած էնցիկլոպէդիական բնաստրութեամբ և որ սկիզբն առնելով Պտղոմէոսների ժամանակից (323 թ. Ք. առաջ) վերջացաւ 640 թ.ին, երբ արաբները տիրեցին Եգիպտոսին: Ամբողջ 8 դար այդ դպրոցը տիրապետեց և այն ժամանակվայ աշխարհի գիտնականութեան ու գրականութեան կենտրոն հանդիսացաւ, արտագրելով այնպիսի գիտնականներ, ինչպէս գէօմետր Եւկլիդը, Ֆիզիկոս Արիստէդը, աստղագէտ Պտղոմէոսը և այլն:

Ոչ պակաս դեր է խաղացել Ալէքսանդրեան դպրոցը և բրիտտոնէական եկեղեցու պատմութեան մէջ: Եկեղեցու ամենամեծ հայրապետները, ամենամեծ աստուածաբանները Ալէքսանդրիայի պատրիարքներն են եղել.—Կիւրեղ Ալէքսանդրացին, Որոգինէսը, Աթանասը, Կղէմէսը և այլն: Դեռ այսօր էս Ալէքսանդրիայի յունաց պատրիարքը, 90-ամեայ ծերունի Սէրտֆօնը, որին գնացինք այցելութեան, օրթօղոքս եկեղեցու նուիրագիտութեան մէջ համարվում է առաջինը:

Դուք է ընթերցողները զարմանան, որ Լաթաքնելով տուրիապին վայել խնուցիկ հանապարհորդական նկարագրութիւնը, պատմական յիշողութիւններով եւ կերակրուած նրանց: Բայց կարելի է չը հետաքրքրուի մի քուղաքի անցեալով, որ ունեցել է այդքան մեծ և յառաւոր պատմութիւն և չը յիշել, թէ ինչ կոթողներ է ունեցել այդ անցեալ կեանքը, իմանալու համար, թէ ինչ է մնացել ներկայումս այդ բոլորից: Այնքան անհամբեր էինք իմանալու, թէ գուցէ դեռ մնում են հոշակաւոր Բրուխիւմի, Սէրապիումի և Մուզէօնի բեկորները, որ չը կամենալով հանգստանալ, չը նայելով նոյն իսկ անտանիի շաքին, կարգադրութեամբ ստորովի անդամ պ. Պերճի առաջնորդութեամբ, կառքերով դնացինք պտտեղու: Երբ փոզոցում մեր ուշքին ընկան արար Փէլլահները, և անմիջապէս յիշեցի, որ այդ Փէլլահների նախնորքը, Ժանս Օմար խաչիֆային պարագլուխ ունենալով, կրակի ճարակ տալին անգին գրադարանը և մարդկային մտքի ստեղծագործութեան ամենաթանգուղին արտադրութիւնները մահմէտականութեան Ֆանատիկոսութեան զոհ դարձան, ինչպէս դեռ 341 թւին քրիստոնէական Փանյասիկոսութեան զոհ էին դարձել: Պատմում են, և դեռ այսօր ևս աւանդութիւն է Ալէքսանդրիայի բնակիչների մէջ որ Ումարը, տիրելով Ալէքսանդրիային, հրովայնաց, այրել քոլոր ձեռագիրները, հետեւեալ գրգիստանկան պատճառաբանութեամբ հիման վրան սկսել նրանց մէջ գրառք նշան է, ինչ որ ձեռքանի մէջ աւելորդ է ունենալ կրկնութեան, ինչ միջին համարը

ուակ է՝ ուրեմն վնասակար է՝ Եւ անբողջ 7
ամիս Ալեքսանդրիայի քաղաքները անքանում
էին այդ ձեռնադիրներով:

Ի ժողովրդարար, բանից դուրս եկաւ, որ այժմ
մեան Ալեքսանդրիան՝ ոսկեզարի յիշատակներէց
ոչինչ չէ պահպանել. Պոմպէոսի գրանդիտեայ սիւս
նը--անա միակ նշանաւոր հետեւիներ, այդ սիւսը
կանգնեցրել է Պոմպէոսը ի յիշատակ իր տարած
յաղթութեան: Քաղաքից մի քիչ հեռաւ, Քամլէ
կոչված տեղում, որ խէդիվի և հարուստ դասա-
կարգի ամարանոցն է և ուր մենք երկաթուղով
գնացինք նոյն երկրոյեան՝ թարմ օդ ծծելու հա-
մար, դեռ տեսնվում են հիշօպարա թագուհու
քաղաքների մնացորդները:

Նորագոյն ժամանակի շինութիւններից հրո-
շակաւոր է Մահմուդիէ ջրանցքը, որ բացել է
1820 թւին Մահմէդ-Ալին. այդ ջրանցքը միացնում
է նորից նաւահանգիստը Նեղոս գետի, Կայիրէի
և շրջակների հետ և նրա շնորհիւ Ալեքսանդրիան
կրնոյողացել է դարձեալ ծաղկել:

Սակայն եթէ Ալեքսանդրիան չէ պահպանել
պատմական թանգապին յիշատակներ, բայց պա-
հել է առաջվայ Ֆիզիօնօմիան՝ բնակիչների կող-
մից: Նա այժմ ամեն տեսակ լազիերի, ցեղերի,
չեղունների, հագուստների, տաքազների հանրիւն-
րանէ: Տիրապետող տները--արձաբնական է. մտա-
300,000 բնակիչներ ունի: որոնցից 50,000 եւրօ-
պացիներ են. այդ բոլորին քաղել թերեւ է բահ-
պին վաճառակութեամբ և բամբակի արտադրու-
նութիւնը: Եր Ալեքսանդրիայի արտադրութեան

գլխաւոր աւարկան է:

Անգլիական տիրապետութիւնից յետոյ քրիստոնեաները կատարեալ անդորրութիւն և խաղաղութիւն են վայելում, կաթօլիկ վանքերը, եկեղեցիները սունկի պէս բուսնում են:—Ձեմ կարող այստեղ չը յիշել մի ծիծաղաշարժ դէպք. գլխաւոր փողոցներից մինի վրա դիմ յանդիման շինված են երկու կաթօլիկ մենաստաններ, մինը տղամարդկանց, միւսը կոյսերի: Այդ մենաստանները բաւական հին են, և միմեանց հետ որ և է յարաբերութիւն, հաղորդակցութիւն՝ ունենալ խրատիւ արգելված է եղել միշտ: Մեր գնալուց մի քանի օր առաջ, քաղաքապետութիւնը, ջրանցքի խողովակներ դնելու համար, քանդել է տալիս այդ փողոցը, և կարող էք երևակայել արարների, մանաւանդ Ֆէլլահների հրճուանքը, իսկ եւրօպացիների դայթակղութիւնը, երբ բացվում է մի մեծ կամար, որի տակից երկու մենաստանների համար լայն ճանապարհ էր բացված...

Անգլիական ազատութեան բարիքների հետ արարները վարակվել են և քաղաքակրթութեան կորստաբեր թոյներով. հաշիշի սարսափելի խիստ շատ գործածութիւնը բոլորովին թմբեցնում, իդիօտացնում է խեղճ ժողովուրդը. անառակութիւնը, որի արտայայտութիւններից մինն է հրշակաւոր դարձած «որովայնի պարը», ընդհանուր է և բազմաթիւ սրճաբաններ գրաւում են ահագին հասարակութիւն, որ այդ զգուելի պարով սքանչացած է: Ամբողջ թաղեր վերածված են անառականոցների և անառակ կանայք ուղղակի նքս-

տեղով փառոցներում՝ (որոշ թաղեր կան) հրա-
ւիրում են անցորդներին:

III

Շարունակում եմ նկարագրել իմ ճանապարհ-
դուծիւնը Փարաւօնների աշխարհում: Բայց շա-
րունակելով, ես երբէք մտադիր չեմ նկարագրել
Եգիպտոսը, բառիս բուն նշանակութեամբ: Ինչ-
պէս նկատում է յայտնի լեհացի գրող Սէնկէվիչ,
որը նոյնպէս ճանապարհորդել է Եգիպտոսում,
այդ նկարագրութիւնները այնքան շատ են, որ
նրանցից կարելի է մի երկրորդ Ալէքսանդրեան
գրագարան կազմել: Ոչ, ես կը հաղորդեմ միայն
իմ ստացած անմիջական տպաւորութիւնները,
ուրիշ ոչինչ:

Կիւրակի օր է, յուլիսի 18-ը. Ալէքսան-
դրիայի ամբողջ հայ կօլօնիան եկել խոնվել է
հայոց եկեղեցու և առաջնորդարանի բակը՝ այցե-
լելու Էջմիածնից եկած հրաւիրակներին: Հայոց
եկեղեցին և առաջնորդարանը գտնվում են քա-
ղաքի կենտրոնում և շինված են մօտ 100,000
բուրլի արժողութիւն ունեցող մի գետնի վրա.
այդտեղ զետեղված են և երկու սեռի դպրոցները:

Տեսնելով Ալէքսանդրիայի հայերին, որոնք
գաղթականներ են Թիւրքիայից եկած, մեծ մա-
սամբ Զմիւռնիայից, պարզ համոզվում էք, թէ
ազատութիւնը մինչև ձր աստիճան կերպարանա-
փոխում է մարդուն: Վախկոտ, քծնող, շողքորթ
տաճկաստանցի հայը, որ ձեռք է բերել այդ յաւո-
կութիւնները թրքական դարևոր ստրկութեան

տակ, 10—15 տարվայ ընթացքում, ազատ և արդարադատ օրէնքների շնորհով, կերպարանափոխվել և դարձել է համարձակ, ազատ, իր համոզմունքները, քաղաքական և բարոյական կարծիքները ճակատ բաց և անվեհեր քարոզող քաղաքացի:

Հայերը Եգիպտոսում բաւական պատշաւոր դիրք են ձեռք բերել և բարոյական լաւ համբաւ և անուն են վայելում: Նրանց մէջ կան շատ հարուստներ, կառավարչական ծառայութեան մէջ մինիստրի աստիճանները հասած անձինք, ճարտար փաստաբաններ և եւրոպական վաճառականական աշխարհում նշանաւոր առեւտրականներ:

Վայելիլով ամենայն ազատութիւն, նրանք ստանում են զանազան երկրներում հրատարակվող հայ լրագիրներ և նոյն իսկ այնպիսիները, որոնց մի հատը Թիւրքիայում այբմ բաւական է համարվում հային դէպի բռնտ և կախաղան տանել:

— Բայց ի՞նչպէս են թոյլ տալիս ձեզ ստանալ այդ հակաթրքական և նոյն իսկ յեղափոխական թերթերը, հարցնում ենք մենք: Կէ՛ որ Եգիպտոսը սուլթանի գերիշխանութեան ներքայ գտնվող մի երկիր է և խեղիվը մի վասալական իշխան:

— Այո, պատասխանում էին մեզ, բայց մենք կառավարվում ենք անգլիական օրէնքներով, որոնք թոյլ են տալիս ամեն մի մարդու ազատ, համարձակ յայտնել իր կարծիքները, համոզմունքները բաւական է, որ դուք խօսքից դէպի գործ չանցնէք և պետական կարգը, օրէնքները խանգարող գործունէութիւններ չը կատարէք: Ահա

ձեզ եզրկատուում հրատարակվող լրագրորները, — արարեքէն, Ֆրանսերէն, և անգլիերէն լեզուներով. տփռէք մի քանիսը ի՛նչ խիստ լեզու են բանեցնում Անգլիայի վերարեւմամբ, ի՛նչ հայհոյանքներ են թափում Ալբիոնի որդիերանց դէմին, բայց ոչ ոք նրանց չէ արգելում:

Եւ ճշմարիտ, առնում ենք մեր ձեռքը կայլորէում հրատարակող արարեքէն լեզուով մի թերթ. մեզ թալրգմանում են նրա բովանդակութիւնը, որ մօտաւորապէս հետեւեալն է. Տի Ալբիոնի խորամանկ զաւակներ, ի՛նչ էք ուզում մեզմանից, եզրկատուներիցս. դուք հիւր եկաք մեզ մօտ և այժմ ուզում էք տիրանալ մեր երկրին. դուք կործանեցիք, աւերեցիք մեր երկիրը, դուք խլեցիք մեր անկախութիւնը. վերջապէս ժամանակ է, որ ձեր խոտուածը կատարէք և հեռանաք, եթէ ոչ Ալլահի անկճքը ձեր և ձեր երկրի գլխին կը թափվի»:

Մի այլ թերթ. անգլոֆիլ, պատասխանելով արարեղան թերթին ասում է. «Ի՛նչ էր եզրկատուը անգլիացիների մտնելուց առաջ և ի՛նչ է այժմ: Առաջ նա մի արևելեան բռնապետական իշխանութիւն էր, մի երկիր էր, որի տնտեսական և ֆինանսական ոյժերը բոլորովին ջլատված էին. ժողովուրդը, ֆէլլահները, գրաստի հաւատար արարածներ էին. նկատվում. բախշիշի սիսեմը կառավարչական ընդհանուր սիստեմն էր դարձած: Այսօր, տանտամեայ կարճ շրջանում, երկիրը ահագին յեղափոխութիւն է կրել. տնտեսական, ֆինանսական ոյժերը բարգաւաճել են. կեանքի,

գոյքի, պատւի կատարեալ ապահովութիւն կայ-
Ֆէլլահը տէր է իր ստացուածքի. բախշիշ սիւ-
տէմը անխնայ հալածվում է: Բայց երկրի այդ
կիրաւարանափոխութեան համար անագին զոհեր է
տուել անգլիացին, ուստի նա չէ կարող հեռա-
նալ, մինչև խորապէս չը համոզվի, որ իր ստեղ-
ծած զործը չի փչանայ և կը շարունակվի: Կա-
տաղեցէք ինչքան կամենաք, մեր ոյժը—մեզ հա-
մակրող ժողովուրդն է»:

Համարեա ամեն օր դուք կարդում էք եզիպ-
տական լրագրներում այդ տեսակ թեր և դէժ
յօդուածներ: Անգլոֆօբ լրագիրները երբեմն մինչև
անգամ ամենապատկառ լեզու են գործածում:
Բայց անգլիական կառավարութիւնը այնուամե-
նայնիւ մամուլին կատարեալ ազատութիւն է
չնորհել, որովհետև այդ ազատութեան շնորհիւ
ամեն բան պարզվում է, ամեն մարդ կարող է
գնահատել այդ յօդուածների բուն արժէքը և նը-
շանակութիւնը: Այն բոլոր կերպարանափոխու-
թիւնից յետոյ, որ կրել է երկիրը անգլիական տա-
նածեայ տիրապետութեան կարճ շրջանում, այն
կարգերը, որոնք այսօր իշխում են այդ երկրում,
դէպի անգլիացիներն են գրաւել ժողովրդի ամ-
բողջ համակրութիւնը:

Եւ բոլոր արտաքին թելադրութիւնները,
հայրենասիրական զգացումներին ուղղած կոչում-
ները՝ թօթափելու օտարի լուծը—ոչ մի ազդեցու-
թիւն չեն գործում Եզիպտոսի ժողովրդի և մա-
նաւանդ Ֆէլլահների վրա: Նախ, այդ Ֆէլլահը
հազարաւոր տարիներից ի վեր կրել է օտարների

չուծը և հազարաւոր փոփոխութիւններ է տեսել. ոչ մի փոփոխութեան ժամանակ նրա դժնդակ վիճակը չէ բարւոքվել: Փարաւոնների ժամանակ դեռ, 4—5 հազար տարի առաջ, նրա ճակատից քրտինք էր հոսում պիրամիդներ կառուցանելու համար. մահմետականութեան տիրապետութեան ներքոյ Եգիպտոսի արգաւանդ հողը նա մշակում էր կիզիչ արեւի տակ էմիրանների, շէյխերի, փաշաների, մամլուքների համար. նա ծառայում էր իբրև գրաստ, իսկ այժմ նա դադարել է, գէթ իրաւագիտապէս, գրաստ լինելուց. այժմ նա վայելում է իր ճակատի քրտինքի, իր հալալ աշխատանքի գէթ մի մասը. այժմ ոչ ոք չի համարձակվի նրան ծեծել, ճիպտի տակ մեղցնել. այժմ նոյն իսկ փաշան չի համարձակէի նրան վիրաւորել. այժմ նա կարող է բողոքել և արդարադատութիւն գտնել, և այդ բոլորը անգլիացու շընորհով:

Ճշմարիտ է, նա այժմ ևս ծանր հարկեր է վճարում և իր ձեռքով մշակած հողի արդիւնքի ^{6/8} մասը կառավարութեան է տալիս, բայց գոնէ ^{2/8}-ի տէրն է: Բացի դրանից նա շատ լաւ գիտէ, նրան հողակացրել են, որ այդ դրութիւնը երկար չի տևի. ծանր հարկերը ստացվում են այժմ նրա համար, որ նախկին խէզիմների արած սարսափելի խռոշոր պարտքերը, որոնք հասցրել են Եգիպտոսը սնանկութեան, վճարվեն, և երբ այդ պարտքերը վերջանան, ժողովրդի վիճակը ևս կը թեթևանայ: Բացի դրանից ֆէլլահը տեսնում է, որ այդ հարկերը պործ են ածվում երկտթուղիներ, ջրանցք-

ներ, գարոցներ և այլ հիմնարկութիւններ շինելու նամար:

Աւ ճշմարիտ, Ազիպտոսը, որ ճնշվում էր իր ծանր պարտքերի տակ, այսօր այնքան բարգաւաճել է Ֆինանսական և տնտեսական տեսակետից, որ ոչ միայն վճարում է իր պարտքերը, այլ և առանց դէֆիցիտի է փակում իր բիւջէտը: Եւ դեռ ամեն օր կտուցանում են այնպիսի շինութիւններ. որոնք հիացման արժանի են: Այսպէս օրինակ, Ալէքսանդրիա քաղաքը խմելու լաւ ջուր չունէր. խմում էին Նեղոսի կեղտոտ ջուրը, բայց ահա 2—3 տարի է, անդլիացիները մի մեծ գոտարան են շինել քաղաքի գլխին, մի բարձրաւանդակի վրա, որտեղ հաւաքելով լայն և մեծ աւազանների մէջ Նեղոսի ջուրը, որ բերում են ջրանցքներով, շոքեմեքենաների և ճախարակների միջոցով, գտում են ջուրը և յետոյ խողովակներով բաժանում ամբողջ քաղաքին, Մենք գնացինք նայելու այդ հոյակապ ձեռնարկութիւնը, որ միլիոններ է նստել և որ մատակարարում է քաղաքին մաքուր, զտված, անֆասսակար ջուր:

Եւ փնա այդ տեսակ ձեռնարկութիւնների, աւազոտ անապատների միջով երկաթուղիներ, ջրանցքներ անցկացնելու վրա Անգլիան գործ է դնում Ազիպտոսի եկամուտները, վճարելով և նախկին ահագին պարտքերը, պահելով լաւ, կազմակերպված զօրք և 10—12 տարվայ ընթացքում այնպէս կարգաւորել է Ֆինանսական վիճակը, որ երկիրը այժմ առանց դէֆիցիտի է փակում իր բիւջէտը:

Բնական է, որ Անգլիան գրգռում է իր դէմ նախկին հարստահարիչներին, կողոպտողներին և յափշտակիչներին գայրոյթը, երբ տեսնում են, որ այլ ևս կգփել, յափշտակել, հարստահարել չեն կարող, այլ միայն մնում է յլալ և կրճատել առ տամանց։

Այստեղ պէտք է նկատենք, որ չը նայելով այդ բոլորին, Եգիպտոսում ժողովուրդը կամ Ֆէլլաւը այնու աճենայնիւ դեռ գտնվում է սարսափելի աղքատութեան մէջ։ Գարեոր հարստահարութիւնները այնքան ծծել, մաշել, սպառել են ժողովրդի բոլոր ոյժերը, հիւթը, որ դեռ շատ տարիներ ունագին Զանքեր պէտք են գրաստացրած ժողովրդին մարդավայել կերպարանք տալու։

Սակայն անգլիական տիրապետութեան մի բնատուր յատկանիչն ևս այն է, որ նա անտեսանելի է, չէ շօշափվում և կառավարում է աներևոյթ ձեռքով։

Այցելելով Եգիպտոսի քաղաքները, դուք ամեն տեղ տեսնում էք, որ բոլոր կառավարչական պաշտօնեաները, ոստիկանները, միսիստրները—տեղացիներ են, արարներ, հայեր, յոյներ, ղըպտիներ, թուրքեր։ Ամեն բան կատարվում է, ամեն հրաման արձակվում խեղիվի անուշով։

Ըստ երևոյթին ամեն բան անօրինողը, լիազօր հրամանատարը խեղիվը և նրա նախարարներն են։ Գրագրութիւնը, խօսակցութիւնը դատարանների, վարչական հաստատութիւնների մէջ կատարվում է տեղական, արաբական լեզուով, ըացի խառն կամ միջազգային դատարանների մէջ

որտեղ գտտավարութիւնը լինում է Ֆրանսերէն լեզուով: Օրինակ, Ալէքսանդրիայում, Անգլիայի ներկայութիւնը միակ երևում է այն մի հասանալիական պահականոցով (poste), որ գտնվում է քաղաք կենտրոնում և որտեղ 16—18 տարեկան անգլիացի պատանի զինւորներ, բամբուկէ սաղաւարտներով, հրացանները ձեռքին պահակութիւն են անում:

Անգլիան կառավարում և տիրում է Եգիպտոսը, այսպէս սասած, կաբինէտում նստած: Ամեն մի մինիստր ունի մի օգնական sous-secrètaire, և նա է, իսկապէս, մինիստրը: Նա հսկում է մինիստրութեան գործերի վրա, կարգադրում, տնօրինում, վճռում, բայց դուրսը, ի ցոյց մարդկան, ամեն բան կատարվում, ամեն հրաման արձակվում է եգիպտական մինիստրի անունով: Բուն տնօրինողը, կատարողը աներևոյթ է մնում: Ահա դադտնիքը:

Իսկ ապստամբութեան երեսից իրան ապահովացնելու համար Անգլիան ահա ինչ է արել: Նախ Ալէքսանդրիայի նաւահանգստի մուտքում, ծովի տակ, մեծ պատերազմական տորպէդներ է շարել և այդպիսով որ և է պատերազմական նաւային արշաւանք անհնարին է դարձրել. երկրորդ՝ Կայիէրում, Եգիպտոսի մայրաքաղաքում, քաղաքի վրա թագաւորող միջնաբերդում շարել է անգլիական թնդանօթները, որոնց ահուկի բերանները բացել է քաղաքի վրա և դրել է անգլիական դարնիգօն: Եւ այս միջոցներով բոլորովին ապահովացրել է իրան:

Իսկ նրա բարոյական մեծ գորութիւնը կայանում է նրանում, որ երկրի քաղաքացիական կառավարութիւնը, արդարադասութեան գործը յանձնել է տեղական տարրին, իսկ ինքն հանդիսանում է լոկ վերին հսկող և երկրի բէսուրաները գործադրում է երկրի բարօրութեան ու զարգացման վրա և զարկ է տալիս տնտեսական բարգաւաճման:

IV

Յուլիսի 18-ին ամբողջ Ալէքսանդրիան ոգևորված շարժման մէջ էր: Մի քանի օրից ի վեր կայիէրից և մինչև անգամ Վերին Եգիպտոսից սկսել էին թափվել Ալէքսանդրիա հազարաւոր մարդիկ—պաշտօնեաներ, շէյխեր, բէյեր, փաշաներ և նոյն իսկ հասարակ բէդուիններ: Ինչպէս ասում էին, մօտ 50,000 մարդ էր եկել դրսից:

Ալէքսանդրիայի փողոցները վիտտում էին ամեն ցեղը և ազգի ներկայացուցիչներով: Ինչպէս զեղանկար կերպով հագված է այդ արևելեան ժողովուրդը, նոյն իսկ ամենաաղքատները: Գոյնզգոյն չալմաներ, երկար, մետաքսէ և բնհզեայ կաֆտաններ ու տիւրբաններ: Ականաւոր արարները իրանց լայն ապարօշների մէջ փաթաթված, հարէմի բնակչուհիները թափանցիկ շղարշով քողարկված, իրանց սուբմայած, իբրև ածուխի երկու կտորներ, փայլուն աչքերով գաղտնի ահնարկ են ձգում օտարականների վրա, կամ շքեղ կառքերի մէջ նստած, շրջապատված ներքինիներով և սահլներով անցնում են փողոցներով:

Ով ասես որ այդտեղ չը կայ. նուրբացին

կանգնած է դպտու, պարսկի հետ. տանիկը հա-
րէշի հետ, արկածախնդիր, եւրօպացիս սիրխացու
հետ, հայը յոյնի հետ, հրեան արաբի հետ: Հարձ
իւր հազարաւոր ժողովուրդը, մի ծովացած բանգ-
ուսթիւն, լցրել է բոլոր փողոցները, սրճարաննե-
րը, հրապարակները, որոնք զարդարված էին գե-
ղեցիկ գորգերով, անուշահոտ ծաղիկներով, բե-
հեզներով և բիւրաւոր ճրագներով: Ամեն փողո-
ցում մի մի յաղթական կամար կայ շինված և
ուկի տաւերով կամ ծաղիկներով զրված է «կեցցէ
մեր տէր Աբրահա փաշա Հիլմի»: զրված է արաբե-
րէն, պարսկերէն, ֆրանսերէն, յունարէն, իտա-
լերէն և հայերէն. անգլիերէն չէ նկատվում:

Ամբողջ քաղաքը տօնախմբութեան կերպու-
պարանք է առել. ասքսափելի ժխտք է ախրում
փողոցներում. ամեն րօպէ անցնում են խայտա-
ճամուկ տեսարաններ. կամ բեռնաւորված ուղտե-
րի ջորիների մի ամբողջ ջոկատ է, թաւշէ չու-
լերով ծածկված, արծաթեայ և պզնճեայ զանգակ-
ներով, կամ սրնթայ հշերի վրա նստած շէշիեր,
առջևից սախսները գնալիս, կամ ետևից վազող
ֆէլլանները, բեղաւիմներ, նէզրեր, որոնցից ու-
մանք ջուր են ծախում, ոմանք ծաղիկներ, բողջ-
բեզէններ, պտուղի խակ ոմանք ողորմութիւն են
հայցում:

Մանուսանք տարօրինակ երևոյթ են ներ-
կայացնում սախսները, նոյնք ինչ որ Պարսկաս-
տանում զիւլիթիւները: Աջխաղսում ամեն մի փոքր
ի շատէ բարձրանալովն են ձայնադնձեայ կրօն կա-
թիկոսական, կողք ոչնորմ է կամեկատրով, վիւմ է-

շիւ և ջորոս վրա նստած, առջևից վազում են հա-
խաները: Իրանը արագավազ արաբներն են, բոկոսն
արծաթեայ գաւազաններ ձեռքին՝ բռնած, տակե-
հիւս բաճկոններ և տպիտակ շորեր հագած: Իրանց
շաքժուկները շորհալի և ներդաշնակ են և վազե-
լիս շարունակ զգուշացնում են անցորդներին ճա-
նապարհ տալու իրանց տիրոջը:

Ամենահրաշալի էր տեսարանը երեկոյեան,
եբբ բիւբաւոք ճրագներ, գոյնզգոյն լապտերներ,
հրաւառութիւններ, ելէքտրական արեպակներ մի
կախարդիչ տեսք էին ընծայել քաղաքին:

Այդ բոլոր կենդանութեան, ոգևորութեան
պատճառն այն էր, որ այդ օրը Կ. Պօլսից վերա-
դառնում էր երիտասարդ խեղիվ Արքայա Հիլմի
փաշան, որը փառաւոր ընդունելութիւն էր գտել
սուլթանից: Իսկ այդ շքեղ ընդունելութեան բուն
նպատակը մի դէմօճստրացիա էր՝ ուղղած
անգլիացիների դէմ, որովհետև Արքայա փաշան
անգլիացիաց դիտումներ էր ցոյց տալիս և, ինչ-
պէս ասում են, սուլթանը հաւանութիւն էր տուել
նրա այդ դիտումներին:

Այդ դէմօճստրացիային մասնակցում էին
Ֆրանսիացիներն ու իտալացիները. բայց սնու-
նողներս Ալբրոնի դասակները հոգալ չէր: Իրանը
տալիս էին կատարիալ ազատութիւն՝ արտայնե-
լու գրացումները և բուսականանում էին նրանով,
որ խեղիվին ընդ առաջ, եբբ նա՝ նախից երբե-
քաղաքը ուղարկել էին ժանդարմներով մի փոքր
խումբ, որոնք իրանց կօպիտ ձիւններով վրա
տղած, ճանք կէտրով արում էին խեղիվը երկրի:

առջևից, իբրև արձաններ, որ և է կենդանութեան նշոյլ, դգացում կամ շարժում չարտայայտելով իրանց կերպարանքի վրա:

Այդ երեկոյեան մեզ համար մի դեղեցիկ առիթ էր դիտելու Եգիպտոսի ժողովուրդը, խեղճվին, որ կառքի մէջ նստած, մի զոյգ արագավազ սախաները առաջը ձգած, սպիտակ համազգեստով պտոյա կատարեց քաղաքի բոլոր փողոցներում և ողջունեց իր ժողովուրդը, և թէ նրա մօրը, որ մի դեռ երիտասարդ 35 տարեկան հրաշալի գեղեցկութեան կին է, և գնում էր խնդիվի առաջից: կառքի մէջ բազմած, երեսը կիսաբաց, շրջապատված ներքինիներով և սախաներով:

Միայն առաւօտեան ժամը 2-ին հազիւ մի քիչ խազադութիւն տիրեց փողոցներում:

V

Կայիէրից մի առանձին պատգամաւորութիւն էր եկել Ալէքսանդրիա՝ հրաւիրելու հրաւիրակներին այցելել այդ քաղաքը և Եգիպտոսի պատմական հրաշալիքները—պիրամիդները, սֆինքսը՝ Գիզէի միւզէօսը, մօզզօլները, Նեղոս գետը կամ նուիրական Եարօն, մի խօսքով հռչակաւոր Կէմիի նախկին փառքը և մեծութիւնը վկայող արձանները:

Ալէքսանդրիայից մինչև Կայիրէ մօտ 150 վերստ տարածութիւն է և օրեկան երկու թէ երեք անգամ Express կոչված շոգեկառքերն են գնում, կանգ առնելով երեք չորս կայարաններում:—Իսմանիառ, Տանտախ, Բէնիա և այլն: Ալէքսանդ-

բիայի հայ նշանաւոր հարուստ ազարակատէրե-
րից մինը՝ Պօղոս բէյ Ալըգեանը, որ կէս ճանա-
պարհի վրա մի մեծ ազարակ ունի, հրաւիրեց հը-
րաւիրակներին և մեզ բոլորիս Տանտախի կայա-
բանում իջնել, գիշերել իր տանը, Աբու-Հումուս
կոչված ազարակում և երկրորդ օրը գնալ Կայի-
րէ: Անշուշտ չէր կարելի ձեռքից թողնել այդպի-
սի մի յարմար առիթ ի մօտոյ դիտելու Ֆէլ-
լահնեքի կեանքը և գիւղը, ուստի Պօղոս-բէյի
առաջարկութիւնը սիրով ընդունվեց: Մեզ ընկե-
րացաւ և Եգիպտոսի առաջնորդ Գէորգ վարդա-
պետ Իւթիւճեանը:

Յուլիսի 19-ին, երկուշաբթի, կէսօրից յե-
տոյ, դիմելով Ալէքսանդրիայի երկաթուղու կայա-
րանը, մի ամբողջ ժամ աշխատելուց յետոյ հազիւ
կարելի եղաւ տոմսակ ստանալ: Այդ օրը վերա-
դառնում էին իրանց տեղերը Եգիպտոսի զանա-
զան կողմերից եկած բնակիչները և ամբողջ կա-
յարանը բռնված էր հազարաւոր ուղևորներով:
Ամեն ժամը մի անգամ յատուկ գնացք էր ճանա-
պարհ ընկնում և դարձեալ ամբողջ 3—4 օր պէտք
եղաւ այդ բոլորին ճանապարհ դնելու:

Երեկոյեան դէմ հասանք Տանտախ կայարա-
նը և հազիւ վազօնից դուրս եկանք, որ յանկարծ
հրացանի թնդիւններ և վայրենի ձայներ դղրդեցին
պլատֆօրման: Մօտ հարիւր արար Ֆէլլահներ,
չալմաները փաթաթած, ցնցոտիներ հագած, այս-
ինքն մի պատառոտած սպիտակ, կեղտոտ շապիկ
ամբողջ հագուստի տեղ, ոտաբոբիկ, մի մի հնա-
դարեան հրացաններ բռնած, սկսեցին աղաղակել,

գողալ: Դրանք—Պօղոս-բէյ Աշըգեանի գիւղացի-
ներն էին, որոնք եկել էին դիմաւորելու հրաւի-
րակ եպիսկոպոսներին: Նրանց գլխաւորը, մի
առոյգ և հուժկու արար, նիզակը ձեռքին, նժոյգի
վրա նստած, ինչ որ հրամաններ տուեց և ահա
մի քանի էշեր, ճոխ համետներով ներկայացրին
մեզ: Հեծնելով էշերի վրա, որոնք բաւական սըր-
ընթաց են, սկսեցինք առաջ գնալ. մեր առաջից
խառնիխուռն վազում էին Ֆէլլահները. հրացան-
ներ և ջահեր ձեռքերին բռնած և երբեմն երբեմն
վայրենի աղաղակներ արձակելով: Նրանք իրանց
լեզուով և ձևով օվացիաներ էին անում իրանց
տիրոջ հիւրերին: Գիշերվայ մթութեան մէջ, որ
յանկարծ տիրեց, այդ բոկոտն սևերը իրանց նի-
զակներով, հրացաններով և սպիտակ շապիկներով
ճիւղների ազդեցութիւն էին գործում և կարճեա
գերեզմանից նոր յարութիւն առած մարդիկ էին:

Մենք գնում էինք աւազոտ դաշտերի և բամ-
բակի պլանտացիաների միջով: Տեղ տեղ երևում
էին արաբական աղքատիկ գիւղեր: Փէլլահները
և Ֆէլլահուհիները, իրանց որջերից դուրս եկած,
ակնապիշ և գազանի նման նայում էին մեզ վրա:
Այդ արաբական գիւղերը շատ տխուր կերպարանք
ունեն: Փէլլահների բնակարանները շինված են
ուղղակի հողից և աւելի նման են գազանների
որջերին, քան մարդկային բնակարանի: Նրանք
հազիւ բարձրանում են գետնի մակերևոյթից և
առաջից մի հատ ծակ ունեն, որով ընտանիքները
ներս են սողում և դուրս գալիս: Լուսամուտ ա-
մենևին չը կայ. պարզապէս մի հողակոյտ է, հո-

զի գոյնով, այնպէս որ շատ անգամ անկարելի է լինում նկատել խրճիթը: Այդ հողակոյտի միակ կահ-կարասին մի քանի կուժեր են. անկողին, աթոռ, սեղան—աւելորդ շոայլութիւն է համարվում: Իրանք Ֆէլլահները այնքան աղքատ են, որ, ինչպէս պատմեցին մեզ, միս ուտում են տարին երկու անգամ, մահմէտական տօներին: Ամբողջ տարին նրանց սովորական կերակուրն է հում սոխ և ցամաք թխած հաց: Ամենահարուստները նրանք են համարվում, որոնք կարողանում են ունենալ կաթ, պանիր, մեղր և արմաւ, չը նայելով, որ արմաւը Եգիպտոսում նոյնքան սովորական պտուղ է, որքան մեզանում խաղողը:

Մի խօսքով մերկութիւնը և տնանկութիւնը իսկոյն աչքի են ընկնում. կեղտոտութիւնը անտանելի է և դրա համեմատ, ինչպէս բացատրում էին մեզ մեր ուղեկիցները, մահացութիւնը սարսափելի մեծ է: Այդ տխուր պատկերները աւելի մոայլ կերպարանք են ստանում, երբ ճանապարհի երկու կողմերով նկատում էք անընդհատ գերեզմանատներ: Գերեզմաններ և միայն գերեզմաններ. կատարելապէս մեռելներ թագաւորութիւն...

Եւ ինչ տարբերութիւն այն նախկին, համայն տիեզերքի մէջ իր փարթամութեամբ հրաշակված, ծաղկած և բարգաւաճ Եգիպտոսի, կամ փառաւոր Կէմիի և այժմեան թշուառ Ֆէլլահների աղքատութեան մէջ, որոնք ապրում են պանծալի անցեալի աւերակների վրա, որոնք խմում են նուիրական Եարօի ջուրը և սակայն ոչ մի հաս-

կացողութիւնն չունեն իրանց երկրի փառաւոր անցեալի և այն բարձր քաղաքակրթութեան ու կուլտուրայի մասին, որ թագաւորում էր այդտեղ հազար տարիներ առաջ: Բայց այդ անցեալի մեռեալները մինչև անգամ չեն հանգստանում իրանց գերեզմանների մէջ, որովհետև, ինչպես կը տեսնենք, Ֆէլլահները և արաբները երկար ժամանակ մուսիանները գործ էին ածում իբրև վառելիք և նրանցով տաքացնում իրանց բնակարանները ու կերակուր եփում:

Գիշերվայ ժամին շրջապատված արաբներով, մաշալլաներով և դրօշակներով, աւազոտ անապատի մէջ, այդ բոլորը մի տեսակ երկիւղի և տըխրութեան մէջ էր զցել մեզ: Սակայն յանկարծ մեր առաջ բացվեց մի զեղանկար տեսարան— մի կանաչազարդ վիլլա, մի զեղեցիկ դղեակ, շքեղապատված ճոխ բուսականութիւնով, անուշահոտ ծաղիկներով և արմաւենիներով: Այդ՝ Պօղոս-բէյի վիլլան էր, գոյնզգոյն լապտերների լոյսի հեղեղի մէջ կորած: Մի կատարեալ օազիս աւազոտ անապատի մէջ: Մտնելով այդ հիւրընկալ տունը, մենք մեզ զգացինք ոչ թէ Աֆրիկայի անապատում, այլ մի եւրօպական կօմֆօրտով հիւրանոցում: Ազարակատիրոջ այդ շքեղ, փարթամ բնակարանը մի զարհուրելի կօնտրաստ էր ներկայացնում նրանից մի քանի քայլ հեռու Ֆէլլահների գիւղի մերկութեան, աղքատութեան և խեղճութեան հետ: Ինչպէս մեզ պատմեցին, այդ վիճակի մէջ են զբտվում Եգիպտոսում ամեն տեղ հողատէրերը և Ֆէլլահները: Անզլիակտն տիրապետութիւնը և կուլ-

տուրան դեռ անգոր են փոխել երկրի այդ անարդար վիճակը...

Աբու Հումուսում էլ գիշերեցինք մենք:

Անմտութիւն է ամառ ժամանակ ճանապարհորդել Եգիպտոսում. կարծես վառարանի մէջ էինք: Այդ բաւական չէ, երկրորդ օրը, երբ վերադառնում էինք Կայիրէ, յանկարծ սկսեց փչել սիրօ կօ այրող քամին. ա՛բողջ անապատը շարժվեց: Փոշու ամպեր ահագին սարի պէս կուտակվեցին և աւազը թափվում էր ամեն կողմից մեր վրա: Փոշու մէջ կորած էինք, իսկ քրտինքը այդ փոշին ցեխի դարձնելով, մարդու կերպարանքը այնպէս էր կեղտոտում, որ անկարելի էր լինում ճանաչել: Անիծեալ փոշին ամեն տեղ մտնում էր՝ բերանը, քիթը, ականջը, հագուստի մէջ, չը նայելով որ վագօնի դռները պինդ փակված էին:

Եգիպտոսում, ամառ ժամանակ, ցերեկները, առաւօտեան ժամը 9-ից սկսած մինչև երեկոյեան ժամը 6-ը ոչ մի շարժում չէ լինում. ամենքը փակվում են տներում, հագնում են մի երկար սպիտակ շապիկ և դուռ, լուսամուտ պինդ փակելով՝ հանգստանում են. կեանքը, շարժողութիւնը սկսվում է երեկոյեան: Այդ է պատճառը, որ եւրօպացիները ճանապարհորդում են Եգիպտոսում ձմեռը կամ գարնան. ամենալաւ ժամանակը նոյեմբերից—ապրիլ է, երբ Եգիպտոսի օդը վերին աստիճանի առողջարար և մեղմ է:

VI

Ահա վերջապէս և Կաիրօն, արաբական կուլտուրայի այդ առասպելական քաղաքը:

Աշակերտութեանս ժամանակ, ինձ պարսկերէն սովորեցնող Ֆարս միրզան ամեն օր կարդում էր ինձ համար Ալիֆ-ուլ-լէյլա, «Հազար և մի գիշերներ»: արաբական առասպելաբանութիւնը և դեռ այդ ժամանակից Կաիրօ կամ՝ արաբական լեզուով Միսր քաղաքը խոր կերպով տպաւորվել է իմ յիշողութեան մէջ: Ալիֆ-ուլլէյլաի կախարդական վէպերի գլխաւոր ասպարէզը հանդիսանում է Միսրը, որտեղ ամբարված էր աշխարհի ամբողջ հարստութիւնը, որտեղ հաւաքված էին աշխարհի բոլոր գեղեցկուհիները և որի սքանչելիքը նոյն իսկ «Հազար և մի գիշերները» բաւական չեն պատմելու և նկարագրելու:

Տարակոյս չը կայ, որ ոտ դնելով Կաիրօում, ես որոնում էի «Հազար և մի գիշերներ» առասպելական քաղաքը և արաբական կուլտուրայի հրաշակերտը:

Թէև այդ կուլտուրան վաղուց կատարել է իր անկումը, բայց պէտք է խոստովանել, որ Կաիրօն այսօր ևս կարող է առասպելական քաղաքի տեղ ընդունվել. նա հմայիչ ազդեցութիւն է գործում և գուցէ միակ քաղաքն է աշխարհի վրա, որ կարող է մի ամփոփ գաղափար տալ արաբական նախկին բարգաւաճ կուլտուրայի մասին, որովհետև դեռ կանգուն են այդ կուլտուրայի կոթողները՝ սուլթան Հասանի մզկիթը, միջնադար-

եան հնութեան այդ հրաշակերտը, ֆաթիմեան խալիֆայ էլ Հէքիմի մզկիթը, խալիֆաների շիրիմները, էլ-Աշրաֆ խալիֆայի մզկիթը, էլ-Կալու միջնաբերդը, որտեղ կառուցված էր առաջ սուլթան Սալահդնի, խաչակիրների հզօր թշնամու— պալատը, Յովսէփի ջրհորը, և վերջապէս նորագոյն ժամանակի գործ, բայց նոյն արաբական կուլտուրան և ճարտարապետութիւնը ցօլացնող Մուհամմէդ-Ալու, այժմեան տիրող հարստութեան հիմնադրի շինած մզկիթը և Խէզերէի պալատը:

Կաիրօն մի ամենաթանձր հնութեան աւերակների, եգիպտական հուշակաւոր Մէմֆիս քաղաքի աւերակների վրա է կառուցված, արաբական առաջին խալիֆաների ձեռքով: Նա Եգիպտոսի միջնադարեան մայրաքաղաքն է, թէև բուն իր մէջ եգիպտական ոչինչ հետք չէ կրում. միակ նշանը, որ յիշեցնում է նախկին, պատմական Եգիպտոսը, այդ այն է, որ մի քանի տների դռների վրա դրված են կոկորդիլոսների՝ յարդով լցրած խրտուռիլակներ: Հին եգիպտացիները իրանց դռների վրա նկարում էին կոկորդիլոսներ:

Թէև Կաիրօի լաւագոյն օրերի յիշատակը մնացել է միայն «Հազար և մի գիշերնհր» հրաշալի առասպելների մէջ, որոնք ազահարար կարդացվում են այսօր ամբողջ մահմետական աշխարհում և արաբական նոր ձեռագիրների մէջ, բայց դարձեալ, նոյն իսկ այսօր նա ներկայացնում է վերին աստիճանի խայտաճամուկ տեսարան: Այդտեղ ամեն բան ինքնուրոյն է և փողոցի կեանքը ամեն բոլորէ ձեզ նոր սիւրպրիզներ է մատուցանում:

Առաջին տեսքից, մտնելով գլխաւոր փողոցները և հրապարակները, դուք կարծում էք թէ գտնվում էք եւրօպական մի մեծ քաղաքում, Պարիզում, Լօնդօնում: Հոյակապ պալատներ, շքեղ տներ, փառաւոր և ճոխ հիւրանոցներ, անհամար կաֆէ-շանտաններ, երաժշտական—ձայնաւոր brasseries-ներ, շացուցիչ մագազիններ և ամեն տեղ անգլիացիներ, անգլիական օֆիցէրներ, անգլիական լեզու.—անա թէ ինչ է առաջին անգամից գրաւում ձեր ուշագրութիւնը: Shephcard's hotel-ի պէս մի հիւրանոց, որտեղ մենք իջկանեցինք և հիւրասիրվեցինք Կայիրէի հայ գաղթականութեան կողմից, շատ քիչ կը գտնվի նոյն իսկ Վիէննայի, Պետերբուրգի պէս քաղաքներում: Տէխնիական բոլոր կատարելագործութիւնները և ամեն տեսակ կոմֆօրտ դուք կտրող էք գտնել այդտեղ:

Կառուցված լինելով ամենագլխաւոր փողոցի վրա, անագին տէրրասը առջևը, շքեղ ընդունաւորան գլխաւոր մուտքի մօտ, գորգերով, տրոպիական բոյսերով ծածկված սանդուխտներ, եղեմանման պարտէզ, էլեքտրական լուսաւորութիւն, ընդարձակ դահլիճներ, փառաւոր ընթերցարան,—անա այդ հիւրանոցի պատկերը: Եւ այդպիսի հիւրանոցներ մի քանի հատ կան:

Սակայն, երբ մի քիչ աւելի մօտ էք ծանօթանում, մտնում էք քաղաքի կեանքի մէջ, տեսնում էք սև կերպարանքներ, բազմաթիւ էշեր և ուղտեր, կապիկներ իրանց առաջնորդներով, բէդուիւններ իրանց գոյնգոյն չալմաներով, և երբ մտնելով աւելի խուլ փողոցները, նկատում էք ա-

բեկեանն և մահմետական քաղաքների յատուկ կեդոտուութիւնը,— դուք յիշում էք, որ գտնվում էք Արևելքում, միայն եւրօպականութեան կեդև ընդունված Արևելքում:

Ահա մի արաբ, որ մի սայլի վրա դրած իր բոլոր տնային կահկարասիքը՝ վարում է այդ սայլը. նրա մէջ շատ քիչ բան կայ. բայց նրա մէջ կայ կենդանի ապրանք— երեք կին, որոնք ծածկված են չարսաւների մէջ և որոնց ճակատից մի երկար գլանակածև կոճակ է իջնում քթի վրա: Աղքատ և խեղճ է արաբը, բայց Ալլահի օրհնութեամբ և մարդարէի օգնութեամբ նա տէր է երեք հիւրիների, որոնք այս փուլ աշխարհում խնամում են բարեպաշտ մուսուլմանին, որ ամենայն ջերմեռանդութեամբ կատարում է իր նամազները, կատարում է դուրանի պատուէրները, մինչև հանդերձեալ աշխարհը չուելը, որտեղ արգէն հազարաւոր սևաչեայ փէրիներ մշտնջենական երջանկութիւնը կը տան նրան և նրա կեանքը կը լինի մի յաւիտենական գեղածիծաղ գարուն, առանց խորշակահար ամառի, առանց ցրտաշունչ ձմեռի:

Որքան ողորմելի են այդ քեաֆիր Փրէնգիները. ինչ անենք, եթէ նրանք այժմ հարուստ են, լաւ կեանք են վարում, ուրախ են, զուարթ: Անիծեալները այստեղից ուղղակի դժոխք են գըտուլու միզուխ Ազրայիլ հրեշտակի խորագանի հարուածների տակ... անա ինչ մտածմունքների հայելի է ներկայացնում արաբ շէյխի կերպարանքը, նստած հաիօրի փողոցներում և գուշա-

կութեան սփռոցը փռած առաջը, զուրանը կար-
դալիս...

Բայց հետաքրքիր է Կաիրոն նա մանաւանդ
զիշեր ժամանակ, երբ նա երևում է ձեզ իր ամ-
բողջ մերկութեամբ: Անցնում էք մի գլխաւոր
փողոցով և դեռ հեռուից լսում էք աններդաշնակ,
բայց մեծազորոզ արաբական երաժշտութիւնը,
մօտենում էք և ձեր առաջ տեսնում էք մի արա-
բական Շաիէ—սրճարան: Թէ սրճարանից դուրս,
սայլատակի վրա, թէ սրճարանի մէջ բոլոր ա-
թոռները բռնված են տեղացի միջակ և ստորին
դասի հասարակութիւնով: Խժոււմ են զանազան տե-
սակ օշարակներ, սուրճ, մաստիկա, խաղում են
սատրիճ, նարտախտայ և զուարճանում են այն
տեսարանով, որ հանդիսանում է բեմի վրա: Այդ-
տեղ հասարակութեան դէմ յանդիման, պատի եր-
կարութիւնով, բեմի վրա ծալապատիկ նստած են
արաբական երաժիշտները և երգիչները. նրանք
և սուրճ են խմում և ծխախոտ կամ նարգիլէ քա-
շում և երգում կամ նուագում, իսկ նրանց առաջ
երկու կանայք կատարում են «որ ու վայնի պա-
րը»: որ կարելի է ճիշդ աֆրիկեան պար համա-
բել: Պարեկողը որովայնով զանազան շարժումներ
է անում, որոնք միայն վավաշոտ ցանկութիւններ
են առաջ բերում հանդիսականների մէջ. արաբ-
ները ծափ են տալիս և երգեմն երգեմն, երբ պա-
րը հրէշաւոր և կեղտոտ կերպարանք է ստանում,
մի տարօրինակ աղաղակ են հանում. նայելով
այդ աղաղակին և նրա ձեին, բեմի վրա գտնված
բոկոտն սպասաւորը մօտենում է այն ահագին

բազմաճիւղ աշտանակին, որ դրված է բեմի մի կողմը և վառոււմ է մի մոմ, մի ուրիշ սպասաւոր այդ միջոցին մօտեննում է աղաղակ հանողին և ստանում կամ մի ոսկի կամ մի արծաթ, նայելով ինչ տեսակ մոմ վառվեց, ոսկէանոց թէ արծաթանոց:

Կեղտոտ, օւռահեղձ է այդ սրճարանը. եւրօպացին, փոքր ի շատէ էսթէտիկ ճաշակ ունեցող և բարոյական մարդը երկար չէ կարող մնալ այդտեղ և տեսնել այդ ֆիզիքական և բարոյական ապականութիւնը, բայց արարը իրան այդտեղ զգոււմ է իբրև ձուկն ջրի մէջ և ամեն ընդհանուր այցելուներ են ներս թափվում:

Եւրօպացիները նոյնպէս ունեն կաֆէներ, փայլուն, շքեղ, փառահեղ և այնքան օրինաւոր, որ յաճախում են ընտանիքով: Այդտեղ արդէն բեմ են դուրս գալիս ոչ թէ որովայնակաքաւ եզիպտուհիները, այլ շիկահեր և գունատ գերմանուհիներ և ֆրանսուհիներ:

Բայց թողնենք այդ կաֆէ-շանտանական վայրերը և այցելենք այն տեղերը, ինչ որ ճշմարիտ էսթէտիական զուարճութիւն ե հաճոյք է պատճառում: Սակայն նախ քան այդ՝ մի քանի խօսք ասենք քաղաքի մասին:

Կաիրօն, ինչպէս յիշեցինք, արաբական տիրապետութեան ժամանակ տիեզերական հռչակ է ունեցել: Նա երկրագնդի ամբողջ երեք մասերի հետ կապված էր և համաշխարհային առևտրի կենտրոն էր, ուստի և տիեզերքի ամեն կողմից գանձերը թափվում էին այդտեղ և այդ է պատ-

ճառը, որ «Հազար և մի գիշերներին» մէջ նա նը-
կարագրվում է իբրև մի կախարդական քաղաք:
Ամբողջ Արևելքը այդտեղ էր համախմբված, այդ-
տեղ էին գործածութիւն գտնոււմ ամբողջ Արևել-
քի բնական հարստութիւնները: Քաղաքացիների
և քաղաքացուհիների զեղխութիւնը այն աստի-
ճանին էր հասել, որ խալիֆաները ստիպվեցին
պատժական օրէնքներ սահմանել և սանձահարել
շռայլութիւնը:

Իտալացի հոչակաւոր բանաստեղծ Արիօստո
խօսում է Կաիրօի մասին, իբրև մի քաղաքի, որ
ունի 18,000 փողոցներ և ամեն մի փողոցում
զետեղված են 15,000 զինւորականներ իրանց ըն-
տանիքներով: Ի հարկէ այդ՝ մեծ իտալացու բոր-
բորված երևակայութեան արդիւնքն է, բայց դա
ցոյց է տալիս թէ Եւրօպայում այդ ժամանակ ինչ
զաղափար ունէին կազմած Կաիրօի մասին: Դեռ
XIV դարում Ֆլօրէնտացի Ֆրէսկօբալդի ճանա-
նապարհորդը, որ անձամբ այցելեց Կաիրօն ասում
է, թէ նրա բնակիչների թիւը աւելի է, քան ամ-
բողջ Տօսկանայի բնակիչների թիւը. բացի դրա-
նից նա տեսել է Կաիրօի փողոցներում բազմա-
թիւ փղեր և պատմում է սարսափելի շռայլու-
թեան մասին, որ տիրում էր այնտեղ:

Այժմ Կաիրօն այդպիսի մեծութիւն և փար-
թամութիւն չէ ներկայացնում, թէև դարձեալ
ճնում է Արևելքի ամենանշանաւոր քաղաքներից
մինը և վաճառականութեան կենտրօն: Նա ունի
500 հազար բնակիչ, որոնցից 30 հազարը միայն
անգլիացիներ են:

Շրջելով Կաիրօի փողոցները, ձեր ուշադրութիւնը զբառում է ամենաբարձր մինարէն, որի բարձրութիւնը մօտ քառասուն սաժէն է. դա է հռչակաւոր սուլթան Հասանի մզկիթի մինարէն,

Այդ մզկիթը ամբողջ մահմեդական աշխարհի պարծանքն է համարվում, և շինված է XIV-րդ դարում, բայց այսօր ներկայացնում է մի աննման, գեղանկար աւերածոյ: Տեսնելով այդ մըռայլ, հոյակապ շինութիւնը, նրա վեհ պարզութիւնը, մարդ մտածում է, որ իսլամն ևս ունեցել է իր Միքէլ-Անջելօն, միայն համակված զուրանի ոգով:

Հիացած այդ մզկիթի ճարտարապետական ստիլով, կամենում էինք ներս մտնել, երբ զբանը կանգնած շէյխը յիշեցնում է մեզ, որ որքան աւերակ լինի սուլթան Հասանի մզկիթը, Գայց, փառք Ալլահին, դեռ այն վիճակին չէ հասել, որ գեա՛վ ուրը կարողանայ պղծել այդ սրբութիւնը իր կօշիկներով և ասաջարկում է հագնել հողաթափներ, մի բան, որի հետ ընտելացել էինք դեռ Կ. Պօլսում: Մի փոքր բախշիչ մեղմացրեց ժանտ շէյխի զայրացկոտ դէմքը և հողաթափները քարշ տալով ներս մտանք: Մի հսկայական շինութիւն, որ բաղկացած է մի բանի մասերից, գմբէթը տեղ տեղ փլված, այնպէս որ պարզ, կապոյտ երկինքը ներքևից երևում է. ամեն կողմից առաստաղներից կախված են ջահեր, ամեն տեղ մարմարիօն, բրօնզից թափված պատկերներ, մօզաիկ յատակամածներ: Մէջը շինված է երկու մարմարեայ աւազան մէկը թուրքերի, միւսը եգիպտացիների:

համար: Մի քիչ հեռու աւաղանից բարձրանում է մի բեմ, սեղան, որտեղից առաջ սուլթանները յայտնում էին իրանց կամքը ժողովրդին: Պատերը միմեանց հետ միացած են մեծ կամարներով, որոնց վրա ոսկէ տառերով քանդակված են արաբական արձանագրութիւններ, իսկ պատերի վրա գեղեցիկ արարէսկներ, հին ճարտարապետութեան նկարներ:

Այդ վիթխարի պատերից ամբողջ հինգ դռեր նայում են ձեզ վրա, և նախկին մեծութիւնը մի փայլուն հակապատկեր է ներկայացնում այժմեան ամայութեան և աւերածութեան հետ:

Մէջտեղ կառուցված է սուլթան Հասանի դամբարանը, որ ուխտատեղի է մուսուլմանների համար: Սակայն ասում են, որ նրա մարմինը այդտեղ չէ հանդչում. մի կռուի մէջ սպանվելով, մարմինը անհետացաւ և այդ համարվեց իբրև պատիժ այն յանցանքի, որ նա գործել էր՝ կտրել է ալով մզկիթը շինող ճարտարապետի-ձեռքերը, երբ սա աւարտեց շինութիւնը, որպէս զի չը կարողանայ մի ուրիշ այդպիսի ճարտար պլան նկարել:

Էլ Կարու միջնաբերդը, որ շինված է սարի վրա և որը մենք այցելեցինք դբանից յետոյ, այլ ևս մեզ վրա մի առանձին տպաւորութիւն չը գործեց սուլթան Հասանի հոյակապ մզկիթը տեսնելուց յետոյ: Այդ միջնաբերդը, որ շինվել է 790 թւին, փոքր քաղաքի պէս մի բան է ներկայացնում իր ամրութիւններով և զօրանոցներով: Այդտեղ է գտնվում անզլիական զօրքը և այդտեղ

են շարված անգլիական թնդանօթները, բերանները ուղղած բաղաքի վրա: Միջնաբերդի կենտրոնում գտնվում է Մուհամմէդ Ալիի, առաջին խէզրիվի շինած շքեղ մզկիթը, իր դամբարանով: Նա կամեցել է շինել երկրորդ Այա Սօֆիա և թէև մի փոքր նմանութիւն ունի, բայց շատ հեռու է նրա ստիլից և վեհութիւնից: Շքեղութիւն, փարթածութիւն, ճոխութիւն տիրապետում են այստեղ, յատակը ծածկված է գորգերով որոնք, ինչպէս ասում են, բերված են Մէքքայից: Զուլաժոյ պղնձէ անթիւ ջահեր, ոսկեայ աշտանակներ, գունաւոր լուսամուտներ, քանդակագործութիւններ, մարմարեայ աւազաններ և մի անկիւնում իրան Մուհամմէդ-Ալիի դամբարանը, ոսկեզօծ ցանկապատով շրջապատված, արձաւենու տերւներով և դրօշակներով ծածկված, շլացուցիչ տպաւորութիւն են թողնում: Դա Այա Սօֆիայից յետոյ երկրորդ հուշակաւոր մզկիթն է համարվում իսլամական աշխարհի մէջ իր շքեղութեամբ և ճոխութեամբ:

Բայց մի բան, որ արժէ տեսնել միջնաբերդի մէջ, այդ այն պլատֆօրման է մզկիթի ետևը, որտեղից բացվում է մի աննկարագրելի գեղանկար տեսարան, մի սքանչելի պանօրամա այնքան այդ պանօրաման կախարդիչ և հմայիչ է: Տների մի ահագին ծով. տափակ կտուրներով, այգիներ, անթիւ վերամբարձ մինարէներ, պալատներ, ոսկեզօծ գմբէթներ, աւերակներ, և դրանց ետևից՝ ջրանցքների կապոյտ և շողշողուն գիծը, արձաւենու բուրաստանների և կանաչա-

դարդ դաշտերի միջով, և հետու հօրիզոնում Հիզէի, Խէօպսի պերամիդները, դեղնագոյն Լիբանանի աւազոտ անապատը, իսկ դէպի հիւսիս՝ Նեղոսի անհուն դելտան,— այդ բոլորը կախարդիչ կերպով ներգործում է մարդու վրա: Ամբողջ պատկերը լուսաւորված է վառ, հրեղէն փայլով, կարծես թէ անա մի հրեղէն հօզոն հեռում շարժւում է: Ըսկ աւազոտ անապատի մէջ, քաղաքից հեռու, նկատվում են միջին դարի խալիֆաների լուռ ու անմոռուն դամբարանները: Առաջին անգամ այդ պանօրաման տեսնողը կարծում է, թէ կարդում է Շահէրիզադէի առասպելները:

Մենք գնացինք նայելու և Յովսէփի ջրհորը: Աւանդութիւնն ասում է, որ այդ այն հորն է, որի մէջ ձգվեց Յովսէփ գեղեցեկը Փարաւօնի կնոջ պատճառով. բայց պատմութիւնը ասում է, որ այդ ջրհորը, որ առաջ ջուր էր մատակարարում միջնաբերդին ճախարակներով, ստացել է այդ անունը միջնաբերդը շինող Իւսուֆ սուլթանից: Ջրհորը բաւական խոր է և մարդու գլուխը պըտըտվում է ներքև նայելիս: Այդտեղ էին զըտնվում Սալահդինի պալատի աւերակները:

Իջնելով միջնաբերդից քաղաքը, և այցելելով Էլ-Հէքիմ խալիֆայի մզկիթը, որ վերածված է արաբական միջնադարեան հստթիւնները պարունակող թանգարանի և որը հիմնվել է անգլիական հիւպատոս Բօլէրսթըրի, գերմանացի Յըրանց-փաշայի և հայ Յարութիւն փաշայի ջանքերով Իսմայիլ խէզիվի ժամանակ, մեզ առաջնորդեցին դէպի Նեղոսի կամուրջը, որից անցնելով,

դէպք է այցելէինք Խիզէի հռչակաւոր պալատը
և նրա մէջ զետեղված մուզէօնը, որ այժմ ամբողջ
աշխարհում էր տեսակի մէջ առաջինն է հա-
մարվում:

Անցնելով Նեղոսի վրա ձգած կամուրջից, որ
մի հոյակապ շինութիւն է և բաղկացած է շղթա-
ներով միացող երկու շարժական մասերից, ունե-
նալով ծայրերին երկու երկու սֆինքսներ, իբրև
պահապաններ, մենք հասանք մի փոքրիկ կղզի,
որտեղից սկսվում էր արմաւենիներով և տրօպի-
ական ակացիաներով մի գեղեցիկ ծառուղի, որ
մեզ տարաւ ուղղակի դէպի Գիզէի կամ Խիզէի
պալատը:

Մեր առաջ ներկայացաւ մի լայնատարած
շինութիւն, բարձր սրմերով: Մտնելով երկփեղ-
կեան մեծ դռնից մի ահագին և հրաշալի պարտի-
զի մէջ, առաջին բանը, որ մեր աչքին ընկաւ—
մի պարզ, բայց գեղարուեստական և վսեմ ստի-
լով շինված շիրիմ էր, որի վրա քանդակված էին
«այստեղ հանգստանում է Աւգուստ Ֆէրդինանդ
Մարիէտտ, 1821—1880 խօսքերը»:—Այս՝ մուզէօնը
նաեղծողի դամբարանն է, ասեցին մեզ մեր ա-
ռաջնորդները:

Անկարելի է մեզ նկարագրել Գիզէի պալատի
գեղեցկութիւնը, շքեղութիւնը և մանաւանդ ճար-
տարապետութեան հիանալի տեսքը: Թէև եւրօ-
պական և մաւրիտանական ստիւնները խառնված
են միմեանց հետ, բայց ընդհանուր տպաւորու-
թիւնը վերին աստիճանի սքանչելի է: Գիզէի
պալատը շինել է տուել այժմեան խեղդիվ Աբաս-
9

փառայի պապը, Իսմայիլ փառան, և ինչպէս երեւում է, միլիթոններ չէ խնայել մի տախտակի պալատ ստեղծելու, որի նմանը Արևելքի վեհապետները դժուար թէ ունենային: Պալատի այն մասը, որ յատկացրած է հարէմին, տխրան ընդարձակ է, որ կարող է մինչև 300 գեղեցկուհիներ պարունակել իրանց նաժիշտներով: Ասում են, որ Իսմայիլ փառան հէնց 300 գեղեցկուհիների համար և յատկացրել է այդ մասը:

Ամբողջ պալատը քաղկացած է մի քանի պալացցօներից. կայ մի առանձին մաս, որ յատկացրած է պալատական խնճոյքների համար. մի ուրիշ մաս յատկացրած է պաշտօնական ընդունելութիւնների համար և ամենաճոխ կերպով զարդարված ու պճնված է. այդտեղ կան 10 հազար բուբլի արժեցող հայելիներ, թանգադին մոզայիկ սեղաններ, մալախիտ սիւներ և այնք,

Պարահանդիսի համար յատկացրած դահլիճը իր անթիւ բիւրեղեայ ջահերով կարող է մինչև հազար մարդ պարունակել: Ամեն մի մանր մունր բանի մէջ նկատվում է շքեղութիւն, շոայլութիւն, իսկ մանր-մունր բաներ պալատի 91 սրահների մէջ անթիւ ու անհամար են:

Խիզէի պալատը ունի միայն 91 դահլիճներ, բայց այդ դահլիճների մէջ այսօր այլ ևս չեն բռնակվում և զուարճանում արքունիները և 300 գեղեցկուհիները, այլ նրանց մէջ այսօր զետեղված և դասաւորված են այն բոլոր կոթողները, որոնք մնացել են հին Յգիպտոսի փառքից և մեծութիւնից և որոնք ցոյց են տալիս 6000 տարի

առաջ գոյութիւն ունկցող մի ինքնուրոյն կուլ-
տուրայի նշանները:

Այդ 91 դահլիճները պարունակում են այն բոլոր հնութիւնները, որ այսօր ժառանգում է եգիպտոսը: Այդ 91 գալէրէաները, իբրև եգիպ-
տօլօգիայի ցուցահանդէս, աշխարհիս ամենահա-
րուստ և ամենաճոխ թանգարանն են կազմում: Նրանք հիանալի կերպով ցոյց են տալիս փարա-
ւոնական քաղաքակրթութիւնը իր բոլոր մանրա-
մասնութիւնների մէջ և այցելուների առաջ պար-
զում են Նեղոսի հովտի բնակիչների արուեստա-
գիտական զգացմունքների բոլոր արտայայտու-
թիւնները՝ սկսած հին կայսրութեան արձաննե-
րից և արքայական շիրիմներից, մինչև քրիստո-
նեայ ղպտացիների—հին եգիպտացիների շառա-
ւիղը համարվող միակ մնացորդի—գործերը:

Ով այցելել է Խիզէի միւզէօնը, որ բացվել է 1892 թւին և պիրամիդները, նա հաստատապէս կարող է մի ամփոփ գաղափար կազմել նախկին եգիպտոսի քաղաքակրթական վիճակի մասին: Այդ է պատճառը, որ այժմ իւրաքանչիւր ձմեռ տասնեակ հազարներով այցելուներ թափվում են Կայիրէ՝ Նւրօպայից, Ամերիկայից յատկապէս Խի-
զէի միւզէօնն այցելելու և այցելելով, այլ ևս հարկաւոր չեն համարում զնալ տեսնել հին աւե-
րակ քաղաքները, բացի պիրամիդներից, որոնք Խիզէի միւզէօնից շատ էլ հեռու չեն:

Բայց որպէս զի ուղևորները իմանան, թէ ինչպէս տեղի ունեցաւ այդ պալատի այդ մեծ կերպարանափոխութիւնը, երբ նա հարեմական

կենանքի համար ստեղծված ապարանքից վերածվեց գիտութեան մի հոյակապ տաճարի և ինչպէս ստեղծվեց աշխարհիս ամենանշանաւոր և մեծ թանգարանը, Գիգէի միւղէօնի վարչութիւնը հրրատարակել է 1892 թւին Կարիօի ազգային տպարանում մի ընդարձակ տեղեկագիր, որ պարունակում է այդ թանգարանի պատմութիւնը և նրա մէջ ցոյց տրված հազարաւոր կտրուկների, արձանների, մուսիաների, ոսկեայ, արծաթեայ և այլ իրերի ցուցակը: Առանց այդ ցուցակի անհնարին է այդ 91 ահագին դահլիճների լարիւրօնթօսի մէջ գլուխ հանել:

Մենք կը նկարագրենք միւղէօնը և կը ծանօթացնենք ընթերցողներին նրա պատմութեան հետ այդ ցուցակի համաձայն:

Իջնելով միջնաբերդից կառքերով, անցնելով անդլիակած դօրանոցների, խեղիվի պալատի առաջից և մի քանի բոպէ կանգ առնելով Իբրահիմ փաշա-խեղիվի արձանը տեսնելու համար, մենք հասանք Նիլ, Նեղոս կամ հզիպտացիների նուիրական «Նարօ» գետի վրայով ձգված կամուրջին, որ մի հիանալի շինութիւն է, բարձր ցանկապատերով, երկու ծայրերին իբրև պահապան գրած 4 սֆինքսներով: Այդ կամուրջը շարժական է և նաւերը անցնելիս բարձրանում է մէջտեղից շղթաներով (Նեղոսի վրա նաւեր են շրջում): Այդ կամուրջի վրայից ես առաջին անգամ տեսայ հռչակաւոր պատմական գետը: Ես բոլորովին ուրիշ բան էի սպասում: Իմ առաջն էր մի գետ, պղտոր, կարմրաւուն ջրով և համար-

ձայ անշարժ, կարծէք ճահիճ լինէր. գորտերի
դրո՞ւոցից մարգու ակունջները կարող են խլանալ:
Քայց այդ՝ տեսքով տգեղ, պղտոր և ճահճահճան
գետը համարվում է և է «երկրի հայրը», Եգիպտոս
սի տեղծողը և կերակրողը: Նա է միայն պա-
րարտացնում հողը, նրա շնորհով միայն աճում
են և կենդանութիւն առնում բոյսերը, կենդանի-
ները և մարդիկ, և եթէ նա չը լինէր, Եգիպտոսը
վաղուց անապատ դարձած կը լինէր, նոյնչափ
մեռած և անբերրի, ինչպէս շրջակայ լեռները:

Եթէ ասում ենք, որ Նեղոսը ոչ միայն Եգիպ-
տոսի կերակրողն է, այլ և ստեղծողը, այդ նրա
կամար, որ Նեղոսի՝ հովիտը կամ Եգիպտոսի ազ-
խարհը առաջ մի քարքարոտ հովիտ է եղել տ-
ռանց բուսականութեան հետքի, ուրեմն և մի
անմարդաբնակ երկիր: Հազարաւոր տարիների
ընթացքում Նեղոսը բերում էր Եթովպայից, որի
տարերից առնում է իր սկիզբը, կոշտ աւազ, բայց
մի օր, վերջապէս, նա բերաւ կաւ, երևան եկաւ
պտղաբեր հող, բուսական կեանք, յայտնուեցին
կենդանիներ և անապատը լցուեց մարդիկներով
և այդ մարդիկ ստեղծեցին մի ինքնուրոյն, զար-
մանքի արժանի քաղաքակրթութիւն, որին շատ
և շատ ազգեր կարող են նախանձել,

Նեղոս գետն ամեն տարի յորդանալով բարձ-
րանում է, գուրս է դալիս փիերից և ծածկում է
երկիրը ջրով, որից յետոյ թողնում է մի շերտ
կամ խաւ, որ և Եգիպտոսի արգաւանդութեան
խեղական պատճառն է, այն արգաւանդութեան
որ բնակիչներին տարին երկու անգամ եռննձ

է տալիս:

Այդ կաւային խաւերը զանազան գիտնական գիւտերի առիթ են լինում: Պեղելով հին արձանները և կոթողները, գիտնականները գտել են որ ամեն տարի մնացող կաւը բարձրացնում է երկրի յակերևոյթը մի դիւյժով քսան տարուան ընթացքում: Իրա հիման վրա գտել են և անսխալ կերպով հաշուել, որ Եգիպտոսի նախկին մայրաքաղաք Թէբէի հիմնայատակը ծածկուել է կաւով 324 դիւյժ բարձրութեամբ, ուրեմն դրա համար հարկաւոր է եղել $324 \times 20 = 6480$ տարի, որից կարող ենք եզրակացնել, որ Թէբէ շինված է Քրիստոսից մօտ 4620 տարի առաջ (այս հաշիւը արուել է 1862 թւին):

Ամբողջ եգիպտոսում միակ մի գետ կայ,— Նեղոսը ուստի և եգիպտացիների գործածած ջուրը թէ խմելու, թէ լուացուելու, թէ եփելու և թէ դաշտերը ոռոգելու համար նրա ջուրն է, որովհետև անթիւ ջրանցքները, հորերը, առունները, քոլորը իրանց ջուրը վեր են առնում Նեղոսից: Հասկանալի է որ այդ գետի ամեն մի քայլին, ամեն մի ընթացքին սրտի տրոփիւնով են հետևում, որովհետև եթէ Նեղոսի յորդութիւնը ուշացաւ մի փոքր ժամանակ, կամ եթէ մի տարի տեղի չունենայ— այդ կը նշանակէ ամբողջ երկիրը մասնել կորստեան: Եթէ պատահի մի օր, որ Նեղոս գետը չուանայ, տարակոյս չ'կայ որ ամբողջ վերին, միջին և ստորին Եգիպտոսը կը վերածուի մի անմարդաբնակ անապատի և կեանքը կը վերանայ այնտեղից:

Հասկանալի է այժմ թէ ինչու Եգիպտացին նուիրական է համարում իր «Յարօն», ինչու նա նրան համարեայ աստուածային պատիւներ է տալիս և ինչու նա կարծում է, թէ աշխարհումս Յարօից գեղեցիկ գետ չը կայ: Նա նրան անուանում է «հայր հայրենիքի», «դայեակ», «օրհնեալ»։ Նա երկրային ամենամեծ երանութիւն է համարում—արմաւենիների ստուերում, նուիրական Յարօի ափին հանգստանայ և ծծել նրա քաղցր ջուրը: Եգիպտացու համար աշխարհումս Նեղոսի ջրից աւելի քաղցր, մեղմ ջուր չկայ և երբ եգիպտացի նշանածը կամենում է քնքշութիւն ցոյց տալ իր հարմնացուին, նրան ասում է. «քո շրթուները քաղցր են, ինչպէս Յարօի ջուրը»:

Նեղոսի ջուրը սովորաբար վճիտ է, բայց երբ յորգանում է, երբ անձրևները սկսում են Եթովպայի սարերի վրայ և հեղեղները թափվում են գետի մէջ, ջուրը պղտորվում է և ստանում է զանազան խառնուրդներից կարմրաւուն գոյն: Երբ ամբողջ գետինը ծածկվում է ջրով, դուք նկատում էք ամեն տեղ միայն ջուր, որի միջից բարձրանում են քաղաքներ, գիւղեր, մզկիթներ, պաշարներ, այգիներ և այլն: Այդ ժամանակ ամբողջ Եգիպտոսի համար տօն է, որովհետև այժմ հողը կը պարարտանայ և նա կը վայելի նրա աւատ պտուղը: Ամեն տեղ ցնծութիւն է և մարդիկ միմեանց հանդիպելիս, իբրև աւետիս, ասում են ողջոյնի տեղ. «Նիլը բարձրանում է», կամ փոխանակ առողջութիւնը հարցնելու, հարցնում են. «քանի ոտ է բարձրացել»:

Նեղոսի յորդանալը. սկսվում է ապրիլին, իւր ասիերից դուրս է գալիս և հեղեղում ամբողջ երկիրը յուլիս—սեպտեմբերին, իսկ իջնում է նոյեմբերին և իւր նախկին ասիերի մէջ սահմանափակվում: Երբ ջուրը քաշվում է, հողը չորանում է մի օտարօտի տեսարան է ներկայացնում:

Միլիոնաւոր գորտեր, խլէզներ, փոքր օձեր և մանաւանդ ձկներ փռուած են գետնի վրայ: Ռրջան որ եգիպտացիները ուտում են այդ կենդանիներին յորդութեան ժամանակ, բայց դարձեալ չեն կարողանում սպանել բոլորը: Եւ Եգիպտոսը զուցէ սարսափելի վարակիչ հիւանդութիւնների զոհ դառնար այդ կենդանիների նեխութիւնից, եթէ Չայլաֆները և իբիսները, այդ նոյնպէս նուիրական համարված թռչունները, վրայ չը թափէին և չ'ոչնչացնէին բոլորը:

Ափսոս միայն որ մենք չկարողացանք կենդանի կոկորդիլոս տեսնել: Որքան օգտակար կը լինէր. այն ժամանակ մի գաղափար կը կազմէինք թէ երբ մեր ազգասէրներից մի քանիսը կոկորդիլոսի արտասուք են թափում ազդի և եկեկեցու կորուստը ողբալով՝ մտրակող, մաքրող Չայլաֆների և իբիսների ձեռքից, որքան նման են լինում նրանք կոկորդիլոսին, որ ահագին բերանը բաց արած, զոհի է սպասում:

VII.

Ահա Կարբէի հոչակաւոր միւլէօնի ծագման և բարգաւաճման պատմութիւնը:

Դարերի ընթացքում հին Եգիպտոսի պան-

Ճաշի կուլտուրայի յիշատակները կործանվում,
ոչնչացնվում էին: Երբ Եգիպտոսը կարցրեց իր
անկախութիւնը, երբ Նեղոսի գելտայում սկսեցին
տիրապետել արաբները, սարացիները՝ և հետզհե-
տէ կորաւ, անհետացաւ եգիպտական ազգը, լե-
զուն, կուլտուրան, երբ գիտութիւնը և արուեստ-
ները նոյնպէս անհետացին, երկիրը սկսեց անա-
պատանալ, սկսվեց մի սարսափելի աւերմունք:
Մի կողմից մարդկային ձեռքը, տգիտութեան,
բարբարոսութեան, ֆանատիկոսութեան ձեռքը
սկսեց կործանել ամեն ինչ, և մեհանները,
և օբէլիսկները, և արձանները և բոլոր հրա-
շակերտները, միւս կողմից աւազը ծածկեց, իր
տակով արաւ ամբողջ քաղաքներ, հազարա-
ւոր կոթողներ: կործանման, աւերման առա-
ջին նշանը տուեց քրիստոնէութիւնը. Թէոդորոս
Մեծ կայսրի ժամանակ, որ կամենում էր եգիպ-
տացիներին բռնի կերպով դաւանել տալ քրիս-
տոնէութիւնը, միայն 14,000 արձան կործանեցին:
Մարաբները և սարացիները քարեղէն և ոսկեղէն
գտնելու յուսով խուզարկում էին մինչև անգամ
պիրամիդները, հանում էին փարաւոնների մու-
միաները և զարդերը կողոպտելուց յետոյ այրում
էին: Երբ նախկին եգիպտական ազգը բոլորովին
անհետացաւ, կորաւ նաև նրա լեզուն և գրու-
թիւնը և այլևս ոչ ոք չը գիտէր կարդալ մեհե-
նական գրութիւններ. այդ ազգին յաջորդող ֆել-
չահը ոչ մի գաղափար չունենալով իր բնակած
երկրի պատմութեան մասին, սկսեց պեղումներ
անել, մումիաները գործածել իբրև վառելիք և

օբէլիսկները, սֆինքսները՝ իբրև շինութեան նիւթ: Եւ այդպէս ամեն բան կործանվեց, աւերվեց. ամենագեղեցիկ դամբարանները ջարդ ու փշուր եղան. մուսիաները կացիններով կտորտվեցին, որպէս զի նրանց միջից հանվեն զանազան զարդեր, մատանիներ, ապարանջաններ և այլն: Սկսվեց մի մեծ առևտուր եւրոպացիների հետ, որոնք աշխատում էին արտահանել հնութիւնները և նրանցով զարդարել իրանց թանգարանները:

Վերջապէս Ֆրանսիացիները ստիպեցին 1868 թւին Եգիպտոսի այն ժամանակի խզիվ Սայիդ-փաշային զերջ դնել այդ վանդալականութեան: Սայիդ-փաշան զճռեց փրկել իր երկրի հնութիւններից, ինչ որ դեռ կարելի էր փրկել: Նա կառուցեց Կահիրօի Բուլաղ կոչված նաւահանգստում մի բլրեղեայ պալատ բաղկացած 7 մեծ գալէրեաններից, որտեղ պէտք է փոխադրվէին բոլոր գտնվող հնութիւնները: Պեղումների գործը նա յանձնեց Ֆրանսիացի յայտնի գիտնական-եգիպտաաբան Մարիէտտին, որին տուեց անսահման իշխանութիւն պատժելու, բանդարկելու նրան, ով կը համարձակվէր որ և է պեղում անել ամբողջ Եգիպտոսում, և իրաւունք՝ ծախսելու ինչքան գումար պէտք լինի, միայն թէ փրկի Եգիպտոսի մնացած հնութիւնները կորստից:

Եւ Մարիէտտ, որ ստացաւ «բէյ» տիտղոսք, ինչպէս և նրա յաջորդ նոյնպէս հռչակաւոր գիտնական և եգիպտաբան Մասպէրօն ամենալայն կերպով օգտուեցին Սայիդ-փաշայի և յետոյ Իգմայիլ-փաշայի տուած լիազօրութիւնից: Միայն

1858—1861 թ. միջոցում 18,009 առարկաներ ձեռք բերուեցան: Ահագին պեղումներ սկսուեցին ամբողջ երկրում, ամբողջ սիւներ, կոթողներ, դամբարաններ փոխադրվեցին, ամբողջ քաղաքներ բացուեցին աւազի տակից և շուտով նախկին Եգիպտոսը, պատմական Կեմիս ցոյց տուեց իր կերպարանքը, այնպէս ինչպէս էր 6, 4, 3 հազար տարի առաջ:

Մական Բուլաղի միւղէօնը արդէն շատ փոքր էր բոլոր գիւտերը պարունակելու համար, ուստի և հարց ծագեց մի նոր աւելի ընդածակ շինութիւն կառուցանելու եգիպտական թանգարանի համար և ահա Թէվֆիկ փաշայ խղիվը 1890 թւին յայտնեց, որ իր Գիզէի հոյակապ պալատը ընծայում է այդ նպատակի համար: 1890 թւին Մասսէրօի յաջորդ և թանգարանի վերատեսուչ Գրէթօն՝ Բուլաղից փոխադրել տուեց բոլոր հնութիւնները Գիզէի պալատը, իսկ թանգարանի բացումը պաշտօնապէս տեղի ունեցաւ այժմեան խորվ Աբբաս փաշայի ձեռքով, 1892-ին և հնութիւնները տեղափոխվեցին նրա 91 ընդարձակ դահլիճների մէջ:

Այդ հուշակաւոր ժողովածուների կազմութեան վրա աշխատել է գիտնականների ամբողջ մի խումբ, բայց նրա ամենազլխաւոր աշխատողները եղել Մարիէս և Մասսէրօ:

Մարիէտտը եղել է թանգարանի բուն հիմնադիրը, ստեղծողը. գիտութիւնը նրան է պարտական Նեղոսի հովտի ամենակարեւոր շինութիւնների գիւտի և յիշատակների պահպանութեան

համար: Մասպէրօն օժտել է Եգիպտոսի արխէօ-
լօգիան այն գիտնական մէթոդով, որ այսօր ու-
նի նա. նա է կազմել դասաւորութիւնը, նա է
կարստացրել միւզէօնը իր արած թագաւորական
մուսիաների աննման գիւտով և բաղմաթիւ գիտ-
նական աշխատութիւններով ու բացատրութիւն-
ներով:

Մարիէտտ ցանկութիւն էր յայտնել իր
մահից առաջ, որ իւր նշխարները թաղուեն իր
հիմնած միւզէօնի մօտ: Նա կամենում էր լինել իր
գտած գանձերի յաւիտենական պահապանը և նրա
վերջին կամքը սրբութեամբ կատարել է երախ-
տագէտ եգիպտական կառավարութիւնը, փոխա-
դրելով նրա նշխարները Գիզէի պալատը, որի
բակում բարձրանում է նրա հոյակապ դամբա-
րանը:

Գիզէի թանգարանի 91 դահլիճներում բոլոր
գանձերը դասաւորված են Մասպէրօի մշակած
գիտնական մէթօդի համաձայն: Այդ մէթօդը հիմ-
նուած է Եգիպտոսի պատմական շրջանների դա-
սակարգութեան վրա: Եգիպտոսի պատմութիւնը
բաժանված է 5 շրջանների: Առաջինը ամփոփում
է իր մէջ Հիմ Տեռուքիւհը իր I—X հարստութիւն-
ներով (գիտաստիաններով), որին վերաբերում է
Մէմֆիսի հիմնարկութիւնը Մէնէսի ձեռքով, Քրիս-
տոսից 500 տարի առաջ. մեծ պիրամիդների շի-
նութիւնը՝ Ք. 4000 տարի առաջ: Այդ շրջանի
առաջին հարստութիւնների հնութիւնը հաշվում
են 6 և մինչև անգամ 7 հազար տարի: Այդ մա-
մանակ քաղաքակրթութեան կենտրոնը Մէմֆիսն

էր և այդ ժամանակ շինված էին կամ շինվում էին մեծ պիրամիդները, «Փինբար» և Գրզէի առճարը:

Միջին սեռութիւնք XI—XVII հարստութիւններով, 2600 տարի Ք. առաջ: Այդ ժամանակ շինուածցին Լաբիւրինթոսը և Մէտիսի հուշակաւոր շէնքը: Այդ շրջանը ժամահակակից է Աբրահամ նահապետին, քառասուն դար առաջ մեղանից: Թէ՛րէն էր Եգիպտոսի այդ ժամանակուայ մայրաքաղաքը. արուեստները շատ ծաղկած էին:

Նոր սեռութիւնք. XVIII—XXXI հարստութիւններով 1700-ից մինչև 332 տարի առաջ Քրիստոսից: Այդ ժամանակ Եգիպտոսը հասաւ իր զօրութեան գագաթնակէտին: Հուշակաւոր Բամզէնները կամ Սեզոստրիսները (XIX հարստութիւն), որոնք նուաճեցին Սիրիան, Փիւնիկիան, Եթովպիան: Այդ ժամանակ կառուցվեցին Եգիպտոսի ամենագեղեցիկ ձեռակերտները: Հրէաները այդ ժամանակ դուրս եկան Եգիպտոսից: XX հարստութեան օրով տեղի ունեցաւ Տրոյական պատերազմը, 3000 տարի մեղանից առաջ: XXI հարստութեան Թազաւորները դաշն կապեցին Սոդոմոն իմաստունի հետ: Թազաւորում են Մամոն բարբարի սերունդները: XXVI-րդ հարստութեան Թազաւորներից մինը, Նէխամոն, ձեռնարկեց միացնել Նեղոս գետը Գարմիր ծովի հետ և ինչպէս պատճում է Հերոփոսը, մի նաւարկութիւն արաւ Աֆրիկայի շուրջը, Կարմիր ծովից մինչև Միջերկրականը, Բարեյուսոյ Հրուանդանի վրայով: Սահայն 527 տարի Ք. ա. պարսիկները տիրեցին

Եզիպտոսին, իսկ պարսկական տիրապետութեան
յաջորդեց մակեդոնական—յունական իշխանու-
թիւնը:

Յունական երջան—Պաղոմէոսները—332-ից
մինչև 30 տ. Ք. ա. Մեծն Աղէքսանդրը հիմնեց
Աղէքսանդրիա քաղաքը, որ շուտով ծաղկեց: Պա-
ղոմէական թագաւորները կառուցանում են վերին
Եզիպտոսում Դէնդարէհի, Էսնեհի, Էդֆսի և Տի-
լէի տաճարները: Կլէօպատրա թագուհու մահից
յետոյ (30 տ. Ք. ա.) Եզիպտոսը անցնում է Հռո-
մէական իշխանութեան ներքոյ:

Հռոմեական երջան—Քրիստոնէութիւնը և ա-
րաբական նուաճումը 30 տ. Ք. ա. և մինչև 640
տ. յետոյ: Այդ շրջանում է կատարվում Յիսուսի
Եզիպտոս գալը, քրիստոնէութեան առաջադիմու-
թիւնը, Թէբայիան անապատի ճգնաւորական
կեանքը և ղպտական քաղաքակրթութեան զարգա-
ցումը, որին յաջորդում է արաբական քաղաքա-
կրթութիւնը:

Ահա Մասպէրօի մշակած այդ գիտնական—
պատմական շրջանների համաձայն և դասաւոր-
ված են 91 սրահներում Եզիպտոսի յիշատակները:

Պալատի ներքնայարկի 13 սրահներում ամ-
փոփված են Հին տէրութեան կամ առաջին հա-
րստութիւններին վերաբերեալ ժողովածունները:
Այդտեղ այցելուն ծանօթանում է յիսուն դար
մեզանից առաջ գոյութիւն ունեցող եզիպտական
արուեստի հրաշակերտների հետ:

Միջին տէրութեան ժողովածուները ամփոփ-
ված են 7 սրահներում (№ 14—21). 15-րդ սրահում

զրկած կայ քրմուհի Ամանդի մումիան. նա պառկած է և զմռսուած այն վիճակում, որի մէջ վրա է հասել մահը 5000 տարի մեզանից առաջ. այդ թուականն է կրում նրա դագաղի վրայ քանդակած մեհենական արձանագրութիւնը: Քրմուհու մատում կան արծաթէ մատանիներ, իսկ պարանոցին՝ ապակեայ մարգարիտի մանեակներ:

Նոր տէրութեան կամ XVIII—XXXI հարստութիւնների ժողովածուները ամփոփուած են 13 սրահներում (22—34): 26-րդ սրահում սև զբանխոյց մի կոթող կայ դրուած, որ գտնուել է Կարնակի պեղումների ժամանակ, որի վրա ամբողջ մի պօչմա կայ քանդակված—Թաթմէս III-րդ փարաւոնի աշխարհակալութիւնների գովասանքը. այդ պօչմաի մէջ ի միջի այլոց ասուած է և հետեւալը. «Ամսոն աստուածն է ասում Թութմէին: Ես եկայ. ես քեզ շնորհում եմ ջարդել արևելքի երկիրը. Փիւնիկէն և Կիպրոսը արհաւիրքի մէջ են. ես նրանց ցոյց եմ տալիս զո վեհափառութիւնդ: Ես եկայ, ես քեզ շնորհում եմ ջարդել այդ նաւահանգիստներում ապրող ժողովուրդները. Կիլիկիան արդէն դողում է զո զարհուրանքի առկ...»

Յունական և Հռոմէական շրջանի ժողովածուները ամփոփված են 14 սրահներում (35—48). այդտեղ կան բազմաթիւ հիէրոգլիֆներ. արձանները, ըստ մեծ մասին, շինված են սպիտակ մարմարիտից, կարմիր ու սև զբանխոյց, կարմիր պօրֆիրից: 41 և 42-րդ սրահների մէջ զետեղված են դպտական և քրիստոնէական արուեստների

աբասազրութիւնները, որոնք գրեթէ բարբաբասական են, դաժան, ի նկատի աւնենալով որ ճշտաւորական վարդապետութիւնը հաշածում էր գեղարուեստը: Այդ շրջանում ևս մուսիաներ զմայելու արհեստը գոյութիւն ունէր, ուստի և բազմաթիւ մուսիաներ գտնված են: Կան և քրիստոսեանների մուսիաներ:

Քսան և չորս սրահներ պալատի՝ վերի յարկում (49—72) պարունակում են իբրանց մէջ՝ ոչեղիպտական մօնումէնտներ, որոնք սակայն գրտնուած են Նգիպտոսի հողի վրա. կշիւներ և չափեր, ճարտարապետութեան, արդիւնագործութեան գործեր, կահ կարասիք, նկարչական քանդակագործական գործեր, պապիրուսի օօսւցազափ վրա գրուածներ, գրողների գործիքներ յուլյարկաւորութեան առարկաներ և պապիրուսներ, պատմական առարկաներ, կենդանիների մուսիաներ, հագուստ, ակննղէն և կրօնական առարկաներ:

57-րդ սրահում դրուած կան «մեռեալների գրքի» մի քանի օրինակները. այդ պապիրուսները գնում էին ննջեցեալների վրա այն նպատակով, որ առաջնորդեն նրանց անդր-գերեզմանաշին փորձութիւնների և Օզիրիսի մեռեալների 42 դատաւորների առաջ կրելի հարցաքննութեան ժամանակ. այդ մի տեսակ անցագիր էր: Նգիպտացիների հաւատով, մեռեալի հոգին կշովում էր աստուածային կշիւքով և հանգուցեալը պէտք է Օզիրիսի և դատաւորների առաջ կարդար իւր ներքողը, մի առ մի թուելով մեղքերը և յայանելով, որ ինքն այդ մեղքերը չէ գործել: Ահա ինչ

էր գրած այդ «մեռեալի գրքի» պապիրուսի վրայ:

«Ես ելրէք չեմ գործել որ և է խարէութիւն մարդկանց վերաբերմամբ. ես չեմ չարչարել այրի կնոջ. ես սուտ չեմ խօսել դատարանի առաջ. ինձ անծանօթ է սուտը: Ես մշակին սահմանած կարգից աւելի աշխատութիւն չեմ տուել. ես անհոգ ծոյլ չեմ եղել: Ես ստրուկին բաղցած չեմ թողել. ես լացացնել չեմ տուել. ես չեմ սպանել. ես դաւաճանութեամբ սպանութիւն չեմ հրամայել: Ես խարդախ վաստակ չեմ ունեցել. ես դաշտերում չեմ կեղեքել. ես կշեռքի չափսը չեմ խարդախել. ես չեմ խլել մանուկների բերանից կաթը. ես մաքուր եմ, ես մաքուր եմ, ես մաքուր եմ: Ես քաղցածին հաց եմ տուել, ծարաւին ջուր, մերկին հագուստ»:

Այս խօսքերը որ շատ պապիրուսների վրա գրված են, առիթ են տուել ենթադրելու, որ Յիսուսին ծանօթ էին եգիպտական պապիրուսները և Նա իր քարոզները քաղել է նրանցից:

73, 74, և 75-րդ սրահները պարունակում են բուսաբանական և հանքաբանական ժողովածուներ: Իսկ 76-91-րդ սրահները ամփոփում են իրանց մէջ պետական մուսիանները, որոնցից մի քանիսը այնքան թարմ անվթար են մնացել, որ կարծում էք թէ նոր են մեռել և զմուսվել: Այդտեղ են և Ամմոն քուրմ—թագաւորների մուսիանները: Արքայական մուսիանների սարկօֆագներից շատերն ծածկված են ոսկեայ թերթերով և պարունակում են գոհարեղէն:

Այդպէս է ընդհանուր գծերով Գիզէի թան-

գարանը. դրանք են ընդարձակ պալատի մէջ դիտեղծած ժողովածուները:

Ամբողջ 5 ժամ մենք պտտում էինք այդ պալատի մէջ և մեզ երևակայում էինք Եգիպտոսում, 4—5 հազար տարի առաջ ապրող մի աշխարհում:

Տպաւորութիւնը ամբողջացնելու համար մեզ ձևում էր միայն այցելել պարամիզները, այն է Քիզէի պիրամիդները, որոնք Կաիրէից հեռու են կէս ժամ կառքի ճանապարհով:

VIII.

Այն մագնիսը, որ աշխարհի ամեն անկիւններէից քաշում բերում է ամեն տարի հազարաւոր այցելուներ, ոչ պալատներն են, ոչ թանգարաններն, ոչ օբէլիսկները և ոչ Նեղոս գետը իր կողորգիլոսներով. այդ մագնիսը—պիրամիդներն են, վարդկային ձեռքով բարձրացրած այդ սարերը, որոնք 5000 տարիներից ի վեր իբրև հսկաներ տիրապետում են անապատի վրա: Թուով նրանք 42 հատ են՝ երջակայ աւազոտ անապատի մէջ բացձեւանում են դեպի երկինք, և իրանց չորս երեսներով նայում են գէպի աշխարհի չորս կողմը:

Այդ 42 պիրամիդները գտնվում են Եգիպտոսի զանազան տեղերում: Ամենահռչակաւորներն Քիզէի պիրամիդներն են, նախկին Մէմֆիսի փոռ, այժմեան Կաիրէից մի ժամ ճանապարհով, իսկ կառքով կէս ժամով հեռու. այգտեղ է հռչակաւոր Խէօպսի կամ Խուֆու փարաւոնի պիրամիդը, որի սառորոտում գտնվում է և մեծ սֆինգսը:

Սե անա կառքով դիմեցինք ողջոյն տալու աշխարհի այդ ամենահին կոթողներին, որոնք ոչնչից չեն վախենում, անխռով կանգնած են հրականների նման և անջատում են ծաղկեալ դաշար սնապատից, երոպական կուլտուրան—ափրիկական ամայութիւնից:

«Ամեն ըան վախում է ժամանակից, բայց ինքը ժամանակը վախում է պիրամիդներից» ասում է եգիպտական առածը, որ այդպիսի բանաստեղծական ոճով արտայայտում է պիրամիդների անկունութիւնը և աւերմունքին դիմանալը.

Բայց ինչի համար են ստեղծուած, ինչ էին ներկայացնում հին ժամանակ այդ հսկաները: Առաջ, շատ առաջ այնպէս էին բացատրում, թէ նրանք կառուցված են հացահատիկներ պահելու, կամ գիտութեան գանձերը կորստից ազատելու, կամ անապատի աւազների մէջ մոլորվածներին փարոս հանդիսանալու, կամ աստղագիտական դիտողութիւններ անելու համար, որովհետև նրանք չորս երեսանի են և ամեն մի երեսը խիստ ճշտութեամբ ուղղուած է գէպի աշխարհի մի կողմը՝ հիւսիս, հարաւ, արեւելք, արեւմուտք: Բայց յետոյ իմացուեց, որ դրանք ուրիշ բան չեն, եթէ ոչ դամբարաններ—փարաւոնների շիրիմներ: Փարաւոնները կամենալով որ իրենց գերեզմանները մինչև աշխարհի կատարածը անխախտ և անեղծ մնան, բարձրացրին այդ արուեստական սարերը, որպէսզի մահից յետոյ նրանց մէջ թաղուեն: Սե թաղուեցին. մուտքը ամենաճարպիկ կերպով փակվեց, այնպէս որ պապապ սերզւնդները ոչ մի

կասկած չունէին թէ կարելի է մտնել պիրամիդների մէջ, թէ այդտեղ ննջում են յաւիտենական քնով, սարսափելի ծանրութեան տակ ճնշուած հռչակաւոր փարաւոնները—Րամզէսները: Խուֆունքը: Բայց խեղճ փարաւոնները սխալուեցին իրանց հաշուի մէջ. 3—4 հազար ասորի նրանց յաւիտենական քունը ոչ ոք չը խանգարեց, բայց ահա Եգիպտոսի վրա իջաւ մորեխների մի աւերիչ գունդ, սարացիները, որոնք Քրիստոսի 800 թուականին էլ—Մամուն խալիֆայի ժամանակ, ողողելով երկիրը, սկսեցին որոնել և գտան Խէօպս կամ Խուֆու փարաւոնի դամբարանը ծածկող պիրամիդի մուտքը: Ազահ գայլերի նմաններս խուփեցին. գրանիտեան գերեզմանի մէջ ննջում էր 4000 տարիներից ի վեր Խուֆու փարաւոնը. մումիան, այն է զմուսած դիակը ծածկուած էր թանգազին գոհարներով. կուրծքի վրայ փայլում էին մանուշակա շորս ոգիների պատկերները ձուլածոյ ոսկուց. ճակատը զարդարված էր ձուլի մեծութեամբ կարմիր յակինթով: Խուժադուժ սարացիները խլեցին դադաղի միջից մումիան, յափշտակեցին ոսկէ պատկերները, գոհարները և ձուածե յակինթը, գետնի վրա ձգեցին մումիան և սկսեցին ոտներով կոխտտել և մոխիրը ցանել օդում: Այդպէս եղաւ Խուֆու մեծ փարաւոնի վերջը... Գրանիտեան, գերեզմանը դեռ այսօր ևս մնում է... դատարկ:

Ահա Խուֆուի կամ Խէօպսի այդ պիրամիդն էր որ գնացինք տեսնելու: Գիզէի միւզէօսից մինչև այդ պիրամիդի ստորոտը շինուած կայ մի ուղիղ

խճուղի, շրջապատված ակացիաներով, այնպէս որ ամբողջ ժամանակ կառքը կարծէք մի թանճրախիտ անապատի միջով էր գնում:

Հիւրանոցում, որտեղ մենք իջևանել էինք, մեզ առել էին, որ պիրամիդները և մանաւանդ սֆինքսը հրաշալի, զօրեղ տպաւորութիւն է թողնում երեկոյեան մթնշաղին. այդ պատճառով մենք ճանապարհ ընկանք ժամը 5-ին կէսօրից յետոյ: Առաջ, ճանապարհը երկար է եղել, որովհետև անցնում է եղել արաբական և բէզուլինական զեղանկար գիւղերի միջով, արմաւենու անտառների և դալարազարդ դաշտերի միջով, բայց այժմ ինչպէս ասացի, մի ուղիղ, լայն խճուղի կայ շինված, որը կիսով չափ կարճեցնում է ճանապարհը: Հազիւ քաղաքից դուրս էինք եկել, որ պիրամիդները սկսեցին երևալ և այնքան մօտ էին թւում մեզ, որ կարծում էինք, թէ հասել ենք, բայց մեր ընկերակիցները յայտնեցին, որ դեռ շատ ճանապարհ կայ. եթէ նրանք այդքան մօտ են երևում, պատճառը օդի արտակարգ թափանցութիւնն է:

Յանկարծ, դալարազարդ խճուղին վերջացաւ. վերջացաւ կուլտուրական երկիրը, սկսվեց աւազի ահազին տարածութիւնը, մենք մտնում էինք անապատի մէջ. մենք հասել էինք պիրամիդների ստորոտը: Այդ անապատի մէջ գծագրվում էին պիրամիդների եռանկիւնի ստուերագիծերը: Այդ միջոցին, կարծէք աւազի միջից դուրս պրծան և շրջապատեցին մեզ բազմաթիւ բէզուլին մանուկներ և սկսեցին աղաղակել, արտասանել զանազան քառեր, գրեթէ ևւրոպական բոլոր լեզուներով

Ֆրանսերէն, անգլիերէն, ռուսերէն, գերմաներէն, իտալերէն: Յայտնվեց, որ նրանք առաջարկում են մեզ վեր առնել իրանց իրրեռ ուղեցոյցներ. նրանք ապրում են մօտակայ մի գիւղում և նրանց միակ պարագմունքը այցելուներին ուղեցոյց լինելն է: Ամեն օր ուղեկցելով զանազան ազգութեան պատկանող եւրոպացիներին, նրանք սովորել են և մի քանի անհրաժեշտ բառեր: Այդ գրեթէ մերկ, ցնցոտիներ հագած, կեղտոտ մանուկ բէդուէրները ջայլամի արագութեամբ վազում էին աւազի վրայով, մինչ մեր ոտերը խրվում էին նրա մէջ մինչև ծնկները, նրանց ամեն մէկը ձեռքին բռնած ունէր մի կեղտոտ կաւէ ջրաման, որը երբեմն երբեմն դէմ էր անում մեզ և առաջարկում խմել Նիլի պղտոր ջրից: Ընտրելով մի երկու հոգի ուղեցոյց և հազիւ կարողանալով ազատվել միւսներից մի քանի սև փող տալով, մենք դիմում ենք առաջ, փորձում ենք նստել էշերի վրա, որ առաջարկում են մեզ մեր ուղեցոյցները, բայց տեսնելով որ էշի վրա նստած սուեկը դժուար է առաջ գնալ աւազի մէջ, իջնում ենք: Վերջապէս հասանք պիրամիդների ստերոտը. այդտեղ մեր առաջ կանգնած էր մի գեղեցիկ պալիլիօն—հիւրանոց, կառուցված և զարդարված հին եգիպտական և արաբական ճաշակով օրնաժաններով. մեզ պատմեցին, որ այդ շքեղ պալիլիօնը կառուցել է նախկին խեղդի Իսմայիլ փաշան ընդունելու համար Ֆրանսիական Յզէնի: հայտնուհուն Սուէզի ջրանցքի բացման ժամանակ: Այժմ պալիլիօնը վերածվել է մի անզգիտ

կան հիւրանոցի, որտեղ գալիս են ապրելու կամ հիւանդները, որոնք պէտք է ծծեն անապատի օդը կամ ճանապարհորդներ, որոնք կամենում են առաւօտեան հիւրանոցի տէրրասից դիտել պիրամիդները և սուրճ խմել: Այդ հիւրանոցը նոյնն է, ինչ որ մի ճոխ օազիս անապատի մէջ, որովհետև մեր չորս կողմը ամեն ինչ մերկ է, տխուր, և միապաղաղ—դեղնագոյն:

Մենք առաջանում ենք. պիրամիդները մեր աչքին մոխրագոյն են երևում. համնում ենք Խէօպսի պիրամիդի աստիճաններին. նրա գագաթը չէ երևում այլևս. նա թվում է իբրև մի ձուռձե սարակոյտ: Մի քիչ հեռու տեսնվում են Խէֆրէնի և Մէնկէրի պիրամիդները, որոնք աւելի փոքր են և աւելի կործանված. այնպէս որ թվում են աւերակների մի տձև կոյտ, մանաւանդ երեկոյեան դէմ, և ոչ մի շինութիւն:

Ամենքը լուռ են... ապշած. տիրում է գերեզմանային լուռութիւն չորս կողմը. չէ որ մենք գտնվում ենք գերեզմանների մէջ, հսկայական, վիթխարի գերեզմանների մէջ, գերեզմանների թագաւորութեան մէջ. փոքր և մեծ քարեր կուտակված են միմեանց վրա, ամեն տեղ երևում են կործանման հետքեր: Հզօր, ճնշող սաքսափեցնող ապաւորութիւն են թողնում քարերի այդ հսկայական դէզերը, կուտակված մէկ մէկու վրա մարդկանց ձեռքով: Դեռ հեռուից որքան որ մեծ, անագին էին թվում, բայց այժմ մօտում, ստորոտում տեսնում ես, որ հեռուից նկատածդ ոչինչ է. քաբէ հսկաները աւելի և աւելի են մեծանում աչ-

բիդ. նրանք հրէշներ են երևում, պատրաստ ջախ-
ջախելու, ոչնչացնելու քեզ:

Բայց պէտք է բարձրանալ այդ հսկայական
քարակոյտի գագաթի վրա, կամ ճիշդն ասած,
պէտք է մագլցել, որովհետև բարձրանալու հա-
մար աստիճաններ չը կան, այլ պէտք է բարձ-
րանալ այն դուրս ցցուած կողքերի բարերի վը-
րայով, որոնցից ամեն մէկը մարդկային հասակի
չափ բարձր է. այդպէս բարձրանալը անսովորնե-
րի համար շատ դժուար է, յոյնեցուցիչ և վտան-
գաւոր, բայց այդտեղ օգնում են արար ուղեցուց-
ները, որոնք ցատկում են իբրև վայրի կատուններ,
մագլցում են իբրև այծեր և թռչկոտում են մի
քարից միւսի վրա, իբրև կապիկներ, ամենին չը
յոգնելով և ծիծաղելով Ֆրէնգիի (հերոպացու)
վախկոտութեան և անվճռողականութեան վրա:
Այդ փոքրիկ բէդուին մարդ—կապիկները իրանց
ճարպիկութիւնը, ճկունութիւնը և հնարագիտու-
թիւնը հասցրել են այնպիսի կատարելագործու-
թեան, որ այցելուների հետ գրազ են գալիս թէ
Ց ըոպէում կը բարձրանան Խէօպսի պիրամիդի
գագաթը և կ'իջնեն. դուք չէք ուզում հաւատալ,
որովհետև այդ պիրամիդի բարձրութիւնը 514
Ֆրանքֆուտեան ֆուտ է, ամեն մի աստիճանը
կամ դուրս ցցված քարը մարդկային հասակի
բարձրութիւն ունի, բայց հանեցէք ժամացոյցը
և դիտեցէք. ճարպիկ բէդուինը անապասի գա-
ւաղը ձեր աչքի առաջ բարձրանում է գագաթը
և այնտեղից իջնում վագելով, կարծէք հարթ դաշ-
տի վրայով և ճիշդ Ց ըոպէն լրացած՝ գլուխ է

տալիս ձեզ և ձեռքը մեկնում բախշիշը սաանալու համար: Իսկ մենք գագաթը բարձրանալու և իջնելու համար, այն ևս ուղեցոյցների ձեռքերի օգնութեամբ, գործ դրինք ամբողջ $1\frac{1}{2}$ ժամ...:

Արիստակէս և Սարգիս սրբազանները, Եգիպտոսի առաջնորդ Գէորգ վարդապետը, Եփրեմ վարդապետը հրաժարվեցին բարձրանալ և նստելով պիրամիդի ներքևի աստիճանների վրա, սկսեցին գիտել այն շքեղ պանօրաման, որ բացվում էր այդտեղից—Կաիրօ քաղաքը իր մինարէներով և հոյակապ շինութիւններով, Նեղոս գետը, շրջակայ գիւղերը և կանաչազարդ դաշտերը, որովհետև այն տէրրասը, որ կազմում է Խէօպսի պիրամիդի ստորոտը, 140 ֆուտ բարձրութիւն ունի: Իսկ մենք Մեսրովք վարդապետը, Յ, Խաչատրեանը, և սկսեցինք կամաց-կամաց և հանդարտ բարձրանալ. որտեղ հսկայական քարերը շատ բարձր էին, բեզուխները մեր թևից բռնելով, քաշում էին դէպի վերև: Որքան շատ էինք բարձրանում, այնքան տարօրինակ, անսովոր զգացումով էինք համակվում. արեգակը, չընայելով որ արդէն մայր էր մտնում, իր կիզիչ ճառագայթներով խփում էր ուղիղ մեր գլխին. մեր շնչառութիւնը սկսում էր ընդհատվել. առարկաները, մարդիք ներքևում սկսում էին միկրօսկօպիական կերպարանք ստանալ, իսկ մեր գլխի վրա երևում էին քարեղէն հսկաներ: մէկը միւսից վիթխարի, մէկը միւսից գոռոզաբար բարձրացած դէպէ երկինք. բոլոր այդ հսկաները ձգտում են դէպի գագաթը, միանալու այդտեղ մի ներդաշնակ ամբողջութեան

մէջ... Ենշառութիւնից արիւնը խփում է քունքերի մէջ. հասել ենք արդէն կէսին, բայց երկկողից չենք կամենում ներքև նայել: Ուղեցոյցները խղճալով մեր վրա, առաջարկում են նստել և մի քիչ հանգստանալ. սիրտ եմ անում նայել ներքև. սքբազանները հազիւ երևում են իբրև սև կէտեր. ահագին հիւրանոցը մի ամենափոքր խրճիթի կերպարանք է ստացել: Բայց պէտք է շարունակել, հասնել գագաթը և մենք նորից բարձրանում ենք, այսինքն մեզ քաշելով բարձրացնում են բէդուինները. երբեմն երբեմն մեր ծարաւը զովացնում ենք նրանց կեղտոտ կաւէ ամանների պղտոր ջրից. գագաթը արդէն սկսում է երևալ, այժմ ոչ իբրև սրածայր, ինչպէս հեռուից տեսնվում էր, այլ իբրև մի հարթ մակարդակ: Օղբ վերին աստիճանի ջինջ, պայծառ էր, կատարեալ բիւրեղային. քաղաքի ուղղութեամբ նայելով, ճանապարհները թվում են իբրև երկար ժապաւէններ, իբրև մըրջիւնի շաւիղներ. տաճարների, պալատների, մի նարէնների միայն գծագրութիւններ են երևում, իսկ մարդիք ճանճեր են թվում: Մեզ արդէն ոչ միայն վերևից բէդուին ուղեցոյցները քաշում են, այլ և ետևից հրում, բարձրացնում են և անդադար կրկնում, որ յետ չը նայենք, որպէս զի գլխի պտոյտ չունենանք: Պատմում են որ շատ մարդիք, հասնելով գագաթը մի տարօրինակ, անբացատրելի զգացում և հոգեկան տրամադրութիւն են ունենում. նրանց մէջ յայտնվում է ցանկութիւն վերևից, գագաթից ցած ընկնել, ձգել իբրան, ինչպէս արել էր մի երկու տարի առաջ մի անգլի-

սեփան լորդ. համեկով զագաթը, նա հիացել, աղ-
շել, ընդհարմացծլ էր և գոռալով ճնաք բարեաւ,
ես գնում եմ՝ գահաւրժել էք իրան ցած և թագ-
ուել աւազի անհունութեան մէջ...:

Վերջապէս ահա և զագաթը: Որպիսի հիա-
նալի տեսարան, որպիսի հոգեկան զուարճութիւն,
բարձր և վեճ ներշնչումներ է զգում մարդս: Մենք
նայեւմ էինք զէպի քաղաքը. Նեղոսի ամբողջ հո-
վիտը, այն անսկարագրելի պտղաբեր հովիտը, որ
մի խիտ հակապատկեր է ներկայացնում յաւի-
տեանկան մեռած, չոր անապատի հետ, տարած-
ված է մեր առաջ. մի կաթիլ անձրև այդ հովտի
վրա և իսկոյն ճոխ, փարթամ բուսականութիւն.
Իսկոյն ետում, զեռում է կեանքը: Բայց նայենք
մեր յետև, զէպի արևմուտք. այդտեղ ամեն բան
լերկ է, չոր, մերկ անապատ. այդտեղ չը կայ ոչ
մի կեանք. այդտեղ միայն աւազ է և երկինք.
այդտեղ անպատմելի մեռելութիւն է, «այնպիսի
զարհուրելի մեռելութիւն—ինչպէս ասում է հըռ-
չակաւոր գրող Սէնկէվիչը—որի մասին մինչև
այսօր մարդ ոչ մի գաղափար չէր կարող ունե-
նալ: Իս անշարժութեան, թմրութեան աշխարհն
է. այդտեղ ապրում է միայն այն, ինչ որ կապ
ունի մահուան հետ, անսովոր սարսափը, զարհու-
րելի հանգստութիւնը, ահուելի թախիծը, որ տի-
քում է մարդու հոգու վրա անապատի խորքերից
և լցնում է նրան յուզմունքով ու վախով...:

Արդէն երեկոյ է. մենք, նստած Խէօպսի պի-
թամիզի գագաթի վրա, ակնապիշ, ապշած, հիա-
ցած, լռու, մտախոհ դիմում ենք. մոռացած մեք

չըջապատը, ներկան, մտքով սլանալով ապրում ենք անցեալում: Մեր առաջն է հրաշքների աշխարհը, հին իմաստութեան, արուեստի և բարքերի աշխարհը. մեր առաջից անցնում է չոքս հազար, հինգ հազար տարուայ պատմութիւնը. այնտեղ, ներքեւում պատկերանում է Մէմֆիս հռչակաւոր քաղաքը. մեր յիշողութեան մէջ կենտրոնանում են Մեծ Սէզոստրիսը, Պսամէտիսը, Թութմէս փարաւոնը, Մովսէս Մարգարէն, որ իր հրաշքներով ազատում է հրէական ազգը, առաջնորդում նրան անապատի միջով դէպի աւետեաց երկիրը...:

Ով գիտէ որքան ժամանակ կը տևէին այն մտածմունքները, որոնք մեզ տարել հասցնում էին պատմութեան ամենախոր անկիւնները, եթէ մեր ուղեցոյցները իրանց ձայներով, աղաղակներով չը յիշեցնէին մեզ, որ իջնելու ժամանակ է և չը տային մեզ մուրճեր, որպէս զի մենք մի մի կտոր քար կտարելով վեր առնէինք մեզ հետ իբրև յիշատակ. թափոտված քարերը ցոյց էին տալիս, որ մուրճը եռանդուն կերպով գործել է, որ ամեն մի այցելու անհրաժեշտ է համարել իր ձեռքով կտարել մի կտոր և հետը տանել իր երկիրը. գուցէ հազարաւոր տարիներ այդպէս շարունակվել է, գուցէ այսուհետև հազար տարի ևս այդ շարունակվի, բայց դրանով թէօպսի կառուցած հսկայական դամբարանը ոչնչով չի փոխվի, նրա վիթխարի մարմնի ծանրութիւնը ոչնչով չի պակասի...:

Եւ որպիսի սարսափելի քարակոյտ, որքան քարեղէն նիւթ դամբարանների համար: Խուֆուի

կամ Սէօպս փարաւոնի մեծ պիրամիդը երբ դեռ բոլորովին անեղծ էր 450 ոտ կամ 152 մէտր բարձրութիւն ունէր և շինված է մի աւազային տէրրասի վրա, որի բարձրութիւնը ծովի մակերևոյթից 140 ֆուտ է: Եւրոպայի ամենաբարձր շինութիւնները, աշտարակները, տաճարները, հին և նոր աշխարհի ամենաբարձր մօնէմէտները ոչինչ են մեծ պիրամիդի առաջ. քրիստոնէական ամենամեծ եկեղեցին, Հոօմի Ս. Պետրոսի տաճարը կարելի է տեղաւորել մեծ պիրամիդի մէջ, առանց որ և է իր ծայրով դիպչէր նրա որևէ կողմին: Բայց Սէօպս փարաւոնի կառուցած այդ արուեստական սարի միայն բարձրութիւնը չէ, որ ապշեցնում է մեզ. ապշեցնողը նրա հրէշաւոր կոյտը, զանգուածն է: Նա բռնում է մի տարածութիւն 669,124 ֆրանք ֆուտեան քառակուսի ֆուտ և նրա ծաւալը հաւասար է հարիւր ասուն եւ չորս միլիօն վեց հարիւր քառասուն երեք հազար երկու հարիւր քառասուն եւ հինգ Յրանգ-Ֆուսեան խորանարդ ֆուտի, կամ աւելի հասկանալի չափով, այն կոյտերը, որոնցից նա բաղկացած է, կազմում են 75 միլիօն խորանարդ ոտի մի սարսախելի կոյտ, որը կարող է նիւթ հայթհայթել այնպիսի մի պատի շինութեան համար, որ ունենար 6 ոտ բարձրութիւն և 1000 մղոն երկարութիւն: Ամբողջ քաղաքներ կարելի էր շինել այդ նիւթից. հաշվել են, որ այդ քարէկոյտերից կարելի է շինել մի պատ, մարդու հասակի բարձրութեամբ, Յրանսիայի չորս կողմով կամ ամբողջ աֆրիկական ցամաքի և կամ Անգլիայից

Ամերիկա երկարութեամբ:

Երևակայեցէք, թէ՛ որքան մեծ և ահապի՛ք աշխատութիւն պէտք էր այդքան քարեր հետու առդերից, Նեղոս գետի վրայով փոխադրելու համար: Այդ քարերը կոտորվում էին արեւելեան կողմի սարերում և մինչև այսօր էլ յայտնի է այդ տեղը: Հարիւր հազարաւոր հոգիներ ամբողջ տարիներ զբաղված էին այդ քարերը տաշելով, տեղափոխելով նրանց և միմեանց վրա դնելով: Ամբողջ 10 տարի երկու հարիւր հազար ձեռքեր կառուցանում էին մի շեղ աւազէ ամբարտակ, որպէսզի կարողանան նրա վրայով քաշել քարերը տէրբասի վրա. այդ ամբարտակը պէտք է և երկար լինէր և լայն, որպէս զի հազարաւոր լանւորհներ կարողանային իրանց շալակներով ազատութեամբ բարձրանալ և իջնել: Եւ երբ ամբարտակը պատրաստ էր, նորից հարիւր հազար մարդ, որ ամեն երեք ամիսը մի անգամ փոխվում էր, սկսեց կանգնեցնել պիրամիդը և գործ դրվեց դրա վրա ամբողջ 20 տարի: Ուրեմն երևակայեցէք, թէ ինչ պէտք է լինի, երբ հարիւր հազար հոգի ամբողջ երեսուն տարի զբաղված են մի շինութիւն կառուցանելով: Սեղճ ժողովուրդ, խեղճ մշակներ. նրանց ստիպում էին զբաստի նման բանել, որպէս զի իէօպոս*) թագաւորը օւնկենայ իր համար մի մըշտնջինաւոր դամբարան...: Բայց չէ որ նա զուր տեղ աշխատեց. այսօր այդ դամբարանը գատարկ

*) Այս սեղեկութիւնները մինք քաղում ենք Օպպէլի հնչակաւոր աշխատութիւնից «Уведса древней страны египтских» վերնագրով С. II. В. 1868.

է, թէև նա դիմադրել է ժամանակին, թէև 4—5 հազար տարի կանգնած է մնացել և գուցէ դեռ մի քանի հազար տարի էլ կանգուն մնայ:

Խէօպսի պիրամիդը սկզբում բաղկացած է եղել 205 շերտերից. ամեն մէկ շերտը $3\frac{1}{2}$ ֆր. Փուտ հաստութեամբ, բայց այժմ վերևի երկու շերտը քանդված են և մնում է 203 շերտ: Բոլոր քարերը կամ վիմատախապակները խնամքով տաշուած են և այնպէս են հազցրված և դրված միմիանց վրա, որ անհնարին է տեղից շարժել կամ միմեանց շփվելը. այդ քարերը չէին կարող ենթարկվել օդի ազդեցութեան և հողմահարվել, որովհետև ամբողջ պիրամիդը ներքևից մինչև վերև յղկված գրանիտով ծածկված է եղել: Այդ է պատճառը, որ նա այնքան երկար ժամանակ կարողացել է դիմանալ, բայց երբ արաբները սկսեցին պոկել, քանդել, մերկացնել նրան իր գրանիտային ծածկոցից, և գործածել իրանց քաղաքների, գիւղերի և տների շինութեան համար, պիրամիդները ենթարկվեցին օդի և ժամանակի ազդեցութեան և սկսեցին աւերվել, թէև, կրկնում ենք, դեռ շատ և շատ երկար տարիներ են պէտք, որ նրանք կարողանան բոլորովին քանդուել և անհետանալ: Միայն փոքր պիրամիդներն են աւերակների կոյտեր ներկայացնում այսօր, իսկ մեծերը դեռ յազթական կերպով և հպարտութեամբ տիրում են անապատի վրա:

Վերջապէս ահա և ստորտաը. եպիսկոպոսները արդէն տրտնջում են, որ այսքան ուշաւանք. դեռ մի քանի տեղեր կայ այցելելու, դեռ

պատկերահանը սպասում է մեր խմբական լուսանկարը հանելու մեծ Մֆինքսի մօտ, պիրամիդի ստորոտում: Ուրոշում ենք չը մտնել պիրամիդի ներսը, որովհետև այդ այցելութիւնը երկար ժամանակ կը խլի. արդէն երեկոյ է, այլ շտապում ենք տեսնել Մֆինքսը և նրա մօտի հին տաճարի աւերակները:

IX.

Խէօպսի պիրամիդից մի քանի քայլ հեռու կամ աւելի ճիշդն ասած Գիզէի երեք պիրամիդների ստորոտում գտնվում է մի հսկայական ժայռային քանդակ, որը հեռուից երևում է իբրև մի մութ բիծ, բայց մօտիկից ներկայանում է իբրև կէս—մարդ և կէս—առիւծ: Դա մի հսկայական ժայռ է, որին բնութիւնը իր անբացատրելի խաղով տուել է սֆինքսի (կիսա—մարդ կիսա—առիւծի) ձևը և յետոյ եգիպտացիները քանդակագործել են նրա համար գլուխ կարմիր գրանիտից: Մֆինքսը եգիպտական ամենահին աստուածութիւններից մէկն է ներկայացնում. նա մօտ 90 ոտք երկարութիւն ունի և 74 ոտք բարձրութիւն, նրա գլուխը՝ կզակից սկսած մինչև գագաթը—26 ոտք է: Երկար ժամանակ նա թաղուած է եղել ամբողջովին աւազի մէջ և Մարիէտտի ձեռքով ազատուելով աւազից, երևան է եկել. այժմ ևս նա թաղուած է կիսովին աւազի մէջ և միայն նրա վիթխարի գլուխը բարձրանում է անապատի վրա բարձր և խորհրդաւոր, իսկ թաթերը հազիւ են նկատվում: Նրա հսկայական դէմքը, ինչպէս շատ

ճիշդ նկատում է Ֆրանսիացի գիտնական Ամպէ-
րը, մի հրաշալի, զարմանալի ազդեցութիւն է
գործում. այդ դէմքը կարծես մի յաւիտենական
տեսիլք է. քարէ ուրուականը կարծես ուշադրու-
թեամբ նայում և լսում է: Նրա մեծ ականջը
կարծես հաւաքում է անցեալի ձայները, իսկ դէ-
պի արևելք ուղղած աչքերը կարծես դիտում է
ապագան. նրա նայուածքը այնպիսի խորութիւն
և ճշմարտութիւն է պարունակում, որ կախար-
դում է նայողին: Այդ կէս-արձան, կէս-սար հսկայի
դէմքի վրա մի եզակի վեհութիւն է երևում, մի
մեծ պայծառութիւն և մինչև անգամ մի տեսակ
քնքշութիւն:

Տեղացիները նրան կոչում են «Բէլ—խիտ»
(սրտում աչք ունեցող, արթուն պահապան) և
կարծում են, որ նա նստած է անապատում՝ պլտ-
ղաբեր հողը նրա դէմ պաշտպանելու և իր կա-
խարդական ոյժով չար ուրիշները հալածելու համար:
Հին եգիպտացիները նրան համարում էին աստուա-
ծութիւն. նա գտնվում է այդտեղ շատ վաղուց, նոյն
իսկ պիրամիդներից առաջ) և նրա մէջ տեսնում
էին «Բա» արեգակի մարմնացումը իր ծագման և
կենարար ֆազիսում: Նրա կողքին գտնվում են
դամբարանները, իսկ նա անմահութեան հանգա-
նակն է: Նրա հսկայական թաթերի մէջ ամենա-
հին ժամանակներից սկսած զոհ մատուցանելու
սեղան էր հաստատված. բայց որովհետև անապա-
տի փոթորիկը շարունակ ծածկում էր այդ սեղանը
աւազով, ուստի բարեպաշտ փարաւոնները միշտ
աշխատում էին աւազի տակից ազատել երկրի

սրբութիւնը: Դժուար թէ կարելի լինի որնէ ժամանակ մաքրել նրան աւազից. ժամանակի հնութիւնից նա ինքն աւազի գոյն է ստացել:

Սֆինքսի մի զարմանալի յատկութիւնն այն է, որ որքան շատ ես դիտում, զննում, այնքան նոր խորհրդաւոր դժեւր ես նշմարում: Անհասկանալի և զարմասալի է թւում այն էպօխան, որ արտադրել է այդ հսկայական քանդակը և ծագում է հարց—միթէ՞ այն մարդիք, որոնք նիշն իսկ ջրհեղեղից առաջ էին ապրում, մեր ժամանակից աւելի խոր, աւելի գեղարուեստական կերպով կարողացել են արտայայտել և մարմնացնել իրանց իդէալը: Անցեալ և ներկայ տարի բոլոր ուղևորները, այցելունները խօսք չեն գտնում նկարագրելու այն զօրեղ տպաւորութիւնը, որ թողնում է սֆինքսը դիտողի վրա, մանաւանդ լուսնեակ գիշերով: Մենք այստեղ առաջ կը բերենք միայն յայտնի լին բանաստեղծ—վիպասան Ն. Սէնկէվիչի նկարագրութիւնը:

«Անպայման, Սֆինքսը աւելի մեծ տպաւորութիւն է գործում քան պիրամիդները: Պիրամիդները ինչպէս և լինի, —միայն գէօմէտրիական քարակոյտեր են: Նրանց մէջ հողի չը կայ, բայց ինչ որ մի չոր բան կայ, ինչպէս մատէմատիկոյի մէջ: Իսկ Սֆինքսը մի հսկայական էակ է: Կանգնելով նրա առաջ, ահամայ հաւատում ես, որ անապատի խուլ լուռութեան մէջ նա մտածում է ինչ որ մի բանի մասին, խորհում է մեծամեծ և խորհրդաւոր իրերի մասին: Այդ միջոցին լուսինը դուրս եկաւ ամպերի տակից: Հագիւ թէ կեանքումս երբ և իցէ

այդպիսի հրաշալի գիշեր տեսած լինեմ: Մֆինքսի գլուխը սկից դարձաւ մոյգ-կանաչ, ինչպէս հին բրոնզ, դէմքը կարծէք թէ արթնացաւ բնից և ժպտում էք լուսնին: Հրաշքը կատարվում է մեր աչքի առաջ. մի ըոպէում ինչ որ մի միստիկական խորհրդաւոր կապ է հաստատվում Մֆինքսի և լուսնի մէջ:

«Ես մոռանում եմ ներկայ կեանքը,—ինձ թւում է, որ ես աչրում եմ հին Եգիպտոսում: Ահա Իզիդան երկնքում. ահա Մֆինքսը ինչ որ շշնջում է նրան. ահա շուտով պիրամիդների կողմից կսկսվի սպիտակ քուրմերի թափորը և մի սուրբ ու հանդիսաւոր արարողութիւն: Մֆինքսը այնքան կենդանի է դառնում, որ անօգուտ է պնդել, թէ այդ միայն լոյսի մի խաղն է. չէ կարելի աչքդ հեռացնես այդ դէմքից, որը ուղղակի դարձել է դէպի լուսինը և ժպտում է նրան: Ես նրան յետոյ տեսել եմ և օր ցերեկով, բայց արեգակի լոյսով նրա վրա տեսնվում են ճեղքեր, անգութ ժամանակի հետքերը, իսկ գիշերը նա երևում է բոլորովին իբրև մարդկային դէմք, որ յուզվում է, մտածում և զգում:

«Եւ ինչեր չէ տեսել Մֆինքսը,—նա, որի սկիզբն խորհրդաւոր հանելուկ է կազմում—նա որը վերանորոգել է ինքն Խէօպսը: Մֆինքսը արդէն կանգուն էր, երբ կառուցանում էին պիրամիդները և Խէօպս փարաւսնը, հաւանօրէն, պատասպարվել է նրա հովանու տակ կիղիչ արևի ճառագայթներից: Յետոյ նա տեսել է Մովսէս մարգարէին և Կամբիզին, Ալէքսանդր Մակեդոնացուն

և Պտղոմեէներին, Կեսարին և Մարկ Անտոնիոսին, Կլէօպատրին և Մարիամ Աստուածածնուն, Ալէքսանդրիայի հրդեհի բոցը և վայրենի Օմարին, սուրբ Լուգովիկին և Նապօլէօնին: Այդ բոլորը նա տեսել է, իսկ գիշերները նոյնպէս ժողտացել է լուսնին, ինչպէս այժմ: Այդ բոլորը անցել է—մնացել է միայն ինքը: Նա այնքան ծեր է, որ ոչ ոք նրան մարդկային ձեռակերտ չէ համարում գրեթէ. ամեն մարդ ահամայ նրա մէջ տեսնում է մի նախագոյական, գրեթէ կօսմիական բան, կարծես թէ նա ստեղծվել է այն էութիւնից որից ստեղծվել է և լուսինը, նրա խօսակիցը պայծառ գիշերներում: Այդպէս էլ նրա՞նք նայում են մէկ մէկու վրա»...

Եթէ մեր ուղեկիցները և ընկերակիցները—պ. պ. Մովսէս Անանեան և Պերճ Օհանեան, որոնք սիրալիբ բարհաճութեամբ կամեցել էին մեզ ընկերանալ և առաջնորդ լինել, չը յիշիցնէին մեզ թէ պատկերահանը արդէն պատրաստ է, թէ շտապելու ժամանակ է, գուցէ ամբողջ գիշեր մենք, խորասուզված մտածութիւնների մէջ, անցկացնէինք Սֆինքսի ստորոտում: Հեռանալով, մենք միայն կարող էինք ասել «ունայնութիւն ունայնութեանց, ամենայի ինչ ունայնութիւն է»: Վերջապէս հասանք մեր կառքերին, բայց այդտեղ դեռ մի ամբողջ կռիւ պէտք էր մղել՝ բէդուին տղաների հետ, բարեխօսական խառնակութիւնը յիշեցնող լեզուներով:

Եթէ այստեղ էլ մեզ չ'օղնէին մեր բարե-

կամները, չը գիտեմ ինչ կը լինէր մեր հալը....»

Մի վերջին ակնարկ ձգեցինք պիրամիդների վրա, որոնք արդէն չքանուած էին մեր տեսութիւնից և ակամայ յեշեցինք Նապօլէօն I-ի խօսքերը, ուղղված իր զօրքերին. «զինւորներ, քառասուն դարեր նայում են ձեզ վրա»: Այդ քառասուն դարերը նայում էին և մեզ վրա և գուցէ դեռ շատ դարեր նայեն մեր թոռների, ծոռների և բազմաթիւ ապագայ սերունդների վրա:

Արդէն երեկոյեան ժամը 10-ն էր, երբ վերադարձանք Կաիրօ:


Հիւրանոցի պարտիզում, ելեքտրական լոյսով հաճելի կերպով լուսաւորված, մի արուեստական քարայրում մեզ սպասում էր ճոխ և համեղ ընթրիք. ընթրիքից յետոյ մեզ յայտնեցին, որ Կաիրօի կեանքը դիտելու համար, այն է եւրոպացիների կեանքը դիտելու համար (որովհետև տեղացիները—մահմետականները տներից դուրս չեն գալիս) պէտք է գնալ հասարակական մեծ պարտէզը և շրջել սրճարանները. այդպէս էլ արինք: Ընդարձակ, հսկայական ծառերով ծածկված և բազմատեսակ գեղեցիկ ծաղիկներով զարդարված պարտէզը, շքեղ կերպով լուսաւորված, լի էր ահագին բազմութեամբ, որի մէջ ամեն քայլում աչքի էին ընկնում անզլիացի զինւորները, և սպանները. բոլորն էլ գրեթէ 20—22 տարեկան, իսկ շատերը նոյն իսկ դեռ պատանի: Անզլիական ընտիր հասարակութիւնը այդտեղ էր. ամեն մի քայլում, ամեն մի անկիւնում դուք տեսնում էք անզլիական կարգ, լսում էք անզլիական լեզուն,

զգում էք անգլիական կուլտուրա: Չարմանալի և հիացման տրժանի ժողովուրդ է անգլիացին. ուր որ գնում է, նոյնիսկ անապատը, նա ստիպում է շրջապատող բնութեանը յարմարվել իրան. նա ստեղծում է այն բոլոր կոնֆորտները, որ ունի իր հայրենիքում. նա ոչ թէ ինքն է յարմարվում շրջապատող բնութեան, պայմաններին, ոչ թէ իջնում է մինչև տեղական կուլտուրայի ստորութիւնը, այլ ամեն բան յարմարեցնում է իրան և տարածում է իր կուլտուրան: Եւ այդ բոլորը կատարվել է 10—15 տարվայ ընթացքում...:

Երկրորդ օր, հինգշաբթի, յուլիսի 22-ին, մնաս բարև ասելով հիւրասէր Կաիրօ քաղաքին և մեր բարեկամներին, վերադարձանք Ալէքսանդրիա և նոյն օրը Խըղիվեան շոգենաւերի մէկով, ժամը 10-ին, երեկոյեան, մեկնեցինք դէպի Պաղեստին՝ մեր ճանապարհորդութեան նպատակակէտը:

Գ.

ՏԱՄՆ ՕՐ
ԵՐՈՒՍԱԴԷՄՈՒՄ



I

Մօտ երկու ամիս սրանից առաջ, Երուսաղէմում, Փրկչի գերեզմանի տաճարի մէջ, մի արիւնահեղ կռիւ տեղի ունեցաւ լատին և յոյն հոգևորականների մէջ:

Լատինները կամեցան աւելել տաճարի սանդուխները. յոյները հակառակեցին՝ առարկելով, որ սանդուխները աւելելու իրաւունքն իրանցն է. լատինները պնդեցին.—մենք էլ այստեղ իրաւունք ունենք, մենք էլ Փրկչի գերեզմանի պահապաններ ենք: Ոսք խօսքի վրա և ահա կրօնաւորները վազեցին իրանց խուցերը, վեր առան արդէն պատրաստ մահակները (ամեն մի կրօնաւոր Երուսաղէմում լատին, յոյն, հայ, ասորի, ղպտի, հաբէշ, պահեստում ունի մի մահակ կամ լախտ) և դուրս վազեցին:

Եւ Քրիստոսի խոնարհ ու հեզ աշակերտները վայրկենապէս կերպարանափոխվեցին ու գարձան իսկական զինւորներ, այսինքն կատաղած, զայրացած, գազանացած մարդիկ, որ հարբել են արեան հոտով ու այլևս ոչինչ չեն տեսնում, աչքերը արիւնով լցվել են: «Մենք պէտք է աւելենք սանդուխները», գոռացին լատինները.—Ոչ, մենք պէտք է աւելենք, հեռացէք: Եւ մահակի հարուածները տեղացին միմեանց գլխին, մէջքին. ջարդ-

վեց քիթ ու պոունգ, արիւնը սկսեց հոսել այնտեղ, ուր Մեծ վարդապետը իրան գոհեց մարդկութեան սիրոյ ու փրկութեան համար: Վերջապէս վրա հասան թիւրք զինւորները, ժանդարմները և հազիւ կարողացան բաժանել կռող կրօնաւորներին, որոնք հեռացան միմեանցից հայհուելով ու սպառնալով:—«Որպէս զի էլ չը կռուէք, ասացին թիւրքերը, սանդուխները մենք կաւլինք. կը մաքրենք մինչև դատաստանը և մինչև որ փաշան կը վճռէ գործը»:

Եւ թէ լատինները, թէ յոյները ուրախութեամբ ընդունեցին այդ կարգադրութիւնը. թող թիւրքը, անհաւատը աւելէ, միայն ոչ յոյնը, ասում է լատինը. թող տաճիկը, մուսուլմանը աւելէ, միայն ոչ լատինը կամ հայը, ասում է յոյնը:

Վերջապէս, ինչպէս հեռագիրները յայտնեցին, թիւրքաց կառավարութիւնը թէ կռող կողմերը գոհացնելու և թէ իրան էլ չը մոռնալու սկզբունքի վրա հիմնված, հետևեալ վճիռը կայացրից. սանդուխները կը պահպանեն թիւրք քաջ զինւորները, առաւօտեան սանդուխները կաւելեն յոյները, իսկ երեկոյեան՝ լատինները: Ճիշդ ընկուզի վէճի մասին հղած դատաստանը, «միջուկը ինձ, իսկ կճեպի մինը քեզ, միւսը քեզ, էլ մի կռուէք», ասաց արդարադատ դատաւորը կռող մանուկներին:

Ճիշդ 1900 տարի է, որ քրիստոնէութեան գաղափարը, այն է մարդասիրութեան, եղբայրասիրութեան, համերաշխութեան, ներողամտութեան

անձնութեան գաղափարը քարոզվում է մարդկութեան և սակայն, մենք տեսնում ենք, որ ներանք, որոնք այդ գաղափարի տարածողներ են ներկայացնում իրանց, Քրիստոսի աշակերտ և հետևող են քարոզում իրանց—արիւնահեղ կոիւններ են սարքում, Քրիստոսի գերեզմանի ծննդավայրի առաջ: Եւ այդ կոիւնները քրօնիքական են դարձել: Նրանք վտանգ են սպառնում նոյն իսկ համաշխարհային խաղաղութեան: Խրիմի պատերազմի սկզբնապատճառը, երբ Եւրօպան՝ Ֆրանսիայի առաջնորդութեամբ՝ զինաւորվեց Ռուսաստանի դէմ, Երուսաղէմի այդ կոիւններն էին, կամ ինչպէս տվորարար ասում են, «Սուրբ Վայրերի հարցը»:

Քրիստոնէական անուան համար այդ գայթակղական կոիւնների մէջ անմասն չեն մնում և հայերը:

Բայց ինչից են ծագում այդ կոիւնները, քրիստոնէութեան համար այդ գայթակղական ցաւալի դէպքերը. ինչո՞ւ յոյն, լատին, հայ հոգեւորականները չեն կարողանում հաշտ և եղբայրաբար ապրել:

Մենք կամեննում ենք փոքր ի շատէ լուսաբանել այդ հարցերը և մի ամփոփ գաղափար տալ մեր ընթերցողներին Երուսաղէմի մասին, հրատարակելով մեր ճանապարհորդական տպաւորութիւնները: Ճիշդ է այդ ճանապարհորդութիւնը մենք կատարել ենք 1893 թուին բայց նորերս կատարված արիւնահեղ դէպքերը ցոյց են տալիս, որ երկրի վիճակը մնում է նոյնը, հետե-

ւարար, այդ տպաւորութիւնները չեն կորցնում իրանց թարմութիւնը:

Բայց առաջ, ընթերցողների դիւրութեան համար, կարևոր ենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել Երուսաղէմի սուրբ վայրերի մասին:

Պատմութիւնից յայտնի է, որ ս. վայրերը այսինքն Քրիստոսի գերեզմանը, Գողգոթան, Ծըֆնդեան մուրը, Աստուածածնի գերեզմանը և առ հասարակ տնօրինական կոչված տեղերը անծանօթ էին բրիստոնեաներին մինչև 326 թիւը, երբ Կոստանդիանոս կայսրի կինը, Հեզինէն, գալով Պաղեստին, հետամուտ եղաւ և գտաւ խաչափայտը, որից յետոյ հոյակապ տաճարներ և եկեղեցիներ կառուցվեցին թէ Երուսաղէմում և թէ նրա շրջակայքում. այդ շինութիւններին մասնակից եղան Տրդատ հայոց թագաւորը ու հայոց իշխանները, և թէ հաւատանք իններորդ դարի պատմիչ Մովսէս Կաղականտացուն և անյայտ միացած Անաստաս վարդապետ անունով մի պատմագրի: Այդ տաճարների մէջ նշանաւորներն են Յարութեան տաճարը՝ Փրկչի գերեզմանի վրա, Բեթղեհէմի տաճարը՝ Մուրի վրա, տաճարներ՝ Աստուածածնի գերեզմանի, Գողգոթայի խաչի գիւտի վրա, Զիթենեաց սարի վրա, Համբարձման տեղը և այլն: Ապագայում հետզհետէ կառուցվեցին այլ բազմաթիւ եկեղեցիներ, վանքեր, մատուռներ բոլոր այն տեղերում, որոնք կապված են որ և է յիշողութեամբ Քրիստոսի և նրա առաքեալների ու աշա-

կերտները հետ: Ստեփան մեզ հարկաւոր է այս
խմանալ, որ սկզբում բոլոր տնօրինական տեղերը
հղել են յունաց և հայոց սեփականութիւն. ապա-
գայում, մանաւանդ խաչակրաց արշաւանքից յե-
տոյ, հանդէս են եկել և կաթօլիկները, ապա և
վրացիները և նայելով ով աւելի ուժեղ է եղել,
նա տիրացել է տնօրինական տեղերին: Այդպէս
շարունակ, մանաւանդ թիւրքերի տիրապետութիւ-
նից յետոյ, կռիւներ են տեղի ունեցել յոյների,
լատինների և հայերի մէջ տէրունական տեղերի
տիրապետութեան համար (վրացիները չեն կարո-
ղացել որ և է բան պահել իրանց ձեռքում), բայց
զարբերով երեք ազգութիւն, կամ քրիստոնէական
եկեղեցու երեք գլխաւոր դաւանութիւններ, հա-
մարվել են ս. տեղերի սեփականատէր—յոյները,
լատինները և հայերը. ուրիշ ազգերը, այդ երեք
դաւանութիւններին պատկանող, համարվել են ե-
դակներ, հետևորդներ նրանց, օրինակ ռուս-
ները, վրացիները, սլաւները համարվում են հե-
տևորդ յոյների. բոլոր կաթօլիկ ազգերը՝ լատին-
ների, իսկ հայերի հետևորդներն են՝ ասորիները,
ղպտիները և հարէշները:

Այդ պատճառով Երուսաղէմում կան երեք
գլխաւոր պատրիարքութիւններ—յունաց, լատի-
նացոց և հայոց պատրիարքները: Սուրբ տեղերի
վրա կառուցված տաճարներում պատարագ և
ժամասացութիւն կատարելու իրաւունքը պատ-
կանում է միայն այդ երեք ազգերին. եթէ, օրի-
նակ ռուսները կամենան պատարագ մատուցանել
և գերեզմանի վրա, յոյները պէտք է նրանց իրա-

ւունքոս ան՝ կաթօլիկներին՝ լատինները, իսկ ասորիին, դպտին, հարէշը պէտք է իրաւունք ստանայ հայերից: Ահա այդ գոտեսողարձ իրաւունքներէ և նրանց պաշտպանութեան շուրջը ետում է շարունակ կռիւ, ձգտումն ընկերից մի բան յափքըտակելու, իւրացնելու: 1902 թ.

II

1893 թ. յուլիս ամսին էր, երբ եգիպտական շոգենաւը Ալէքսանդրիայից տանում էր մեզ Յոպպէ, Պալեստինի նաւահանգիստը: Շոգենաւի մէջ կային Արիստակէս Սեդրակեան և Սարգիս եպիսկոպոսները, Մեսրոպ և Եփրեմ վարդապետները, Յ. Խաչատրեան և ես: Էջմիածնի պատուիրակները քնում էին Երուսաղէմ նորընտիր կաթողիկոսին հրաւիրելու և հայրապետական գաւազանը յանձնելու, իսկ մենք երկուսս ճանապարհորդում էինք իբրև ուխտաւորներ:

Սովորութիւն է, որ ուխտաւորները, գալով Պալեստինի քաղաքները, իջևանում են ոչ թէ հիւրանոցներում, այլ իրանց տղգային վանքերի մէջ, որոնցով լի է այդ երկիրը: Բնականաբար, հասնելով Յոպպէ մենք իջևանեցինք հայոց վանքում, որ կառուցված է ծովի հանգէպ, լատինների և յունաց վանքերի կողքին: Վանքը ունի մի տեսուչ վարդապետ, մի ժամաբար, մի քանի աշխատաւոր միաբաններ, մի թարգման և մի պահակ: Բալոր ուղևորները և ուխտաւորները, ինչ ազգի և պատկանն, այցելում են հայոց վանքը, որ պատմական հուշակ ունի, որովհետև Նապօլէօն I, երբ

դեռ զօրնպետ էր և եկաւ Պալեստին, այդ վաճառքի մէջ հաստատեց իր բնակութիւնը և հիւանդանոց՝ գինւորների համար: Ուխտաւորները պարտաւոր են մի որոշ տուրք վճարել վանքին, որ կոչվում է դարբասական տուրք, մարդագլուխ՝ կէս օսման-եան լիրա:

Հայոց վանքի վերնայարկից հիանալի տեսարան է բացվում ծովի վրա, բայց քաղաքը իբրև ասիական հին քաղաք, խիստ կեղտոտ է. նա նշանաւոր է միայն իր հնութեամբ:

Շաֆան ունի 2,500 տուն կամ 12,000 բնակիչ, մեծ մասը մահմետական. Գնացածը՝ յոյն, լատին, հայ, հրէայ, մարոնիտ, ղպտի, սիրիացի. հայերի թիւը ընդամենը 130 է: Վերջին տարիները մի քանի գերմանական գաղթականութիւններ են հաստատվել Շաֆայում. գաղթականները, ծովեզերքի մօտ, կառուցել են գեղեցկաշէն տներ, կանոնաւոր փողոցներ ծառուղիներով, պտղատու և ծաղկալից պարտէզներ և հաճելի զբօսավայրեր: Քաղցրահամ նարինջը առևտրի մեծ առարկայ է կազմում:

Մի օր հանգստանալով հայոց վանքում, երկրորդ օրը մեկնեցինք Երուսաղէմ գնալու համար. մեր բաղդից նոր վերջացել էր երկաթուղային գիծը Շաֆայից Երուսաղէմ, որ կառուցել է Ֆրանսիական մի ընկերութիւն, բայց կառքով էլ ընդամենը 10 ժամվայ ճանապարհ է և խիստ հաճելի ճանապարհ: Մենք անցանք շուկայի միջով, ուր ճերմակ և սևամորթ արաբներ վաճառում են նարինջ, լիմօն, նուռ, ադամաթուզ, շաքարեղէգն,

ձմերուկ, խազող, թուզ, թութ: Դուրս գալով քա-
ճաքից մենք անցանք երկու կարգ պտղաւէտ
պարտէզների միջով մինչև Սարօնի գալարագեղ
դաշտը, որ ծածկված էր անհամար ծաղիկներով:
Այս դաշտը անուանի է Աստուածաշնչի մէջ. այս-
տեղ Սամսօնը այրեց փղշտացիների հունձերը,
300 աղուէս բաց թողնելով նրանց մէջ, այգիներ-
րին վառած ջահեր կապած:

Ճանապարհի վրա հիւրընկալ վարդապետը
շարունակ ցոյց էր տալիս մեզ հին քաղաքների
տեղերը, աւերակներ, որոնց անունները կապված
են Աստուածաշնչի այս կամ այն պատմութեան
հետ: Այդ բօպէներին մենք ապրում էինք Հին
Կտակարանի կեանքով, յիշողութիւններով, զգում
էինք մեզ ոչ թէ XIX դարում, այլ Դաւթի, Սո-
ղոմոնի, Երեմիայի, Նսայի ժամանակներում, հե-
ռաւոր, շատ հեռու հնութեան մէջ. մենք ամեն
մի բոպէ սրտատրոփ սպասում էինք, թէ երբ կե-
րևայ Երուսաղէմը, Սողոմոնի տաճարի զմբէթը,
Համբարձման լեռը:

Բայց ահա, ճանապարհից դուրս, մի քիչ
հեռու, երևում է Ռէմլէ քաղաքը, հին Արեմաթի-
ան. այդտեղ է քառասուն Մանկանց աշտարակը,
որ այժմ մզկիթի է վերածված: Ռէմլէն միջին
դարերում մեծ շէն քաղաք էր, պարսպապատ և
12 դռներով, բայց այսօր աւերակների կոյտ է
ներկայացնում: Հայերը տյստեղ էլ ունեն մի
վանք, տեսուչ և թարգման. այդտեղի դարպասա-
կան տուրքը Յօպպէում են վճարում: Ահա, հե-
ռուն և Նոր քաղաքը այժմ Պ էյ թ - Ն ու ը ա, հայ-

րենիք Աբամէլիք քահանայապետի, որ Դաւթին մատուցեց առաջաւորաց հացը: Ահա և հին Մովզիիմը, Մակարէների հայրենիքը. Նէբի-Սամուէլը՝ կամ Ռաման՝ Սամուէլ մարգարէի հայրենիքը. Այն-Քէրիմ գիւղը՝ Յովհաննէս Մըկրտչի ծննդավայրը. վերջապէս՝ ահա երևաց Համբարձման լեռը, իսկ մի քիչ յետոյ Երուսաղէմի տաճարների ոսկեգօծ գմբէթները:

Բայց դեռ քաղաքի գլխաւոր դռան չը հասած, մի ամբողջ արուարձան էք տեսնում ճանապարհի երկու կողմին գեղեցիկ տներով, այստեղ գետիզված են հրէական, այն է գլխաւորապէս Բօտշիլզի նպաստներով պահվող մարդասիրական և ուսումնական հաստատութիւնները. այստեղ է և ուսաց մեծ վանքը, որ հիմնվել է 1858-ին և հետզհետէ զարդարվում է ընդարձակ գեղեցիկ շինութիւններով: Արուարձանից յետոյ գալիս է մաքսատունը և վերջապէս, մենք հասնում ենք Յոպպէի դռան, որ արարները կոչում են Բարու-Սալիլ (Աբրահամի դուռը) և մենք արդէն մտնում ենք Երուսաղէմ:

Չը գիտեմ, ինչու Երուսաղէմը տեսնելիս, յանկարծ միտքս ընկաւ Աւետարանի խօսքը. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն և քարկոծ առնէիր զառաքեալսն»: Իհարկէ, այդտեղ այժմ այլ ևս չեն կոտորում մարգարէներին և առաքեալներին, գուցէ այն պատճառով, որ մեր ժամանակում այլ ևս չը կան մարգարէներ և առաքեալներ, բայց ինչպէս շուտով կը տես-

ներք, Երուսաղէմը պակաս կոտորած չէ անուժ հազարաւոր խեղճ ուխտաւորներէ գրպանի մէջ:

Բայց մենք ամենքս յուզված էինք. շուտով պիտի տեննէինք հռչակաւոր մայրաքաղաքը այն երկրի, ուր չմեղր ու կաթ է ծորում, ինչպէս մանկութիւնսից սովոր էինք կարգալ Աստուածաշնչի մէջ: Աւաղ, շատ շուտով համոզվեցինք, որ այդ երկիրը, ուր գուցէ մի ժամանակ, չմեղր և կաթ էր ծորում, այսօր ամենաազգաստ երկիրներից մինն է: Բայց, վերջապէս, մեզ շատ էլ հարկաւոր չէր կաթ և մեղրը. մենք փնտրագում էինք մի բօսէ առաջ տեսնել այն տեղերը, ուր աշխարհի ամենամեծ մարդասէրը, Մարդ-Աստուածը քարոզել է, շրջել է, ուր Նա խաչվել է իբրև յանցաւոր, Թաղվել: Աւաղ, մեր այդ կենդանի հաւատն էլ շուտով յուսախարութիւն կէտք է կրէր, որովհետև մի քանի օրից յետոյ մենք պէտք է համոզվէինք, թէ անկարելի է հաստատապէս ասել, թէ այն ինչ որ մեզ այսօր ցոյց են տալիս իբրև Աւետարանի մէջ յիշված Քրիստոսի անունն և գործերի հետ կապված տէրունական տեղեր, իսկական են:

Չանազան դաւանութիւնների դարերով միմեանց ղէմ մղած կռիւնները այն հետևանքն են ունեցել, որ այսօր, Երուսաղէմում և Պալեստինի այլ անդերում, չը կայ մի սրբավայր, որ ենթարկված չը լինի գիտնական կասկածի հակառակ կուսակցութիւնների կողմից. այդ բաւական չէ, շատ նրբավայրեր նոյն իսկ երկկորեակ են: Այսպէս, օրինակ, ձեզ ցոյց են տալիս Երկու

Չիթենեաց սար, երկու Գեթեմանի պարտէ՛,
երկու խաչի ճանապարհ. նոյն իսկ սուրբ գեթե-
մանի, բոլոր քրիստոնեաների ուխտաւորութեան
գլխաւոր նպատակի տեղը փոճեւեկ է համարուում
շատ գիտնական հնարեաների կողմից: Ե՛կէ մէ
սրբավայր գտնվել է լատինի ճեղքուն լոյնը աշ-
խատել է միշտ վայր ձգել նրա նշանակութիւնը,
ստեղծել է նրա կեղծը և, ընդհակառակը, նոյնը
արել է լատինը և այսօր կրօնական այդ մտու-
թեան շնորհիւ լատինի ճէ որն է իսկական սրբ-
ավայրը, մին է կեղծը:

Բայց շարունակենք:

Յուպպէի զոհով մենք մտանք մի ընդարձակ
փողոց. ամենից շատ, ի հարկէ, մեզ պատահում
էին հրէաներ, ապա մահմեդականներ և զանազան
դաւանութեան քրիստոնեաներ, որոնց մէջ հայեր՝
շատ սակաւ, որովհետև Երուսաղէմի 40,000 բնա-
կիցների կէտը կազմում են հրէաներ, մի քառոր-
դը մահմեդականներ և մի քառորդը քրիստոնեա-
նեը, որոնց մէջ և հայերը, թւով 500, հոգի: Բազ-
մաթիւ խանութներ շարված էին փողոցի երկու
կողմով և հրէաները ծախում էին ուխտաւորնե-
րին ամեն տեսակ «սուրբ առարկաներ»—Քրիս-
տոսի, Մարիամ Աստուածածնի, առաքեալների
պատկերներ, անդրիկներ, սաղափեայ, փայտէ,
բարէ խաչ, «տէր ողորմեաներ» հէնց այն ճիթե-
նի ծառերից, որոնք պտուղ էին տալիս քրիստո-
սի ժամանակ, տուփեր զանազան սուրբերի մա-
սուկներով և այլն: Ամեն մէկը հաւատարմուում էր,
որ իր ծախածն է իսկական մասուկը, որ տէր

ողորմեայի հատիկները կազմված են Քրիստոսի ժամանակ յայտնի ձիթենու կորիզներից: Մենք գնեցինք մի քանի հատ սաղափեայ խաչ և մի քանի տէր ողորմեաներ. ամեն մէկս մեզանից ունէր մի պառաւ տատ, հօրաքոյր, մօրաքոյր, որոնք սպասում էին մեր վերադարձին՝ պատուիրած լինելով մեզ բերել անպատճառ «տէր ողորմեայ»: Մի ութսունամեայ հեռաւոր ազգականուհի, Գիւլաթաղ գիւղում, Մէլիք Րուստամի հարսը, խիստ պատուիրել էր, որ ես բերեմ պատանք, նշխարը և մոմ Երուսաղէմից. «ես չեմ մեռնի, անհամբեր կը սպասեմ մինչև բերես պատանքը և ինձ պատանեն այն պատանով, որ կարված է Քրիստոսի պատանքի կտորից»: Իսկ այդպիսի պատանք ծախում են Երուսաղէմում:

Աշխարհիս բոլոր գիտնականները եթէ հաւաքվէին, չէին կարող, ի հարկէ, համոզել պառաւ ազգականուհուս, որ Երուսաղէմից բերած պատանը նոյնը կը լինի, ինչ որ Շուշում կարած պատանը: Ես գնեցի և մի պատան, որը հրէայ վաճառականի հաւատացնելով, եթէ կարված չէ Քրիստոսի պատանի կտորից, բայց անպատճառ կարված է Մարիամ Աստուածածնի պատանի կտորից:

Փողոցից դուրս գալով մեր առաջ երևաց մի հին շինութիւն. դա Դաւիթ Մարգարէի բերդն էր և պալատը, ինչպէս մեզ ասացին, ուր այժմ ապրում է սոլթանի ներկայացուցիչ զայմագամ փաշան և ուր հաստատված է թիւրքական զօրանոցը. ապա մտնելով մի նեղ փողոց, դէպի Սիօնի սարը, անցնելով մի կամարի տակից, մենք հասանք

հայոց ս. Յակովբի վանքը, որի դռան առաջ սւխտաւորները պէտք է կանգ առնեն: Այդտեղ նրանց դիմաւորում է հիւրընկալ վարդապետը և առաջնորդում է նրանց հոգեւորունք, ուր մի գաւաթ սուրճ խմելուց յետոյ, տանում է նրանց էջմիածին եկեղեցին:

Ուխտաւորները կարգով նստում են եկեղեցու մէջ. գալիս է դարպասընկալ եպիսկոպոսը և հրաւիրում է բարեպաշտ ուխտաւորներներին վրճարել Գլխադրի անուամբ հաստատված մի մէջիդ տուրքը, որն ընդունելուց յետոյ, պահպանիչ է ասում և ամեն մի ուխտաւորի ձեռքը մի մոմ տալով, տանում են նրանց ս. Յակովբի եկեղեցին. այդ Գլխադրի, այսինքն Յակովբ Առաքեալի գերեզմանի առաջ, ուխտաւորները ծունկ են չորում և սկսում են երգել շարական. մի վարդապետ սկսում է շնորհաւորել ուխտաւորներին գալուստը, ըացատրում է նրանց ճանապարհորդութեան նուիրական նպատակը, յորդորում է ջերմեռանդ ոգով ներկայանալ Գլխադրին և տէրունական տեղերին: Դրանից յետոյ ուխտաւորներին տանում են սեղանատուն՝ կերակուրի և ապա հոգեւորուն, ուր փշերում են:

III

Հետեւեալ օրը, առաւօտեան, դարպասընկալ վարդապետը մի քանի այլ վարդապետներով դարպասատուն ելնելով, ուր արդէն հրաւիրված են լինում ուխտաւորները, առաջարկում է նրանց իրանց գլխաւոր դարպասական տուրքը շնորհելու

ս. Յակոբի աթոռին, որի հաստատութիւնը և պայծառութիւնը գլխաւորապէս սոյն դարպասահան տրոց վրա էր կայանայ—կարգում ենք վանքի հրամարակած Պեղեցոյցի մէջ—վասնորոյ և բարեպաշտ ուխտաւորք էր պէտք է խնայեն իրանց հոգևոր դարպասական տուրքն աննախանձաբար նուիրելու և, իբրև ազգային անհամ, ազգային վանուց պիտոյից ձեռնտու լինելու:»

Այսպէս հրաւերներ և աւելի ճոռոմարան ուձով կարգում են և օտար դաւանութեան կրօնաւորները, մանաւանդ յոյները:

Առաւօտեան շուտ մենք շտապեցինք մեր յարգանքը մատուցանել հայոց պատրիարքին. ձերուհի Յարութիւն արքեպիսկոպոսին, որ մի կողմ թողնելով նրա համոզումները և մեզ համար անհամակրելի պահպանողական ուղղութիւնը—իբրև լուրջ մարդ, մանաւանդ Երուսաղէմի աթոռի և վանքի բարգաւաճման անկեղծապէս նուիրված մարդ, (և դրա անհերքելի ապացոյցները մենք տեսանք), մեզ վրա հաճելի տպաւորութիւն թողեց: Յարութիւն պատրիարքի ամենամեծ սխալն այն եղաւ, որ նա ընտրվեց Կ. Պօլսի պատրիարք, Երուսաղէմի պատրիարքութիւնը ստանձնելուց առաջ:

Պատրիարքը մեզ յայտնեց, որ ինքն էլ կիշտէ և մեզ հետ ուխտի կը գնայ ս. Գերեզմանիւս: Այդ մեզ շատ ձեռնտու էր, որովհետև առիթ էր ընծայում տեսնել պատրիարքական դնացքը, որ միշտ կատարվում է հանդիսաւորութեամբ և առանձին շքեղութեամբ. մանաւանդ շքեղ և

հանդիսաւոր է յունաց պատգիարքի գնացքը և առհասարակ փաթրիք-էֆէնդիների— այսպէս են անուանում թիւրքերը լատին, յոյն և հայ պատրիարքներին— մուտքը և ելքը իրանց վանքերից առանձին հետաքրքրութիւն և կենդանութիւն են շարժում Երուսաղէմի փողոցներում:

Եւ մենք պատրաստվեցինք պատրիարքի ու նրա շքախմբի հետ ս. Յարութեան տաճարը գրնալու: Եւ ահա ոսկեթել և թաւշեայ բաճկոնակներ հագած դաւազների արծաթապատ գաւազանների բաղխումները փողոցի սալայատակներին յայտնեցին Երուսաղէմի ընակիչներին հայոց փաթրիք-էֆէնդիի ս. Յարութեան տաճարը իջնելը. դավազներից յետոյ մի վարդապետ տանում էր բարձր բռնած պատրիարքական գաւազանը, իսկ պատրիարքին հետևում էին եպիսկոպոսներ. վարդապետներ, ուխտաւորներ:

Արևելքում պաշտօնը, աստիճանը առանց շքեղութեան անհասկանալի և անգարծաղբլի է: Բացի պատրիարքներից զուտ ունեհնալու իրաւունքը պարկանում է օտար պետութիւնների հիւպատոսներին:

Մենք անցանք ծուռ ու մուռ, կեղտոտ, գարշահոտ փողոցներով. մոյանք բաղարի մէջ և ապացած իջնելով բազմաթիւ սանդուխներից, մեզ գտանք մի բաւական ընդարձակ, մեծ քարերով սալայատակած հրապարակում, որ Յարութեան տաճարի նախագաւիթը կամ բակն է կազմում: Մեր առաջ երևաց տաճարի մեծ ոսկեզօծ գմբէթը, որ նորոգվել է 1868-ին օսմանեան տէրութեան ձեռ-

քով, Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարութիւնների տուած երկու միլիօն ֆրանկ նպաստով: Սակայն հազիւ մտանք բակը, որ մեր քթին խփեց մի գարշելի հոտ, ուր մեր «վերամբարձ» տրամադրութիւնը փչացրեց: Մենք հասանք տաճարի դռան, որ փակ էր և մեր առաջ պատկերացաւ հետևեալ տեսարանը.—դռնից մի քիչ հեռու, սալայատակի վրա, ընկած էր մի սատկած շուն, արդէն հոտած, արևի կիզիչ տաքութեան տակ (յուլիս ամսուան էինք). մի թիւրք զինուոր, սուխուար հրացանը բռնած, կանգնած էր հեռու, քիթը բռնած:

—Բայց այս սատկած շունը ինչ՞ու չեն վերցնում այստեղից. միթէ կարելի է տաճարի առաջ այսպիսի գարշահոտութիւն թողնել, ասացինք մենք վրդոված:

Որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ վարդապետները յայտնեցին, որ անկարելի է. պէտք է սատկած շունը այդտեղ մնայ և թիւրք զինուորը հէնց դրա համար է պահապան կանգնած, որ ոչ ոք չը վերցնէ շան դիակը:

Մենք ոչինչ չէինք հասկանում. կարծում էինք, որ այդ տեսարանը թուրքերն են հնարում երբեմն երբեմն քրիստոնէական կրօնը նախատելու համար: Սատկած շուն Գրիստոսի գերեզմանի առաջ... որպիսի անլուր նախատինք ամբողջ քրիստոնէական աշխարհի համար, եթէ ի նկատի ունենանք մանաւանդ, որ մուսուլմանների աչքում շունը որպիսի պիղծ կենդանի է, այն ևս սատկած շունը:

Սակայն իմ և պ. Խաչատրեանի վրդովմունքը համարեա թէ ոչ ոքին չէր հետաքրքրում: Արժէ վրդովվել այդպիսի սովորական առօրեայ երևոյթներով,—ահա ինչ կարելի էր կարդալ տեղացիների դէմքի վրա:

Եւ հանելուկը պարզվեց: Ոչ, ոչ, թիւրքը չէր հնարել, մտածել այդ տեսարանը. մտածողը յոյն և լատին հոգևորականներն էին. երկու օր առաջ, մի շուն սատկում է բակի սալայատակի վրա. լատին կրօնաւորները կամենում են վերցնել սատկած շան դիակը և տանել դէն ձգել. յոյները ընդդիմանում են, ասելով, թէ շան դիակը վերցնելն իրանց կը պատկանի, որովհետև այն տեղը, ուր շունը սատկել և մնացել է, յոյներին է պատկանում: Լատինները պնդում են, թէ տեղը իրանցն է. ծագում է վէճ տեղի մասին. ամեն մի վիճոյ աշխատում է սատկած շան դիակը ինքը վերցնել, որպէս զի դրանով—այսինքն երևի աստուածաբանական լօգիկայով—իր իրաւունքը հաստատած լինի այս մի թղաչափ տեղի վրա. կողմերը չեն համաձայնում, ուստի թիւրքաց դատաստանական իշխանութիւնը միջամտում է և որպէս զի ոչ ոք չը կարողանայ շան դիակը վերցնել մինչև վերջնական վճիռ արձակելը, մի զինուոր ստիպված է կանգնել և հսկել...

Ծերունի Անդրէաս վարդապետը, վանքի զուարճախօսը, այս խօջերն ասաց.

—Պեղճ շուն, եթէ գիտենար որ իր դիակը տաննեակ լիրաներ պէտք է արժենայ, կենդանութեան ժամանակ մի քանի դրուշով կը ծախէր

կաշին, որ գոնէ քաղցած չը սատկէր:
— Ինչպէս թէ դիակը տասնեակ լիրաներ ար-
ժէ, հայր Անդրէաս, հարցրինք մենք:

— Օրհնեալ, այդքանն ալ չես հասկընար-
տածիկը վինչև սը յոյնէն և լատինէն կտորիկ-կտ-
րիկ ոսկիներ չը ստանայ, վճիռ կը տայ:

Յոյնը, լատինը կուռւմ են, տածիկը շահ-
վում է...

Գայթակղած, զայրացած մենք կանգնել էինք
տաճարի մեծ դռան առաջ, որ փակ էր օր ցերե-
կով: Այդ դռան վրա վերևում, կար մի դռնակ-
երը դուռը բազխեցին դաւազները, դռնակից մի
թիւրք զինուորի գլուխը երևաց և ապա դուռը
բացվեց. վարդապետներից մինը դուռը բացող
թիւրք զինուորի ձեռքում մի քանի դրուշ սահե-
ցրեց: Այդտեղ էլ իմացանք, որ Յարութեան տա-
ճարի մեծ դուռը սովորաբար փակ է լինում և
բանալիները պահվում են թիւրք դռնապանների
մօտ. տաճարի մէջ գտնվող և բնակվող միաբան-
ները չեն կարող դուրս գալ և մտնել ինքնագլուխ,
երբ կամենան, այլ ամեն անգամ պէտք է դուռը
բանալ տան դռնապանին, վճարելով որոշ տուրք:
Տաճարի մէջ ապրող միաբանները—յոյները, լա-
տինները, հայերը, ղպտինները, ասորիները տա-
ճարի մէջ առանձին եկեղեցիներ և խուցեր ունեն,
որտեղ ապրում են ամեն մի ազգի տեսուչ—վար-
դապետները. իրանց կերակուրը ստանում են ի-
րանց վանքերից դռնակով և այդ դռնակից էլ
յարարերութեան մէջ են մտնում արտաքին աշ-
խարհի հետ:

Սե՛ծ դու՛րք բաց՛վեց. առաջին շանք որ խը-
փեց մեր աչքին, Քրիստոսի պատանատեղին էր,
որի վրա կախված էին 12 ոսկէ կանթեղներ.
բայց դրանից յետոյ մեր առաջ պատկերացաւ մի
այլ տեսարան, ոչ նուազ գայթակղեցուցիչ և ան-
պատուարք ամբողջ քրիստոնէական աշխարհի հա-
մար: Դոան ձախ կողքին, մի քանի քալ Քրիս-
տոսի պատանատեղից հեռու, տաճարի մէջ, պատի-
տակ, մի տեսակ սաքուի վրա, փառաւորապէս
բազմած էին թիւրք զինւորներ. մէկը սուրճ էր
եփուժ, երկրորդը նարգիլ էր պատրաստուժ, եր-
րորդը միջատներ էր որոնում իր մարմնի վրա:
Դրանք Քրիստոսի Յարութեան, սուրբ Գերեզմա-
նի տաճարի պահպան և զոնապան զինւորներն
էին, թիւրք կառավարութեան կողմից նշանակ-
ված, որպէս զի նրանց սուխնների և հրացանների
տեսքը յետ պահէ յոյն, յատին, հայ, ասորի, զըսպ-
տի, հաբէշ կրօնաւորներին միմեանց հետ կուե-
լուց, միմեանց սեփականութիւնը յափշտակելուց:
Սէ այդ զինւորները ապրում են տաճարի մէջ զի-
շեր ցերեկ, ուտում խմում են, սրախօսութիւններ
անում ուխտաւորների մասին, ի ցոյց դնելով,
իրանց կողքին, և ամեն մի բարեպաշտ մուսլիմի
համար անխուսափելի ավթաֆէն—ջրամանը:

Ամբողջ քրիստոնէական աշխարհի ամենա-
առաջին սրբութեան պահպանները մուսուլման-
ներն են և այդ հանգամանքը հպարտութեամբ,
բերկրութեամբ լցնում է մուսուլմանների սիրտը
և դրա մէջ նրանք տեսնում են Ալլահի և նրա
մարգարէի ամենազօր կարողութիւնը և իրագոր-

ծումն այն խոստումների, թէ ամբողջ երկրագունդը պէտք է հպատակի իսլամին: Կը համարձակի՞ արդեօք մի քրիստոնեայ, թէկուզ լինի նա թագաւոր, կայսր, գէթ մի բոպէ ոտք կոխել իսլամի նուիրական սրբավայրերի, Մէքքէի աղօթարանի մէջ, բայց քրիստոնէութեան ամենանուիրական սրբավայրերի այցելութեան իրաւունքը և թոյլատուութիւրը պատկանում է թիւրք զինւորներին: Եւ իսլամը իրաւունք ունի պարծենալ ու պարծենում է...

Զինւորները ստքի կանգնեցին ի տես հայոց պատրիարքին և հարկ եղած պատիւները տուին: Մենք կանգ առինք Քրիստոսի պատանատեղի առաջ, բայց տեսուչ-վարդապետը յայանեց, որ հանդիսաւոր թափորով պէտք է կատարել ուխտը և այցելել տաճարի բոլոր նուիրական տեղերը, իսկ առաջ պէտք է հանգստանալ հայոց եկեղեցուն կից խուցի մէջ: Մենք հետևեցինք պատրիարքին և եպիսկոպոսներին և մտանք տեսուչ-վարդապետի խուցը. այդտեղ պէտք է վճարել մի նոր դարպասական տուրք, 33 դրուշ: «Սոյն ողորմութեան տրօք, ասված է ուղեցոյցի մէջ, կը հոգացուի սուրբ Յարութեան տաճարին մէջ մշտավառ կանթեղներուն իւղը, մոմը և ուրիշ զանազան պիտոյքները»:

Հայր տեսչի մօտ մի քիչ հանգստանալուց և մի բաժակ սուրճ խմելուց յետոյ, ժամարար վարդապետներից մինը, կամ մի եպիսկոպոս, զգեստաւորված, սարկաւագներով, դպիրներով, թափորով պտտեցնում են ուխտաւորներին և իւ-

րաքանչիւր տէրունական տեղի համեմատ աւետարան են կարդում:

Հայր տեսչի խցից դուրս գալիս, մեր աչքին ընկան մի անկիւնում շարված հաստ և կարճ մահակներ. մենք տրդէն գիտէինք ինչի համար են զրանք:

— Հայր տեսուչ, նկատեց Մեսրոպը վարդապետը, սրանով էք ծեծում յոյն և լատին վարդապետներին:

— Մահակով մեզ հետ խօսողին մահակով պատասխանել ստիպված ենք. մենք չենք յարձակվիր, այլ կը պաշտպանվենք նախայարձակների դէմ:

Ունցից դուրս գալիս, կողքի պատի վրա, մեր ուշադրութիւնը գրաւեց մի հին, սևացած փոքր պատկեր, որ կախ էր ընկած պատից մի կիսափտած պարանից, մի ժանգոտած և մաշված բեւեռի վրա: Տեսուչ-վարդապետը զգուշացրեց մեզ, որ չը դիպչենք պատկերին. պարանը կարող է տեղահան լինել:

— Էհ, ինչ անենք, ասացինք մենք, միթէ դժուար է մի նոր պարանով կախել, մի նոր և չը ժանգոտած բեւեռ գամել:

— Ի՞նչ էք ասում. տասն և հինգ տարի է, այդ բեւեռի և պարանի վրա կռիւ կայ. տասն և հինգ տարի է, յոյները և լատինները դատ են վտրում նրանց համար. այդ բեւեռը ամենաքիչը հազար լիրա նստած կը լինի ամեն մէկի վրա. դատարանը պէտք է վճռէ, թէ այդ բեւեռն ով է խփել պատին 15—20 տարի առաջ. խփողին է

պատկանում պատկերի սեփականութիւնը, իսկ
պատկերը անպէս արժէք ունի:

Թափօրը սկսվեց:

IV.

Թափօրը անցնելով ս. Գերեզմանի և Լատին-
ների եկեղեցու առջևից, կանգ առաւ առաջին
սրբավայրի առաջ. շատ է Բրիտանի չորրորդ
բանար, սաաց Թափօրադիր եպիսկոպոսը, յունաց
ձեռքն է. աւանդութեամբ կրտսի թէ շինուած է
այն այրի վրա, ուր Բրիտան և երկու աւազակ-
ներն բանտարկվել էին մինչև չարչարանաց գոր-
ծիքներուն պատրաստվելը: Մի մութ մատուռ է,
երկը կորչելի բաժանված, ներս չը մտած, աջ
կողմը դռան մօտ վանդակի պէս մի բան է նը-
մարվում մի մեծ բարի վրա, որ երկու ծակ ունի:
Յոյն վարդապետը յայտնեց մեզ, որ այս երկու
ծակերի մէջ էին դրել Բրիտանի ոտքերը բան-
տարկութեան ժամանակ և տակից ոտքերը իրար
հետ շղթայել: Մատուռը լուսաւորված է մի մը-
տավառ կանթեղով:

Թափօրական հանդէսը առաջ դնաց դէպ ա-
րեւելք և կանգ առաւ մի սեղանի առաջ. սա շուրք
Ղունկիանոսի սեղանն է, յունաց սեպհակախութիւն.
այս Ղունկիանոսն էր, որ Փրկչին կողը նիզակով
ձակեց, ուրիշ բոխեց արիւն և Գուր, և սոյն սքան-
չելեաց վրա, հաւատալով, այստեղս կկաւ իր
գործած մեղաց վրա ողբալու: Եւ անա Ղունկի-
անոսի ապաշխարութեան տեղի վրա կառուցված
է սեղանը, յայտնեց մեզ յոյն վարդապետը,

Մի քանի ոտնաչափ հեռու, Թափօրը նորից կանգ առաւ. շատ է հանդերձից բաժանման սեղանը—ասաց տեսուչ-վարդապետը—և մեր հայոց սեփականութիւնն է: Յոյ սեղանին տեղը դահլիճները իրանց մէջ բաժնեցին Յիսուսի հանդերձները, ինչպէս ասուած է աւետարանի մէջ:

Եղիմ ուղղութեան վրա մի քանի քայլ հեռու, դէպի արևմուտք, մի անիծելի դռան առաջ կանդ առաւ Թափօրը և ապա իջանք 29 աստիճանեայ սանդուխտով մի եկեղեցի, որ կոչվում է սուրբ Լուսաւորչի եկեղեցի, սեփականութիւն հայոց: Հայ վարդապետները յայտնեցին, որ, աւանդութեան համաձայն, սուրբ Լուսաւորիչը Երուսաղէմ գալով այստեղ ձգնել է մի քանի ժամանակ. ապա մեզ ցոյց տուին աւագ սեղանի ձախակողմին մի փոքրիկ պատուհան, որտեղից Հեղէնէ Թագուհին, դարձեալ նոյն աւանդութեան համաձայն, աղօթում էր, երբ իր հրամանով գետինը փորում էին խաչափայտը գտնելու: Երեք մշտական կանթիկ կախված են հայոց այս եկեղեցում, որտեղից իջնելով 13 աստիճան, մտանք «Իւսո խաչի» այրը, այստեղ, ուր, ըստ աւանդութեան, գտնվեց խաչափայտը. ահա, ինչպէս պատմեց մեզ Թափօրապետ եպիսկոպոսը, «Յիսուսի Թաղումից յետոյ նրա չարչարանաց բոլոր գործիքները, ըստ սովորութեան Հրէից, պէտք էր որ հողին տակ թաղվէին, ուստի թէ խաչերն (Յիսուսի և երկու աւագակների) և թէ միւս գործիքները բերին այստեղ նետեցին, որ մի փոս և ամալի տեղ էր Գողգոթայի մօտ. հետզհետէ այդ փոսը 1946ց

քաղաքից դուրս հանված աղիւսով և աւերակներէ կոյտերով: Երբ Հեղինէ Թագուհին 326 թուականին եկաւ և հետամուտ եղաւ խաչը գտնելու, Երուզէմի Մակար եպիսկոպոսը հարց ու փորձ արաւ քաղաքի ձերունիներից, թէ որտեղ կարելի է գտնել Քրիստոսի խաչափայտը: Յուդայ Կիւրեղ ձերունու ցուցմունքով փորել տուին այս տեղը և վերջապէս երևան եկան երեք խաչերը ու գործիքները. բայց ի՞նչպէ՞ն իմանալ ո՞րն է Քրիստոսի խաչը. մահուան դուռը հասած մի կնոջ մարմնին մօտեցրին կարդով երեք խաչերը. առաջին երկուսը աչ մի գորութիւն ցոյց չը տուին, բայց երրորդը հէնց որ դիպաւ հողեարբին, անմիջապէս բժշկվեց. նա և ոտքի կանգնեց: Իրանով և ճանաչեցին կինաց փայտը»:

Գիւտ խաչի բուն տեղը այրի ձախակողմն է և երեք ազգերի՝ հայերի, յոյների, լատինների ընկերովի սեփհականութիւնն է և ամեն մի ազգ որոշեալ և հանդիսաւոր օրերին մոմ է վառում ու հրաշափառի հանդէս կատարում. սակայն լատինները այրի աջակողմը մի առանձին պատարագամատոյց սեղան ունեն և նրա առաջ առաստաղից կախած 3 մշտավառ կանթեղ: Ի հարկէ, լատինները հսկում են շարունակ, որ յոյները կամ հայերը չը վերցնեն այդ կանթեղները և իրանցը չը կախնեն, իսկ եթէ այդպիսի բան պատահէ այդտեղ քամ մի այլ տեղ, կարճ մահակները պատրաստ են իրանց գործը տեսնելու և յափշտակողին խելքի բերելու: Հայոց Լուսաւորիչ եկեղեցու սեպհականութեան սահմանը Գիւտ խաչի այրը իջնելու

առնալու խաբի երկրորդ աստիճանն է, իսկ եթէ, Տէր մի արասցէ, հայերը սխալմամբ կամ պատճառք, աւելեզու ժառանգակ անցնեն երբայրդ աստիճանը և աւելին նաև ասնազուխքի երրորդ աստիճանը, կարգը, արքանանեզ կտրան անխուսափելի է:

Բարձրանալով արքի 13 աստիճաններէց և Լուսաւորիչ երկրորդ 29 աստիճաններէց, անեք դուքս երանք դարձեալ ասնազուլ և երբ թափօրը պատնուս էր դէպք նախ, ստանարի բազմաթիւ գուներից մէկը բացվեց և մի գարշիլի հոտ, անտաքնոցի հոտ փչեց անք քթին: Երանալ այս ինչ խոյտտառեղութիւն է, աստիճան, ճրանկից է փչոււմ այս հոտը: Բանից դուքս եկաւ, որ ասնազուի ճորճին, ետնի գաւթնով, անխուսափելի գործաձուլեան համար շինված են արտաքնոցներ, որովհետև ուխտառեղներին գոշիւնեքս փակոււմ են ստանարի մէջ և թոյլ չեն ստալիս գալստ քալ միտիւ ատառաք. արգ, արտաքնոցների անեղի անարհապանութեան ժառին մի քանի ստառաք ի վեր գին կայ յոյնեքի և շատինների մէջ, յոյնը թոյլ չէ ստալիս, որ լատինները մաքրեն արտաքնոցները, լատինները թոյլ չեն ստալիս յոյնեքին. թիւրքերը կրորիկ սովինեք ստեղի շատ ասանալու համար, ձգնում են գրաթի վնիտք և սոյլ արտառաքով անեն օր խունիլի, վնարտաթի հետ խառնեղութեւ է արտաքնոցի նուար: Թչ յոյնեքի, ոչ շատինների արտաքնոցները անեղան յարգանք չեն ստանաւ գէպի տուք ասանարք, որ մի կերպ գալարեղեմն քրիստանէութեան համար սոյլ անտա-

անի՞ զայժակդութիւնը, գոնէ մուսուլմաններէ առաջ:

Քրիստոս բռնելով, թափօրը շարունակեց քր
գնացքը: Արիզատակէս եպիսկոպոսը յօնքերը կի-
տել էր: Սաչտարեանը հանգատութիւն չէր տալիս
Սարգիս եպիսկոպոսին. «հը, սրբազան, հէնց
պնդում էիր զնանք, զնանք Երուսաղէմ, ճըղզսի
գառնանք. էս է քո գոված Երուսաղէմը»:

— «Ախպէր, ով կարող էր երեսկայել այս-
պիսի բան. հէջ մեր էջմիածնում այսպիսի բան
տեսելիս»:

Թափօրը կանգ առաւ մի նոր սեղանի առաջ,
յոյներին պատկանող. «սա է ձաղանաց սիւն կամ
փուշ-պսակի սեղան», ասաց վարդապետը. այդ
սեղանի կենտրոնում մի երկաթեայ վանդակի
մէջ դրված էր գորշագոյն գրանիտեայ սիւնի
մի կտոր. ըստ աւանդութեան, երբ Քրիստոսի
գլուխը փշեայ պսակով պսակեցին, նրան այս
սիւնի վրա նստեցրին և սկսեցին թշնամանել ու
ծաղրել: Մեր դիտողութեան, թէ աւետարանի
համաձայն, այդ դէպքը պատահել է Պիղատոսի
տանը, պատասխանեցին, թէ սիւնը յետոյ փոխա-
դրվել է Պիղատոսի տնից այստեղ:

Տեսուչ-վարդապետը յայանեց, որ այս սե-
ղանի հարաւային կողմից մինչև Ղուկիանոսի
սեղանի հիւսիսային կողմը բարձրից ձգված եր-
կաթէ շղթան պատկանում է հայերին և յոյներին
և նրա վրա կախված են երկու ազգի կանթեղ-
ները, որոնք ի հարկէ, գրգռում են լատինների
ապահովութիւնը. յայներն էլ երբեմն փոքձում են

դողանալ հայոց կանթեզը և նրա տեղ իրանցը դնել, որպէս զի ամբողջ շգթան իրանց սեփականութիւնը լինի, բայց տեղուշ-վարդապետը քնած չէ և արթուն հսկում է: Ապա մենք իմացանք, որ փուշ-պսակի սեղանի և Լուսաւորիչ եկեղեցու դպրան միջևը պատի մէջ եղած սիւնը և այդ սիւնից մինչև հանդերձից բաժանման սեղանի հիւսիսային կողմը ամբողջովին հայոց սեփականութիւնն է հրապարակի այդ մասի երկարութեան հետ:

Մենք աննպատակ չենք կանք անում այսպիսի մանրամասնութիւնների վրա. գարեհրով հայերը, յոյները, լատինները կուր են մղել միմեանց դէմ, ահագին փողեր ծախսել, սեծամեծ պարտքի տակ ընկել այդ կանթեզների, շգթաների, սիւների, բեռաների, պատկերների և խաբրների սեփականութեան համար, ինչպէս յետոյ կը տեսնենք:

Բայց ահա թափօրը հասաւ Գողգոթա, Քրիստոսի խաչելութեան տեղը, ուր պէտք է բարձրանալ 18 աստիճան ունեցող սանդուխքով: Գա մի բաւական մեծ մատուռ է զանազան զեղեցիկ նկարներով, ոսկեզօծ և արծաթապատ պատկերներով, զարգարված հարիւրաւոր կանթեզներով և ամբողջ յառակը մարմարիճով ծածկված: Սեղանի ոտքին, մէջտեղ, մի մեծ խոռոչ կայ, Սաչի տնկված տեղը: Գողգոթան այժմ յոյների սեփականութիւնն է. հայ վարդապետները ասում են, հիմնվելով հայ պատմադիրների վրա, որ հին ժամանակները հայոց սեփականութիւնն է եղել. բայց 1422—39 թ. վրացիները խլեցին հայերից, իկս

Քրոսոյթներին անցաւ յօյների ներքը Յեզանի ձախտահողքը մի ուրիշ քաղք սեղան կայ, որ պատկանում է լատիններին, այնպէս որ, քաղաքէն, Թողոքեան երկու տղի սեփականութիւնն է. հայերը այստեղ դարձեալ պահպանել են մի փոքր փրօռուք—ամեն ուրախ օր նրանք իրաւունք ունեն մի մեծ մոմ վառել սեղանի վրա, իսկ նրք հանդիտաւոր արելին հայոց պատրիարքը կամ թափօրապետը ուխտի գնան, յունաց լատարարը պարտաւոր է սեղանի մտերը վառել և մի գորգ ձգել, որի վրա պատրիարքը ծուկը դնէ և ուխտն անէ:

Յի այլ սեղան, դարձեալ Գողգոթայի ձախտահողքը, այն է Տաշ քեծ ման սեղանը, ուր, լատ սուսնաբնութեան, Սիւուսին տարածել են խալի վրա և գամել, պատկանում է Նոյնպէս լատիններին և այդտեղ ամեն օր նրանք պատարագ են ձառուցանում:

Գողգոթայի սեփականութեան մասին ետջերի և վրացիների մէջ տեղի ունեցած կռիւները հերք դարում, հայոց պատրիարքարանի կրած նեկութիւնները և ծախսած ահագին գումարները, մօտ 10,000 ֆիօրին, Ճզիպտոսի առքիւնների տուած հրովարտողները, մանրամասն նկարագրված են Հաննայ վարդապետի «Պատմութիւն Երուսաղէմի» և Աստուածատուքի կախարչուտի Եփեսոսեանցիական պատմութիւն Երուսաղէմի գրքերի մէջ: Երբ վրաց Թագաւորի տուած սուսնաբնականների տղաութեանը, կարդում ենք այդ պատմութիւնների մէջ, Եզիպտոսի Սուրբան Մէլիք-

Չափազ 1400 թուին հրովարտակ հանեց, որ Գողգոթան աստին հարկերի ձեռքից և ասն վրադիներին, և իրարանք և արջնահայտց, որք կային Վարդապետէմ, պաշարեալք ի սուգ՝ ողբալին պիտրտաւ վիճակի ի քահնոց, թող զձաղանա և զՔշտանա և զպաղքի աղքի նախաւինա, որք կցէին ի Քշտան մեաք անախ քրիստոնեաք տնուանեպոցա Արշն առնէին և տնաքանէին պապաղք և ասին՝ կարեաւ աղքն ձեր բեկաւ, որքաթիւն պապաղքաքի վիճարանաթիւն ձերաք, կգաք նախաւինք և պալն կատականաք առաջի աղքոց և աղանց... *»

Այս կտորը քոչ է տալու, թէ ինչ անաղին նշանակութիւն էին ասալիս հարկոք և այլ քրիստոնեաները, նոյն խաչ ալլաղքիները Գողգոթային: Հայերը մէ քիչ հանդարտալան այն ժամանակ, երբ նախաւախ սուրթանները թոյլ տոպեցին նըրանց, իբր և փոխարինութիւն, շինել 1439 թուին Գողգոթայի կանոնք. Յարութեան տանաքի մէջ, կրկնորոք Գողգոթիս, որի վրա Մարտիրոս պատրիարքը ձարակց 5000 Փրօթին:

Բայց հետեւնք թափօրին:

Թափարապետ կախոնպոսք բարձրանայն կարգալայ վանաարանի աջս կտորք. և և Յիսուս որքանեաք պատգակեալք ի ձայն մեծ, և արանդեալք գնալին: և և անա վրադալոք տանալին. ցէքա յարկաւ, ի վերաւառ մինչև վաչր, և կրկնք շարժեցաւ, և վէնք պատասկցանք քոչք տակց Գողգոթայի տնաքի վրա մէ ժայտ կրկնայն պատասկմ:

*) Ժամանակ: պատմ. նրբաւորգեթի, արք 1880 թ. նըրաւորգեթեան հատ. Ա. 14. 222.

քով, այդ ժայռի վրա նստացրած արծաթեայ տախտակը ասում է, որ մա այն պատճառով է, որ Ռրդին Աստուծոյ իր վերջին շունչն աւանդած ժամանակ բովանդակ բնութեան կրած բուռն ցնցումից՝ աննշ՝ եկաւ: Ե՛ւ որովհետեւ—կարդում ենք Տրդատ վարդապետ Պալեանի «Սուրբ երկիր» գրքի մէջ (Կ. Պօլիս, 1892),—նոյն պատճառով է համար ի սկզբան արհեստական է ըսին անհաւատք, մենք յառաջ կը բերեմք էտիսըն անգղիացի նշանաւոր գիտունի վկայութիւնը: Նշանաւոր անգղիացի գիտունը վկայում է, որ ժայռի պատճառով եղական և գերբնական կերպով կատարված է և հրաշքի արդիւնք է:

Երանի հաւատացողներին...

Ինչեւով Գողգոթայից, Թափօրը ուղղվեց դէպի ձախ և մեր առաջն էր Քրիստոսի պատանաւանդին, որ, ինչպէս նկատեցինք, ճիշդ տաճարի մեծ դռան դիմացն է ընկած: Պատանաւանդին ծածկված է կարմրագոյն տրապիզաձև գեղեցիկ գճեայ քարով. այդ քարի երկու ծայրերին երեք ազգեր—հայ, յոյն, լատին—երկ—երկու զոյգ, ընդամենը 12 հատ մեծադիր և փոքրադիր աշտանակներ ունեն կերճներով, իսկ քարի վրա, շղթայից կախված, կարդով և միատեսակ գեղեցիկ ութ մեծ մշտավառ կանթեղներ, որոնց չորսը՝ յոյներին, երկուսը՝ հայերին, մինը լատիններին՝ և միւսը զպոլիներին են պատկանում, ինչպէս ցոյց են տալիս կանթեղների վրա կախված առանձին պղնձեայ տախտակները: Այդ տեղին մօտ նստած Թիւրք պահապանները շարունակ հեկուժ

են, որ ազգերից ոչ մինք չը գողանաց միւսի
կանխեղըս կամ աշգանակը, ինչպէս պատահել է
առաջնորում յանախ և տեղի տուել կռիւների:

Թափօրը առաջանալով դէպի ու ժամապի-
ժանս տեղիչ, որ, ըստ աւանդութեան, Մա-
րիամ կայր, տեսնելով իր որդուն խաչված, ու-
ժաթախ եղաւ և որ հայոց սեփականութիւն է,
ապա դէպի իւրաքերից սեզանը, որ մի
քանի քայլ հեռու է, դէպի աջ, ուր միաշարաթի-
օրը, առաւօտեան, կանայք եկան Յիսուսի վարմի-
նը խնդելու, բայց տեսան յարութիւն ունած, և
որը նոյնպէս հայոց սեփականութիւն է, կանգ
առաւ Փրկչի սուրբ Գերեզմանի, բոլոր քրիստո-
նեաների ախտի գլխաւոր նպատակի առաջ:

V

Հնգնանուր քրիստոնեաների երկրպագու-
թեան սուրբ տեղը, Քրիստոսի Գերեզմանը, գրա-
նվում է ս. Յարութեան տաճարի գրեթէ կենտ-
րօնում մի նորաշին մեծ գգրէթի ներքե, մի կո-
րածև սրահակի մէջ տեղ:

Հին ժամանակները, ս. Գերեզմանը բաժան-
ված է եղել երկու փոքր խորշերի և փորուած
մի ժայռի մէջ, առաջին փոքրը ծառայում էր երկ-
րորդին իբրև գաւիթ, որտեղից անցնելով մասնւ
էին երկրորդ խորշը, ուր քարի մէջ փորուած,
մտաբի նման մի փոս կար, որիմն ունենալով
նոյնպէս վիժափոր կամար: Հեզինէ թաղուհուն
են վերադրուած, Գերեզմանի հին և ընդհան ձեւ
այրափոխելու դէպքը հաւանական է որ դարերի

ընթացքում այդ ձևը գանազան փոփոխութիւններ կրից. այժմեան ձեռ գերջնահանապէս ստացել է 1808 թուին, երբ Ս. Յարութեան տանարը, որ մեծ մասամբ տարևարեփոխէն էր, այրվելով, յոյները կարողացան Ռ. Դանից տանարը նորոգելու բացառիկ արժօնութիւնը պատճառ. տանարի հետ միասին, յոյները պահպանելով Գերեզմանի նախկին ձեռ, մտրմարեայ քարերով և քանդակներով և յաւնափան արձանապատեթիւններով գարջացրեցին Ս. Յր ժամանակ հայերը չը կարողացան պիտակրչո որ դերեղմանի շրջանկարի վերստ գանվոց հայերէն արժանապատեթիւնները չը ջնջվին:

Գերեզմանի տաղթին գուռը դէպի տրեկը է նայում. անմիջապէս դռան վրայ կախաւած է հասոց մի փոքրադիր պատկեր, որ ներկայացնում է Քրիստոսի Յարութիւնը, որի առաջ զգեստաւոր ված կանգնած է Ծրբորտը հառաւորքիչը. այդ պատկերը, ինչպէս և նրա առաջ փոսփար արժանապատեթիւնը կանխեղը կաշվում է կապաւորիչ:

Հայոց պատկերից վերև կախաւած է յաւնաց պատկերը, քանդակված մարմարի վրայ, իսկ նրանից վերև՝ բաւականացը՝ նկարված կապաւի վրայ, որանց առաջ նայնալիս փոսված են ժլտափտա կանխ կրեւեր: Անանատցանկ ա. Ծերեղմանի հանկաւոր և միանշարտայն շուքիչ կանխեղմանը կախեղրա և փոսեղրա, պատկերեղմանով դալցոցոցեղրա և աշտառ նախներով մանկը փոսեղրա. իրաւաւորը միակնոցն երեք աղբի է փնջապակեղման, այն է յաւնաց, բաւականաց և հայոց: Դրախ դռան եղմու կողմեղրա բաղմը քիչ զարցաղին նաւադանուձն տարբանեղր կանոց

տրտնաց զյսա շարժեալս՝ եւն նքեք ցոյցը՝ միջակն մեծաւ-
թեամբ կերտնարարն աշխատակներս անասին զոտք-
կենաց աշխատակները՝ յունաց, երկրորդը՝ հայոց
և երրորդը՝ զատկենացոց են. նստաբաններք ծառ-
քունս կոտրուց մի գոյք կենաց աշխատակներս, յուն-
ացոց պատկանող, իսկ ծտկն կողմերք, հայոց և
չատկենաց երկու քանակն պզնակայ. մեծ աշխատակ-
ներք:

Սերեկեանն զանից մասնց ասրո Գերեզեանի
ստաղին ստար կան իցեակցո, որի մեջ սակ հրանդ-
ունս կայ մարտոց կայ սքանձն մի քար, որ կող-
ւաակ է Լեւոսակի վնն թափարոցիս կարիստարոց
յայտնեց որ այդ է Անասարանի յիշան Յաննից
սեղո, աթ կանդունս էր հրեշտակներէք մեկը
ապրտակ պատմու հան հարտն. Այլ մաստաթ մեջ
15 մշտակառ կանթերներ կան, երկը կարք զս-
քաննների զյա հարիսիան. մեջ սեղի մ-ը յունացն
է, աջակորական մ-ը յունաց, ձախակորակն մ-ը
հայոց և Լ-ը նրանց հետեակ զպտաց Աջակեղ ևս
դունս պտա, իտպաների պտակերներ կան կտիվան
հայոց, յունաց, լատկենաց, հիւսիտային և ետրա-
սային անկրաններուս երկու հաս ըստրակ ըս-
սամուաներ կան, այն հոշակաւթ ըստանեաններք
արտեղից, հաստացեալ ասիտակների ըստմու-
թեան է արդուն կաստակներն, Զատկի հրարո-
ւոյն շաղակ երեկոյնս, ապրիլն սեղակի հա-
ստացան ըստր, որ իջնակն երկնից Բրտաւորի
Գերեզեանի պտա կարտային կարիս յատանաւից
ըստր ստար է հարերին, հարոց յատանանն զար-
տարեալ, իսկ հիւսիտային հարից յայններին՝ յուն-

նոց լուսամուտն վարդապետը: Երկկային լոյսի մտ-
սին կը խօսենք մի քիչ յետոյ:

Պատկառանքով, երկիւղածութեամբ և սրախ
անձկութեամբ, մենք մտանք երկրորդ խցիկը—
Գերեզմանը: Նրա մեծութիւնը թէ լայնութեամբ
և թէ երկայնութեամբ հազիւ երկու մետր կայ,
բուն Գերեզմանը, այն է Փրկչի քնարանը հիւսի-
սային կողմն է, ժայռի մէջ փորված, որի կո-
ղերը և վրան ծածկված են մարմարէօններով,
այնպէս որ ներս մտնողը բնականից մնացած շատ
քիչ բան է տեսնուժ, որովհետև բուն Գերեզմանի
բնական ժայռ քարերն ծածկված են մարմարի,
կանթեղների և պատկերների տակ: Այստեղ ա-
ռաստաղից 43 հատ մշտավառ կանթեղներ կան
կխփված, որոնց 13-ական հատը հայոց, յունաց և
լատինաց, իսկ 4-ը ղպտաց:

Գերեզմանի այս ներքին իրջիկի հիւսիսային
օջառի երեսն երեք մասի է բաժանված. մէջ տու-
ղըն՝ յունացն է: աջ կողմինը՝ յանտոյից կողմը՝
հայոց և ունեն «Յարութեան մի պատկեր» կտա-
ւի վրա նկարված. ձախ կողմը՝ սնարից կողմը՝
լատինաց բաժինն է, որ նոյնպէս մի արծաթա-
ձրյլ պատկեր ունեն:

Երեք ազգերն էլ իրանց այդ պատկերների
առաջ ունեն վեցական աշտանակ և չորսական
ծաղկաձան: Վերջապէս, ս. Գերեզմանի թէ ներսը
թէ դուրսը չը կայ մի խորշ, մի անկիւն, մի կը-
տոր տեղ, որ բաժանված չը լինի երեք ազգերի
հայոց, յունաց, և լատինաց մէջ: այդ բազմաթիւ
խորշերի, անկիւնների, կանթեղների, աշտանակ-

ներքի, պատկերներին, ծաղկամանների սեպհակա-
նութեան իրաւունքը առաջացնում է շարունակ-
կութիւն, վէճ, ամփոց ու տրաքոց գաւազանաճու-
րութեան և նոյն իսկ արիւնահեղութիւն: Յա-
փշտակութեան սուր ախորժակով գրգռված են
յոյները ապա լատիները: հայերը, ղպտիները և ա-
սորիները: պէտք է տեսլ, յարձակողական զիրք
չեն բռնում, այլ միայն պաշտպանողական. նրանք
հազիւ կախողանում են պաշտպանել, պահպանել
իրանց սեփականութիւնը, իրաւունքը այնպիսի
հզօր գիշատիչներից, ինչպիսին յոյներն և լա-
տիներն են: Եւ պաշտպանվելու երկու միջոց
կայ միայն. կամ բռնի ոյժ բռնեցնել, գաւազան
շարժել, կամ անազին կաշառներ, ընծաներ տա-
լով թիւրք փաշաներին, դատաւորներին, վերա-
հաստատել իրանց իրաւունքը:

Ս. Յարութեան տաճարում հայերը ունեն
առանձին եկեղեցի, մատուռներ և եկեղեցուն կից
մի առանձին խուց; տեսուչ-վարդապետի համար:
Տեսչական պաշտօնը հերթով վարոււ ևն ս. Յա-
կոբի վանքի միաբանները, միաբանական ժողովի
որոշմամբ: Տեսուչը առանց հետանալու պէտք է
շարունակ այդտեղ մնայ. ծանր է և գծուաբ այդ
պաշտօնը. գիշեր ցերեկ նա արթուն պէտք է
հսկէ, որ յոյնը, լատինը վեր չաննեն հայոց այա-
այն կանթեղը, աշտանակը, ջահերը, ծաղկամանը,
և տեղը իրանցը չը դնեն: Եթէ երեք ազգերի
տեսուչները օրինաւոր և խաղաղաւէր մարդիկ են
լինում, իհարկէ, ոչ մի խռովութիւն, դժգոհու-
թիւն չէ պատահուի: ապրում են երբայրաբար:

յարգելով միևեռաց իրաւունքները և իւրազգաց-
թիւնը. բայց հէնց որ հասի մէջ ընկնում է մի
քուտա սքիւտք, ամեն բան տակն ու վրայ է վի-
նում:

Ա. Գերեզմանի վրա տարին տասներկու աս-
միս, ամեն օր անխափան պատարագ է մատու-
ցանդում: Պատարագ մատուցանելէս իրաւունքը
միմիայն երկր ազգի, այն է հայոց, յունաց և լու-
սինաց է սեփեականում. արիջ ար եւ ազգ իբր-
ւանք չաւի պատարագէ: Միայն եթէ քուսնորք
կաննանտ տարին մի անգամ պատարագ մատու-
ցանէ, յայնորք պէտք է իրանց հերթը նորոնց
տան: Պատարագը սկսիւմ է կէս գիշերին, արտջ'
յօջնին են մատուցանում, յետոյ հարեցը և սուպ
չտախնները:

Ամեն ազգ տառջ իր եկեղեցական ժողովր-
դութիւնը կատարում է իր սեփեական եկեղեցում
և տարա փերայիշուաչ կարգով պնում է մատուցա-
նելու պատարագը: Երբ յօջնն է պատարագում,
ժողովում են յանոց բարդ աշտանակները, իսկ
հայերը և լուսինները, իբրև յարբունց և պատիւ
յոյններին, զուտան են իրանց աշտանակներնք մի
մի զոյգ: Ծայնը անում են յայնորք հայերի և լու-
սինների վերաբերմամբ: Արեւանց ձեռ շատ ան-
գամ արխանանդ կախնել օտարազները, միմեան-
ցից զանկնել, ոչտանակ յարջտակողները պիանն
և զտարապիւրովինն բանեցնել միմեանց գիւ...

Ուխտատարները, եթէ կանննում են պատա-
րագ անանել, պարտաւար են ամբողջ փշերը մնալ
և պիշերել տանարի մէջ, որովհետև ինչպէս յիս

շնչինք ա. Թագութեան տաճարի դռները փակուած են երկհայեան և բացփառ միայն առաւօտեան:

Իսկուպէս, Փերեղմանի պաշտպանները յայներն են և միւս ասպետի պատարագներով ժամուանկից դուրս Թագած անբող ժամանակը յայներն են հոգում Փերեղմանի վրա, աւրեւ և նրաւք են ստանաւմ դաժմանակը և ծախում ին մոս, որից և անպիսի ժող են ատանում, միջոտներն այն իտի, մահաւանդ որս ախտասարներէց: Ընտում են այնպիսի Նարուստ որս մուտիք-ախտաւորներ, որոնք հատարելով Փրկչի Փերեղմանը դաժմանակ են ձգում հազար զուրի և աւելի: Հայերը և շառիները ձաժ ծախելու և գաճմանակ առանալու իրաւունք ունեն իրանց պատարագներով ժամանակ:

Թափօրք փերկացար. Թափօրագետ Եղիսկապարս յայտնեց մեզ որ յարդանքի արժանաւոր սաւոր տեղեր դեռ շատ կան տաճարի մէջ և մենք կարող ենք պատնէսն պատել: Յ. մենք սկսեցինք պատել առանց Թափօրի:

Երբ մենք դուրս էինք դալիս Փերեղմանից, այնտեղ մտնում էր, մի երկրասալով յայն վարդապետի առաջնորդութեամբ, մի ջանիկ որս աղջիկ, շատ էրկոյթիս, ինտերկալնաւ: Մենք Կանգնած էինք Փերեղմանի դրսի դռան առաջ և գիտում էինք նրա գործերը, որ հաստատուած է 12 ասեղների և կանարների վրա, սրանց մէջ անդ և բարդարիցը շարված են 36 աշտանակներ և 36 փանթեղներ, ամեն մի աղջիկ՝ 12-ական հաս, իսկ դարէթի մէջ անգից կարված են երեք մեծ

և հաւապար կանթեզներ, մինը հայոց, մինը յու-
նաց և միւսն էլ յաւաթնաց: Հագիւ անցել էր ե-
րեք բողէ, որ երիտաւարաց ոռու աղջիկը դուրս
վազեց կարմրատակած, խոր վրդովմունքի մէջ:
Տեսնելով մեզ նա կանգ առաւ և ասաց, «Ի սէր
Ասածու, տարէք ինձ ոռուաց հիւպատոսի մօտ»:

Բանից դուրս եկաւ, որ այն բողէին, երբ
օրիորդը կամենում էր շեքմեռանդ ուխտ անել
և կուացել էր համբուրելու ս. Գերեզմանը, յոյն
վարդապետն ևս կուացել էր և կամեցել էր համ-
բոյր քաղել նրա ծո՛րակից...:

Նոյն օրը, երեկոյեան դէժ, երբ գնացինք
այցելութեան հիւպատոսին, նա պատմեց մեզ, որ
այդպիսի դէպքեր յաճախ են պատահում և և յոյն
կղերը շարունակ առիթ է տալիս այդպիսի գան-
գատների, մանաւանդ Զատիկի տօների ժամանակ
երբ տաճարը լի է լինում ուխտաւորահիններով:

Թողնենք առ այժմ միւս սուրբ վայրերի
այցելութիւնը և դառնանք այն դէպքին, որ դա-
րերի ընթացքում և նոյն իսկ այսօր հաւապա-
ցեալ քրիստոնեայ ամբօխի տենչանցի առարկան
է եղել և է: Մենք ամենքս գիտենք և լսել ենք
կրուսազէժ ուխտ գնացած մահտեսիներից, մա-
նաւանդ ձերուհիներից և պատուներից, թէ ինչ-
պէս Երուսաղէմում, ս, Յարութեան տաճարում,
ամեն Զատիկ գիշերը, ճրագալոցին, կատարվում
է մի մեծ հրաշք—ս. Գերեզմանի վրա, երկնքից
Աստուածային հուր, լոյս է իջնում: Իրա համար,
ինչպէս և տեսանք վերեւում, յոյները և հայերը
նոյն իսկ լուսահան կոչված վարդապետներ ու-

նեն: Ճիշտ է, կրթված և լուսաւորված ուխտաւորներին վարդապետները ստիպված են շինուած փաստականելու, որ երկնքից լոյս կամ հոռ չէ փշնում, այլ իրանք պատրիարքները կամ պատարագիչ եպիսկոպոսները վառում են ներսում, Գերեզմանի մէջ լոյս և վերևում յիշված կըր լուսամուտներով դուրս տալիս այդ լոյսը, բայց ամբողջ մինչ այսօր ևս հաւատացած է, որ լոյսը իջնում է երկնքից: Մանաւանդ զօրեղ է այդ հաւատքը յոյների և ոսւաների մէջ, ի նկատի ունենալով, որ յոյն հոգեւորականութիւնն եռանդուն կերպով տարածում և քարոզում է երկնային լոյսի իջնելու հրաշքը և այդ հրաշքը կատարվում է միայն այն դէպքում, եթէ կուվիկլան (գերեզմանի մատուռը) գտնվում է յոյն հոգեւորականութեան ձեռքում. լատինները և հայերը զրկված են այդ հրաշքը վայելիլու երջանկութիւնից:

Որպէս զի մեզ չը մեղադրեն սղգային շովինիզմի կամ անճշտութեան և կամ գրպարատութեան մէջ, մենք աւելի յարմար են համարում առաջ բերիլ այստեղ մի ուրեւ ճանապարհորդի նկարագրութիւնը, քաղելով «Յոյները Պալեստինում և Մերիայում» յօդուածից, որ տպված է ոսւսաց մի ամսագրում *):

Սակայն նախ քան այդ նկարագրութիւնը առաջ բերենք, վերջացնենք ս. Յարութեան տաճարի նկարագրութիւնը, որպէս այլ ևս չը վերադառնանք նրան:

*) Греки въ Палестинѣ и Сирии, К. С., Русское Богатство. 1900 С. Б:

Ա. Գեղեցիկներին կրոյ, արեւմտեան կողմն զրա-
տիներէլի սեղանին է կամ սեռարոյց զաշխարհ անկողը,
ուր նստած էր սիրտ է բնչաստղը, որ առեւտրա-տարեաց
յուզարարն զանանց «չէ առտ սոյղ յաշխարհ» ասեցաք
Այս անգամը, Հաննէ գարգաւորն զկայսր թնամ
նայելով, առաջն հայերինն է եղել և Հեթում թա-
րաւորն է զիննց արեւոր Բայց հայերը ասելն են
դարասցին իրեն և նրա զոգտարնն Երկայստարս սի-
նեկարցի ստացիլ: Եթ քիչ ցեառք դառնա է Երգեկի
Արեւմտարսը. ստասուր, սէր թնարսած է, ըստ ա-
ւանդաւ թնամ նրա սեռնինը. այս ստասուր հայոց
անկաւարնաւ թնամն է. «արա՛ Սարահըր, Գեղեցիկ-
նից 12 ձէտը հեռա, լատիմայ սեղանը, սար Եր-
տաւս արարտիզաննի կերարարեղնով երեւոյց Թա-
րեւմ Սարգաւորնայուն: Իսկ նրա գիւնացը սի-
գուս է բարցում գէտի Գողգոթայի տակը-
այդտեղ գտնվում է խաչակրաց առաջին թա-
րուար Գողգոթուս. Բուլսնի գերեզմանը: Կան
և թաշակրաց ուրիշ յղիւաններն ու ասպետներն
գերեզմանները: Գրանից յետոյ քալիս է Հայոց
Վերնատունը կամ երկրորդ Գողգոթայ կոչված
եկեղեցին: Ետեայն ս. Յարու թնամն ստանարի մէջ
դանակն և կեղեցիկներոյց ասեւտարտարսը, ասե-
նահարուստը յունաց մեծ եկեղեցին է, Գեղեցիկներ
արեւելեան կողմը և արեւարի գրեթէ կենդրոնում է
Մայնեքը կոչում են արեւարեւմտաւստա և հաւա-
տում են, որ արեւարի կենդրանն է այդ տեղ:
Նա հարուստ զարդարանք ունի և մեզ ցոյց տա-
ցին ամբողջովին ականակաւս մի մեծ պատկն,
ուսաց Նիկոլա I կայսրի նուէր, որ գնահատաւ I

են մի քանի միլիոն ֆրանք.

Ինքն Ս. Յարութեան տաճարի մեծ գմբէթն կառուցված է 18 սիւների վրա, որոնցից երեքը պատկանում են իրանց կամարներով լատինաց, վեցը՝ յունաց, վեցը՝ հայոց, երկուսը՝ ղպտաց, իսկ տաններկուերրորդ սիւնը, որ կոչվում է «Զոյգ սիւն», պատկանում է հաւասարապէս առաջին երեք ազգերին: Զը մոռանանք, լոկ հետաքրքրութեան համար յիշելու, որ զոնապանների նստած տեղի, սաքուի փոռոցները կամ խըսիրները շինվում են երեք ազգերի ընկերակցութեամբ և ամեն մի որոշեալ օրին ամեն ազգի տեսուչը բերում է իր յատուկ փոռոցները և փռում: Որպիսի հոգածութիւն թիւրք զոնապանների համար:

VI

Տեսնենք ինչպէս է կատարվում Զատիկի ճրագալոյցին այն մեծ հրաշքը, որ Աստուած ուղարկում է միայն ի սէր յոյն հոգևորականութեան. տեսնենք, ինչպէս է իջնում երկնքից աստուածային հուրը կամ լոյսը Քրիստոսի Գերեզմանի վրա:

«Աստուածային հուրը սկսել է իջնել շատ վաղուց, բայց այժմեան ժամանակում, յոյների հաւատացնելով, նա իջնում է միայն այն ժամանակ, երբ Կուվիկիօնը գտնվում է յոյն հոգևորականութեան ձեռքում: Այդ բանը հաւատացնում է մեզ մի գիրք, որի վերնագիրն է «Սուրբ հուրը, որ բղխում է մեր Տէր Աստծու և փրկչի Յիսուս

Գրիստոսի Գերեզմանից աւագ շաբաթ օրը, Երուսաղեմում, ըստ վկայութեան հին և նոր ճանապարհորդների: Այդ գիրքը հրատարակված է Մոսկվայում, բայց, ի հարկէ, յոյների ձեռքով: Տոյց տալով, որ Բալտուին I Թագաւորը «ներկայ էր սրբազան հուրի երևալուն և ընդունեց մոմը եպիսկոպոսից, որ օրթողոքս էր և ոչ կաթոլիկ», հեղինակը հետևեալ եզրակայութիւնն է անում. «Հաւանօրէն, փորձեր են եղել, որ կաթոլիկ եպիսկոպոսների վրա չէ իջել սուրբ կրակը, ուստի և այդ իրաւունքը տրվել է օրթողոքս եպիսկոպոսներին: «Սակայն, որովհետև օրթողոքսերի մէջ յոյները համարում են իրանց ամենից շատ աստուածահաճոյ ազգը, ուստի առաջ են բերվում «Մելիդիա վարդապետի և ուրիշ յետագայ գրողների վկայութիւնը», որից պարզ երևում է, որ յոյներին է վերապահված երկնքից լոյսը ստանալու բացառիկ իրաւունքը: Հայերի արած փորձը՝ վռնտել օրթողոքսերին Երուսաղեմի տաճարից, որպէսզի իրանց եպիսկոպոսների ձեռքով արժանանան ստասնալ լոյսը անմիջապէս Գերեզմանի մատուռի մէջ, անցել է անյաջող: Եւ ի՞նչ, Թիւրքաց փաշան, որին կաշառել էին հայերը, թոյլ չը տուեց յոյներին մտնել մատուռը, այլ նրանք կանգնած էին տաճարից դուրս, փակված դռների առաջ: Ճիշդ այն ժամին, երբ սովորաբար, կատարվում է հրաշքը, յանկարձ ճեղգվեց սիւներից միըր, որ սուրբ դռների պատի մէջն է և դուրս եկաւ սուրբ լոյսը, այնտեղ, ուր էր պատրիարքը (յուճաց): Ե՛հականայերը, պատճում է Մելիտիա վարդապետը, տե-

զեկութիւն չսննալով ամենևին, որ սուրբ լոյսը գնացել է օրթոդոքսերի մօտ, սպասում էին նրան Գերեզմանի ներսը, բարձր ձայնով աղաղակելով, իբրև Բարեւոնացիք գողալով, բայց զուր: Թիւրքերը որ պաշտպանում էին սուրբ դուռը, տեսնելով այդ հրաշքը, իսկոյն բացեցին և պատրիարքը մտաւ տաճարի մէջ օրթոդոքսերի հետ, գոչելով. «Ով է աւելի մեծ Աստուած, քան մեր Աստուածը. դու ես հրաշագործ Աստուած...»: Այդ օրից այլ ևս ոչ ոք չէ համարձակում խել յոյներից երկնային հուրը ստանալու իրաւունքը...»:

Մինք էլ այլ ևս չը համարձակենք վիճել յոյների այդ իրաւունքը և տեսնենք ինչպէս է իջնում յոյների վրայ երկնային հուրը: Լսենք ոուս սկանատես ուղևորի նկարագրութիւնը:

«Յոյն հոգևորականութիւնը խորհրդաւոր հանդիսաւորութեամբ յայտարարում է աստուածային հուրի իջնելը: Ռուսաց հիւրանոցում այդ մասին առաջուց յայտարարվում է ուխտաւորներին այս կարճ խօսքով. «Օրհնեալ կրակը՝ ցերեկվայ ժամը 1-ին»: Առաւօտից տաճարը սկսում է լցվել ուխտաւորներով: Շատերը աւելի յարմար տեղ ձեռք բերելու համար, ամբողջ մի քանի օր ապրում են տաճարում... Ոչ մի տարի չէ լինում, որ արարները և ոուս ուխտաւորները չը ծեծեն որևէ յոյն արեղայի նրա տոփական փորձերի համար: Առաւօտեան ժամը 10—11 ին աւագ շաբթի օրը, Թիւրք զինւորների մի ամբողջ գունդ են մտցնում, որոնք հրացանները ձեռքին մի քանի շաբթով շրջապատում են Գերեզմանը: Տաճա-

րի մէջ ասեղ գցելու տեղ չէ լինում. սաստիկ նեղուածք և խեղդուածք է լինում. ամեն մի տեղ, ուր կարելի է մի կերպով կանգնել, տեսնվում են մարդկային կերպարանքներ: Գերեզմանի շուրջը գտնվող օթեակները բռնում են մուսուլմանները, որոնք գալիս են հեգնական հետաքրքրութեամբ և գաղտնի սնոտիապաշտ երկիւղով տեսնել ամեն տարի որոշ օր և ժամ կրկնվող հրաշքը: Ներքեւում կոհակների նման ծփում է մարդկանց ծովը, այնպէս որ ամենափոքր շարժումը մի ծայրում ալիքի նման հողորդվում է միւս ծայրին. ամեն մի ուխտաւոր ձեռքին բռնած ունի 33 հատ մոմից բաղկացած (Փրկչի տարիքի հաշւով) մի մոծապատ, ծածկված բամպակեայ գլխարկով կրակը հանգցնելու համար:

«Տաճարի մէջ սարսափելի շոգ է: Երբեմնակի տիրում է խորհրդաւոր ըրպէական խաղաղութիւն. լսվում են հառաչանքներ, փսփսուք, աղօթք. գնալով-գնալով ամբոխը անհանգստութիւն է ցոյց տալիս, որն երբեմն արտայայտվում է աղաղակներով, ծափահարութիւններով, ցայտումներով: Այդ ժամանակ հոգևորականութիւնը իր պատրաստութիւններն է տեսնում. բոլոր ճրագները հանգրված են: Սկսվում է թափօրը Գերեզմանի շուրջը. հնչում է յունական երգի դժոխային միաձայնութիւնը: Իսկական յունական երգեցողութիւնը— ամեն տեսակ կենդանիների գոռում-գոչում է: Բայց թափօրը վերջացաւ. պատրիարքը հանում է զգեստը և մտնում է Գերեզմանի մէջ. ամբոխի ջղային լարումն հասել է իր գագաթնակէտին: Ամենքը,— ով

գտնվում է տաճարում—և քրիստոնեաները, և ոչ-քրիստոնեաները, հաւատացեալները և անհաւատացեալները, ծերերը և երիտասարդները, նոյն իսկ մանուկները անհանգստութիւն են զգում: Ամենքը շնչապառ սպասում են... պէտք է երեւկայել, թէ ինչ կը պատահի, եթէ երկնային լոյսը իր ժամանակին չերևայ: Առաջինքը այդպիսի բան պատահելիս է եղել, ուստի և սոսկալի խոռովութիւն է եղել ծագելիս, որի ժամանակ մարդկային զոհեր ևս եղել են: Պատրիարքին մահ է սպառնալիս եղել. այսպէս թէ այնպէս նա պարտաւոր է տալ խելառ ամբոխին երկնային լոյսը: Ինձ հաղորդեցին, որ մի քանի տարի առաջ, թիւրքաց կառավարութիւնը, վախենալով այդպիսի անկարգութիւններից և խոռովութիւններից, պաշտօնական թղթով հրամանագրեց յունաց պատրիարքին «այսուհետև չուշացնել երկնային լոյսի երևումը...»: Այդ օրից ամեն բան կատարվում է խաղաղ և լոյսը իջնում է իր ժամանակին:

«Եւ ահա Գերեզմանի աջակողմեան լուսամուտից շողաց լոյսը. պատրիարքը տուեց այդտեղից վառված մոմերի մի փունջ. յանկարծ տաճարի կամարների տնկ թնդաց մի սոսկալի վայրենի գոռումն, որ դուրս էր գալիս 10 հազար մարդկային կրծքերից: Ինչ որ ծնծղաներ խփեցին և Գերեզմանից մինչև յունաց եկեղեցին վազերով անցաւ յոյն վարդապետների մի ամբողջ խումբ. շուտով ամեն բան լուսաւորվեց. հուրը հրդէհի նման տարածվեց ամբողջ տաճարի մէջ. վառված մոմերի փնջերը թելերի վրա բարձրա-

նում էին մինչև տաճարի գմբէթի տակ. հրեղէն կոհակը ծփաց յանկարծ ներքևում, թռաւ վերև և շուտով տաճարի յատակը ու առաստաղը կորան լոյսի մէջ. 4—5 բոպէի ընթացքում տաճարը լըցվեց ծխով, որի սև սիւնները շրջապատեցին բալոր առարկաները: Ոչինչ չէր տեսնվում. միայն ճրագները երբեմն նշմարվում էին այդ թանձր մխի մէջ. մարդի սնոտիապաշտ երևակայութիւնը երբէք չէր նկարել իր համար դժոխքի դրանից աւելի յարմար պատկեր:

«Ձանգահարութիւնը դադարեց. ամբոխը անմոռունջ՝ զբաղված էր միայն մոմեր վառելով և հանգցնելով: Ամենքը բռնում են բուռնով բոցը և ձեռքով շփում են իրանց երեսը: Մի քանիսը կպցնում են բոցը իրանց վզին, երեսին, մօրուքին և հագուստին, բոլորովին հաւատացած, որ երկնաւոր հուրը չէ այրում: Շատերը խանձվում են, բայց սնահաւատութիւնը յամառաբար դիմանում է խանձված բամբակի հոտով լցվեց տաճարը. սոսկալի տաքութիւնը սաստկացաւ: Եւ ուրիշ ինչ կերպ կարող էր լինել, քանի որ ամենաքիչը կէս միլիօն մոմ էր վառվում:

«Պէտք է ասենք, որ ինտելիգենտ ուխտաւորների առաջ յոյն հոգևորականները չեն ծածկում, թէ դա միայն մի արարողութիւն, ծէս է, որ կատարվում է ի յիշատակ երբեմն իրողապէտեղի ունեցած հրաշքի, որ այժմ նրանք չեն կարող չը կատարել այդ ծէսը և հրաշքի տեղ ընդունել տալ տգէտ ոռուս և տեղացի ուխտաւորներին,

որովհետև, այլապէս, մեծ խռովութիւն կը ծագէ: Բացի դրանից, ասում են նրանք, ինչու խլել մարդկանցից նրանց համար թանկագին հաւատը, թէ Աստուած ցոյց է տալիս Սուրբ տեղերում այդպիսի սքանչելի կերպով իր գթութիւնը: Ինչո՞ւ խլել այդ, թէև կեղծ, բայց նրանց համար վերին աստիճանի համոզեցուցիչ ապացոյցը աստուածային ողորմութեան: Հասարակ մասսան չափազանց տգէտ է և չէ կարող աւելի վեհ կերպով ըմբռնել քրիստոնէական կրօնը: Նա կողտաբար է հաւատում: Նրան հարկաւոր են հրաշքներ, հարկաւոր են նիւթական ապացոյցներ: Ինչո՞ւ համար մենք պէտք է գիտակցօրէն խախտենք ամբօխ հոգեկան հաւասարակշռութիւնը:

Մի խօսքով յոյն հոգևորականութիւնը գիտէ լաւ շահագործել հաւատացող քրիստոնեայի լաւագոյն կրօնական զգացումները:

Իայց մենք վերադառնանք մեր այցելութիւններին:

VII

Մենք ստիպված եղանք այդ գիշիր մնալ ս. Յարութեան տաճարի մէջ հանդիսատես լինելու երեք ազգերի կատարած պատարագներին. այդ գիշեր ժամը 12-ին հայկական պատարագը ս. Գերեղմանի վրա կատարեց Սեդրակեան սրբազանը:

Երկրորդ և հետևեալ օրերը (1903 թ. յուլիսի 25—31) մենք նուիրեցինք Երուսաղեմի մէջ, ինչպէս և նրա շրջակայքում գտնվող միւս նշա-

նաւոր սրբավայրերի այցելութեան: Ամբողջ երկիրը լի է աստուածաշնչի և աւետարանի մէջ յիշակված դէպքերի վկայութիւններով, կաթողներով:

Փրկչի Գերեզմանից յետոյ մենք ուխտի գնացինք Աստուածամօր սուրբ Կուսի Գերեզմանին, որ քաղաքից դուրս է, Գերսեմանի աստուած ձորին մէջ: Մեր առաջնորդը տարաւձեղ ետաչի կամ Չարչարանաց նախապարհով, որ լատինները կոչում են *via Dolorosa*—ցաւագիւն նախապարհ, այն փողոցներով, որտեղից Քրիստոս խաչը ուսին՝ Պիղատոսի պալատից հանուելով, տարուեց մինչև Գողգոթա: Ամբողջ այդ ճանապարհի վրա կան բազմաթիւ վանքեր, մատուռներ. այդտեղ են նաև 1) Սիւն դասավնոյ, այն սիւնը, որի վրա, ըստ աւանդութեան, Քրիստոսի մահուան վճիռը յայտարարող թուղթը փակցրին. 2) Դասասանի դուռը—մի կամար, որի տակից դուրս տարան Քրիստոսին խաչը շալակած. սովորութիւն էր, որ ի մահ դատապարտված անձինք այս դռնից էին դուրս հանվում տանջարանի տեղը տանելու համար, 3) Բերեցիկեան ռուներ—ուր բնակում էր սրբուհին, որ տեմնելով Քրիստոսին անցնելիս խաչը ուսին դրած, խղճալով, համարձակեց մօտենալ նրան և երեսից վազող քրտինքը սրբել. 4) Պիղատոսի կամարը—ուր, ըստ աւանդութեան, Քրիստոս ընկճվեց խաչի ծանրութեան տակ և բռնեցին Սիմօն Կիւրենացուն որ խաչը տանի. այստեղ Պիղատոսը յանձնեց Յիսուսին հրէաներին և ասաց. «Ահա այրդ ց ձեզ». 5) Հերովդեսի պալատը

—այն տեղը, ուր ապրում էր Հերովդէսը, որ կը-
տրել տուեց Յովհաննէս Կարապետի գլուխը. 6)
Դատաւարական ասեանք, ուր Պիղատոսը, թէև
անպարտ արձակեց Յիսուսին, բայց մատնեց նրան
հրէաներին; ասելով «արիւն ձեր ի գլուխ ձեր».
7) Փուօ պսակի տեղը (այժմ եկեղեցի), որտեղ
Յիսուսի գլխին փշեայ պսակ դրին և ուրիշ շատ
նուիրական յիշատակարաններ:

Վերջապէս դուրս ենք գալիս քաղաքից, մըտ-
նում ենք ժայռերի մէջ և ամեն քայլափոխում մեզ
ցոյց են տալիս. «ահա այստեղ էր Պրոպագանդիս
աւագանք, հահա այստեղ քարկոծվեց Ստեփանոս
Նախավկան և այլն, մինչև որ հասանք Գերեզմա-
նի ձորին, որի հիւսիսային ծայրում գտնվում է
այն տաճարը, ուր ս. Աստուածածնի Գերեզմանն
է, փորված մի ժայռի մէջ: Այդ ժայռի վրա շին-
ված է մի եկեղեցի, որի մէջ կան բազմաթիւ մա-
տուռներ, սեղաններ. 47 ոտք աստիճաններով
պէտք է իջնել այդ եկեղեցու մէջ, որ խաչաձև է:
Ամբողջ եկեղեցին սեպհականութիւն է յոյների
և հայերի, և միայն նրանք իրաւունք ունեն պա-
տարագելու. բացի այդ ընդհանուր իրաւուն-
քից, այսինքն ս. Կոյսի Գերեզմանի ընդհանուր
սեպհականութեան իրաւունքից, յոյները և հայերը
զատ զատ սեղաններ և մատուռներ ունեն. հայոց
սեղաններից մինը շինված է Հեթում Բ. թագա-
ւորի ձեռքով, որ 1300-ին եկել է Նրուսաղէմ. հայերը
մի սեղան տուել են ասորիներին, մինը ղպտինե-
րին: Եկեղեցու մէջ կան հայոց և յունաց տեսուչ
— վարդապետների խուցերը: Այդ տաճարի մէջ են

գտնվում և Յովսէփի (Մարիամի նշանածի) և Յովակիմ ու Աննայի գերեզմանները: Եկեղեցո՛ւ մէջ գտնված բոլոր զարդերը, սպասները, անօթները կանթեղ, ջահ, կերոն, աշտանակ և այլն, հաւասարապէս երկու ազգին են պատկանում—հայոց և յունաց: Տարակոյս չը կայ, որ կաթօլիկները, որոնց մօտ շատ զարգացած է Մարիամ Կոյսի պաշտամունքը, չափազանց նախանձում են հայերին և յոյներին, որ այդպիսի մի նուիրական կարևոր վայրից իրանց մասն և բաժին չէ ընկել: Յոյները ևս յաճախ փորձեր են արել միայնակ տիրանալ Ս. Գերեզմանին և վճնտել հայերին, բայց վերջիններս կարողացել են մինչև այսօր պահպանել իրանց իրաւունքը: Տաճարը երկու բանալի ունի. մինք գտնվում է հայոց, միւսը յունաց տեսչի ձեռքում:

Բայց դրա փոխարէն լատինները ունեն իրանց սեպհականութիւն Գեքսեմանի պա՛րսեզը: Մենք մտանք այդտեղ. լատին վաիդապետները մեծ բարեհաճութեամբ ցոյց էին տալիս մեզ և այն տեղը, ուր Յիսուս, դեռ չը մասնուած, եկաւ աղօթելու, տապնապի մէջ մնաց, ուր արեան քըրտինք հոսեց նրա դէմքից և ասաց. «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինչէն», և Զիքսենտոց պարսեզը, որի մէջ կայ ութ ձիթենի, որոնց բունները—բացատրեց մեզ լատին Ֆրանչիսկեան վարդապետը—Քրիստոսի ժամանակից են մնացած և ռամիկները անուանում են Ողջունի ծառեր: Մտեսանք և այն քարը, որից Յիսուս կապել էր էջը, տեսանք և այն ժայռը, ուր Յիսուս սպաւտուեց Պետրոս Առաքեալին, Յովհաննէսին և Յ

կորուսին, պատուիրելով որ արթուն մնան և աղօթեն. տեսանք և այն սիւնի կտորը, ուր Յուզա մատնութեան համբոյրը տուեց Փրկչին: Այս բոլորը մենք պէտք է ընդունէինք միայն հաւատալով աւանդութիւններին և լատին վարդապետների հեղինակութեան:

Ամենից շատ ևս փափազում էի այցելիլ Բեթլեհեմը և Մսուրը, ուր 1893 տարի առաջ ծնել էր մարդկութեան ամենամեծ վերանորոգիչը, Յիսուսը:

Պատմութիւնից մենք գիտենք, որ Բեթլեհեմը շատ հին քաղաք է և դեռ Քրիստոսից 1740 տարի առաջ գոյութիւն ունէր. այժմ նա մի խղճուկ քաղաք է 5000 բնակիչներով—հրէայ, հայ, յոյն, եւրոպացի և մուսուլման: Հայերի թիւը 100 հոգու չափ է:

Սովորաբար ուխտաւորները Երուսաղեմից ոտքով են գնում Բեթլեհեմ, որովհետև ընդամենը երկու ժամու ճանապարհ է, բայց շատերը ձիով և էշով են ճանապարհորդում: Մենք ևս էշեր հեծանք:

Վուրս գալով Յոպպէի կամ Հայր Աբրահամու կոչված դռնից, մենք մտանք Գեմնոնի ձորը, անկա հասանք Հրէից աղքատանոցին, որի պատի տակով մի ճանապարհ ուղղակի տանում է դէպի Բեթլեհեմ: Մեզ ուղեկցող վարդապետները ամեն այլափոխում ցոյց էին տալիս մեզ զանազան անբախտներ, տեղեր, որոնք որևէ կույս ուն էին ստուածաշնչի հետ. ահա Տիսանների կամ սկաների պիտքը, ուր Դաւիթ մարգարէն այլազգիներին յաղ-

թեց. անա Մոզերի հօրը, որին տեղացիները պի-
ել-ճեճեմ են ասում, այն է աստղի հօր, ուր, ա-
ւանդութեամբ, երեք մոզերի աչքից աներևոյթ
եղաւ իրանց առաջնորդող աստղը և յետոյ դար-
ձեալ երևաց. անա և այն ժայռը ուր Եդիս մար-
գարէն բեկնի ծառի տակ պառկեց և հրեշտակը
եկաւ արթնցրաւ նրան և նա գլխի վերևը գտաւ
ուտելու հաց և խմելու ջուր. այդ ժայռի վրա Ծ-
դիան իր մարմնի նշանը թողեց. անա և Ամբակում
մարգարէի տեղը, ուր հրեշտակը հանդիպեց նրան և
ձեռքին բռնած կերակուրը նրան տալով, ասաց:
«այս կերակուրը տար Բաբելոն, տուր Դանիէլին
որ առիւծների գուբի մէջն է: Ամբակումը դժուա-
րացաւ, ճանապարհը չիմանալուն համար. այն ժա-
մանակ հրեշտակը բռնեց նրա գագաթից և վար-
սերից, վերցրաւ օդին մէջ և անմիջապէս տարաւ
Բաբելոն ու իջեցրեց գուբին վրա և Ամբակումը
տեսնելով Դանիէլին, կերակուրը տուաւ նրան»:
Ահա և Ռաբէլի գերեզմանը, անա և Դաւթի հօր կոչ-
ված սառնիճը. այդ հորի ջրից Դաւթ մարգարէն
ցանկացաւ խմել երբ իր բանակով կանգնած էր
Ողոզոմի այրին մօտ և կովում էր այլազգիներին
հետ, բայց հորը հեռու էր և այլազգիները առա-
ջը կտրել էին: Երեք կտրիճներ Դաւթի զօրքից,
իմանալով իրանց թագաւորի փափագը, ձեկքեցին
այլազգիների բանակը և հորից ջուր քաշելով լ-
բին մատուցին Դաւթին, բայց սա Աստծուն նո-
րեց, ասելով. «քաւ լիցի ինձ որ այդ երեք մա-
դոց արիւնը արժող ջուրը խմեմ»:

Այդ հորի մօտ կանգ առաւ մեր կարաւար

արդէն կէս օր էր և քաղցը զգացնել էր տալիս մեզ իր պահանջը. տաքից, փոշուց յոգնած, մտաբերելով որ այդ օր ուրբաթ է և վարդապետները մեզ կը կերակրեն բանջարեղէնով, մենք, վատ տրամադրութեան մէջ իջանք մեր էշերից և մի ծառի հովանու տակ մեկնովեցինք: Որքան եղաւ մեր զարմացքը և ուրախութիւնը, երբ տեսանք որ մեր նախաճաշը բաղկացած է խորոված աղանիւններից: Մենք իմացանք, որ Բեթլեհէմի աղանիւնները ամենահամեղ խորովածացու են: Կազդուրվելով, մեր կարաւանը նորից շարժվեց և շուտով մենք մօտեցանք Բեթլեհէմին ռըրը, ինչպէս ասացինք, մի խղճուկ աւան է: Մեզ հիացրեց հրէայ կանանց, օրհորդների չքնաղ գեղեցկութիւնը և մեզ հասկանալի դարձաւ, թէ, արդարև, Մարիամ Աստուածածինը կարող էր հրաշալի գեղեցկուհի լինել, ինչպէս նկարագրվում է սովորաբար, քանի որ հրէուհիները ընդհանրապէս աչքի են ընկնում Պալեստինում և մանաւանդ Բեթլեհէմում իրանց գեղեցկութեամբ: Մեր կարաւանը ուղղակի դիմեց ս. Մննդեան եկեղեցու մեծ հրապարակը, որ խոնված էր խառնիճաղանճ ամբոխով, իշապաններով, կանանցով: Մենք իջանք և դիմեցինք հայոց վանքը, ուր տեսուչ հայր սուրբը հիւրասիրեց մեզ պտղով: Մի քիչ հանգստանալուց յետոյ պատրաստվեցինք մեր ուխտը կատարել այն Մսուին, ուր 1893 տարի առաջ ծնվել էր մարդկուհան մեծ Փրկիչը:

Աւաղ, այստեղ ևս մեր բարեպաշտական և

քրիստոնէական զգացումները սոսկալի փորձանքի
և գայթակղութեան ենթարկվեցին:

Ս. Ծննդեան եկեղեցին բացի ատեանից և
երկու դասերից, 5 կարգ սրահ ունի, որոնց մէջ
նշանաւոր է Սիւնազարդ սրահը: Եկեղեցին իր զա-
նազան մասերով բաժանված է լատինների, յոյնե-
րի և հայերի մէջ: Հայերը, որ առաջ շատ մեծ
իրաւունքներ են ունեցել, բայց կորցրել էին, մի-
այն 1813 թ. վերահաստատվել են իրանց իրաւունք-
ների մէջ և յոյներին հաւաւար իրաւունք են ձեռք
բերել, օրինակ պատարագ մատուցանելու Ս. Այ-
րին մէջ, կանթեղներ ունենալու Ծննդեան տեղի
վրա և այլն: Ծննդեան Այրը եկեղեցու աւագ սե-
ղանի տակն է:

Մենք մտանք Ծննդեան տաճարի մէջ հայոց
վանքի տախտակեայ մեծ դռնով, մի մի մոմ վա-
ռած մեր ձեռքին և «խորհուրդ մեծ» շարականը
երգելով, հասանք Հայոց դասը, որի միջից անց-
նելով պէտք է մտնել Ս. Այրը: Եկեղեցու յատա-
կի վրա փռված տեսանք մի կիսաայրված խսիր,
իսկ եկեղեցու կամարները, առաստաղը՝ ծածկված
սաստիկ փոշիով և սարդի ոստայններով:

«Ինչ ծոյլ մարդիք են այս վարդապետները,
մտածեցինք մենք, որ չեն կարողանում եկեղեցու
փոշին անգամ սրբել: Եւ միթէ մի քանի զրուշ
փող չունեն կամ լատինները, կամ յոյները և կամ
հայերը, որ մի հատ նոր խսիր գնեն և փռեն»:

Բնականաբար, մեր տրտունջը յայտնեցին.
հայոց տեսչին:

Նա քմծիծաղ տուեց և ասաց.

—Երանի ձեզ, որ այդքան անգիտով էք ինչ զրուշ, ինչ ոսկի մէջիդ. մենք հարիւր, հազար ոսկի կը տանք, եթէ թոյլ տան մեզ այդ զրուշանոց խտիրը փռել, կամ առաստաղի և կամարների փոշին մաքրել: Յոյները, լատինները գուցէ տասն հազար ոսկի տան: Արդէն տասնեակ հազար ոսկիներ ծախսված են դրա համար:

Որքան էլ մենք ընդելացել էինք անակնկալութիւնների, բայց դարձեալ ափ ի բերան մնացինք: Բայց խնդիրը շատ պարզ բացատրվեց: Բանից դուրս եկաւ, որ Մոնղեան տաճարը երեք մասի է բաժանված. մի մասը՝ լատինացոց, երկրորդը՝ յունաց և երրորդը՝ հայոց: Արդ, լատինները երբ մաքրում են իրանց մասի կամարի փոշին, աշխատում են աւելը անցկացնել յունաց կամ հայոց մասը և նրանցը ևս մաքրել, որպէս զի դրանով իրաւունք ձեռք բերած լինեն նրանց մասի վրա ևս. յոյները և հայերը, ի հարկէ, դիմադրութիւն են ցոյց տալիս. ծագում է կապ և կռիւ, լինում է նոյն իսկ արիւնահեղութիւն: Եւ ահա այդ կռուի և արիւնահեղութեան առաջն առնելու համար, որոշված է տարին միայն մի անգամ մաքրել, աւելել փոշին, այն ևս զինուորների ներկայութեամբ, որոնք պէտք է հսկեն, որ ամեն մարդ միայն իր սեփական մասի փոշին աւելէ: Նոյնպէս և խըսիրը. մի անգամ խտիրը կրակ է բռնում և մի մասը այրվում է. լատինները պնդում են, թէ խըսիրը իրանցն է եղել, հետևաբար, տաճարի ամողջ յատակը խտիրով փռելու իրաւունքը իրանցն յոյները պնդում են, որ խտիրը իրանցն է ե-

ղել և յահա վէճ է սկսվում և թիւրքաց դատարանների համար լաւ առիթ երկու կողմից ևս դրամ կորզելու. մինչև վերջնական վճիռ տալը, այրված խտիրը պէտք է մնայ և տաճարի յատակը ոչնչով չը ծածկվի....

Տաճարից դէպի Մենդեան Այրը երկու դուռ կայ. մինը՝ Յունաց հարաւային դասի կողմից, 13 աստիճանով և միւսը Հայոց, հիւսիսային կողմից, 16 աստիճանով: Այրը տաճարի աւագ խորանի ճիշդ տակն է ընկնում: Մենք իջանք Այրը հայոց աստիճաններով:

Մննդեան սուրբ Այրը մի քարանձաւ է, որ ունի 10 մետր և 55 հարիւրորդամետր երկայնութիւն և 3—4 մետր լայնութիւն. թէ գետինը և թէ պատի երեսները ծածկված են ճերմակ մարմարեայ խոշոր քարերով. առաստաղը մի կամարով ամրացրված է, որպէս զի կարողանայ վերևի տաճարի ծանրութեան դիմանալ, որովհետև ժայռը կարծր քարից չէ: Առաստաղից կախված են 11 կանթեղ հայոց, 11 յունաց և 9 լատինացոց, իսկ պատկերներ, պատերից կախված, հայերը ունեն 11 հատ, որոնցից լատինները 7 հատը գողացել են 1869 թւին, թէև ապա երկար դատավարութիւնից յետոյ հայերին աջողվել է յետ խլել լատիններից: Այրի մէջ սեղան կայ, ուր ամեն օր լատինները, յոյները և հայերը հերթով պատարագ են մատուցանում: Քրիստոսի Մենդեան բուն սեղը այդ սեղանին տակն է, մարմարեայ յատակով և կիսաբոլորակ ձևով, որի մէջ տեղը մի փոս կայ մի արծաթեայ ճաճանչ ամրացրած և բոլորտիքը լատիններէն այս-

պէս գրուած. «Աս ծնաւ Յիսուս Քրիստոս ի Մարիամեայ կուսեմ»։ Այդտեղ ևս 16 մշտական կանթեղներ կան, 6-ը հայոց, 6-ը յունաց և 4-ը լատինաց։

Երբ մենք մտանք՝ պատարագը յունաց էր. որքան մեծ եղաւ մեր զայրոյթը որ այստեղ ևս նկատեցինք մի աւելի մեծ սրբապղծութիւն և ծաղր. պատարագչի երկու կողմին, Քրիստոսի Մննդեան տեղի վրա, կանգնած էին երկու թիւրք զինուոր, հրացաններով և սուլիններով և անպատկառ ծիծաղում էին, որովհետեւ նրանց շատ տարօրինակ էր թւում պատարագիչ քահանայի սկիհի մէջ գինի և ջուր լցնելը, խաչակնքելը։ Այդ թիւրք զինուորները հրացանով կանգնած են նրա համար, որ լատին վարդապետները չը խափանեն յունաց պատարագը կամ յոյները չը խափանեն լատինաց և հայոց պատարագը՝ և պատարագիչ քահանային քաջ չը տան սեղանից ու դուրս վռնտեն։

Եւ դա կոչվում է քրիստոնէութիւն...։

Մննդեան սեղանից 3 մետր դէպի հարաւ— արևմտեան կողմը 3 աստիճանի մի սանդուխով իջնում են Մսուրը, որ փորված է ժայռի մէջ և մարմարեայ քարերով ամրացրված. ունի $2\frac{1}{2}$ մետր երկայնութիւն և 2 մետր լայնութիւն. այստեղ ևս երեք ազգերը մի մի մշտական մոմ և աշտանակ ունեն։ Արևելեան կողմում մի սեղան կայ, որ պատկանում է լատիններին, երեք մոզերի անուշով, ուր, ըստ աւանդութեան, կանգնած էին Մոզերը իրանց ընծաները նորածին Յիսուսին նուիրած ժամանակ։ Այս սեղանը առաջ հայոց սեպհականութիւն

է եղել, բայց լատինները խլել են:

Մենք վերադարձանք հայոց տեսչի սենեակը և մի քիչ հանգստանալուց յետոյ, մեր էջերը հեծնելով, նոյն օր երեկոյեան վերադարձանք Յրուսաղէմ, անձնատուր լինելով տխուր խորհրդածութիւնների, թէ ինչպէս նոյն իսկ այն վայրում, ուր ծնվեց մարդկութեան ամենամեծ վերանորոգիչը, նրա անարժան աշակերտները չեն կարողացել դեռ հասկանալ, թէ ինչ մտքեր նա քարոզեց և կտակեց տարածել....:

VIII

Նկարագրել Յրուսաղէմի բոլոր սուրբ վայրերը և վանքերը, մեզ շատ հեռու կը տանէր: Բայց մեր ուղևորական նկարագիրը թերի կը մնայ, եթէ մենք լուսթեամբ անցնենք երկու նշանաւոր և պատմական վայր — Սողոմոնի հռչակաւոր քանարը, կամ այժմեան Օմարի մզկիթը և Հայոց Ս. Յակոբի վանքը: 1)

Սողոմոնի տաճարը այցելելուց առաջ մեզ ասացին, որ հետաքրքրական է գնալ տեսնել հրէաների կամ Իսրայելի ողբը և կոծը տաճարի արտաքին պարիսպների մօտ: Մենք իմացանք, որ քրիստոնեաներին թոյլատրված է տաճարը այցելել, բայց թիւրքերը այդ բանը խստիւ արգելել

1) Այս երկու գլխուր հաստատութիւնների նկարագրութիւնը մենք վերցնում ենք Յրուսաղէմի հայոց վանքում ապված երկու կարեւոր աշխատութիւններից, որոնց անունները յիշատակված են զբքիս մէջ:

ին հրէաներին կամ ինչպէս նրանք ասում են, անարգելով, ջնուղներին, և հրէաները իրաւունք չունեն ոչ միայն այցելել իրանց նախկին փառք ու պարծանք Սողոմոնի քանարք, որ այժմ մահմեդականների փառք ու պարծանք Օմարի մզկիթն է, այլ և որոշ տարածութիւնից աւելի մօտենալ նրբան: Նրանց միայն մի իրաւունք է տրված. ամեն ուրբաթ օր հաւաքվել տաճարի պարիսպներից մէկի մօտ երեսներն ուղղած դէպի տաճարի պատերը՝ ողբալ ու կոծել: Ահա այդ ողբն ու կոծը տեսնելու գնացինք մենք:

Մուռ ու նեղ փողոցներով անցնելիս, մենք հանդիպեցինք մի ահագին բազմութեան—ծեր, երիտասարդ, երեխայ, կին, տղամարդ նոր և շքեղ, խայտաճամուկ զգեստներ հագած, որ գնում էր դէպի լացի և ողբի տեղը: Մենք ևս հետևեցինք նրանց և բազմաթիւ սանդուխներով իջնելով, հասանք տաճարի բարձր և հնութիւնից ու մոմերի ծուխից սևացած մի պատի, որի շուրջ մի փոքրիկ հրապարակի վրա, հազարաւոր բազմութիւն խոնված, երեսները ուղղած դէպի պատը, լացում էին և սգի երգեր երգում: Մի քանիսը մոխիր էին ցանում իրանց զլուխներին: Ողբում էին Իսրայէլի զաւակները իրանց անցեալ փառքը և մեծութիւնը և աղբսում էին Եհօվային փութացնել Մեսիայի գալուստը, Մեսիայի, որ պէտք է վերադարձնէ իրանց այդ փառքը և մեծութիւնը, սուրբ տաճարը ու նկուն անէ թշնամիներին.....: Որքան մեծ և անսասան պէտք է լինի հաւատը այդ հրէաների մէջ, որ հարիւրաւոր դարերով ող-

բում և կոծում են, տեսնում են, որ Մեսիան չէ
զալիս, բայց այնուամենայնիւ հաւատում են, որ
նա գալու է մի օր, որ իրանք են Աստու ընտ-
րեալ ազգը և իրանց է պատկանելու աշխարհի
վերջնական թագաւորութիւնը....: Բայց աւաղ-
թագաւորութիւնը, ազատութիւնը, երբէք յետ չէ
բերվել և չէ բերվում լաց ու կոծով, հատչանքով
ապերսով....:

Մեզ վրա հրէաների ուրբ ու կոծը ծանր,
ճնշող տպաւորութիւն գործեց: Մենք հեռացանք
և երկար պտոյտներ գործեցինք, մինչև կարողա-
ցանք հասնել Սողոմոնի տաճարի դիւաւոր դռան
առաջ:

Սողոմոնի հռչակաւոր տաճարը շինված էր
Մորիա լեռան վրա, որ Սիօնի և Ակոայի լեռանց
մի մասն է կազմում: Դա այն տեղն է, ուր հայր
Աբրահամը ուզեց զոհել իր Իսահակ որդուն: Դա-
ւիթ մարգարէի ժամանակ այդ տեղը Ուռնա Յե-
րուսացի անունով մի հրէայի կալն էր: Աստուած
բարկացել էր Դաւիթի վրա և մի սոսկալի պա-
տուհաս, ցաւ էր ուղարկել, որ երեք օրվայ մէջ
70,000 մարդ ջարդեց. երբ Դաւիթը տղաչեց Աստ-
ծուն իննայել, Աստուած հրամայեց նրան Ուռնայի
կալի մէջ մի սեղան կանգնել և զոհ մատուցանել:
Դաւիթ 600 սիկզ ոսկի վճարեց Ուռնային և գնեց
կալը ու մատուցեց զոհը. կոտորածը դադարեց:
Դաւիթ, ի նշան երախտագիտութեան, կամեցաւ
այդ տեղ մի տաճար կառուցանել ճշմարիտ Աստ-
ծուն, բայց Աստուած իմացրեց, որ այդ տաճա-
րը նրա որդի Սողոմոնի ձեռքով պէտք է շինվի:

Եւ իր Թագաւորութեան չորրորդ տարին Սողոմոնը դրեց տաճարի հիմքը և աւարտեց 7 տարուան մէջ և նրա մէջ դրաւ Տապանակ ուխտին:

Տաճարը մօտ 34 տարի փառաւոր և պայծառ մնաց, բայց յետոյ Եգիպտոսի փարաւոնների և ուրիշ Թշնամիների ձեռքով մի քանի անգամ կողոպտվեց և վերջն էլ, իր հիմնարկութիւնից 476 տարի յետոյ, կամ 588 տարի Ք. առաջ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորի ձեռքով այրվեց: Պարսից Կիւրոս Թագաւորը 536 տ. Ք. առաջ հրաման տուեց կրկին շինելու: Երկրորդ անգամ տաճարը շինվեց, բայց ոչ այնպէս փառաւոր, ինչպէս Սողոմոնի ձեռքով. 163 տ. ն. Ք. Անտիքոս Եպիփանէսը յափշտակեց տաճարի բոլոր Թանկագին սպասները և Արամազդի արձանն էլ նրա մէջ կանգնեց: Հռոմէական Պոմպէոս զօրավարը, երբ առաւ Երուսաղէմը, մտաւ տաճարին մէջ, բայց ձեռք չը տուեց և անվնաս թողեց: Քրիստոսից 17 տարի առաջ մեծ Հերովդէսը վերանորոգեց տաճարը 10,000 գործաւոր, 1000 կառք և 1000 քահանայ աշխատեցնելով: Այդ վերանորոգված տաճարին մէջ հրեշտակը երեաց Զաքարիա քահանայապետին. այգտեղ եկաւ Մարիամ կոյսն իր Մանկան հետ և այդտեղ ընդունեց նրան Սիմէօն ճերտունին: Քրիստոսի Համբարձմանից 37 տարի յետոյ Տիտոս կայսրը երբ առաւ Երուսաղէմը, տաճարը ամբողջովին այրվեց: Իրանից յետոյ նա այլ ևս, իբրև հրեակալն թաճար, չը վերականգնվեց: Ազրիանոս կայսրը 134 թ. կրկին շինեց Երուսաղէմը և նոր անուն տուեց նրան՝ Իլիա և նախկին

տաճարի տեղի վրա մի մեհենան կանգնեց Արամազդի անունով: Հրէաները, զրամ տալով, թոյլտուութիւն ստացան գոնէ տարին մի անգամ Երուսաղէմ գալու և տաճարի աւերակների վրա ողբալու, ինչպէս այժմ նոյն թոյլտուութիւնը դրամով ձեռք են բերել օսմանցիներից: Հեղինէ թագուհին և Կոստանտինոս կայսրը 327 ին կործանեցին այդ հեթանոսական մեհենանը, իսկ Յուլիանոս Ուրացոյը 361 թ. հրաման տուեց հրէաներին փորել տաճարի աւերակները և վերաշինել, բայց, եթէ հաւատանք քրիստոնեայ պատմագիրներին, վերաշինութիւնը չեղաւ այն պատճառով, որ երբ բանւորներ փորում էին աւերակները, հիմքի տակից կրակ դուրս եկաւ և այրեց բանւորներին: Դրանից յետոյ. քաղաքի բնակիչները ճետողհետէ մոռացան նոյն իսկ տաճարի տեղը և նկատելով իբրև ամայի և աւերակ տեղ, աղբանոց շինեցին: Սողոմոն իմաստունի շինած և Եհովային նուիրած փառաւոր, 6000 սիւն ունեցող տաճարը, զարձաւ աղբանոց....: Ով ժամանակի և բախտի դառն խաղ....:

Վերջապէս, 636 թ. երբ Արաբների Օմար խալիֆան իր յաղթական սուրը տարածեց նաև Պալեստինի վրա և տիրեց Երուսաղէմին, փափագեց գտնել այն տեղը, ուր Յակոբ նահապետը քրնած ժամանակ տեսելքին մէջ տեսել էր երկրից մինչև երկինքը դրած սանդուխը: Մի ձերուհի ցոյց տուեց աղբակոյտի մէջ մի տեղ. Օմարը հրամայեց մաքրել գետինը և երբ նուիրական ժայռը գուրս եկաւ, Օմարը հաւատաց և ճիշդ նոյն

տեղի վրա շինեց մի հոյակապ մզկիթ, Սուլոմոնի տաճարի փոխարէն. այդ մզկիթը Աբդ-էլ-Մէլիք ամիրապետը 50 տարուց յետոյ, քանդել տալով, աւելի փառաւորը և հոյակապը շինեց և զարդարեց գեղեցիկ սիւներով, մօզայիկներով: 1099 ին խաչակիրները տիրելով Երուսաղէմին, առան և մզկիթը, որի մէջ ապաստանել էին 10,000 մահմետականներ և սպանեցին նրանց ու մզկիթը վերածեցին եկեղեցու, բայց 1187 ին Սալահէդդինը կրկին առաւ և առաջ քրիստոնեաների արիւնով լուաց ամբողջ մզկիթը, յետոյ ջրով և ապա վարդեջրով: Սալահէդդինը կանոն սահմանեց և արգելեց, որ ոչ մի այլակրօն չը մտնի այդ մզկիթը և ժտնույր պէտք է կամ անմիջապէս սպանվի կամ հաւատը ուրանայ: Միայն Ղրիմի պատերազմից յետոյ եւրոպական պետութիւնների միջնորդութեամբ այդ արգելքը վերացվեց քրիստոնեաների համար, բայց խստիւ պահվեց հրէաների համար:

Եւ այսպէս ուրեմն, Սուլոմոնի այդ տաճարն, որ հազարաւոր տարիների ընթացքում ենթարկվեց զանազան փոփոխութիւնների, դառնալով հրէական տաճար, հեթանոսական մեհեան, մահմեդական մզկիթ, քրիստոնէական եկեղեցի և դարձեալ մահմեդական մզկիթ, իր խորին հնութեամբ և ճակատագրի դառն հարուածներով, իր հետաքրքրական պատմութեամբ, գրաւում է, անշուշտ, երկրագնդի զանազան ծայրերից ուխտաւորներ և այցելուներ: Եւ այդ տաճարն էր, որ մենք գնացինք այցելելու մի շէյխի առաջնորդութեամբ, նա-

խապէս հանելով, ի հարկէ, մեր կօշիկները և հագնելով լայն հողաթափներ:

Եթէ կաթօլիկ վարդապետները անհամար և անհաշիւ հրաշքներ էին պատմում մեզ, կապելով այդ հրաշքները Քրիստոսի այցելած և շըրջած զանազան տեղերի հետ, արաբ շէյխերը Օմարի մզկիթում ոչ պակաս հրաշքներ էին պատմում իրանց մարգարէի գործերի մասին, կապելով այդ հրաշքները մզկիթի զանազան մասերի հետ:

Պէտք է ասենք, որ Օմարի մզկիթը կամ Սողոմոնի տաճարը իր ամբողջ կազմով ահագին տարածութիւն է բռնում. տաճարը տասը դուռ ունի և շինված է մի լայն գաւթի կենդրոնում. այդ գաւթի տարածութիւնն է 150 հազար քառակուսի մետր, 500 մետր երկարութեամբ հիւսիսից հարաւ և 303 մետր լայնութեամբ արևելքից-արևմուտք: Ուխտաւորները սովորաբար մտնում են Բաբ-էլ-Ղավանիսէ կոչված դռնից, որ նրանց տանում է Հարեմ-էլ-Շարիֆի նուիրական հրապարակը, որի աջ կողմին կայ Քլբլէ ասված մի բուրակ և գմբեթաւոր աղօթարան, որտեղ պահված է Նուիրական ժայռի (էլ-Մախրա) մէկ մասը, այսինքն այն ժայռի, որի վրա, մուսուլմանների հաւտտալով, Յակոբը նահապետը քնած ժամանակ տեսաւ սանդուխի տեսիլքը: Այդտեղ կայ և մի ցամաք աղբիւր, որի մօտից անցնելով մի նոր սանդուխով բարձրացինք քարայտտակ բակի վրա և որտեղ է իսկապէս տաճարը: Ահա այստեղ էր, որ Քրիստոս արտաքսեց վաճառականներին և սե-

դանաւորներին. այդտեղ մեզ ցոյց տուին մի վրա-
նաձև՝ մեծ սիւնանի շէնք, ասելով որ դա Ողջա-
կիզաց սեղանի տեղն է եղել, բայց մուսուլման-
ների ասելով, այդտեղ Դաւիթ մարգարէի դատա-
բանն է եղել. ուստի և կոչվում է Մահեկակի Դա-
ւուպ:

Բուն մզկիթը, Օմարի կոչված մզկիթը, որ
Քուպայիք-էլ-Սախրա ևս անուանվում է, այսինքն
ժայռի գմբէքը, ութանկիւնանի է. ամեն մի ան-
կիւնի երեսը մարմարով և շինիով զարդարված
և 20 մէտր է, ունի եօթը պատուհան գունաւոր
ապակիներով և վրան մի պղնձապատ գմբէթ:
Չորս դուռ ունի՝ արևելեանը Բաբ-էլ-Դաուդ (դու-
ռըն Դաւթի), հիւսիսայինը Բաբ-էլ-Ճեննե (դուռն
Աբքայութեան), արևմտեանը՝ Բաբ-էլ-Ղայպ (դու-
ռըն Աներևոյթացման) և հարաւայինը՝ Բաբ-էլ-
Կրբէ (դուռն Աղօթարանի): Ուխտաւորները պէտք
է արևելեան դռնից ներս մտնեն, նոր հողաթափ-
ներ հազնելով: Մզկիթի ներսը մութն է և կեն-
դրոնական մասը երկու ութանկիւնի շրջապատով
է բոլորված, առաջինը արտաքին որմով, երկրոր-
դը ութ մայթերով և 16 ընտիր մարմարեայ սիւ-
ներով, որոնց բունը միակտուր է: Մզկիթին վի-
րի կողմերը բոլոր միւսիոներով (մօզայիկներով)
և ոսկեզօծով ծածկուած են, և գրեթէ բոլոր ներ-
քին կողմի պատերուն վրա տեղ տեղ Ղուրանէն
հատուածներ կան ոսկեզրով դրոշմուած: Բուն
կենդրոնը չորս մայթով և 12 սիւնով միացուած
և անոնց միջոցները երկաթեայ գեղեցիկ վան-
դակներով պատած են, յետոյ դարձեալ ուրիշ վան-

դակ մի կայ տախտակեայ և արհեստաշէն, որով շրջապատած է Ստխրան, այսինքն Մուալլաֆ-բաւ ըսուած ժայռը: Ժայռին երեսը բաց է և անհաբժք սւ բոլորակ ծակ մի ունի մէջտեղը ռւղղահայեաց, և հիւսիսային ու արևելեան մասերը տափկացած են. ատենօք անոր վրան՝ մարդաչափ բարձրութեամբ կանանչ ու կարմիր կերպասէ շինուած Եկեղ կախուած էր, որ տեսակ մը վրան է, բայց այժմ այս վրանը վերացուած է: Մահմեդականք այս Եկեղն տեսնելով, ըստ իւրեանց աւանդութեան կը յիշէին Աստուծոյ Ազամին տուած վրանը, երբ Մէքքէի քով լեռան մի վրայ Եւան գըտաւ, կըսեն, հարիւր տարի որոնելէն յետոյ: ¹⁾

Այդ ժայռը համարված է բուն Աւանայի կաշն, որ Գաւիթ մարգարէն պնեց, որի վրա շինեց Սողոմոն իմաստունը տաճարը և պրեց այդտեղ Տապանակ Ուխտին, կամ Սրբութիւն Սրբոցը. այդտեղ տարին մի անգամ միայն մեծ քահանայապետը իրաւունք ունէր մտնելու: Բայց այսօր Հրէաների Սրբութիւն Սրբոցը պարունակող տեղը գտնվում է մուսուլմաների ձեռքում: Բախտի դառն հարուած.....

Մեզ անաջնորդող շէյխերը չէին գաղարուծ գանազան հրաշքներ և դէպքեր պատմել: Ժայռի արևմտեան կողմին ձեռքի մի նշան կայ. դա Գաւրիէլ հրեշտակապետի ձեռքի նշանն է, որ մնացել է տպաւորված ժայռի վրա: Ժայռի կամ Սախրայի

¹⁾ Համառոտ պատմութիւն կամ ուղեցոյց սրբազան տեղեաց, գ. ապագրութիւն, Երուսաղէմ, 1888թ. էջ 256—258.

մի այլ կողմում երկաթէ մի վանդակ կայ, որ միշտ փակ է և մէջ տեղը մի ծակ ունի, սրի միջից ձեռը կոխելով, մուսուլմանները իբր թէ շօշափում են Մէհէմմէդէ մէկ ոտքի կնիքը (ոչ-մուսուլմաններին, ի հարկէ, թոյլ չեն տալիս շօշափել)։ այդ տեղ է նաև Մէհէմմէդի գլխի մագից մի քանի հատ ժայռի հարաւակողմը կախված են մարգարէի (Մէհէմմէդի) դօժը, որ փաթաթված է իր նիզակին վրա և Օմարի Սաննակը (նշանը)։ Այդտեղ է նաև մարգարէի հոչակաւոր էլ-Բրուզ ձիի թամբը։

Մի այլ տեղ շէյխը ցոյց տուեց մեզ յասպիս քարից մի տախտակ, որի վրա մեծ մարգարէն 19 հատ ոսկի բեռներ գամել էր, որոնք ցոյց էին տալիս աշխարհիս տեղութեան ժամանակը և ամեն մի դար վերջանալիս, բեռներին մինը բազմում էր, այն է ինքն իրան աներևոյթանում էր։ Մի անգամ անիծեալ շէյթանը, ներս մտնելով տաճարը Բար-էլ-Ճեննէ դոնից, սկսեց բեռները քակելով հանել, որ աշխարհի վախճանը շուտով տեսնէ, բայց քաջ Ջիբրայէլը (Գաբրիէլ հրեշտակապետը) վրտ հասնելով հալածեց դէին և ազատեց աշխարհն կործանումից։ Այնու ամենայնիւ, պէտք է ենթադրել, որ աշխարհիս վախճանը մօտ է և 400 տարի է միայն մնում, որ այդ վախճանը հասնէ, որովհետև յասպիս տախտակի վրա մնացել էին միայն 4 հատ բեռներ... Այն ևս պէտք է իմանանք, որ Սալսրան, նուիրական ժայռը, օդին մէջ կախված է մնում, առանց նեցուկի-այդպէս են հաւատում բոլոր մուսուլմանները, իսկ նրա ներքև մի հոր կայ, ուր ճշմարիտ մուսլիմներ-

քի (հաւատացեալների) հոգիները շարաթը երկու
անգամ հաւաքվելով պօթում են Ալլահին:

Բայց բաւական է յիշել մուսուլմաններէ պատ-
մած հրաշքները և աւանդութիւնները:

Հետեւեալ օրը մենք այցելեցինք ուրիշ նշա-
նաւոր տեղեր—1) Ս. Փրկիչը (հայոց վանք), 2)
Սուրբ Սիօն վերնասունը, որ մահմեդականները Նե-
բի-Դաւոս (Դաւիթ մարգարէ) և լատինները՝ Ըն-
թրիաց տեղ են կոչում: Ենթադրում են, որ Դաւ-
թի և Սողոմոնի գերեզմանները այստեղ են. 3)
Պետրոս Առաքեալի այրը, 4) Սելովամի աղբիւրը, 5)
Յուդայի կախուած ծառի տեղը, 6) Գայրակզու-
քեան լեռը, այն սարը որի վրա Սողոմոնը Եգիպ-
տոսից բերել տուած իր կռապաշտ կանանց հա-
մար մեհեաններ շինեց և գայթակղեցրեց ժողո-
վուրդը, 7) Սելովամի աւազանը, 8) Յսայի մարգա-
րի սզացման տեղը, 9) Առաքելոց առանձնասունը,
ուր, ըստ աւանդութեան, Քրիստոսի Ձիթենեաց
պարտեզին մէջ բռնուելից յետոյ, պատուարվե-
լին առաքեալներից 7—8 հոգի, 10) Չարխսերգի
լեռը և այլն:

Մենք այցելեցինք նաև Ձիթենեաց կամ Համ-
բարձման լեռը Երուսաղէմի արևելեան կողմում,
որտեղից Քրիստոս համբարձաւ երկինք և որ ա-
բաբները ձեպիլ-իլ-Դուր են կոչում. նա Միջերկրա-
կան ծովից 800 մետրաչափ բարձր է: Այդ ուզե-
որութիւնը բաւական յոգնեցուցիչ է, բայց տեսնել
այն լեռը, ուր Քրիստոս իր վերջին քարոզը և
աշխարհն լուսաւորելու պատուէրը տուեց իր ա-
շակերտներին, մեր ջերմ փափագն էր: Հայ վար-

դապետները պատմեցին մեզ այն մեծ կռուի մասին, որ դարերից ի վեր գոյութիւն ունի մի կողմից հայերի, միւս կողմից յոյների և լատիների մէջ, այդ սարի գազաթի կամ Բրիստոսի ոտնատեղի վրա կառուցված մի մատուռի առիթով, որ հայերի սեպհականութիւնն է: Այդ վէճը ունի շատ հետաքրքրական և բնորոշ կողմեր, բայց նրանց նկարագրութիւնը մեզ շատ հետու կը տանէր: Բաւական է ասել, որ յոյները և լատիները տեսնելով, որ դժուար է խլել այդ եկեղեցին հայերի ձեռքից, աւելի լաւ են համարել աշխատել որ նա դառնայ մահմետականների մզկիթ. վէճը դեռ շարունակվում է:

IX

Ինձ մնում է մի վերջին գլուխ ևս նուիրել յատկապէս Երուսաղէմի Հայոց ս. Յակոբայ վանքի, միաբանութեան և ազգային նուիրական սեպհականութիւնների նկարագրութեան:

Հայաստանեայց եկեղեցու նուիրապետութեան և հայոց ազգի պատմութեան մէջ Երուսաղէմի պատրիարքական աթոռը և այդ քաղաքում Հայերի ունեցած սեպհականութիւնների ինդիւրը մեծ տեղ են գրաւում: Եկեղեցական նուիրապետութեան կողմից Երուսաղէմի աթոռը նոյն իսկ այսօր ամենայն հայոց կաթողիկոսական աթոռից անսիջապէս յետոյ է յիշատակվում: Եւ առհասարակ Երուսաղէմի հայոց վանքը ու միաբանութիւնը շատ մեծ հոգսեր են պատճառել հայոց ազգին և դեռ այսօր

ևս պատճառում են: Այդ հոգսերը, միաբանութեան մէջ տեղի ունեցող անընդհատ կռիւները, անապին պարտքերը, ծանրացած աթոռի վրա, որ ստիպեցին Կ. Պօլսի ազգային ժողովին ազգային նոր տուրք սահմանել, մի տուրք, որից օգտվեց միայն Օսմանեան կառավարութիւնը, իսկ տուժեց ազգը, կատարված և կատարվող զեղծութիւնները միաբանութեան մէջ—այս ամենը այնպիսի վատ տրամադրութիւն է ստեղծել հայերի մէջ Երուսաղէմի հայոց վանքի և աթոռի վերաբերմամբ, որ շատերը նոյն իսկ հարց են դրել, թէ նրա գոյութիւնը աւելորդ և փաստակար է մեզ, հայերիս համար, և թէ ժամանակ է ձեռնարկել նրա լիկվիդացիայից, լուծման:

Թէև ուղևորական թուուցիկ ակնարկների մէջ անյարմար է շօշափել այդպիսի լուրջ և դժուար լուծելի հարցեր, բայց քանի որ մենք պէտք է ծանօթանանք ս. Յակոբի վանքի հետ, մի քանի խօսք ևս այդ հարցի մասին ասելը անտեղի չի լինի:

Մենք տեսանք, որ Երուսաղէմը կրօնական և պատմական ահագին կարևորութիւն է ներկայացնում ամբողջ քրիստոնէական աշխարհի համար, ինչպէս նա ներկայացնում էր և դեռ ևս ներկայացնում է կարևորութիւն երբայական աշխարհի, և նոյն իսկ մուսուլման աշխարհի համար: Մենք տեսանք, որ լատինները և յոյները ահագին իրաւունքներ են ձեռք բերել, բազմաթիւ եկեղեցիներ և վանքեր ունեն, բայց տեսանք նոյնպէս, որ հայերը նրանց հետ համահաւասար, ոչ պակաս

իրաւունքներ ունեն նուիրական տեղերի վրա: Տեսնենք այժմ ինչպէս են ձեռք բերել հայերը այդ իրաւունքները:

Ապացոյցներ կան, որոնք հաստատում են, թէ հայերը շատ վաղուց մուտք են գործել Երուսաղէմ: Հաւանական է, որ դեռ 2-րդ և 3-րդ դարերում հայերը ուխտ էին գնում Երուսաղէմ: Հաստատված է և այն, որ հայերը 72 եկեղեցիներ, վանքեր և մատուռներ ունէին Երուսաղէսում և Պալեստինի զանազան տեղերում և զրանցից մինը, Պետրոս Առաքեալի Հառաչման վանքը համարվում է շինված Տրդատ Թագաւորից:

1868 թւին ուսաց վանքի վանահայրը, Զիթենեաց սարի արևելեան կողմում գտնվող և մի արարի պատկանող թղենու մի պարտէզ է գնում, սերմանելու համար. երբ հողը մաքրում էին, երևան են գալիս հայոց զանազան գերեզմաններ, արձանագրութիւններով, Մեսրոպեան երկաթագիր տառերով և մօզայիկներով: Ութ գերեզմաններ, շարված մի կարգով, մի կամարով ծածկված և նըրանց վրա հարթ հաւասար, սքանչելի պատկերների և գոյն զգոյն մօզայիկ ծաղիկների յօրինուածներ, որոնց վրա երևում է մի դռան հոյակապ կամար և նրա միջին մի գառն, 3 ձկներ, արծիւ, խաղողի ողկոյզ, բազ և այլ ծաղիկներ և եզրում այսպիսի արձանագիր:

Այս Դիր է Երանելուհու Շուտանկան

Մաւրն Արտաւանայ Հոռի ժր.

Պատմութիւնից գիտենք, որ Արտաւանը, որդի Յովհաննու Արշակունոյ (539), պարսից Խոս-

բով Թագաւորի դէմ յոյների ունեցած կռիւնքի ժամանակ մեծ քաջութիւններ կատարեց. ահա դրա մայրն՝ Շուշանիկը գալով Երուսաղէմ ուխտի, վախճանվում է և թաղվում հայոց ս. Կարապետ վանքում, Ջիթենեաց սարի վրա:

Բացի այդ գերեզմաններից, ուսւ վանահայրը պեղելով գտաւ և 16 դամբարաններ շինված քար ու կիր, երկար ուրոյն, ուրոյն՝ մի քանիսի կափարիչների վրա գրված էին այս անունները Զոգիկ, Շուշան եւ Մարին: Այդ դամբարաններից մի քիչ հեռու գտնվեց մի առանձին շիրիմ, որի վրա մօզայիկով գրված է յետագայ տապանագիրն.

Բարեխաւս ունելով առ Աստուած գտուրք Եսայի:

Եւ գերանելի Հարսս Յովաղար Աբարի Վառն քողութեան մեղաց գլխաւակարան գայս:

Արդ, մինք գիտենք որ Եսվաղանը կամ Այսվաղանը Աղվանից այն արքայի անունն է, որի խնդրով Մեսրոպը յօրինեց այբու բեն Աղվանից համար (420 թ.). ուրեմն այդ տապանագիրը գրված է Սահակի և Մեսրոպի ժամանակ: ¹⁾

1) Բոլոր այս և յետագայ տեղեկութիւնները մենք քաղում ենք Աստուածատուր եպիսկոպոս Տ. Յովհաննէսեանցի նշանաւոր երկհատոր երկասիրութիւնից, որի անունն է «Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի» և տպված է Ս. Յակովբի վանքի տպարանում 1890 թւին: Այս աշխատութիւնը, որից մի կազմած օրինակ նուիրեց մեզ 1893 թ. յուլիոի 31-ին մեր մեկման օրը, Յարութիւն պատրիարքը, մի թանկագին գանձ է, իբրև ճոխ նիւթ-հայոց պատմութեան համար:

Մենք այցեկեցինք այդ դամբարանները և տեսանք, որ բոլոր հուղիւթիւնները մեծ խնամքով և զգուշութեամբ պահպանվում են ուսաց վանահօր կարգադրութեամբ մի առանձին շինութեան մէջ, իբրև հնագիտական թանգարանում:

Այդ գիւտը ինքն ըստ ինքեան ապացուցանում է Երուսաղէմի հայկական հաստատութիւնների և իրաւունքների ամեախորին հուղիւթը: Պատմութիւնը պահպանել է և Հայոց 72 վանքերի ու եկեղեցիների անունները. նրանց շատերի աւերակները և մնացորդները այսօր ևս տեսնվում են. նրանց նկարագրութիւնը արել է ոմն Անաստաս վարդապետ, որի մասին յիշում է Մովսէս Կաղանկատացի պատմագիրը: Այդ վարդապետը պաշտօնի Համազասպ Կամարական իշխանի խնդրանօք կազմեց Երուսաղէմի հայոց վանքերի ցուցակը և յանձնեց նրան, որպէս զի այցելէ:

Զը մոռանանք յիշել և այն, որ Ջոզիկ, Շուշանիկ արձանագրութիւնները առիթ են տուել շատերին ենթադրելու, որ Վարդան Մամիկոնեանի դուստր Շուշանիկի գերեզմանն է այդ և նա թաղված չէ Թիֆլիսի Մետեխի բերդում:

Բացի այդ 72 սեպական եկեղեցիներից, որ իրանց հոգու փրկութեան համար շինել էին Երուսաղէմում Հայաստանի իշխանները և թագաւորները, Հայերը, ինչպէս տեսանք, մեծ իրաւունքներ և սեպականութիւններ ձեռք են բերել նաև տնօրինական տեղերի վրա և դրանցից շատերը մի ժամանակ ամբողջապէս Հայերի սեպականու-

Թիւն են եղել. օրինակ, Գողգոթան, որ առաջ հայոց սեպհականութիւն է եղել, բայց հայերից խլել են վրացիները, որոնցից յետոյ անցել է յոյներին: Սակայն ունենալով միշտ աւելի դժբեղ և աւելի հարուստ մրցակիցներ-լատինները և յոյները-հայերը, բնականաբար, անդուլ և յամառ կռիւ պէտք է մղէին, մեծ գոհաբերութիւններ պէտք է կրէին, մեծ տանջանքների, նեղութիւնների ենթարկվէին ազգային եկեղեցական սեպհականութիւնները պահպանել կարողանալու համար: Երուսաղէմի հայոց մի շարք պատրիարքների կեանքը ամբողջ մի մարտիրոսագրութիւն է. այդ շարքի մեջ մանաւանդ աչքի են ընկնում Գրիգոր Պարոն Տէր Հաննա վարդապետ (Աթոռակալ), Գրիգոր Շղթայակիբ, Կոլոտ Յովհաննէս պատրիարքների պայծառ դէմքերը: Անշուշտ, կային և այնպիսիները, որոնք մեծամեծ զեղծումներ էին գործում, Աթոռի անունով կեղեքում էին հայ ժողովուրդը, լցնում իրանց գրպանները. եղել են պատրիարքներ, աթոռակալներ, որոնք վաճառել են, գրաւ դրել Աթոռի սրբութիւնները, կալուածները, բայց արգաստութիւնը ստիպում է խօստովանել, որ շատ դէպքերում ստիպված են եղել, և Երուսաղէմի հայոց վանքի պարտքերը գոյացել են գլխաւորապէս այն պատճառով, որ պատրիարքները և միաբանութիւնը շարունակ դրամի պէտք են ունեցել ազգային եկեղեցական իրաւունքները և սեպհականութիւնները պաշտպանելու համար: Գործ ունենալով թիւրքական արդարագատութեան և դատարանների հետ, որոնց առաջ լատինները և յոյ-

ները առատօրէն թափում էին իրանց ոսկիները; բացի այն հզօր պաշտպանութիւնից, որ նրանց ցոյց էին տալիս կաթօլիկ պետութիւնները—Ֆրանսեան, Աւստրիան—և Ռուսաստանը, հայերն ևս ստիպված էին դիմել ոսկու օգնութեան և դրամով ձեռք բերել արգարադատութիւնը: Պէտք է ասել, որ Օսմանեան կառավարութիւնը և թիւրք փաշաները աւելի ձեռնտու էին համարում քիչ կաշառք վերցնել հայերից և վէճերը յօգուտ նրանց վճռել, քան շատ վերցնել լատիններից և յոյներից և յօգուտ նրանց վճռել: Իրա պատճառը շատ հասկանալի է. հայերը՝ թիւրքաց հպատակներ են և որքան հայերը շատ իրաւունքներ ունենան Քրիստոնէութեան տէրունական տեղերի ու սեպհականութիւնների վրա, այնքան էլ աւելի շատ իրաւունք և ազդեցութիւն կունենայ թիւրքաց կառավարութիւնը: Եւ այդ հանգամանքն է փրկել հայերին ու օգնել նրանց պահպանելու ազգային հեղեղեցական սեպհականութիւնները. այլապէս հայերը անկարող էին մրցել թէ՛ ազդեցութեամբ և թէ՛ հարստութեամբ կաթօլիկների և յոյների հետ, կամ որ նոյնն է մրցել Ֆրանսիայի, Աւստրիայի, Սպանիայի, Իտալիայի և Ռուսաստանի հետ:

Եւ միայն հայոց վանքն ու միաբանութիւնը չէ որ պարտք ունի: Աւելի, տասնապատիկ աւելի պարտքեր ունեն յունաց և կաթօլիկ պատրիարքական աթոռները, չը նայելով որ նրանց եկամուտներն ևս հարիւրապատիկ աւելի են եղել: Ամեն տարի Եւրոպայից, Ռուսաստանից միլիոններ են թափվում կաթօլիկ և յոյն միաբանու-

թիւնների դրամարկղերը. հարիւր հազօրաւոր ուխտաւորներ են գալիս, բայց այնուամենայնիւ յունաց պատրիարքարանը, ունենալով միլիօնաւոր եկամուտ, պարտք ունի մօտ 2,000,000 թիւրքական լիրա. նոյնը և լատին պատրիարքարանը: Հայոց պարտքը 200,000 ից աւելի չէ. իսկ ներկայ պատրիարք Յարութիւն Վեհապետեանի Օրով, վանքը անագին կալուածներ է ձեռք բերել: որոնք ապագայում մեծ եկամուտ պէտք է տան:

Արդարութիւնը պարտք է դնում մեզ վրա խոստովանել, որ հայոց պատրիարքական աթոռը կամ հայոց Ս. Յակոբի վանքը յայտնի է թէ իբրև աւելի վարկաւոր և թէ իբրև աւելի բարոյական: Փող ունեցողները հայոց վանքին պարտք են տալիս աւելի յօժարո թեամբ 6, 70% ով, քան յունաց վանքին 100% ով, որովհետև հայոց վանքը, ունենալով աւելի քիչ պարտք, լինելով աւելի լաւ կազմակերպված, աւելի մեծ հաւատ և վստահութիւն է ներշնչում:

Հետևաբար, մեր կարծիքով, անհրաժեշտ է պահպանել Երուսաղէմի աղգային-եկեղեցական կալուածները և սեպհականութիւնները ու պատրիարքական աթոռը, մանաւանդ որ այդ աթոռը կազմում է և առաջնորդութիւն Սիրիայում և Պալեստինում գտնվող հայերի համար և կարող է լինել աղգային լուսաւորական հաստատութիւն այդ հեռաւոր վայրերի համար, ունենալով դպրոց, հրատարակելով ամսագիր, գրքեր և այլն, ինչպէս մի ժամանակ ունէր ձեմարան, հրատարակում էր «Սիօն» հանդէսը: Էլ չենք խօսում այն հանգա-

մանքի մասին, որ այդ ազգային սեպհականութիւնները ձեռք բերելու համար հայ ազգը դարերով թափել է իր քրտինքը, արիւնը և դրամը. էլ չենք խօսում այն մասին, որ Երուսաղէմը շարունակելու է դեռ երկար դարեր նաև սևեռելու իր վրա ամբողջ քրիստոնէական աշխարհի ուշադրութիւնը:

Երուսաղէմի հայոց վանքը և միաբանութիւնը կարող են դեռ ահագին դեր խաղալ հայ ժողովրդի մտաւոր—բարոյական կեանքի մէջ, եթէ դրվեն խիստ սահմանադրական բէժիմի մէջ, որ շատ հեշտութեամբ կարող է վերջացնել պարտքերը և կանօնաւորելով Ֆինանսական վիճակը, արդիւնաւէտ դարձնել ու արդիւնքը գործադրել բարոյական—լուսաւորական նպատակների համար:

Արդէն 1886 թ. մշակված և թիւրքիայի հայոց ազգային երեսփոխանական ժողովից վաւերացրված մի սահմանադրական կանօնադրութեամբ է ղեկավարվում միաբանութիւնը 1886 թուից ի վեր: Այդ կանօնադրութեամբ թէ պատրիարքը և թէ միաբանութիւնը ենթարկված են կօնտրօլի ազգի կողմից և կամայականութիւնները ու զեղծումները առաջվայպէս չեն կարող սովորական երևոյթ դառնալ: Պէտք է միայն այդ կանօնադրութիւնը աւելի լաւ մշակել և յարմարեցնել աթուռի և ազգի իսկական պահանջներին: Այդ կանօնադրութեամբ վանքի և աթուռի իսկական տէրը, գործերը տնօրինող և կարգադրողը՝ միաբանական ընդհանուր ժողովն է. պատրիարքը միայն նախագահ է միաբանական ընդհանուր ժողովի և վարչութեան ու

արտաքին ներկայացուցիչ: Պատրիարքը ընտրվում է միաբանական ժողովի ձեռքով և նրա ընտրութիւնը վաւերացնում է Ազգային երեսփոխանական ժողովի կողմից: Պատրիարքը նոյն իսկ կարող է ամբաստանութեան ներքոյ ընկնել, եթէ կանոնադրութեան հակառակ վարվի և, ի դէպս հաստատութեան, գահընկեց լինել:

Յամենայն դէպս Երուսաղէմի հայոց վանքը և պատրիարքական աթոռը իր կառավարութեան կողմից անելի համապատասխան է հայոց եկեղեցու ոգուն և ուղղութեան, քան էջմիածնի վանքը և աթոռը, ուր միաբանութիւնը զրկված է ինքնուրոյնութիւնից և զրեթէ ոչ մի ձայն չունի վանքի կառավարութեան մեջ:

Մեր այցելութեան ժամանակ (1893 թ.) Երուսաղէմի Ս. Յակոբի վանքի Միաբանութիւնը հետեւեալ կազմը ունէր. ա) պատրիարք, բ) 2 արքեպիսկոպոս, գ) 5 եպիսկոպոս, դ) 48 վարդապետ և արեղայ, որոնցից 10-ը Երուսաղէմից դուրս էին գտնվում զանազան պաշտօններով, ե) 12 սարկաւազ, զ) 20 աշակերտ, է) 79 ծառայող միաբաններ և ը) 25 մայրապետ:

Այժմ մի քանի խօսք ևս ս. Յակոբի վանքի մասին:

Հայոց ս. Յակոբի վանքը կամ «Սրբոյ Յակովբեանց Առաքելական Աթոռը» մի ամբողջ հաստատութիւն է, կամ անելի ճիշտն ասենք, մի բերդ է, որ պարունակում է իր մէջ բազմաթիւ շինու-

Թիւններ, այն է 1) Պ ստրիարբարանը կամ վեհու-
ր սնը, 2) Մայր եկեղեցին, որի աւագ սեղանի ներ-
քե թաղված է Տեառնեղբոր Ս. Յակովբ առաքեա-
լի մարմինը, 3) Էջմիսձնի եկեղեցին, մայր եկե-
ղեցու ձախակողմին, 4) Ս. Ստեփաննոսի մատուռ,
որ ունի հրեք սեղան, որոնցից ձախակողմեանի
սեղանաքարին տակն է գետեղված այն հին մկր-
տութեան աւագանը, որի մէջ, ըստ աւանդութեան,
Երուսաղէմի ս. Կիւրեղ հայրապետը 100,000 ան-
ձինք մկրտեց հրէաներից, 5) Մովսէսուներ, 6) Մա-
ռանասուներ, 7) Ս. Մինասի մատուռ, 8) Աւանդատու-
նը, ուր պահվում են վանքի բոլոր զարդերը և
զգեստեղէնները, որոնց պահպանութիւն յանձն-
ված է աւագ լուսարարին, 9) Ս. Մալկարի սեղա-
նը, որի ներքե ամփոփված է նոյն սուրբին մար-
մինը, որ Ս[՝] դարուժ Երուսաղէմի հայրապետնե-
րից մինն էր. դրա մօտ, հիւսիսային կողմն, մար-
մարից մի նեղ սեղան կայ, որի տակ, պատմեցին
մեզ վարդապետները, որպէս թէ Լուսաւորչի մա-
տունքից կայ. 10) Ս. Նեանի խորանը, 11) Սեկո-
սասան Առաքելոց փոքր մատուռ, 12) Կրիստուներ,
որ կոչվում է նաև քանգստան, ուր 1700 հատո-
րից աւելի ձեռագիր մատեաններ և մօտ 1500
տպեալ հին և նոր գրքեր կան, 13) Տպարանը, որ
ունի նաև կազմարան, ձուլարան և վիժագրատուն.
14) Ս. Թէոդորոսի եկեղեցին, որ հայոց ՉԼԻ (735)
թ. Լեոն թագաւորը շինել տուած է իւր հղբօր
Թորոսի յիշատակին, որի մարմինը ամփոփված է
այդտեղ: Բացի դրանցից կան զանազան տնտե-
սական շինութիւններ՝ ցորենի ամբարանոց, պար-

տէզ, աւագան, հոգիտուն, դարբասատուն, դեղատուն և այլն:

Առանձին շինութիւն է կազմուած առաւելաւորաց դպրոցը կամ վանական ուսումնարանը, որ ձեր նմանութիւն ունի Պարիզի Սորբոնին, այն խաչածէն է և կենդրոնում մի գմբէթ ունի: Այդ տեղ պահվում են բաւական շատ հնութիւններ և թանգագին նիւթեր, որ նուիրել են Հնդկաստանի հայերը 1870 թուին:

Ս. Յակոբի վանքի շրջապատում գտնվաւոր հաստատութիւններից բացի, թէ Երուսաղէմում և թէ Պալեստինի զանազան տեղերում միաբանութիւնը ունի ուրիշ շատ վանքեր, մատուռներ և իրաւունքներ լատինների ու յոյների հետ միատեղ տէրունական վայրերի վրա, ինչպէս արդէն յիշատակեցինք: Երուսաղէմի մէջ, ս. Յակոբ վանքին մօտ, յիշենք և եր ու ուրիշ վանքեր— Ս. Հրեթակապետի և Ս. Փրկչի, որոնց շինութիւնը վերագրվում է Աբգարի կնօջ Հեղինէ դշխոյին: Առաջին վանքին մէջ բնակում են մայրապետները և կոյսերը, իսկ երկրորդ վանքի գաւիթը գերեզմանատուն է Աթոռի պատրիարքների, եպիսկոպոսների և միաբանների համար և բազմաթիւ տապանաքարեր ունի:

Պէտք է յիշենք և այն, որ լատինները մինչև այսօր վիճում են, որ ս. Յակոբի վանքը իրանցն է: Ամեն տարի մի որոշ օր, Փրանսիական կամ աւստրիական հիւպատոսը պաշտօնական համագրեստը հագած, ձի նստած, դավազները առջևը ձգած, գալիս է վանքը, ներկայանում պատրիար-

դեղա-

ուսման

նը, որի

այն է

է: Այդ

իւններ

նդկա-

լանված

ուսողի

մ մի-

տուու-

րի հետ

էս ար-

ակորի

քեր-

Յիւնը

տոյին:

հտնե-

ը գե-

պիս-

աթիւ

մին-

ը ի-

կան

հա-

ջէր

ար-

քին և հանդիսաւոր բողոք յայտնում հայերի յա-
 փըշտակութեան մասին: Կատարելով այդ ձևակա-
 նութիւնը, որպէս թէ իրաւունքը չը կորցնելու
 համար, նա շատ հանգիստ կերպով ընդունում է
 պատրիարքի և միաբանների հրաւէրը՝ մի բաժակ
 սուրճ խմելու և իր պարտքը կատարած համարե-
 լով, հեռանում է:

Մենք թողինք Երուսաղէմը 1903 թ. օգոս-
 տոսի 1 ին:



